

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒՆԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Բերդեհեմ աղբիւր յաւիտենական կեանքի 3

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — (Նոր Տարուան Պատգամ)

Համախմբուիկնք ազգի ու հայրենիքի գերագոյն շահերուն շուրջ 7

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — 2022 Սփիւռքի Տարի 10

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ 22

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ

(Turning to God)..... 25

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն

Յովհաննու Աւետարանի (3.1-5) 35

ՊԱՏՄԱՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին 50

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ — Գծագրիչ Արշակ Ֆեթվաճեան 56

ՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԲԷՅԵԱԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան

նորարարութիւնը 71

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ 80

ՏՕՆԱԿԱՆ 81

ՍՓԻՈՔԻ ՏԱՐԻ

«Սփիւռքի Տարուան» առիթով լիբանանահայ

մտաւորականներու խորհրդակցական հանդիպում 96

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Չրոյց

«Սփիւռքի վերակազմակերպումը անյետաձգելի հրամայական է» 105

ՊԱՐԳԵԼԱՏՐՈՒՄ 115

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ 116

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ — Հանգիստ Տ. Վահան Ծ. Վրդ. Պերպերեանի 121

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ 122

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ 134

ՄԻՒՌՆՕՐՀՆԷՔ



ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՁԻՆ ՄԷՐ

ՋԵՌԱՄԲ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՈՒՐԲԱԹ, 1 ՅՈՒԼԻՍ 2022





ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿՄՍԱԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆԻ ԿԻԿԿԻՈՅ

ՂԱ. ՏԱՐԻ 2022

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՒ 1-2

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԲԵԹՂԵՀԵՄ՝ ԱՂԲԻԻՐ ՅԱԲԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ*

Յովհաննես Առաքել իր Առաջին Ընդհանրական Նամակը կը սկսի վկայելով, թե Որդին՝ Բանը, որ նոյնիքն կեանքն էր, Բերդեհեմի ճամբով յայտնուեցաւ մարդուն (1.1-2): Այս գծով անհրաժեշտ է հետեւեալ ընդգծումները կատարել.-

- **Աստուած՝ ստեղծիչը կեանքին:** Աստուածաշունչը կը հաստատէ, թէ Աստուած ստեղծիչն է կեանքին: Տիեզերքի մէջ ոեւէ գոյութիւն ինքնագոյ չէ, իր գոյաւորիչը ունի: Աստուած ոչինչէն ստեղծեց տիեզերքը իր բանական եւ ոչ-բանական արարածներով՝ ստեղծագործութեան մէջ իւրաքանչիւրին իւրայատուկ տեղն ու դերը ճշդելով:

- **Մարդը՝ պսակը Աստուծոյ ստեղծագործութեան:** Հանգրուանային կերպով կատարած իր ստեղծագործութեան վերջին օրը Աստուած ստեղծեց մարդը: Աստուածաշունչի առաջին գիրքը՝ Ծննդոցը մարդու

* Մոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին՝ խօսուած 6 Յունուար 2022-ին, Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան տօնին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորչի մայր տաճարին մէջ:

ստեղծագործության երկու դրուագներու (1.27,2.7) ճամբով կը շեշտէ, թէ ի տարբերութիւն բոլոր արարածներէն, մարդը ստեղծուած է հողէն, օժտուած՝ բանականութեամբ, եւ որպէս Աստուծոյ գործակից, տիեզերքը կառավարելու յատուկ պարտականութիւն տրուած իրեն:

- **Մարդու աստուածատուր կեանքի անկումը:** Աստուածաշունչը կը պատմէ, թէ ինչպէս առաջին մարդը՝ Ադամը, հաւատարիմ չգտնուեցաւ իր կոչումին, իրեն տրուած իշխանութիւնը օգտագործեց իր հաճոյքին ու փառքին համար եւ թերացաւ Աստուծոյ նկատմամբ իր համարատուութեան մէջ: Այլ խօսքով, առաջին մարդը մեղանչեց եւ պատճառ դարձաւ որ «Ադամական մեղքը» ժառանգէն յետագայ բոլոր սերունդները: Մարդու մեղքին հետեւանքով աստուածատուր կեանքը ապականեցաւ՝ չարիք ու վնաս պատճառելով նաեւ ողջ ստեղծագործութեան:

- **Բեթղեհեմը՝ ծննդավայր Նոր կեանքի:** Ադամի անհնազանդութեան պատճառով՝ մեղքով ապականած կեանքը Բեթղեհեմի մէջ Աստուծոյ Որդւոյն յայտնութեամբ վերանորոգուեցաւ: Բեթղեհեմը դարձաւ ծննդավայրը Նոր կեանքի: Զրիստոս յայտարարեց՝ «Ես եմ կեանքը» (Յհ 14.6) եւ իր մարդեղութեան նպատակը բնորոշեց ըսելով՝ «Ես եկայ, որպէսզի կեանք ունենան» (Յհ 10.10): Նոր Կտակարանը յստակօրէն կը պարզէ, թէ Զրիստոսի առաքելութեան կիզակետը, Բեթղեհեմէն մինչեւ Յարութիւն, մարդը օժտել էր նոր կեանքով:

- **Զրիստոս՝ ճամբայ Նոր կեանք առաջնորդող:** Աստուծոյ մարդեղացեալ Որդին ո՛չ միայն ինքզինք ներկայացուց որպէս Նոր կեանք, այլ նաեւ՝ միակ ճամբան դեպի Նոր կեանք առաջնորդող (Յհ 14.6): Զեւեւաբար, Նոր կեանք ունենալու համար հարկ է դառնալ Զրիստոսի եւ քալել դեպի Զրիստոս տանող ճամբէն:

- **Զրիստոս՝ աղբիւր յաւիտենական կեանքի:** Յովհաննէս Առաքեալ կը վկայէ, թէ Զրիստոսի ճամբով «Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ի՛նքն է» (Ա.Յհ 5.11): Ան կը շարունակէ ըսելով՝ «Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին» (1.1-2): Զրիստոսի աշխարհ բերած կեանքը սովորական կեանք չէր: Նոր Կտակարանը զայն կը բնութագրէ որպէս առաւել, լեցուն, ճշմարիտ, Նոր կեանք, այլ խօսքով՝ յաւիտենական կեանք: Յաւիտենական կեանքը մերժումն է մեղքով ու չարով տիրապետուած կեանքին, նիւթեղէն ու երկրաւոր արժէքներով առաջնորդուած կեանքին: Յաւիտենական կեանքը Զրիստոսի ներկայութեամբ ապրուած կեանք է:

Ինչպէ՞ս կարելի է արժանի դառնալ յաւիտենական կեանքին: Զեւեւիք Աւետարանիչներուն ու Առաքեալներուն թելադրութիւններուն.-

1) **Քրիստոսի հաւատալով:** Առաքեալը շեշտակիօրէն կը յիշեցնէ, թէ «Ով որ կը հաւատայ Որդիին, յաւիտենական կեանք կ'ունենայ» (Յի 3.36): Արդ, Քրիստոսը դաւանելով որպէս աշխարհի փրկիչը, մարդ արժանի կը դառնայ Քրիստոսի պարգեւած յաւիտենական կեանքին:

2) **Քրիստոսի հետեւելով:** Քրիստոս ըսաւ, ով որ ինծի կը հաւատայ, պէտք է հետեւի ինծի: Արդ, որպէս յաւիտենական կեանքի աղբիւր, հարկ է մօտենալ Քրիստոսի: Որպէս յաւիտենական կեանքի ճանապարհ, հարկ է քալել այդ ճամբէն: Որպէս յաւիտենական կեանք տա՛նող դուռ, հարկ է մտնել այդ դռնէն (Մտ 7.13-14):

3) **Յաւիտենական կեանքը ապրելով:** Քրիստոսի հետեւիլ կ'ենթադրէ՝ Քրիստոս իր մէջ ընդունիլ, նոր մարդ դառնալ եւ նորոգուած կեանքով ապրիլ (Յի 5.12, Բ.Կր 5.17, Հռ 6.6): Այս կը թելադրեն Քրիստոսի ներկայութիւնը ապրած առաքեալները: Յաւիտենական կեանքով ապրիլ, կը նշանակէ մեր նմանին ծառայել, արդարութիւն գործել, բարոյական ու հոգեւոր արժէքներով մեր կեանքը շաղախել, երկնային շնորհներով մեր կեանքը լեցնել եւ բարիք գործելով մեր ապրած օրերը իմաստաւորել:

Կեանքը Աստուծոյ պարգեւն է. զայն պէտք է ապրիլ մեր անձի նեղ պարունակէն ու մեր կեանքի սահմանափակ ծիրէն անդին ու վեր՝ երկնային արժէքներու ու յաւիտենական ճշմարտութիւններու համար: Այս է Քրիստոսի ճամբով աշխարհին յայտնուած կեանքին որակը, իմաստն ու նպատակը: Հետեւաբար, յաւիտենական կեանքը վախճանական երեւոյթ մը չէ, գալիք իրականութիւն մը չէ. ան արդէն եկած է աշխարհի Աստուծոյ Որդւոյն մարդեղութեամբ: Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած մարդը կոչուած է զայն ապրելու՝ հաւատարմութեամբ, պատասխանատուութեամբ ու յանձնառութեամբ: Առաքեալը կը պատգամէ՝ «Ամուր կառչէ յաւիտենական կեանքին, որուն քեզ հրաւիրեց Աստուած» (Ա.Տմ 6.12):

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր կեանքը, բնութեան թէ ընկերութեան մէջ, բարոյապէս ապականած է ու ֆիզիքապէս՝ վտանգուած: Շրջապատուած ենք աստուածատուր կեանքը Աստուծմէ հեռացնող ու զայն մարդակեդրոն ու մարդանպատակ կեանքի վերածող երեւելի թէ աներեւոյթ չարերով ու չարիքներով: Մարդուն կողմէ բնութեան պատճառած չարիքներուն առընթեր, նաեւ մարդկային կեանքին անոր պատճառած չարիքներուն ահաւոր հետեւանքները կ'ապրինք մեր անձնական թէ հաւաքական կեանքի բոլոր մարզերէն ներս:

Արդարեւ, գիտութիւնը որքան փորձէ իր այլազան գիւտերով ու նորանոր իրագործումներով հարստացնել ու ապահովութիւն երաշ-

խաւորել կեանքին, առանց մարդուն յաւիտենական կեանք պարգեւած Քրիստոսի կենսատու ներկայութեան՝ կեանքը կը դառնայ աննպատակ գոյութիւն: Հոն, ուր իր արեան հեղումով մարդուն յաւիտենական կեանք պարգեւած Քրիստոս ներկայ է, մեղքը, չարն ու չարիքը հեռու կը մնան:

Բեթղեհեմը յաւիտենական կեանքին յայտնութիւնն է մարդուն: Բեթղեհեմը երկնային հրաւեր է ուղղուած մարդուն՝ իր կեանքը Քրիստոսի վերանորոգիչ ներկայութեամբ շաղախելու, որպէս աղբիւրը յաւիտենական կեանքի:

Արդ, ա՛յս հաւատքով դառնանք Բեթղեհեմին ու ապրինք անոր խորհուրդը:

*

* *

Նոր Տարուան եւ Աստուածայայտնութեան տօներուն առիթով, եղբայրական սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով քաջառողջութիւն եւ եկեղեցաշէն ծառայութիւններով լեցուն երկար գահակալութիւն: Քրիստոնէական սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանը, մաղթելով իրենց աստուածահաճոյ գործերով լեցուն ծառայութիւն:

Հայրական սիրով եւ հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու առաջնորդները, հոգեւորական դասը ու ազգային իշխանութիւնները, հայ կեանքէն ներս գործող բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները. ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի զաւակները, աղօթելով, որ Բեթղեհեմի յաւիտենական կեանքով պայծառակերպուի մեր ազգին կեանքը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ



ՀԱՄԱԽՄԲՈՒԻՆՔ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐՈՒՆ ՇՈՒՐԶ

Նոր Տարուան սեմին, քրիստոնեական սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի գաւակները:

Նոր Տարին, մարդը, անհատապէս թէ հաւաքաբար, ինքնահայեցողութեան ու ինքնաքննութեան հրաւիրող պահ է: Եկեք պահ մը մեր հայեացքները սեւեռենք հայ կեանքին վրայ:

Ինչպէս համայն մարդկութիւնը, նոյնպէս մեր ժողովուրդը կը շարունակէ ապրիլ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն մէջ: Սփիւռքի բոլոր գաղութները, առաւել կամ նուազ չափով, կը դիմագրաւեն այլազան մտահոգութիւններ: Այս ծիրէն ներս, յատկապէս Լիբանանի հայութիւնը կ'ապրի ծանր օրեր՝ տնտեսական աննախընթաց տագնապին հետեւանքով: Հակառակ ներկայ դառն պայմաններուն, մենք պիտի շարունակենք վերանորոգ հաւատքով ու վճռակամութեամբ, վերականգնումի մեր հաւաքական երթը՝ միշտ ըլլալով մեր ժողովուրդի գաւակներուն հետ ու անոնց կողքին:

Արդարեւ, 2022 տարին հռչակած ենք **Սփիւռքի Տարի**: Կը հրաւիրեմ մեր բոլոր կառոյցները, մամուլը, մտաւորականները եւ գաղութները՝ իրապաշտ մօտեցումով ու համապարփակ հայեացքով եւ այս առիթով հրապարակած Մեր Հայրապետական Գիրը ունենալով որպէս ուղե-

ցոյց, նախ, ինքնարժեւորումի ենթարկելու եւ ապա վերակազմակերպումի առաջնորդելու Սփիւռքը: Սա հրամայական ու անյետաձգելի առաջնահերթութիւն է:

Դառնանք Հայաստանին: Մեր հայրենիքը կը շարունակէ անորոշութեան ու յուսահատութեան ալիքներու մէջ օրօրուիլ: ՄԷկ կողմէն՝ ներ-Հայաստանեան քաղաքական լարուած մթնոլորտը կը ջլատէ մեր հաւաքական ուժը: Միւս կողմէն՝ թշնամին յաղթապանծ դիրքերէ պայմաններ կը դնէ Հայաստանին՝ անտեսելով Հայաստանի հողային ամբողջականութիւնը ու գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ՝ միջազգային օրէնքը:

Այո՛, մենք փոքր երկիր ենք. հարկ է իրատես մօտեցում ունենալ տարածաշրջանի ներկայ աշխարհաքաղաքական պայմաններու հոլովոյթին նկատմամբ: Սակայն, այդ չի նշանակեր, որ Հայաստանը ըսելիք պիտի չունենայ իր ազգային շահերուն առնչուած եւ իր ներկան ու ապագան ճշդող խնդիրներուն գծով:

Այո՛, տարածաշրջանէն ներս համապարփակ ու մնայուն խաղաղութեան հաստատման համաձայն ենք. բայց ո՛չ պարտուողական ու գիշողական դիրքերէ:

Այո՛, տարածաշրջանէն ներս տնտեսական զարգացումներու նպաստող ծրագիրներու համաձայն ենք. բայց ո՛չ ի հեճուկս Հայաստանի ու Արցախի գերիշխանութեան, անկախութեան, անվտանգութեան ու հողային ամբողջականութեան:

Այսօր, Թուրքիոյ եւ Ազրպէյճանի կողմէ համադրուած փան-թուրանական ռազմավարութիւն մը կը փորձուի ի գործ դրուիլ Հայաստանի եւ ամբողջ շրջանին նկատմամբ: Ըլլանք զգօս ու հեռատես: Արդարեւ, ոեւէ համաձայնագրի ստորագրութիւն Ազրպէյճանի հետ, ուր Ազրպէյճանի տարածքային ամբողջականութեան մէջ ներառուած է Արցախը, նոյնպէս, ոեւէ համաձայնութիւն Թուրքիոյ հետ, որ կ'ընդունի Թուրքիոյ բացայայտ նախապայմանները, փաստօրէն Հայաստանի կողմէ խախտում պիտի ըլլայ Անկախութեան Հռչակագրին եւ Սահմանադրութեան սկզբունքներուն: Նման վտանգալից քայլերու նկատմամբ Սփիւռքը չի կրնար անտարբեր մնալ: Համահայկական խնդիրներու քննարկման մէջ Սփիւռքը իր գործօն մասնակցութիւնը պետք է ունենայ՝ ինչպէս յաճախ շեշտած ենք: Մեր թշնամիները ու բարեկամները պետք է իմանան, որ Հայաստանը անտեր չէ, որբ չէ, ողջ Սփիւռքը իր կողքին է, հայութիւնը մէկ ու անբաժանելի ամբողջութիւն է:

Ինչ-ինչ պատճառներով ճակատամարտ մը կորսնցուցինք, բայց ոչ՝ պատերազմը: Ի խնդիր Հայաստանի ու Արցախի անկախութեան ամրապնդման եւ մեր ազգային իրաւունքներու վերահաստատման՝ համահայկական պայքարը կը շարունակուի...:

Համահայկական պայքարը պէ՛տք է շարունակուի՝

– հայոց բանակը վերակազմակերպելով ու զայն արդիական զէնքերով օժտելով:


– մեր սահմանները պաշտպանելով, ի պահանջել հարկին ժողովրդային դիմադրութեան դիմելով:

– մարտունակ ոգիով բանակցութիւններ վարելով:

– համախմբուելով հայրենիքի գերագոյն ու ընդհանրական շահերուն շուրջ:

Եկէ՛ք վերանորոգենք մեր ազգային ուխտը, եւ առաւել հաւատքով ու կամքով գօտեպնդուած, ողջունենք զիրար ըսելով՝ Շնորհաւոր Նոր Տարի: Թող Աստուած օրհնէ մեր ազգին բոլոր զաւակները եւ ամեն տեսակի չարէ ու չարիքէ հեռու պահէ մեր ազգն ու հայրենիքը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՃԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**





2022 ՄՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
Ազգային Իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի զաւակներուն

2022 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնեական սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ազգ. Ընդհանուր Ժողովը, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Զաղաքական ժողովները, Միաբանութիւնը, Թեմակալ Առաջնորդներն ու Ազգ. Իշխանութիւնները, մեր կեանքէն ներս գործող քաղաքական, կրթական, մշակութային, բարեսիրական եւ համայնքային բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ բացուող Նոր Տարին մեր անհատական, ընտանեկան եւ ազգային կեանքին մէջ լեցուի առողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան երկնային բարիքներով:

Սեպտեմբեր-Նոյեմբեր 2020-ին Ազրայէճանի եւ Թուրքիոյ միացեալ ուժերով Արցախի վրայ կատարուած անարգ յարձակումին հետեւանքով մեծ թիւով հայորդիներու նահատակութիւնը ու գերեզարումը, հրսկայ տարածքներու գրաւումը, հոգեւոր ու մշակութային կառոյցներու քանդումը ու բազմահազար հայորդիներու տեղահանումը խոր ցաւ ու ընդվզում յառաջացուց մեր ժողովուրդին մօտ: Մեր ողջ ժողովուրդը զանազան կերպերով հակազդեց ստեղծուած այս ողբերգական կացութեան ու իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Արցախին: Մեր կարգին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ծի-

րեն ներս լուսարձակի տակ բերելով Արցախը, 2021 տարին Հայրապետական Գիրով հռչակեցինք ԱՐՑԱԽԻ ՏԱՐԻ: Մեր մտահոգութիւններն ու առաջադրանքները լայն արձագանգ գտան յատկապէս մեր թեմերուն մօտ: Արցախի Նախագահը իր խոր գոհունակութիւնը յայտնեց Մեզի եւ Մեզ հրաւիրեց այցելելու Արցախ: Արդարեւ, Արցախի անկախութեան ու անվտանգութեան նկատմամբ Մեր ամբողջական զօրակցութիւնը կը շարունակուի՝ որպէս մեր Սուրբ Աթոռին համազգային առաջնահերթութիւններէն մէկը:

* * *

Վերջին տարիներուն, Սփիւռքին առնչուած զանազան խնդիրներուն ու երեւոյթներուն շուրջ գիտաժողովներ տեղի ունեցան, ուսումնասիրութիւններ կատարուեցան ու յօդուածներ ստորագրուեցան: Անորոշութիւններով ու տագնապներով լեցուն Սփիւռքի ներկայ իրավիճակը, մեր ղեկավար մարմինները ու մտաւորականները պէտք է մղէ՝ իրապաշտ ոգիով ու պատասխանատու մօտեցումով տագնապելու, մտածելու, քննելու, խորհրդակցելու, Սփիւռքի ներկան վերակազմակերպելու եւ ապագան հունաւորող ճամբաներ ու միջոցներ որոնելու:

Հետեւաբար, նկատի ունենալով Սփիւռքի պարզած ներկայ պատկերը ու հայ կեանքէն ներս անոր ունեցած առանցքային կարեւորութիւնը, այսու Հայրապետական Գիրով 2022 տարին կը հռչակենք

ՍՓԻՒՐՔԻ ՏԱՐԻ

Հայերէն լեզուով հրատարակած Մեր վերջին գիրքին տուած ենք **Նոր Հորիզոններու Դիմաց** խորագիրը: Պատահական չէ այս խորագիրը: Հայ ժողովուրդը իր երեք թելերով՝ Հայաստան, Արցախ եւ Սփիւռք բազմաթիւ ու բազմազան մարտահրաւերներ ու վտանգներ կը դիմագրաւէ. իսկ հայօրէն մաշումի ենթակայ Սփիւռքը՝ աւելի՛ն: Տեղ մը ան անորոշութեան ալիքներու մէջ կ'օրօրուի, այլ տեղ՝ փոթորիկներու դէմ կը պայքարի. տեղ մը՝ նոր ինքնութեան փնտռտուքի մէջ է, այլ տեղ՝ տեղայնացումի արագ ընթացքին մէջ: Արդ. Սփիւռքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը հրամայական անհրաժեշտութիւն է: Այս բազմատարած ու բազմերես ծրագիրը իր գործնական ընթացքը կրնայ առնել Սփիւռքի ինքնաքննութեամբ, ինքնարժեւորումով եւ ազգի համայնական կեանքին մէջ անոր իւրայատուկ տեղին ու դերին յստակեցումով: Այս հսկայածաւալ աշխատանքին հարկ է լծուիլ այսօր. վաղը կրնայ ո՛րէջ ըլլալ՝ աշխարհի արմատական ու արագ փոփոխութիւններու յորձանուտին մէջ ապրող Սփիւռքին համար:

Ա) ՍՓԻՒՌԸ ԵՐԷԿ – ԳՈՅԱՒՈՐՈՒՄ ՈՒ ՀՈՒՆՎՈՅԹ

Հայաստանը իր աշխարհագրական դիրքին բերումով յաճախ ենթակայ եղած է յարձակումներու ու բռնագրաւումներու եւ կորսնցուցած իր պետականութիւնն ու անկախութիւնը: Հետեւաբար, արտագաղթը մնայուն երեւոյթ եղած է հայոց պատմութեան մէջ:

Բիւզանդական կայսրութեան եւ Հայաստանի միջեւ շփումը եղած է անմիջական ու մնայուն եւ հին ժամանակներէն ի վեր հայեր հաստատուած են կայսրութեան սահմաններէն ներս: Հայաստանէն դուրս, հայութիւնը առաջին անգամ ըլլալով հաւաքական ու կազմակերպ ներկայութիւն դարձած է Կիլիկիոյ մէջ, եւ նոյնիսկ պետականութիւն հաստատած: Կիլիկիոյ հայոց պետութեան (14-րդ դար) եւ Բիւզանդիոնի կայսրութեան (15-րդ դար) անկումէն ետք, հայերը հետզհետեւ ուղղուած են դէպի Պալգանեան երկիրներ, ուր ժամանակի ընթացքին գաղութներ կազմաւորուած են: Առաւելաբար տնտեսական պատճառներով հայեր յարաբերութեան մէջ եղած են Ծայրագոյն Արեւելքի հետ, ինչպէս հաստատած նաեւ փոքր համայնքներ: Պարսկաստանը Հայաստանի դրացի երկիր ըլլալով, հին դարերէն սկսեալ մեծ թիւով հայեր հաստատուած են ինչ: Պարսկաստանի եւ Թուրքիոյ միջեւ Հայաստանի բաժանումէն ետք (16-րդ դար), հայերը յիշեալ երկիրներէն ներս դարձած են կազմակերպ ներկայութիւն:

Հայոց ցեղասպանութեան հետեւանքով, Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ հայկական հողերու վրայ ապրող հայեր պարտադրաբար արտագաղթած են դէպի Միջին Արեւելք եւ ապա, քաղաքական ու տնտեսական մտահոգութիւններէ մղուած՝ տարիներու ընթացքին դէպի Եւրոպա, Հիւսիսային ու Հարաւային Ամերիկա ու մինչեւ Աւստրալիա: Ափրիկէի մէջ հայեր ներկայութիւն դարձած են յատկապէս Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն ետք: Համաշխարհայնացման ստեղծած պայմանները նոր թափ տուած են հայ ժողովուրդի զաւակներու երկրէ երկիր տեղափոխութեան, նոյնիսկ՝ ցամաքամասէ այլ ցամաքամաս գաղթին: Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, նախկին Սովետական երկիրներէն արտագաղթի նոր ալիք մը սկսած է դէպի արեւմուտեան երկիրներ: Վերջապէս, տարօրինակ ու ցաւալի էր Հայաստանի անկախացումէն ետք ծայր առած արտագաղթը հայրենիքէն:

Սփիւռքի յառաջացման հոլովոյթին վրայ նետուած այս հպանցիկ ակնարկի լոյսին տակ, հարկ է ընդգծել հետեւեալ կէտերը.-

ա) Լայնատարած Սփիւռքի գոյաւորումը իր պատմական պատճառները ու հանգրուանները ունի: Հայերու արտագաղթը Հայաստանէն յաճախ եղած է պարտադրաբար: Այս ուղղութեամբ հարկ է յիշել Հայաստանէն Կիլիկիա մեծ գաղթը՝ պարտադրուած Բիւզանդական կայս-

րութեան կողմէ, եւ Արեւմտեան Հայաստանէն ու Կիլիկիայէն՝ Օսմանեան կայսրութեան կողմէ: Քաղաքական ու ապահովական ազդակներու կողքին, նաեւ տնտեսական պատճառներ հայերը մղած են արտագաղթի: Այսպէս կարելի է բնորոշել նաեւ վերջին տասնամեակներուն Հայաստանէն արտագաղթը:

բ) Հայերը ուր որ հաստատուած են, փորձած են համայնք կազմել՝ իր ազգային, հոգեւոր, կրթական եւ այլ կառոյցներով, եւ գերագոյն ճիգ թափած՝ պահելու իրենց ազգային դիմագիծը, լեզուն, հաւատքն ու ասանդութիւնները: Եկեղեցին առաջնորդողի դեր է ունեցած գաղութներու կազմաւորման ու հայապահպանման մէջ:

գ) Իրենց հաստատուած երկիրներուն մէջ հայեր մեկուսացած չեն ապրած: Անոնք մասնակից դարձած են ընկերութեան կեանքին, եւ նոյնիսկ՝ կարեւոր դիրքեր գրաւած:

դ) Լիբանանի եւ Սուրիոյ հայ գաղութները իրենց կազմակերպ կեանքով եւ բազմաթիւ կառոյցներով, կեդրոնական դեր ունեցած են Սփիւռքի մէջ, յատկապէս՝ հոգեւոր, մշակութային, բարեսիրական ու քաղաքական մարզերէն ներս:

ե) Պայմաններու բերումով, կորսնցնելով իրենց անմիջական կապը մայր հայրենիքին հետ, կարգ մը գաղութներ, յատկապէս Պալգանեան երկիրներու մէջ ժամանակի ընթացքին ձուլուած են՝ միայն աղօտ կերպով պահելով իրենց հայկական ծագումը:

Բ) ՍՓԻՒՐԸ ԱՅՍՕՐ - ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՒԵՐՆԵՐ

Անհրաժեշտ կը նկատենք ամփոփ գիծերով լուսարձակի տակ բերել ներկայ Սփիւռքը բնութագրող կարգ մը յատկանշական երեւոյթներ.-

1.- **Ներկայ Սփիւռքը՝** ասանդական, սովետական ու հայաստանեան սփիւռքներու աններդաշնակ խառնուրդ մըն է: Յեղասպանութեան վերապրողներու բեկորներով գոյաւորուած Սփիւռքը կազմակերպման յարաբերաբար արագ ընթացք ունեցաւ: Եկեղեցի, դպրոց ու ակումբ վճռորոշ դեր ունեցան Սփիւռքի կազմաւորման ու անոր ինքնութեան պահպանման մէջ: Սփիւռքը գոյատեւեց համախմբուելով իր ստեղծած կառոյցներուն շուրջ ու դարձաւ արդարութիւն պահանջող եւ ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանի երազով ապրող ու պայքարող գաղութներու ամբողջութիւն: Աւանդական սփիւռքին եկան միանալու, Սովետական երկիրներէն դէպի Արեւմուտք գաղթած հայորդիներ եւ կարճ ժամանակի ընթացքին շաղուեցան իրենց ազգակիցներուն հետ: Հայաստանի վերանկախացումով շատեր կարծեցին թէ կրնայ ներգաղթ սկսիլ եւ Սփիւռքը շուտով շնչասպառ դառնալ: Պատահեցաւ հա-

կառակը: Տնտեսական պատճառներէ մղուած եւ արտասահմանի լայն կարելիութիւններէն հրապուրուած, Հայաստանը սկսաւ պարպուիլ իր բնակչութենէն: Թուային աճին առընթեր, Սփիւռքը նաեւ ընդարձակուեցաւ միջ-գաղութային տեղաշարժերու հետեւանքով: Վերոնշեալ երեւոյթները շարունակուելու բազմաթիւ պատճառներ ունին: Սփիւռքը կայուն իրականութիւն մը չէ, ան մնայուն փոփոխութեան մէջ է:

2.- Ի՞նչ կը նշանակէ **հայ ըլլալ Սփիւռքի մէջ**, ի՞նչ են հայ ըլլալու արժեքափերը: Տեղասպանութեան յիշողութեամբ կազմաւորուած անանդական սփիւռքը իր իւրայատուկ ինքնաճանաչումը ունէր: Նոր սփիւռքներու յառաջացումը եւ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու զարգացումը նոր նկարագիր տուաւ Սփիւռքին. իսկ համաշխարհայնացումը նոր իրականութիւններու եւ հորիզոններու դիմաց դրաւ Սփիւռքը՝ զայն մղելով ինքնաճանաչման տարբեր մօտեցումներու, շեշտաւորումներու ու նոյնի՛սկ արժեքափերու: Արդ, ինչպէ՞ս կարելի է պատմական տարբեր հոլովոյթ ունեցած, տարբեր փորձառութեամբ թրծուած եւ տարբեր մտածելակերպ, գործելակերպ ու կենցաղակերպ ունեցող սփիւռքներուն միջեւ, յաճախ նոյն գաղութին մաս կազմող, գոյակցութենէ անդին, ներքին ներդաշնակում ու համալրում յառաջացնել: Ցարդ այս ուղղութեամբ ծրագրուած ու հետեւողական քայլեր չեն առնուած. կը թուի թէ կամեցողութեան պակաս կայ: Բայց նման ճիգ անխուսափելի անհրաժեշտութիւն է: Ինչպէ՞ս կարելի է Սփիւռքի հայուն ինքնաճանաչումը սահմանել՝ հաւաքական արժեքափերու ճշդումով, առանց անտեսելու համաշխարհայնացումին ստեղծած նոր իրականութիւնները ու տեղական պայմանները:

3.- Հայաստանի մէջ հայ մնալը բնական երեւոյթ է. Սփիւռքի մէջ հայ մնալը նախընտրութեան հարց է եւ, հետեւաբար՝ ամենօրեայ տագնապ ու պայքար: Մօտիկ անցեալին, Սփիւռքի մէջ ուրիշէն տարբեր ըլլալը չափանիշ էր ու ազդու միջոց՝ **հայապահպանման**: Համաշխարհայնացած աշխարհի բազմացեղ, բազմամշակոյթ ու բազմակրօն միջավայրերու մէջ ապրող հայը, ուր այլեւս զինք ուրիշէն բաժնող ցանկապատեր գոյութիւն չունին, ուր ուրիշը իր դրացին է, ընկերը, գործակիցը եւ երբեմն նոյնիսկ տան անդամը, ինչպէ՞ս կրնայ իր ինքնութիւնը պահել անվթար: Հարկ է ըլլալ իրապաշտ: Սփիւռքահայը ինքզինք այլեւս գաղթական եւ օտար չի նկատեր. ան իր ապրած երկրին լիիրաւ քաղաքացին է՝ միաձուլուած միջավայրին ու շաղախուած տեղւոյն մշակոյթին հետ: Հայու ինքնութիւնը տակաւին կը շարունակէ ինքզինք շեշտակի կերպով արտայայտել հոն, ուր հայ կեանքի հաւաքական ու կազմակերպ ներկայութիւն գոյութիւն ունի: Սակայն, հոն ուր հայաբոյր միջավայր գոյութիւն չունի, հայապահպանման ճիգերը սկսած են

իրենց ուժականութիւնը կորսնցնել, հետզհետէ տեղայնացող ինքնութեան դիմաց: Արդ, հայու արմատները առողջ պահելու հեռանկարով, ինչպէ՞ս կարելի է Սփիւռքի հայուն մէջ լեզուն, հայրենիքը, կրօնը, ավանդութիւնները, պատմական վճռորոշ դէպքերը, պահանջատիրութիւնը առաւելագոյն չափով եւ նոր մօտեցումով դարձնել մէկ ազգի պատկանելիութեան ամուր յենարանները:

4.- Սփիւռքի **կառոյցները** ճշդորոշիչ դեր կատարեցին Սփիւռքի կազմակերպման, ինչպէս նաեւ՝ մեր հոգեւոր, մշակութային ու ազգային արժէքներու կենսագործման գծով: Այսօր, սակայն, մեր կառոյցները իրենց հմայքն ու ազդեցութիւնը կորսնցնելու եւ ժամանակավրէպ դառնալու վտանգին դիմաց կը գտնուին: Իրենց ինքնակերդրոն մօտեցումներով, ավանդական գործելաոճերով ու ոչ-այժմեական օրակարգերով, անոնք այլեւս չեն կրնար գոհացնել նոր սերունդներուն պահանջները: Այլ խօսքով, գաղութներ չեն կրնար իրենց կազմակերպչական ուժականութիւնը ամուր պահել եւ հայօրէն շնչել շնչասպառ դարձած եւ ներկայ իրականութիւններուն անհաղորդ կառոյցներով: Արդ, կառոյցներուն վերանորոգումը ու այժմեականացումը աւելի քան հրամայական է՝ նկատի ունենալով անոնց կերդրոնական տեղն ու առանցքային դերը հայ կեանքէն ներս:

5.- **Արեւմտահայերէնը** նահանջի մէջ է: Անոր գործածութեան հետըզհետէ շեշտուող նուազումն ու աղաւաղումը դարձած են համատարած ու ակնյայտ երեւոյթներ: Պատճառները յստակ են իսկ հետուանքը՝ վտանգալից: Լեզուն ազգի մը ինքնութեան գօրեղ կռուաններէն մէկն է, մանաւանդ փոքր եւ սփիւռքեան պայմաններուն մէջ ապրող ազգի մը համար: Արեւմտահայերէնի նահանջին առաջքը առնելու յանձնառութենէն մղուած, մեր Սուրբ Աթոռը դիմեց գործնական քայլերու: Արդ, ինչպէ՞ս կարելի է նոր մղում տալ այս յոյժ կարեւոր ծրագրին եւ գործնապէս մասնակից դարձնել հայակերտումի առաքելութեան լծուած մեր կրթական ու մշակութային կառոյցները ու մտաւորականները:

6.- Մեր կառոյցներուն կողքին մեր մտածելակերպերն ու գործելակերպերը եւս սկսած են ժանգ կապել: Մեր շուրջ տեղի ունեցող նոր զարգացումներուն ու յառաջացող մարտահրաւերներուն անտեսումը մեր գաղութները կրնան առաջնորդել դէպի ինքնամեկուսացում: Սփիւռքը այլեւս չի կրնար գործել կարծրատիպերով: Հայապահպանման գործիքները եւ չափանիշերը, փաստօրէն, չեն համապատասխաներ ներկայ աշխարհի պայմաններուն ու նոր սերունդի մօտեցումներուն ու սպասումներուն: **Նոր սերունդը** սկսած է հեռանալ մեր կառոյցներէն, եւ նոյնիսկ անոնց կողմէ ծով գոհողութեամբ պահուած եւ սակայն հոն բանտարկուած մեր արժէքներէն ու ավանդութիւններէն եւ իր հայութիւն-

նը ապրիլ տարբեր մօտեցումներով ու կերպերով: Նոր սերունդին մօտ հայու ինքնութիւնը ենթակայ է աղօտելու վտանգին: Հո՛ւս է տազնապը, որովհետեւ նոր սերունդն է, որ նոր շունչով պիտի վերակենսաւորէ Սփիւռքը եւ կերտէ անոր ապագան: Արդ, ինչպէ՞ս կարելի է ներդաշնակութիւն ստեղծել հայու ինքնութեան երեք տարածքներուն՝ տեղայնականին, հայկականին ու համաշխարհայինին միջեւ, խուսափելով հակասութիւն ու բեւեռացում յառաջացնող մտածելակերպերէ ու կենցաղակերպերէ: Յաճախ շեշտած ենք նոր սերունդը մեր շուրջ համախմբելու եւ լուրջ երկխօսութիւն ունենալու կարելորութիւնը:

7.- Սփիւռքը տարբեր մտածողութիւններու հանդիսարան է, երբեմն գիրար հակասող ու երբեմն համընկնող՝ յաճախ պայմանաւորուած թե՛ ներ-Հայաստանեան եւ թե՛ տեղական ընկերա-քաղաքական ազդակներէ: Սա անխուսափելի երեւոյթ է: Անհրաժեշտ է, սակայն, Սփիւռքի գաղութները իրենց տեղայնական, ինքնակեդրոն ու բաժանարար մտածողութենէն դուրս բերել եւ համասփիւռքեան մտածողութիւն հունաւորել: Արդարեւ, անցնող տարիներուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ գումարուած համասփիւռքեան, երբեմն նաեւ համահայկական, կրթական, մշակութային, պատմական, պահանջատիրական, տեղեկատուական եւ այլ բնոյթի համագումարները, անոնց ճշդած ուղեգիծերը ու կատարած եզրայանգումները արդէն իսկ հունտերը ցանած են համասփիւռքեան մտածողութեան ձեւաւորման: Անոնք նաեւ մասնակիցներու ներկայացուցչական հանգամանքով ու որակով կրնան առանցքը դառնալ համասփիւռքեան ղեկավարութեան ստեղծման: Նման գործընթաց կ'ենթադրէ կառոյցներու միջեւ ներ-գաղութային ու միջ-գաղութային սերտ ու համապարփակ գործակցութիւն՝ համասփիւռքեան օրակարգի մը շուրջ: Նման նախաձեռնութիւն մը մեծապէս պիտի նպաստէ Սփիւռքի կեանքին վերաշխուժացման, մօտեցումներու ներդաշնակման եւ անոր համահայկական դերակատարութեան առաւել շեշտաւորման:

8.- Սփիւռքը զգոյշ պետք է ըլլայ թե՛ Հայաստանակեդրոն եւ թե՛ Սփիւռքակեդրոն մտածողութեան մէջ ինքզինք բանտարկելէ. իր կիզակետը պետք է դառնայ հայակեդրոն մտածողութեան զարգացումը, որ կրնայ տարբեր հայեցակէտերու երկխօսութեան լայն տարածք ստեղծել: Արդարեւ, իր իւրայատուկ շեշտաւորումներով ու հարուստ փորձառութեամբ Սփիւռքը կրնայ իր կարելոր նպաստը բերել **համահայկական** մտածողութեան մշակման՝ համահայկական օրակարգի մը ենթահողին վրայ: Արդ, ինչպէ՞ս կարելի է մէկ եւ նոյն հայութեան պատկանելիութիւնը իր արժէքներով ու տեսլականով դարձնել հիմքը ու հէնքը համահայկական մտածողութեան՝ պահելով հանդերձ տեղական պայ-

մաններու ու ազդակներու ազդեցութեան ենթակայ Սփիւռքին մօտեցումները, ինչպէս նաեւ՝ համասփիւռքեան առաջնահերթութիւններուն կարելորութիւնը: Առաջինը հրամայական է. իսկ երկրորդը՝ անխուսափելի:

9.- Սփիւռքը ունի մշակութային, հոգեւոր, տնտեսական, մասնագիտական, յարաբերական թէ փորձառական հսկայ **ներուծ**: Սակայն, տեղ մը՝ համակերպումը ու տեղայնացումը, այլ տեղ՝ անտարբերութիւնը ու անտեսումը սկսած են հայ կեանքէն հեռացնել իր սեփական ներուժը: Փաստօրէն, Սփիւռքը չէ կրցած իր ներուժին տեր դառնալ եւ զայն ճիշդ ու ամբողջական կերպով օգտագործել: Այս ուղղութեամբ փորձեր կատարուած են թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի կարգ մը կառոյցներուն կողմէ. սակայն անոնք եղած են մասնակի ու պարագայական: Սփիւռքի ներուժին կազմակերպումը ու օգտագործումը անհրաժեշտութիւն է: Նման ծրագիր կ'ենթադրէ հաւաքական ու հետեւողական աշխատանք:

10.- Հայաստանի վերանկախացումով սպասելի էր որ հանգրուանային կերպով **հայրենադարձութիւն** տեղի ունենար: Պատահեցաւ հակառակը: Հայաստանը չկրցաւ, չէր կրնար, տնտեսական զարգացման լայն կարելիութիւններ ստեղծել, եւ հայրենադարձութեան ծրագիրներ մշակել: Սփիւռքի հայերուն քաղաքացիութիւն տալը քաջալերական քայլ մըն էր, անկասկած. սակայն, ան հայրենիքին նկատմամբ զգացական կապը ամրացնելէ անդին չանցաւ: Վերջին տասնամեակներուն Հայաստանէն հեռացած հայերուն պարագային՝ հայրենադարձութիւնը անհրաժեշտութիւն է. իսկ աւանդական Սփիւռքին համար՝ ներկայ հանգրուանին, ան իրատեսութեան սահմաններէն դուրս կը նկատուի: Սակայն, հարկ է զայն պահել համազգային օրակարգի վրայ, որպէս ազգային պատկանելիութեան եական տարրերէն մէկը: Եթէ հայրենադարձութեան գաղափարը՝ ամբողջական Հայաստան ամբողջական հայութեամբ տեսլականով ամրագրուած, թէկուզ վախճանական հորիզոնի վրայ, անհետանայ հայ կեանքէն, Սփիւռքը պիտի կորսնցնէ իր նպատակասլաց ուղղուածութիւնը եւ ինքնամաշումը պիտի ընթանայ արագ: Տուեալները ցոյց կու տան, թէ Սփիւռքը երկար ժամանակ պիտի շարունակէ իր գոյութիւնը՝ ենթակայ գունաթափումի վտանգին: Արդ, ընդհանուր հայութեան թիւի աճը եւ Հայաստանի ու Արցախի մէջ հայութեան ֆիզիքական ներկայութեան պահպանումը առանցքային կարելորութիւն ունին: Այս նպատակը կարելի է իրագործել Հայաստանի մէջ՝ տնտեսութեան զարգացումով, անվտանգութեան երաշխաւորումով եւ Սփիւռքի փոքր ու մեկուսացած գաղութները, որոնք ինչ-ինչ պատճառներով ենթակայ են արագ ձուլման վտանգին, Հայաստան

ուղղելով. իսկ Սփիւռքի մէջ՝ ծնունդներու թիւը բազմապատկելով եւ այլ ազդու միջոցներու դիմելով:

11.- **Չգոր Չայաստան-հգոր Սփիւռք** տեսլականը պէտք է դառնայ ազգային ռազմավարութեան հիմքը ու նպատակակէտը: Առաւել քան երբեք Չայաստան եւ Սփիւռք իրարու կարիքը ունին: Չետեաբար, Սփիւռք-Չայաստան գործակցութիւնը պէտք է մնայ թէ՛ Չայաստանի եւ թէ՛ Սփիւռքի կեանքին կենսական տարածքներէն մէկը: Ճիշդ չէ՛ Սփիւռքը նկատել Չայաստանի կցորդ, ո՛չ ալ Չայաստանէն անջատ ինքնակեդրոն ու ինքնավախճան գոյութիւն: Ճիշդ չէ նաեւ Սփիւռքը նկատել սոսկ Չայաստանի մէջ բարեսիրական ծրագիրներու սատարող ու տընտեսական ծրագիրներ մշակող գաղութներու ամբողջութիւն: Սփիւռքը անբաժան ու անբաժանելի մասը կը կազմէ նոյն եւ մէկ հայութեան: Արդարեւ, Չայաստանը հայրենասիրութիւն առթող հայրենիք ըլլալէ անդին՝ ցարդ չկրցաւ դառնալ վստահութիւն ու յոյս ներշնչող, եւ աշխարհացիր հայութիւնը իր շուրջ համախմբող հաւաքական տուն: Վերջին տասնամեակին շեշտը դրուեցաւ տնտեսական ներդրումներու եւ թուրիստական այցելութիւններու վրայ: Յատկապէս Չայաստանի ներքաղաքական խնդիրները ու ընկերա-տնտեսական ծրագիրներուն օժանդակութիւնը կարելոր տեղ գրաւեցին սփիւռքահայութեան կեանքի մայր էջին վրայ, յաճախ լուսանցքի մէջ ձգելով Սփիւռքին առաջնահերթութիւնները: Չայ ժողովուրդի երկու բեւեռներուն միջեւ գործակցութիւնը պէտք է դառնայ համապարփակ, ծրագրուած եւ հետեւողական, հիմնուած՝ փոխադարձ վստահութեան վրայ: Սփիւռքի վերակենսաւորման մէջ էական է դերը Չայաստանին, մասնաւորաբար մշակութային ու կրթական մարզերուն մէջ: Միւս կողմէն՝ Չայաստան-Սփիւռք գործակցութեան շրջագծէն ներս, անհրաժեշտ կը նկատենք Չայաստանի կառավարման, ինչպէս նաեւ համահայկական խնդիրներու ու ծրագիրներու քննարկման մէջ Սփիւռքի գործօն մասնակցութիւնը:

Գ) ԴԵՊԻ ՍՓԻՒՐԷԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ - ՄԱՐԶԵՐ ԵՒ ԳՈՐԾՆՆԹԱՑՔ

Մեր մատնանշած մտահոգութիւններն ու մարտահրաւերները կը կարօտին խոր, իրատես ու համապարփակ քննարկման: Աւելի քան երեսուն տարի Չայաստանը եւ Արցախը դարձան Սփիւռքի կեանքին կիզակէտը: Անկասկած, մեր ազգին այս երկու բեւեռները իրենց խընդիրներով ու հրամայականներով Սփիւռքին համար պէտք է միշտ մնան առաջնահերթութիւն: Սփիւռքը ինքնավախճան իրականութիւն մը չէ. ան իր տեսլականը պէտք է միշտ ստեւռած պահէ Չայաստանի ուղղութեամբ, որ ողնասիւնը կը կազմէ հայ ազգի ներկային ու երաշ-

խիքը՝ անոր ապագային: Այս խոր գիտակցութեամբ Սփիւռքը կոչուած է ինքզինք վերակազմակերպելու: Այսօր մեր ազգին մեծամասնութիւնը կ'ապրի Սփիւռքի մէջ: Հետեւաբար ժամանակն է, որ մեր ազգի պատմութեան այս հանգրուանին ինքնակազմակերպումը դառնայ Սփիւռքին առաջնահերթութիւնը:

Կ'ուզենք կարելորութեամբ ընդգծել, թէ այլեւս չենք կրնար հիւժած կառոյցներով, զմռսուած մտածողութեամբ, կաղապարուած մօտեցումներով, հնամաշ օրակարգերով Սփիւռքը վերակազմակերպել ու վերակենսաւորել: Սփիւռքը իր կառոյցներով ու օրակարգով, իր կանոնադրութիւններով ու գործելակերպերով պէտք է դառնայ համահունչ նոր ժամանակներուն ու մարտահրաւերներուն: Ինչպէ՞ս կարելի է ձեռնարկել այս հսկայ աշխատանքին: Սփիւռքին պարզած ներկայ գոյավիճակին իրապաշտ արժեւորումը եւ ապա ծրագրումը պէտք է դառնան մեկնակետը ու մղիչ ուժը մեր աշխատանքներուն: Այս ուղղութեամբ առանցքային է դերը գաղութին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններուն ու միութիւններուն, ինչպէս նաեւ զանազան մարզերու մասնագետ ու փորձառու մտաւորականներուն:

ա) ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌՈՅՅՆԵՐ

Աւանդական Սփիւռքի կեանքը կազմակերպուած է եկեղեցւոյ շուրջ: Իւրաքանչիւր գաղութ եկեղեցին նկատած է իր հաւաքական կեանքին կեդրոնը եւ անոր շուրջ հիմնած զանազան մարզերու առնչուած իր հաստատութիւնները: Եկեղեցին, իր կարգին, չէ կրցած քայլ պահել կեանքի յարափոփոխ պայմաններուն հետ: Եկեղեցւոյ բարեկարգումը նոյնպէս հրամայական է: Եկեղեցի-ժողովուրդ յարաբերութիւնը նոր որակ ու ոճ պէտք է ստանայ ու եկեղեցին դառնայ ծառայական ներկայութիւն ժողովուրդի կեանքէն ներս: Ուստի, նկատի ունենալով եկեղեցւոյ կեդրոնական դերը գաղութի մը կեանքին մէջ, գաղութի վերակազմակերպումը հարկ է որ սկսի թեմական կեանքէն:

Վերջին Ազգ. Ընդհանուր Ժողովին (5-8 Դեկտեմբեր 2017) թէ՛ Մեր պատգամին եւ թէ ժողովի որոշումներուն մէջ կարելորութեամբ անդրադարձած էինք յատկապէս թեմերու վերակազմակերպման եւ ապա այս ուղղութեամբ յատուկ ուղեցոյց մը ճշդած: Սակայն, համաճարակը դանդաղեցուց մեր թեմերուն կողմէ կատարուելիք ծրագրումի աշխատանքները: Հոս կ'ուզենք ամփոփ գիծերով պարզել թեմերու շրջագծէն ներս ձեռնարկուելիք աշխատանքին ուրուագիծը.-

Թեմի վերակազմակերպման մէջ կարելոր դեր ունի **Հոգեւորականը**: Կոչումի գիտակցութիւն ունեցող եւ ներկայ ժամանակներու մարտահրաւերները դիմագրաւելու հոգեմտաւոր պատրաստութիւն ունեցող

հոգեւորականներու կազմաւորումը էական է: **Ծուխը**, որպէս հիմքը եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան, պետք է դառնայ վերակազմակերպման գործընթացին կիզակետը: Հարկ է եկեղեցւոյ վարչակազմակերպչական կեանքին մէջ գործող մարմինները վերաթարմացնել՝ պաշտօնի կոչելով ուսեալ եւ գործունեայ տիկիներ ու երիտասարդներ: Անհրաժեշտ է առաջնահերթ կարեւորութիւն ընծայել ա) **քրիստոնէական դաստիարակութեան՝** Կիրակնօրեայ վարժարաններու վերաշխուժացումով, հայկական վարժարաններէն ներս կրօնական նիւթերու դասաւանդումով ու հայ ընտանիքէն ներս հոգեւոր ու բարոյական արժեքներու կենսագործումով: բ) **ընկերային ծառայութեան**, զայն դարձնելով եկեղեցւոյ առաքելութեան էական մարզերէն մէկը: գ) **Հայ դպրոցին**, վերաշէշտելով անոր հայակերտումի առաքելութիւնը:

բ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ

Թեմը գաղութէն անկախ միաւոր մը չէ. թեմը ինքնին ժողովուրդն է: Այս առումով, համայնքի կեանքին մէջ գործող **կազմակերպութիւններու** ու թեմին միջեւ ներդաշնակ գործակցութիւնը, վստահաբար, պիտի նպաստէ գաղութի վերակազմակերպման: Արդ, թելադրելի է, որ **համագործակցութիւնը** սկսի ծրագիրներու պատրաստութեան ընթացքին: Համայնքային կառոյցները մասնակից են թեմական մարմիններու գործունեութեան, սակայն անոնք ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները եւ առաջնահերթութիւնները: Մեր կառոյցները սկսած են **մարդուժ** կորսնցնել. քանակին առընթեր նշմարելի է նաեւ որակի նահանջ: Նոր աւիւն հարկ է ներարկել անոնց, ապահովելով երիտասարդութեան, արական թէ իգական, տիրական ներկայութիւնը՝ նաեւ ղեկավարութեան մակարդակի վրայ: Կառոյցներու **կանոնագրութիւններու** այժմեականացումը եւ տեղական պայմաններուն պատշաճեցումը, պահելով հանդերձ անոնց համասփիւռքեան ու համահայկական բնոյթն ու նպատակը, անխուսափելի է: Կառոյցներու միջեւ սերտ **գործակցութիւն** ու անոնց գործունեութեանց միջեւ **ներդաշնակութիւն** ստեղծելը մեծապէս պիտի նպաստէ գաղութի կեանքին առաւել ծաղկման եւ Սփիւռքի աշխուժացման:

Սփիւռքի վերակազմակերպումը բարդ ու երկարաշունչ ծրագիր է: Նման հսկայածաւալ ծրագրի մը իրագործումը կ'ենթադրէ հաւաքական հաւատք ու նուիրում, ղեկավարութիւն ու յանձնառութիւն: Ան կը պահանջէ նաեւ մասնագիտական մօտեցում ու համապարփակ ծրագրում՝ հանգրուանային կերպով իրագործելի: Յիշեալ գործընթացին մէջ անհրաժեշտ է նկատի ունենալ տարբեր միջավայրերու մէջ ապրող գաղութներուն ներքին դրուածքը, գործող կառոյցներու իւրայատկութիւնները ու շրջապատը, եւ համապատասխան մօտեցում որդեգրել:

Արդ, ինչպե՞ս կարելի է յիշեալ հսկայ աշխատանքին ձեռնարկել.-

1) **Մթնոլորտի պատրաստութիւնը** նախապայման է: Մեր կառույցները, անոնց պատասխանատուները ու անդամները պատրաստ ու յանձնառու պետք է ըլլան վերակազմակերպումի անյետաձգելի անհրաժեշտութեան: Այս ուղղութեամբ յօդուածներու պատրաստութիւնը, հրապարակային քննարկումներու ու համագումարներու կազմակերպումը կրնան օգտակար դառնալ տեսակետներու փոխանակման, մըտքերու պատրաստութեան ու դրական միջավայրի ստեղծման:

2) **Իրաքանչիւր կառույց** ինք պետք է նախաձեռնէ իր վերակազմակերպման, նկատի ունենալով մեր արծարծած մտահոգութիւններն ու մատնանշած երեւոյթները, եւ ապա, անհրաժեշտութեան պարագային, իր կատարած աշխատանքը համադրելով այլ կառույցներու հետ:

3) Ծրագրումին հարկ է յաջորդէ **գործադրումը**: Սա բնականաբար ամենէն դժուար հանգրուանն է: Գործադրումը պետք է կատարուի յառաջատուական ընթացքով եւ ծրագրուած հետեւողականութեամբ:

Հաւատարիմ իր անցեալին, հայ ժողովուրդը կոչուած է ինքզինք յարատեւօրէն վերարժեւորման ու վերանորոգման ենթարկելու՝ համահունչ փոխուող ժամանակներուն, պայմաններուն ու մարտահրաւերներուն: Ա՛յս տեսլականով ու յանձնառութեամբ Սփիւռքը պետք է վերակազմակերպէ ու վերաշնչաւորէ ինքզինք: Սփիւռքը իր ներկայ վիճակին թողուլ, կը նշանակէ անոր ինքնամաշումը արագացնել: Սփիւռքի վերակազմակերպումը՝ անոր հզօրացումն է, իսկ Սփիւռքի հզօրացումը Հայաստանին ու Արցախին հզօրացումն է. եւ սա համազգային առաջնահերթութիւն է ու մարտահրաւեր: Հարկ է անյապաղ լծուիլ աշխատանքի:

Կը թելադրենք մեր Սուրբ Աթոռի թեմերուն անմիջապէս ձեռնարկել ծրագրումին, որպէսզի կարելի ըլլայ զայն ամբողջացնել յառաջիկայ Ազգ. Ընդհանուր Ժողովէն առաջ:


Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆՎԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Յակոբ Քինյ. Պզտիկեանին, Քահանայական Լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱԶ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Ղեւոնդ Քինյ. Լօշխաճեանին, Քահանայական Լանջախաչ
կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը իր թան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարզելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԳ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տեր եւ Տիկին Միհրան եւ Ջարմինէ Քիւրտօղլեանին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սրբազան յարկին ներքեւ:

Դուք, Տիար Քիւրտօղլեան. Ձեր մտաւոր կազմաւորումը ստացաք Անթիլիասի Դպրեվանքէն ներս: Եւ ինչ որ առիք Դպրեվանքէն, որպէս ուսում, կրթութիւն, ոգի ու տեսիլք, գանոնք առաքելութեան վերածած տարիք մեր ժողովուրդին ու Ձեր նուիրեալ ծառայութեամբ կենսագործեցիք մեր ժողովուրդի կեանքէն ներս անցնող շուրջ քառասուն տարիներու ընթացքին: Եղաք ուսուցիչ, տնօրէն, հրապարակագիր. այլ խօսքով՝ մեր ժողովուրդի արժէքներուն ու իտեալներուն տարածման նուիրուած մշակ, յատկապէս Յունաստանի հայոց կեանքէն ներս:

Իսկ դուք, Տիկին Քիւրտօղլեան, աւելի քան երեսուն տարիներ, որպէս կրթական մշակ Ձեր նպաստը բերիք մարդակերտումի ու հայակերտումի սրբազան առաքելութեան՝ Լիբանանի եւ Յունաստանի մէջ:

Արդ, որպէս գնահատանք Ձեր նուիրեալ ծառայութեան՝ կրթական, դաստիարակչական ու մշակութային մարզերէն ներս, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր զաւակներուն ու հարազատներուն պարգեւէ քաջառողջ եւ երջանիկ օրեր:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դռան Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 16-ն Հոկտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅՇԶ.*

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

**ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ
(Turning to God)**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 19 Ապրիլ 2020

Թուային (digital) ճարտարարուեստը օրհնութիւն մըն է համաճարակին պարտադրած ընդհանուր մեկուսացման պայմաններուն մէջ, որովհետեւ ան առիթը կ'ընծայէ մարդոց աշխատելու իրենց տուներէն եւ հասնելու ամէնօրեայ զանազան ու բազմազան կարիքներուն ու պահանջներուն:

ճարտարագիտական յեղաշրջումը նոր թափ տուաւ համաշխարհայնացման: Ան մարդկութիւնը վերածեց համացանցային ընկերութեան մը: Հաղորդակցութեան եւ տեղեկատուութեան ճարտարագիտութիւնը մեզ մեր հաստատութիւններէն, ընկերութիւններէն եւ շրջաններէն դուրս բերաւ, եւ մեզ նոյն հետաքրքրութիւններուն շուրջ խմբուած համաշխարհային ընկերութեան մը (Global virtual community) անդամը դարձուց: Սակայն, մենք պէտք է պահպանենք մեր ինքնութիւնը եւ թոյլ չտանք, որ ճարտարագիտութիւնը տարանջատէ եւ հեռացնէ մեզ մեր արժէքներէն ու ինքնութենէն:

Իմ դասախօսութիւններէս մէկուն մէջ, ակնարկելով ճարտարագիտութեան աննախընթաց յառաջդիմութեան, ըսած եմ որ անհրաժեշտ է արթուն ըլլալ եւ զանազանել ճարտարագիտութեան դրական ու ժխտական երեսները: Ըճարտարագիտութիւնը միաժամանակ թէ՛ յառաջդիմութիւն է եւ թէ՛ սպառնալիք: Կարճ ժամկէտի վրայ՝ անոր նպատակն է դիւրացնել մեր կեանքը, սակայն երկար ժամկէտի վրայ՝ ան կը նուազեցնէ մարդուն ստեղծագործական կարողութիւնը: Թէեւ որպէս նպատակ, աւելի որակաւոր կեանք մը կ'ապահովէ, սակայն միաժամանակ, ան կրնայ կործանել աստուածատուր կեանքի պարզեւր, վտանգելով կենսոլորտային միջավայրը, սպառելով աննորոգելի աղբիւրները, շահագործելով կենսաբանական գիտական հետազօտութիւնները՝ տնտեսական եւ զինուորական նպատակներու համար, խորացնելով ընկերա-տնտեսական անհաւասարութիւնները եւ աւելցնելով անգործներու թիւը՝ տնտեսական ուժը կեդրոնացնելով հարուստներու եւ զօրաւորներու ձեռքին մէջ: Արդ, ճարտարագիտութիւնը կրնայ օգտագործուիլ թէ՛ բարի եւ թէ՛ չար նպատակներու համար: Հարկ է ըլլալ զգոյշ անոր ճիշդ օգտագործման գծով:

Մեր կեանքը ճարտարագիտութեամբ մղուած ու տիրապետուած է: Ներկայ ընկերութիւնները վերածուած են ճարտարագիտական ընկերութիւններու նոյնիսկ՝ աշխարհի ամենահեռաւոր շրջաններուն մէջ: Այս ընթացքը պիտի շարունակուի յարաճուն կերպով: Թէեւ այլեւս չենք կրնար հակակշռել կամ նոյնիսկ դանդաղեցնել այս գործընթացը, այդուհանդերձ կրնանք պատասխանատուութեամբ գործածել ճարտարագիտութիւնը եւ ըլլալ իրապաշտ, իմաստուն եւ հնարամիտ մեր մօտեցումներուն մէջ:

Ճարտարագիտութեան նկատմամբ մեր մօտեցումը հարկ է արժէքէ մը մղուած ըլլայ: Միշտ պէտք է յիշենք, որ թէեւ ճարտարագիտութիւնը կրնայ մարդկութեան համար հանգստաւէտ կեանքի պայմաններ ստեղծել, սակայն չի՛ կրնար տալ այնպիսի արժէքներ, որոնք մարդկային կեանքին իմաստ ու նպատակ կու տան եւ կ'ապահովեն անոր արժանապատուութիւնը: Ճարտարագիտութիւնը կրնայ մարդը անմարդացնող ուժի մը վերածուիլ, եթէ բարոյագիտութեան սկզբունքներով ու պատասխանատուութեան գիտակցութեամբ չօգտագործուի: Օրինակ, կրօնը ի՞նչ կեցուածք հարկ է որդեգրէ մարդուն ծինային բարեփոխութեան կարելիութեան հարցին գծով: Հետզհետէ ծաւալող ճարտարագիտութիւնը պիտի շարունակէ բարոյագիտական լուրջ հարցեր ստեղծել, մասնաւորապէս կենսաբարոյագիտութեան ոլորտին մէջ, եթէ ան համահունչ չէ բարոյական արժեզփայտումը:

Երկուշաբթի 20 Ապրիլ 2020

Փոխակերպումը կարեւոր տեղ գրաւած է միջ-եկեղեցական օրակարգին եւ քննարկումներուն մէջ: «Աստուած, քու շնորհքովդ փոխակերպէ աշխարհը» եղած էր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի 9-րդ Համաժողովի նիւթը (2006, Փորթօ Ալեկրէ, Պրագիլ): Իբրեւ ատենապետը Ե.Հ.Խ. Կեդրոնական վարչութեան, որ նաեւ կ'ատենապետէ Խորհուրդի համաժողովներուն, բացման խօսքս սկսայ հետեւեալ բառերով. «Այս խոռվայոյզ աշխարհին մէջ, որ կը ղեկավարուի կործանարար ուժերով, մենք Աստուծոյ պէտք է դառնանք եւ աղօթենք՝ Աստուած, քու շնորհքովդ փոխակերպէ աշխարհը: Աղաչանք մը, որ կ'արտաբերի մեր կոտորած սրտերէն. յոյսի նշան մը, որ ի յայտ կու գայ մարդկային կեանքը դիմագրաւող անորոշութիւններու մէջ. հաւատքի արտայայտութիւն մը, որ կ'արձագանքէ աշխարհի լարուածութիւններուն ու անձկութեանց քառսին մէջ»:

Փոխակերպումը, մարդկութեան եւ ամբողջ ստեղծագործութեան ուղղուած Աստուծոյ շնորհքն է՝ Քրիստոսի յայտնութեամբ իրականացուած (Կղ 1.19–20, Փլպ 2.7): Քրիստոսով, երկրորդ Ադամով (Ա.Կր 15.45), վերականգնուեցաւ Աստուծոյ ստեղծագործութեան եւ մարդկութեան համերաշխ յարաբերութիւնը, որ խզուած էր՝ Առաջին Ադամի մեղքին պատճառով: Ինչպէս Պօղոս առաքեալ կը հաստատէ. «Ոնեւ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է»: (Բ.Կր 5.17):

Փոխակերպում կը նշանակէ մարդկային ընկերութեան մարդկայնացումը: Պատմութեան ընթացքին բազմաթիւ քաղաքական, կրօնական, տնտեսական եւ գաղափարախօսական արժեզօններ ստեղծուեցան, վերականգնելու համար մարդկութեան քայքայուած մարդկայնութիւնը: Անոնք ձախողեցան: Փոխակերպումը կ'իրականանայ, երբ մարդկութիւնը կ'առաջնորդուի բարոյական եւ հոգեւոր արժէքներով: Փոխակերպումը տեղի կ'ունենայ, երբ մարդկութիւնը Աստուծոյ կը դառնայ: Փոխակերպումը կ'իրականանայ, երբ զԱստուած վերստին մեր կեանքին մէջ կ'ընդունինք: Միայն Աստուծոյ շնորհքով եւ Սուրբ Հոգիի ներգործութեամբ է որ ստեղծագործութիւնն ու մարդկութիւնը կը փոխակերպուին՝ «Նոր երկիւնքի մը ու Նոր երկրի մը» (Յա 21.1) դառնալով:

Աւելի քան երբեք, ներկայիս աշխարհը կարիքը ունի Աստուծոյ փոխակերպող շնորհքին, որպէսզի կարենայ պայքարիլ ահաւոր տագնապներու եւ վտանգալից վերիվայրումներու դէմ, որոնք կը սպառնան մարդկութեան ու մանաւանդ՝ անոր գոյութեան: Համաճարակը հրաւէր մըն է, լծուելու փոխակերպող հոգեւոր գործընթացի մը: Ճգնաժամային ներկայ պայմաններուն, երբ ամբողջ աշխարհը կը պայքարի Քովիտ-19 համաճարակին արթած հետըզհետէ աճող սարսափին դէմ, խոր հաւատքով ու պաղատանքով կը դիմեմ Աստուծոյ աղօթելով՝ «Ո՛վ Աստուած, քու շնորհքովդ բժշկէ՛, փոխակերպէ՛ եւ պաշտպանէ՛ մարդկութիւնը»:

Աղօթքը բժշկարար գորութիւնն ունի:

Աղօթքը փոխակերպելու գորութիւնն ունի:

Աղօթքը ներդաշնակող գորութիւնն ունի:

Աղօթքը ազատագրող գորութիւնն ունի:

Աղօթքը փրկարար գորութիւնն ունի:

Իրաւամբ, աղօթքը մարդիկ իրարու կը մօտեցնէ եւ կը յիշեցնէ մեր հասարակաց մարդկութիւնը Աստուծոյ դիմաց:

Եկէք «միշտ աղօթեմք՝ առանց վիատելու» (ՂԿ 18.1), ինչպէս սորվեցուց մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

Երեւշաբթի, 21 Ապրիլ 2020

Այս առաւօտ, հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցայ միջ-եկեղեցական յարաբերութեանց ծիրէն ներս գործող բարեկամի մը հետ: Յիշեցինք միջ-եկեղեցական շարժումի փառքի օրերը, եւ բաժնեցինք այս մարզին վերաբերող մեր մտահոգութիւններն ու հեռանկարները:

էքումէնիզմը սերտօրէն ընդելուզուած է կեանքիս ու ծառայութեանս հետ եւ կը շարունակէ կարեւոր տեղ գրաւել իմ աշխատանքներուս մէջ որպէս հոգեւոր պետ: Միջ-եկեղեցական շարժումը յատկապէս նպաստած է ինծի խորացնելու ծանօթութիւններս եւ ընդարձակելու մտքիս հորիզոնը:

Արդարեւ, միջ-եկեղեցական շարժումին մեծագոյն նպաստներէն մէկը եղած է համախմբել աշխարհի չորս ծագերուն ապրող մարդիկը, տարբեր եկեղեցիներէ, մշակոյթներէ ու ցեղերէ եւ զանոնք հրաւիրել միասնաբար գործելու հոգեւոր շրջագծի մէջ: Միջ-եկեղեցական շարժումի ճամբով, այն եկեղեցիները, որոնք իրենց վարդապետական համոզումներուն պատճառով եւ պատմական պայմաններուն բերումով օտարացած էին իրարմէ, ներգրաւուեցան հաւաքական քննարկումներու մէջ, եւ կարգ մը պարագաներու՝ պաշտօնական աստուածաբանական երկխօսութիւն ունեցան:

Միջ-եկեղեցական շարժումէն ներս իմ ունեցած պատասխանատուութեան բարիքներէն մէկը եղած է ծանօթանալ բազմաթիւ անուանի աստուածաբաններու, որոնք նշանակալից ազդեցութիւն ունեցած են իմ աստուածաբանական կազմաւորման եւ միջ-եկեղեցական փորձառութեան վրայ. անոնց կարգին են Nikos Nissiotis, Jürgen Moltmann, John Deschner, Lukas Visser, John Zizoulas, John Meyendorff, Paul Vergese, Alexander Schema-mann, Kalistos Ware, Anne Marie Aagaard, Wolfhart Pannenberg, M. M. Thomas, Vitaley Borovoy, Thomas Stransky, Jean-Marie Tillard, Harvey Cox, and Gregory Baum. Լսելով անոնց տեսակէտները, սորվեցայ, թէ ինչպէս պէտք է մտածել՝ միջ-եկեղեցական ոգիով ու հայեցակէտով, եւ ինչպէս առնչել անձնական աստուածաբանական տեսակէտներս՝ միջ-եկեղեցական հաւաքական մտածողութեան: Սորվեցայ նաեւ ներդաշնակել զաւանակական ուսուցումները, միջ-եկեղեցական հեռանկարներուն ու մտահոգութիւններուն հետ եւ ներդաշնակ փոխյարաբերութիւն մը ստեղծել տեղական եւ համաշխարհային մօտեցումներուն միջեւ:

Միջ-եկեղեցական շարժումի ծիրէն ներս, մօտէն գործակցեցայ բազմաթիւ անձնաւորութիւններու հետ՝ ի խնդիր միջ-եկեղեցական շարժումին ծաւալման եւ անոր նպատակներուն իրականացման: Անոնցմէ շատեր, աւելի ուշ, կարեւոր պաշտօններ վարեցին իրենց պատկանած եկեղեցիներուն մէջ: Անոնց շարքին կ'արժէ յիշել His All Holiness Patriarch Bartholomew I, His Holiness Patriarch Kirill I, His Holiness Patriarch Daniel, His Holiness Pope Shenouda III, His Holiness Patriarch Zakka I, His Holiness Patriarch Apherem II, His Holiness Patriarch Theophilos III, His Holiness Patriarch Theodore II, His Beatitude Anastasios Yannoulatos, Rev. Clifton Kirkpatrick, Bishop Wolfgang Huber, Archbishop Aaron Tollen, and Rev. Jean-Arnold de Clemont. Երկար տարիներ միասին եղանք, միասին քննարկումներ կատարեցինք, իրարմէ սորվեցանք եւ մեր տեսակէտներն ու փորձառութիւնները բաժնեցինք:

Երկու յաջորդական շրջաններու համար (1991–1998 եւ 1998–2006) Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ատենապետ ընտրուեցայ, բան մը որ աննախընթաց էր Խորհուրդի պատմութեան մէջ, եւ բախտաւոր եղայ գործելու Խորհուրդի երեք ընդհանուր քարտուղարներու հետ, յանձինս՝ Dr. Emilio Castro (Uruguay), Dr. Konrad Raiser (Germany) եւ Dr. sam Kobia (Kenya),

որոնք տարբեր եկեղեցիներէ, մշակոյթներէ եւ շրջաններէ եկած ըլլալով, բնականաբար տարբեր աստուածաբանական պատրաստութիւն ու գործելա-
 ոճ ունէին: Միջ-եկեղեցական շարժումը սորվելու շարունակական ընթացք
 մըն է, որուն մասնակից եղողը յարատեւ ինքնազարգացման ընթացքի մէջ
 կ'ըլլայ: Միջ-եկեղեցական շարժումէն ներս գործեցի երկար տարիներ՝ նախ
 որպէս երիտասարդ վարդապետ, ապա 15 տարիներ շարունակ՝ որպէս ատե-
 նապետ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական եւ Գործա-
 դիր Վարչութեանց, եւ վերջերս՝ իբրեւ նախագահ Միջին Արեւելքի Եկեղե-
 ցիներու Խորհուրդին, դարձեալ երկու շրջան (2006-2010 եւ 2010-2015): Ե-
 րախտապարտ եմ Աստուծոյ, որ զիս դէպի միջ-եկեղեցական շարժում առաջ-
 նորդեց եւ զօրացուց զիս հոգեւոր ծառայութեանս մէջ: Միջ-եկեղեցական
 շարժումը նաեւ իւրայատուկ շրջագիծ մըն է, որուն մէջ մեր դաւանաբանա-
 կան, մշակութային, տեղական, վարդապետական եւ աստուածաբանական
 տարբերութիւնները իրենց փոխազդեցութեամբ մէկ կողմէ երեւան կը բե-
 րեն մեր զանազանութիւնները եւ միւս կողմէ՝ առիթ կ'ընծայեն խօսելու մեր
 աստուածաբանական ժառանգութեան մտածողութեան հասարակաց գիծե-
 րուն մասին: Արդարեւ, շատ բան սորվեցայ ուրիշներու հետ խօսակցելով եւ
 զանոնք լսելով, անդրադարձայ, որ գիտելիքներս երբեմն սահմանափակ են.
 Երկխօսութեան մէջ ներգրաւուելով՝ հարստացուցի ու խորացուցի ծանօթու-
 թիւններս. ուրիշներու հետ կապի մէջ մտնելով՝ առաւել եւս հաստատեցի
 ինքզինքս:

Յաճախ կը յիշեցնեմ երիտասարդ սերունդին, որ միջ-եկեղեցական շար-
 ժումը ընտրանք մը չէ, այլ՝ քրիստոնեայ ըլլալու կենսական ուղղութիւն մը:
 Ան մեզ կը հրաւիրէ հաւատարիմ մնալու մեր պատկանած եկեղեցւոյ. եւ
 միաժամանակ՝ մարտահրաւէր մըն է, բացուելու քրիստոնէական աշխարհի
 հարուստ զանազանութեան: Մեծապէս կը ցաւիմ, երբ կը տեսնեմ միջ-եկեղե-
 ցական գործակցութեան որակի ու յանձնառութեան նահանջը՝ զանազան
 պատճառներով: Մենք կարիքը ունինք տեսիլք ունեցող նոր անձերու, որ-
 պէսզի քաջալերեն ու մղեն երիտասարդութիւնը լրջութեամբ մասնակից
 դառնալու միջ-եկեղեցական շարժումին:

Զորեհարթի, 22 Ապրիլ 2020

Այսօր, 22 Ապրիլը Երկիր մուրակի օր է: Փոքրեր կ'երգեն. «Մենք կ'ու-
 զենք աւելի մաքուր եւ աւելի ապահով աշխարհ մը...»: Խեղճ երկիր, ստեղ-
 ծագործութեանդ առաջին իսկ պահէն չարաշահումի եւ նոյնիսկ կործա-
 նումի ենթարկուեցար անոնց կողմէ, որոնց Աստուած պարտականութիւն
 տուած էր քու տնտեսներդ ու պաշտպաններդ ըլլալու:

Այսօր, տեղական Ֆրանսերէն օրաթերթին մէջ յօդուած մը կարդացի, որ
 կ'ըսէ թէ «Քորոնա վիրուսէն օգտուողը երկիրն է...»: Առաջին իսկ ակնար-

կով, նման հաստատում մը կրնայ տարօրինակ թուիլ, բայց ճիշդ է: Մասնագետներու համաձայն, մեծ ճարտարարուեստ ունեցող երկիրներու մէջ, գործարաններու փակման պատճառով կենսոլորտը նուազ ապականած է, երկինքը կապոյտ է, օդը՝ մաքուր, եւ նկատելի չափով նուազած՝ ազօթի քանակը: Ցարդ կատարուած գնահատումներուն համաձայն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու ջերմանոցի կազի արձակումները զգալի կերպով նուազած են՝ հասնելով Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն ետք արձանագրուած նուազագոյն քանակին:

Երկրի բնապահպանման համակարգին շարունակ վատթարացումը մեծ վտանգ կը սպառնայ մոլորակին եւ անոր բնակիչներուն: Ճարտարարուեստով հարուստ պետութիւններ չյարգեցին իրենց յանձնառութիւնը՝ Միջավայր եւ Զարգացում անունը կրող Միացեալ Ազգերու Խորհրդաժողովին (UNCED), 1992-ին, Երկիր Պայմանագրութեան, 2000-ին եւ հետեւող զանազան միջազգային խորհրդաժողովներու որոշումներուն: Հետեւաբար, կենսոլորտի ապականման հարցը կը շարունակէ մնալ համաշխարհային օրակարգի գլխաւոր նիւթերէն մէկը:

Բնութեան եւ կենսոլորտի վերաբերող հարցերը կ'առնչուին մարդկութեան, ստեղծագործութեան եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութեան: Հետեւաբար, անհրաժեշտ է անոնց մասին խօսուի աստուածաբանութեան, կենսոլորտի եւ բարոյագիտութեան տեսանկիւնէն դիտուած:

Կլիմայ, միջավայր, մոլորակ, բնութիւն, համաստեղ, տիեզերք, աշխարհ, ստեղծագործութիւն եւ բնապահպանման համակարգ, կը բնորոշեն ստեղծագործութեան զանազան տարրերը: Նախընտրելի է գործածել «ստեղծագործութիւն» բառը որովհետեւ ան աստուածաբանական նշանակութիւն ունի, որուն մէկ փոքր բաժինն է միայն մեր մոլորակը:

Աստուած տիեզերքի ստեղծիչն է. «Երկիւնքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը անոր արարչութեան կը վկայէ» (Մղ 19.1): Ծննդոցը ստեղծագործութեան հրաշալի պատմութիւնն է, որուն համաձայն, ան ոչինչէն գոյացաւ: Աստուծոյ ստեղծագործութիւնը կը շարունակուի տարբեր կերպերով՝ մինչեւ աշխարհի վախճանը: Սուրբ Հոգիին միջոցաւ, Աստուած շարունակաբար կ'առաջնորդէ, կը կառավարէ, կը պաշտպանէ, կը բժշկէ, կը նորոգէ եւ կը կատարելագործէ ստեղծագործութիւնը: Ուստի, կարեւոր է յըստակօրէն զանազանել ստեղծագործութիւնը կազմաւորման գործընթացէն:

Աստուած պաշտօն տուաւ առաջին մարդուն որ «տիրէ երկրին» (Ծնն 1.28): Աստուծային պատուիրանը խարդախուեցաւ ու շարաշահուեցաւ մարդուն կողմէ: Առաջին մարդէն սկսեալ մարդը անտեսեց աստուածատուր հրահանգը եւ շարաշահեց ստեղծագործութիւնը, մեծ վնասներ պատճառելով անոր: Բնութեան տագնապը արդիւնքն է մարդ արարածին անհատատարմութեան՝ տնտեսելու իրեն վստահուած աշխարհը: Աստուծոյ տունը դոհն է մարդուն սպառողական եւ տնտեսական սխալ քաղաքականութեան, եւ

քաղաքական փառատենչ ձգտումներուն:

Տիեզերքի համակարգին խախտումը եւ անոր հասած անդարմանելի վնասը լուրջ սպառնալիք մըն է մարդու գոյատեւման: Անտառահատումը, կազերով յառաջացած անձրեւը, կորիզային շողարձակումը, օդի ու ջուրի ապականումը, փոթորիկները, ջրհեղեղները, երաշտը, անտառային հրդեհները, մորիկները եւ միջավայրային չարաչահումի բազմազան այլ երեւոյթներ, աղիտալի վնաս պատճառած են մոլորակին՝ մարդկութեան միակ բնակավայրին: Վիճակագրութիւններու եւ գիտական վերլուծումներու համաձայն, կենսոլորտին հասած վնասը սարսափեցուցիչ է: Ասոր կողքին, բնակչութեան թիւի անհամեմատ աճը եւ անոր ընկերակցող սննդանիւթերու եւ ջուրի նուազումը կրնան երկիր մոլորակը ամբողջական կործանումի եզրին հասցնել: Պէտք է անդրադառնանք, որ մարդկութիւնն ու տիեզերքը ի բնէ սերտօրէն առնչուած են իրարու եւ՝ ենթակայ նոյն ճակատագրին: Մենք երկիրը կ'որակենք մայր երկիր եւ բնութիւնը՝ մայր բնութիւն: Ան է մարդկութեան գոյութեան երաշխիքը:

Արարչութիւնը եւ այս պարագային մեր մոլորակը իբրեւ Աստուծոյ գործը, սուրբ է: Ան Աստուծոյ կողմէ տրուած է, որպէսզի պատշաճ եւ պատասխանատու կերպով գործածուի մարդուն կողմէ եւ մաքուր, ապահով պահուի: Ասիկա է Աստուծոյ պատուէրը եւ մարդ արարածին կոչումը: Մարդկութիւնը ստեղծագործութեան վրայ իր իշխանութիւնը պէտք է կիրառէ Աստուծոյ գերիշխանութեան սահմանին մէջ եւ իր պատասխանատուութիւնը՝ ստեղծագործութեան նկատմամբ՝ միշտ Աստուծոյ հաշուետուութեան գիտակցութեամբ: Մարդ արարածը գործակից է Աստուծոյ (Ա.Կր 3.9), եւ ստեղծագործութիւնը ճոխացնելու եւ պաշտպանելու պատասխանատուութիւնը ունի: Ան տեսուչը, տնտեսը, ղեկավարն ու կառավարիչն է ստեղծագործութեան, բայց ո՛չ սեփականատէրը: Երբ ստեղծագործութեան հետ կը վարուինք զայն չարաչահելու նպատակաւ, անտեսած կ'ըլլանք մեր Աստուծատուր պատասխանատուութիւնը: Եթէ Աստուծապարգեւ ազատութիւնը մարդ արարածին կողմէ պատասխանատուութեան եւ հաշուետուութեան գիտակցութեամբ չի գործադրուիր, կը դառնայ մեղքի ու չարիքի աղբիւր:

Ուստի, ստեղծագործութեան դէմ գործադրուած բռնութիւնը, ինքնին բռնութիւն է Աստուծոյ գործին դէմ: Բազմաթիւ ազգեր, տնտեսական զարգացման հետամուտ ըլլալով կը դիմեն բնական աղբիւրներու չարաչահումին: Ինչ որ բռնութիւն է ստեղծագործութեան հանդէպ: Տնտեսական ամման սեղանին վրայ զոհելով տիեզերքի պաշտպանութիւնը, այդ ազգերը կը սպառնան տիեզերքը կործանել: Իսկ մարդուն օտարացումը ստեղծագործութենէն, ինքնին օտարացումն է ինքնիր անձէն. տիեզերքին կործանումը՝ մարդուն իսկ կործանումն է: Որովհետեւ՝ մարդ արարածը ինքզինք չի կրնար հասկնալ ստեղծագործութեան շրջագծէն դուրս: Որովհետեւ՝ մարդկութիւնը չի կրնար գոյատեւել առանց ստեղծագործութեան: Մարդկութեան ապագան

բացարձակօրէն կախեալ է երկիր մոլորակի առողջ պահպանութենէն: Արդարեւ, ստեղծագործութեան առողջ կենսոլորտին պահպանումը անհրաժեշտ հրամայական մըն է: Ասիկա գոյութեանական մարտահրաւէր մըն է: Փրկելու համար ստեղծագործութիւնը, մարդկութիւնը ինք կարիք ունի փրկուելու՝ վերականգնելով իր պատասխանատուութիւնը ստեղծագործութեան նկատմամբ որպէս գործակից Աստուծոյ: Միջազգային համայնքը իր հրատապ խնդիրներու օրակարգին մէջ առաջնահերթ տեղ պէտք է տայ կենսոլորտային հարցերուն՝ մշակելով այնպիսի ծրագիրներ, որոնք կը նպաստեն մարդկութեան հաւաքական տան պաշտպանութեան: Միւս կողմէ, Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը պէտք է կենսոլորտին դէմ գործադրուած ոճիրներու միջազգային ատեան մը հաստատէ:

Հիմնգշարթի, 23 Ապրիլ 2020

Երէկ գիշեր, Լոս Անճելոս բնակող ծանօթներէս մէկը պատկեր մը ղրկած էր, ուր Քրիստոս դուռ մը կը թակէ: Ամբողջ օրը մտածեցի այդ պատկերին եւ Յայտնութեան գիրքի այն հատուածին մասին, ուր կ'ըսուի՝ «ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիս: Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ, ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ» (Յտ 3.20): Արդարեւ, երբեմն պարզ թուացող պատկեր մը կամ մտածում մը, կրնայ զօրաւոր պատգամ մը փոխանցել:

Յիսուս Քրիստոս դրան առջեւ կանգնած՝ կը թակէ. եկէք խորհրդածենք այս պատկերին մասին:

Յիսուս Քրիստոս ապրող իրականութիւն է եկեղեցւոյ՝ իր խորհրդական մարմինին մէջ, եւ կ'առաջնորդէ ու կը պահպանէ անոր կեանքը, վկայութիւնը եւ ծառայական առաքելութիւնը: Պատմութեան Յիսուսը եւ հաւատքի Քրիստոսը, ինչպէս կարգ մը Սուրբ Գրային ուսումնասիրութիւն կատարողներ կը զատորոշեն, մէկ եւ անբաժանելի իրականութիւն է: Ճիշդ է, Յիսուս Քրիստոս պատմական իրողութիւն է, սակայն ան պատմութեան չի պատկանիր: Յիսուս Քրիստոս կ'ընկերակցի բոլոր անոնց, որոնք զինք ընդունեցին իբրեւ իրենց միակ Փրկիչը, որուն հետեւեցան՝ Աւետարանի ճշմարտութիւններն ու արժէքները դարձնելով իրենց կեանքը առաջնորդող սկզբունքներն ու մղիչ ուժը: Պէտք չէ մոռնանք երբեք Տիրոջ կողմէ մեզի տրուած խոստումը՝ «եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մտ 28.20): Իրօք, Քրիստոս տարբեր կերպերով, ամէն տեղ, բոլոր ժամանակներուն եւ մեր կեանքի բոլոր պայմաններուն մէջ, մեզի հետ է եւ կը թակէ մեր դռները, եթէ պատրաստ ենք լսելու իր ձայնը, եւ ընդունելու զինք մեր կեանքէն ներս:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ հարստահարուած եւ անտեսուած մարդոց միջոցաւ: Պատրաստ ենք բանալու մեր դռները եւ օգնութեան ձեռք երկարելու անոնց:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ որբերու, թափառող երեխաներու եւ քայքայուած ընտանիքներու զաւակներուն միջոցով: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ սիրով ու հոգածութեամբ ընդունելու զանոնք:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ կարիքաւոր ընտանիքներու միջոցաւ: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ հոգալու անոնց կարիքները ու ընդառաջելու անոնց ակնկալիքներուն:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ մեր դրացիներուն միջոցաւ: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ անոնց հետ կիսելու մեր սէրն ու ուրախութիւնը, մեր մտահոգութիւններն ու վիշտերը:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ կարիքաւոր աշակերտներու միջոցաւ: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ մեր նպաստն ու օժանդակութիւնը ընձեռելու անոնց:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ անարդարութեան զոհ դարձած անհատներուն միջոցաւ: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ միանալու անոնց՝ ի խնդիր արժանապատուութեան իրենց մղած պայքարին:

Յիսուս Քրիստոս մեր դռները կը թակէ գաղթականներու միջոցաւ: Պատրա՞ստ ենք բանալու մեր դռները եւ արժանապատիւ կերպով ընդունելու զանոնք:

Եկէք յիշենք Քրիստոսի պատուիրանը. «Կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք» (Մտ 25.40):

Ուրբաթ, 24 Ապրիլ 2020

Այսօր հայ ժողովուրդին համար արդարութիւն պահանջելու օր է: Ապրիլ 24, 1915: Հայոց Յեղասպանութեան աւելի քան մէկ եւ կէս միլիոն նահատակներու յիշատակի օրը խորապէս արմատացած է մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ: Յեղասպանութեան նկատմամբ միջազգային համայնքին հակազդեցութիւնը, ժամանակի ընթացքին ծաւալեցաւ: Թուրքիոյ շարունակական ուրացումին եւ աշխարհաքաղաքական պայմաններուն փոփոխութեանց լոյսին տակ, Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող պետութիւններու եւ Ոչ-Կառավարական Կազմակերպութիւններու թիւը մեծ աճ արձանագրեց:

Հայոց Յեղասպանութեան 50-ամեակը, 1965 վճռորոշ դարձակէտ մըն էր: Ան նոր գործընթացի մը ազդանշանը տուաւ, նպատակ ունենալով Հայկական դատը դարձնել այժմէական, զայն փոխադրելով համաշխարհային օրակարգին վրայ: Զոհերուն յիշատակը իրաւա-քաղաքական դատի վերածուցաւ, որ կ'ենթադրէ Հայոց Յեղասպանութեան ճանաչում եւ դատապարտում, ինչպէս նաեւ՝ վերականգնում հայ ժողովուրդի օրինական իրաւունքներուն ու արդար պահանջներուն:

Յեղասպանութեան հարիւրամեակը, 2015, անկիւնադարձային դէպք մըն էր: Ես զայն սահմանեցի երեք բանալի բառերով՝ յիշել, յիշեցնել, պահանջել:

Հարիւրամեակը լայն անդրադարձ ունեցաւ թէ՛ համահայկական եւ թէ՛ միջազգային մակարդակներու վրայ: Հայոց դատին առնչուած աշխատանքներուն աշխուժացման եւ միջազգային համայնքին դրական մօտեցումներուն դիմաց, Թուրքիոյ ժխտական հակազդեցութիւնը առաւել եւս յարձակողական դարձաւ. Թուրքիոյ պետութիւնը հովանաւորեց նոր հիմնարկ մը, որ կը նպատակադրէ «գարգացնել լայն եւ ազդու ռազմավարութիւն մը, ընդդէմ հայկական պահանջներուն»:

Ճշմարտութիւնը ընդունելն է երկու ազգերու միջեւ մերձեցման ուղիղ ճանապարհը: «Սպաննելու Հրահանգներ» իր նոր գիրքին վերջին գլուխին մէջ (2018, Նիւ Եորք), Հայոց Յեղասպանութեան Թուրք մասնագէտ Թանէր Աքչամ կ' ուսումնասիրէ Թալաթ Փաշայի հեռագիրները, ուր ան կը հրահանգէ ամբողջական բնաջնջումը «Թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերուն», եւ կը հրամայէ, որ «ոչ մէկ ուշադրութիւն պէտք է տրուի ո՛չ տարիքի, ո՛չ սեռի եւ ոչ ալ Փիզիքական վիճակի»: Աքչամ կը գրէ. «Այս աշխատանքը ո՛չ միայն փաստեց, որ Թալաթի հեռագիրները բնագիրներ են, այլ նաեւ հաստատեց Հայոց Յեղասպանութենէն վերապրողներուն պատմութիւնները, որոնք սերունդէ սերունդ փոխանցուած են, ինչպէս նաեւ՝ ոչ հայ ականատեսներու վկայութիւնները: Նոյնպէս, նոյն նիւթին մասին հարիւրաւոր ակադեմական աշխատանքներով բացայայտուած պատմական ճշմարտութիւնները վերահաստատուած են: Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին Օսմանեան Կայսրութեան մէջ իթիհատական կառավարութիւնը հետապնդեց բնաջնջումի կանխամտածուած քաղաքականութիւն մը՝ հայ բնակչութեան դէմ»:

Աքչամ իր վաւերական ուսումնասիրութիւնը կ' եզրակացնէ թրքական ասացուածքով մը՝ «Ճշմարտութիւնը դիպուածով լոյսին գալու գէշ սովորութիւն մը ունի»: Կը յուսամ որ Թուրքիան լրջութեամբ պիտի մօտենայ իր նախահայրերուն այս յիշեցումին: Կը հաւատամ՝ յուսալով եւ հաւատալով Աստուածաշունչի հաստատումին, թէ «հայ ծածուկ բան՝ որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան՝ որ երեւան չգայ» (ՂԿ 8.17):

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 5)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԲԵՏԱՐԱՆԻ (3.1-5)

«Նիկողեմոս անունով Փարիսեցի մարդ մը կար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի բով եկաւ եւ ըսաւ անոր. "Վարդապետ, գիտե՞նք որ դուն Աստուծոյ կողմէ յրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կըրնայ գործել ինչ կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ"» (Յհ 3.1-2):

1) «Նիկողեմոս» կը նշանակէ՝ «ժողովուրդը նուաճող»: Փարիսեցի իշխանաւոր մըն էր, եւ իբր այդպիսին՝ ան խորհրդատու էր ժողովուրդին: Ուսեալ ու գիտնական անձ էր: Սուրբ գիրքերուն գիտութեան տիրապետած մը: Ուսման ծարաւով տոչորող մը: Իր գալը Յիսուսի քով ցոյց կու տայ, թէ Յիսուսի բոլոր հետեւորդները անուս մարդիկ չէին, ինչպէս յաճախ կը խորհինք: Յիսուսի քով եւ անոր սրտին մէջ իրենց տեղը կրնան ունենալ բոլոր մարդիկը՝ ուսեալ եւ անուս, հարուստ եւ աղքատ, ռամիկ եւ ազնուական, իշխանաւոր ու հասարակ: Յիսուսի սէրը բոլորի՛ն համար կը հոսի: Անոր ներումը բոլորի՛ն կը բաշխուի: Անոր գթութիւնը բոլորը կ'ընդգրկէ:

2) Նիկողեմոս Փարիսեցի իշխանաւոր մը ըլլալով՝ անդամ էր Հրեաներու բարձրագոյն ժողովին, որ կը կոչուէր՝ Ատեան (Յունարէնով՝ Սինեդրիոն): Այս Ատեանին իրաւասութիւնն էր ազգային ու կրօնական կարեւոր հարցերու գծով վճիռ արձակել: Նման դիրքի վրայ գտնուող անձ մը երբեք չէր դիմեր ուրիշին հարցումով մը: Միշտ ուրիշն էր որ այդպիսիներուն կը դիմէր հարցումով կամ հարցի մը գծով, պատասխան ու լուծում գտնելու համար: Բայց տարբեր էր Նիկողեմոս. ուսումն ու գիտութիւնը սորվեցուցած էին իրեն խոնարհ ըլլալ, հեզ ու համեստ ըլլալ: Եւ որովհետեւ այդպիսին էր՝ դիմեց Յիսուսի:

3) Նիկողեմոս լայն գիտութիւն ունէր, բայց տակաւին չէր գտած ճշմարտութիւնը որ կրնար խաղաղութեամբ լեցնել իր սիրտը: Որոնումի մէջ էր: Յիսուսի գործած հրաշքներուն մասին լսած ըլլալով, եւ հաւանաբար ոմանց ականատես դարձած ըլլալով՝ եկաւ այն եզրակացութեան, որ նման մէկը «Աստուծոյ կողմէ յրկուած ուսուցիչ» պէտք է ըլլայ: Նիկողեմոսի նման, մենք եւս, կրնանք գիտութիւն ունենալ, ուսում ու վկայական ունենալ, եւ սակայն, տառապիլ հոգեկան դատարկութենէ: Գիտութիւնը կրնայ լեցնել

մարդուն միտքը, բայց չի կրնար լեցնել անոր սիրտն ու հոգին: Մարդուն հոգին՝ մարդուն Ստեղծիչը միայն կրնայ լեցնել:

4) Նիկողեմոս «գիշերով Յիսուսի ֆով եկաւ», որ կը նշանակէ գաղտնաբար: Ինչո՞ւ գաղտնաբար եկաւ: Պատմութենէն գիտենք թէ որքան նեխածութիւն կար Փարիսեցիներուն կեանքին մէջ (Մտ 23.13-36ը այս մասին ռեւէ կասկած չի թողուր), յատկապէս կեանքին մէջ անոնց՝ որոնք անդամ էին բարձրագոյն Ատեանին, որոնցմէ մին էր Նիկողեմոս, ինչպէս տեսանք: Նման ժողովի անդամ եղող մը անշո՛ւշտ չէր կրնար համարձակ կերպով դիմել քարոզիչի մը որ չէր ճանչցուած ու վաւերացուած իրենց կողմէ: Չար ժողով մըն էր, որոնց մէջ սակայն բարի պտուղ մը կար՝ Նիկողեմոսը: Միջավայր մը որքան ալ չար ըլլայ, Աստուած անպայման զաւակ մը կ'ունենայ հոն:

5) Ուրիշ պատճառ մըն ալ կար թէ ինչո՞ւ «գիշերով Յիսուսի ֆով եկաւ»: Անոնց երկխօսութենէն յատկ է որ Նիկողեմոս մտահոգ էր իր անձին փրկութեամբ: Ան Աստուծոյ արքայութիւնը ժառանգել կ'ուզէր: Ան կ'ուզէր Յիսուսի հետ առանձին խօսիլ այս մասին: Ատիկա չէր կրնար ընել ցերեկ ժամանակ, երբ Յիսուս գործով ու քարոզութեամբ տարուած կ'ըլլար: Տիրոջ հետ առանձնութեան պահ մը կը փնտռէր: Այդ առանձնութեան պահուն էր որ իր հոգիին աչքերը բացուեցան: Անոնք որոնք իրենց անձերուն փրկութիւնը կը հետապնդեն, թող Նիկողեմոսէն սորվին գիշերով Տիրոջ հետ առանձնանալ եւ անոր հետ խօսիլ:

6) Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն, թէ Նիկողեմոս հետեւորդ մըն էր Յիսուսի, բայց իր պաշտօնակիցներէն վախնալով՝ կը ծածկէր իր հետեւորդութիւնը, եւ անոր համար է որ գիշերով եկաւ անոր քով: Միշտ ալ եղած են ու կան մարդիկ, որոնք ուրիշէն վախնալով՝ փորձած են ծածուկ պահել իրենց հետեւորդութիւնը Յիսուսի: Ծիշդ է որ Տէրը իր հետեւորդներուն կը պատուիրէ օձի պէս խորագէտ ըլլալ (Մտ 10.16), բայց երբեք չի պատուիրեր որ ծածուկ պահենք մեր հետեւորդութիւնը իրեն: Ընդհակառակը, ան կը պատուիրէ, որ երբ մեր հաւատքի ճրագը վառենք՝ կաթսայի տակ չդնենք, այլ՝ աշտանակի վրայ, որպէսզի բոլորը տեսնեն մեր լոյսն ու բարի գործերը (Մտ 5.15-16):

7) Նիկողեմոս ուսուցիչ ըլլալով՝ Յիսուսը կը կոչէ վարդապետ, ուսուցիչ: Ան սակայն կը գիտակցի թէ Յիսուս իրեն կամ իր գործակիցներուն նմանող ուսուցիչ մը չէր, այլ՝ «Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ մը», եւ իբր այդպիսին՝ ան ճշմարիտ ու ճշմարտութիւնը ուսուցանող ուսուցիչ է: Քրիստոսի եկեղեցին բազմաթիւ ուսուցանողներ ունի, բայց մէ'կ ճշմարիտ Ուսուցիչ ունի: Ամէն ուսուցանող, գիտակցաբար թէ անգիտակցաբար կրնայ ճշմարտութեան մէկ մասը ծածկել, բայց Յիսուս իբրեւ երկնաւոր ուսուցիչ՝ բացարձակ ճշմարտութիւնը միայն կը յայտնէ, եւ զանիկա կը յայտնէ իր ամբողջ մերկութեամբ:

8) «Ո՛չ ոք կրնայ գործել ֆու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»: Նիկողեմոս այս խօսքը չ'ըսեր զգացականութենէ տարուած: Ան ուսումի ու գիտութեան մարդ էր. պրպտող ու հետազօտող միտք ունէր: Ան

Յիսուսի գործած հրաշքներուն մասին լսելով կամ զանոնք տեսնելով յստակ գիտցաւ որ Աստուած Յիսուսի հետ է: Նիկողեմոս կը գիտակցէր թէ Աստուած Յիսուսի հետ է, բայց չէր գիտակցեր թէ Աստուած Յիսուսի հետ է՝ իբրեւ անոր համագոյակիցը, բնութենակիցը, էակիցը: Նիկողեմոս անգիտակցաբար Հօր եւ Որդիին անբաժանելիութիւնն է որ հաստատեց:

9) Նիկողեմոս կը վկայէ, թէ ապացոյցը որ Աստուած Յիսուսի հետ է՝ նոյնինքն անոր գործած հրաշքներն են: Բայց այս վկայութիւնը միայն Նիկողեմոսի վկայութիւնը չէր, այլ՝ քանի մը հոգիներու, որովհետեւ ան չ'ըսեր «գիտեմ», այլ յոգնակի ձեւով՝ «գիտենք»: Ոմանք կ'ենթադրեն թէ Նիկողեմոս առանձին չեկաւ Յիսուսի քով, այլ իրեն հետ բերաւ իր աշակերտներէն մէկ քանին: Ուրիշներ կը խորհին թէ այլ Փարիսեցիներ ալ կային, որոնք համոզուած էին որ Յիսուս Աստուծոյ կողմէ զրկուած էր, եւ Նիկողեմոս անոնց անունով ալ կը խօսի երբ կ'ըսէ «գիտենք»:

«Յիսուս պատասխանեց անոր. "Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չ'ծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը"» (Յն 3.3):

1) **Չարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ, թէ «"վերստին" բառին համար գործածուած Յունարէն բառը կը նշանակէ նաեւ "վերէն", այսինքն՝ Աստուծմէ, Սուրբ Հոգիէն: Յայտնապէս Յիսուս բառախաղ կ'ընէ նոյն բառին գոյգ իմաստներուն վրայ»:** Եւ վստահաբար այդպէս է, որովհետեւ Յիսուս յստակօրէն կը խօսի երկու ծնունդներու մասին. եթէ առաջին ծնունդը մեր երկրաւոր ծնողներէն տեղի կ'ունենայ, ապա երկրորդ ծնունդը՝ մեր երկնաւոր Ծնողէն՝ Սուրբ Հոգիէն: Օգոստինոս կ'ըսէ, թէ «ամէն քրիստոնէայ մարդ պէտք է ծննդեան երկու տարեդարձներ ունենայ, առաջինը յստակ է թէ ո՛րն է, իսկ երկրորդը՝ Սուրբ Հոգիէն ծնիլն է»: Ոսկեբերան Հայրապետը նաեւ «վերածնունդ» բառը կը հասկնայ երկու իմաստներով, «վերէն՝ երկինքէն ծնունդ», եւ «վերստին ծնունդ, այսինքն՝ երկրորդ ծնունդ»:

2) Նիկողեմոս Յիսուսը կոչեց «Աստուծմէ զրկուած ուսուցիչ», եւ վկայեց որ Աստուած անոր հետ է: Յիսուս սակայն յայտնեց իրեն, թէ ասոնք բաւարար չէին որպէսզի կարենար փրկուել ու երկինք մտնել: Տէրը յայտնեց իրեն, որ եթէ կ'ուզէր արքայութիւնը տեսնել՝ պէտք էր վերստին ծնէր: Նիկողեմոսի նման մենք եւս կրնանք Յիսուսը կոչել երկնաւոր Ուսուցիչ, երկինքի Թագաւոր, Տէր ու Փրկիչ, բայց այս բոլորը մեզ չեն փրկեր, եթէ երբեք Սուրբ Հոգիին առջեւ չենք բացած մեր սիրտը, որպէսզի Յիսուսի արիւնով մաքրէ հոն գրանուող աղտերը, եւ նոր սիրտ հաստատելով մեր մէջ՝ նոր ծնունդ շնորհէ մեզի:

3) Յիսուսի խօսքը ուղղուած Նիկողեմոսի, յստակ կերպով ցոյց կու տայ թէ Նիկողեմոս իր անձին փրկութիւնը կը փնտռէր, այլ խօսքով՝ կ'ուզէր փրկուել, կ'ուզէր արքայութիւնը տեսնել: Փարիսեցիները կը հաւատային որ Աբրահամի սերունդէն ըլլալը եւ Մովսէսի Օրէնքը պահելը բաւարար էին փրկուելու ու արքայութիւն մտնելու. բայց Նիկողեմոս, Աբրահամի սերունդէն եւ օրինապահ Փարիսեցի մը ըլլալով հանդերձ դատարկութիւն մը կը

զգար իր մէջ, պակաս բան մը կը զգար: Յիսուս լուծում բերելու համար անոր ներքին տառապանքին ու մտատանջութեան՝ անոր կ'ըսէ. «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Այս բառերով Յիսուս յայտնեց Նիկողեմոսին, որ ո'չ թէ Աբրահամի սերունդէն եղողն է որ Աստուծոյ արքայութիւնը պիտի մտնէ, այլ ան՝ որ կը ծնի Սուրբ Հոգիէն. ո'չ թէ Մովսէսի Օրէնքը պահողն է որ պիտի տեսնէ արքայութիւնը, այլ՝ Սուրբ Հոգիին Օրէնքը պահողը, եւ այդ Օրէնքը այն է՝ որ մէկը Աստուծոյ Հոգիէն պէտք է ծնի՝ որպէսզի կարենայ Աստուծոյ արքայութիւնը տեսնել: Եւ որպէսզի այս մասին Նիկողեմոս եւ ուրիշներ ոեւէ կասկած չունենան, Յիսուս իր խօսքը կը սկսի «լա՛ւ գիտցիր» (հին թարգմանութիւնը կ'ըսէ՝ «ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի», իսկ Յունարէնը՝ «ամէն, ամէն կ'ըսեմ քեզի»¹) բառերով: Այս բառերով, Յիսուս կ'ուզէր վստահեցնել Նիկողեմոսի, թէ իր ըսածը բացարձակապէս ճշմարիտ է, եւ թէ Աստուծոյ արքայութիւնը մտնելու ու տեսնելու ուրիշ ճամբայ կամ ուրիշ ձեւ չկայ:

4) Բացատրութեանս մէջ դիտմամբ փոխնիփոխ գործածեցի «մտնել» եւ «տեսնել» բառերը, որովհետեւ, տուեալ համարին մէջ Յիսուս կը գործածէ «տեսնել» բառը, իսկ 5-րդ համարին մէջ՝ մտնել բառը. ըստ կարգ մը մեկնիչներու այս երկու բառերը առնչուած են երկու տարբեր իրականութեանց: Համաձայն Ոսկեբերան Հայրապետին, երբ Յիսուս կ'ըսէ՝ «եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը», ինքզինքին է որ կ'ակնարկէ. այսինքն, մէկը որ չի ծնիր Սուրբ Հոգիէն՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը՝ Քրիստոսը: Արդարեւ, Քրիստոս Աստուծոյ արքայութիւնն իսկ է: Երբ առիթով մը ըսաւ՝ «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ կը գտնուի» (ՂԿ 17.21), յայտնապէս ինքզինքին էր որ կ'ակնարկէր Յիսուս, ըսել ուզելով. «Ե՛ս եմ ձեր սպասած Աստուծոյ թագաւորութիւնը եւ ահա ես ձեր մէջ եմ, ձեր մէջ կը գտնուիմ, ձեր մէջ ու ձեզի հետ կ'ապրիմ»: Իսկ արքայութիւն «մտնել»ը՝ Տիրոջ երկրորդ գալուստին է որ տեղի պիտի ունենայ: Այս առումով, Յիսուս, Նիկողեմոսի հետ իր խօսակցութեան ընթացքին կը յայտնէ անոր, եւ բոլորիս, թէ ով որ երկրի վրայ չի կրնար արքայութիւնը տեսնել, չի կրնար իր սրտին մէջ արքայութիւնը ապրիլ, պիտի չկարենայ հոն մտնել ու զայն ժառանգել՝ իր երկրորդ գալուստին ու աշխարհի կատարածին:

5) Իսկ ի՞նչպէս կամ ե՞րբ տեղի կ'ունենայ վերստին ծնունդը: Մարդը վերստին կը ծնի ճիշդ այն պահուն, երբ անդրադառնայ որ ինք ողբալի վիճակի մէջ է, երբ անդրադառնայ թէ ինք դէպի յաւիտենական կորուստ տանող ճամբուն մէջ է, երբ գիտակցի այն դառն դատարկութեան որ կը տիրէ իր սրտին ու հոգիին մէջ, երբ գիտակցի թէ ինք կ'ապրի մեղքի կործանարար ազդեցութեան տակ, ու կը գործէ Սատանային իշխանութեան ներքեւ, եւ դառնայ Տիրոջ ու լալահառաջ աղաղակէ. «Ա՛խ, Տէ՛ր, Տէ՛ր, ազատէ՛ զիս այս վիճակէն: Յիսու՛ս, Սուրբ Հոգիին միջոցաւ մեռցո՛ւր մէջս մեղքն ու մեղքին

¹ Տե՛ս 3հ 1.51-ի բացատրութիւնը, թիւ 1:

սերը, եւ դի՛ր մէջս սերդ, երկինքի՛ սերը, Աստուծո՛յ սերը, բարութեան ու բարիներո՛ւն սերը: Մեոցո՛ւր մէջս մարմնաւորն ու մարմինին սերը, եւ տնկէ ներսիդիս սէ՛ր՝ անմարմին ու աննիւթական իրականութեան հանդէպ: Տէ՛ր Յիսուս, սպաննէ՛ ներսիդիս հին մարդը, ու յարուցանէ նո՛ր մարդը: Քանդէ՛ Չարին բագին դարձած սրտիս սեղանը, ու հոն կառուցէ Աստուծոյդ տանարը: Արմատախի՛լ ըրէ ներսիդիս աշխարհասիրութիւնը, եւ անոր փոխարէն երկնասիրութեան ծաղիկը բուսցուր մէջս: Ներէ՛ ինծի Յիսուս: Ներէ՛ ինծի այն բոլոր մեղքերուս համար, որով քեզ ցաւցուցի ու անարգեցի, եւ փոխարէնը Չարը ուրախացուցի: Եւ այսօ՛ր, ա՛յս պահուս, եւ քեզ կը հրաւիրեմ որ դառնաս թագաւորը սրտիս ու սրտիս սիրոյն, դառնաս տեսուչն ու խնամատարը հոգիիս, դառնաս առաջնորդը մտքիս դեկիւն»: *Եթէ այս աղօթքը սրտանց ըրիր կամ ընես, քաջ գիտցիր որ ծնար վերստին. քեզի կը մնայ որ խնդրես Սուրբ Հոգիէն, որ քեզի շնորհէ սրտիդ մէջ Աստուծոյ արքայութիւնը տեսնելու կարողութիւնը, եւ Արքայ Աստուծոյ՝ Քրիստոսի կամքին ներքեւ ապրելու պարգեւը*²:

«Նիկողեմնոս հարցուց անոր. "Մեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի"» (Յհ 3.4):

1) Հին Կտակարանը կը խօսի նոր սիրտ ու նոր հոգի ունենալու մասին (Եզ 18.31, 36.26), բայց չի խօսիր վերստին ծնելու մասին այն յստակութեամբ՝ որ Յիսուս խօսեցաւ, եւ անոր համար ալ Նիկողեմնոս չհասկեցաւ թէ ինչ ըսել կ'ուզէր Յիսուս «վերստին ծնիլ» բացատրութեամբ: Իրեն համար նորութիւն էր Յիսուսի ուսուցումը: Յիսուս իրեն խօսեցաւ հոգեւոր ծնունդի մասին, մինչդեռ Նիկողեմնոսին միայն մէ՛կ ծնունդ ծանօթ էր՝ մարմնաւոր ծնունդը: Ան ունէր Սուրբ գիրքերուն գիտութիւնը, բայց չունէր գիտութիւնը Սուրբ Հոգիին՝ որուն ներշնչումով գրուած էին այդ գիրքերը: Եւ որովհետեւ չունէր Սուրբ Հոգիին գիտութիւնը եւ չունէր Սուրբ Հոգիին՝ չկրցաւ հասկնալ Տիրոջ խօսքին իմաստը: Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ «Աստուծոյ Հոգին չունեցող մարդը չ'ընդունիր Աստուծոյ Հոգիին բերած ճշմարտութիւնները, որովհետեւ անոնք յիմարութիւն կը թուին իրեն. եւ չի կրնար զանոնք ճանչնալ, որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին» (Ա.Կր 2.14): *Թէեւ Նիկողեմնոս չմերժեց եւ ոչ ալ յիմարութիւն կոչեց Յիսուսի խօսքը, բայց չկրցաւ հասկնալ ու ճանչնալ այն խորունկ ճշմարտութիւնը որ Տէրը յայտնեց իրեն, «որովհետեւ անոնք միայն Հոգիով կը քննուին»: Եթէ Սուրբ Հոգիով լեցուն չենք՝ չենք կրնար տեսնել այն խորունկ ճշմարտութիւնները որոնք ծածկուած են իր խօսքերուն մէջ*:

2) Նիկողեմնոս չէր գիտեր թէ ինչ կը նշանակէ վերստին ծնունդ, բայց կ'ուզէր ու պատրաստ էր սորվելու, եւ անոր համար հարցուց Յիսուսի. «Մեր

² Վերստին ծնունդի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար՝ անհրաժեշտ է կարդալ Յհ 3.5-6 համարներուն բացատրութիւնը:

մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Մենք պատրա՞ստ ենք Նիկողեմոսի նման հարցնելու ու սորվելու մեր չգիտցած բաներուն մասին: Այստեղ հանդէս կու գայ Նիկողեմոսի անկեղծութիւնը, եւ միաժամանակ՝ ճշմարտութիւնը գիտնալու անոր փափաքը: Առիթով մը, երբ Յիսուս իր հետեւորդներուն խօսեցաւ իր մարմինը ուտելու եւ արիւնը խմելու մասին, շատեր գայթակղեցան եւ հեռացան իրմէ «եւ այլեւս չէին շրջեր իրեց հետ» (ՅՀ 6.66), բայց Նիկողեմոս Յիսուսի ըսածէն չգայթակղեցաւ եւ չհեռացաւ իրմէ, ընդհակառակը մնաց անոր մօտ եւ պնդեց որ գիտնայ ճշմարտութիւնը: Հաւանաբար մտածէք թէ Յիսուսի ըսածին մէջ գայթակղեցուցիչ բան չկայ. ճիշդ էք. մեզի՛ համար սակայն չկայ. Փարիսեցիին համար կար. մի՛ մոռնաք որ Յիսուս խօսեցաւ վերստին ծնելու մասին, եւ հաստատեց թէ առանց այդ ծնունդին՝ մէկը չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը: Մեծամիտ Փարիսեցիին (խօսքը Նիկողեմոսի մասին չէ) համար Տիրոջ այս խօսքը անշուշտ գայթակղեցուցիչ էր, որովհետեւ անիկա կը հաւատար որ Աստուծոյ արքայութիւնը տեսնելու համար՝ բաւարար էր Աբրահամի սերունդէն ծնած ըլլալը, մինչդեռ Յիսուս այստեղ կը խօսի տարբեր ծնունդի մը մասին, չեչտելով թէ առանց այդ ծնունդին մէկը չի կրնար Աստուծոյ արքայութիւնը տեսնել:

3) Հաստատեցի թէ Նիկողեմոսի հարցումը հանդէս բերաւ իր անկեղծութիւնն ու ճշմարտութիւնը գիտնալու փափաքը: Տիրոջ ուղղած իր հարցումը հանդէս կը բերէ իր այլ երկու առաքիւնութիւնները՝ համեստութիւնն ու խոնարհութիւնը: Փարիսեցի ուսուցիչ մը անկարելի էր որ ուրիշին բան մը հարցնէր՝ անկէ բան մը սորվելու նպատակով: Անոնք ինքնահաւան ու գոռոզ կ'ըլլային. իրենց այդ ինքնահաւանութիւնն ու գոռոզութիւնը թոյլ չէր տար իրենց՝ որ ուրիշին ոեւէ բան հարցնեն կամ ուրիշէն ոեւէ բան սորվին: Ինքնահաւանութիւնն ու գոռոզութիւնը կուրցուցած էր զիրենք: Բարկութեան մէկ պահուն Յիսուս զիրենք կոչեց «կո՛յր առաջնորդներ» (Մտ 23.16,24), «յիմարնե՛ր, կոյրե՛ր» (Մտ 23.17), «կո՛յր Փարիսեցի» (Մտ 23.26): Տարբե՛ր էր Նիկողեմոս, այլապէս Յիսուս նման խոր նիւթի մը վերաբերեալ երկխօսութեան մէջ պիտի չմտնէր անոր հետ: Նիկողեմոս երկար տարիներու ուսուցիչ եւ Սուրբ գիրքերու մասնագէտ էր, բայց սորվելու ու յաւելեալ բաներ գիտնալու փափաքը միշտ վառ էր իր մօտ: Թող այսօրուան գիտուններն ու վկայական ունեցողները Նիկողեմոսէն խոնարհ ըլլալ սորվին, հարցում հարցընել սորվին, իրենց գիտութիւնը զարգացնել սորվին:

«Յիսուս պատասխանեց. "Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՛ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել"» (Յհ 3.5):

1) Եկեղեցւոյ բոլոր հայրերը՝ Ամբրոսիոս, Կիպրիանոս Վկայ, Յովհան Ոսկեբերան Հայրապետ, Որոգիինէս, Ակլիմանտոս Աղեքսանդրացի, Յերոնիմոս, Գրիգոր Տաթեւացի, եւ ուրիշներ, հոս յիշուած ջուրը ակնարկութիւն կը նկատեն մկրտութեան խորհուրդի ջուրին: Մեր վերածնունդին ու փրկութեան

Համար անհրաժեշտ է մկրտութիւնը, որովհետեւ, մկրտութեամբ կը միանանք Քրիստոսի. «Ձե՞ք գիտեր, թէ մե՞նք՝ որ Յիսուս Քրիստոսի միանալով մկրտուեցանք...» (Հռ 6.3): *Մկրտութեամբ նոր ծնունդ կ'ունենանք եւ կը վայելենք Սուրբ Հոգիին վերանորոգութիւնը.* «Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Հոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց» (Տիտ 3.5): *Մկրտութիւնը մեզ կը փրկէ, մեր խղճմտանքը կը մաքրէ, եւ մաքուր խղճմտանքով Աստուծոյ կ'ընծայէ.* «...Մկրտութիւնը, որ ձեզ կը փրկէ՝ ո՛չ թէ մարմնական աղտը սրբելով, այլ՝ մարդս մաքուր խղճմտանքով Աստուծոյ ընծայելով, Յիսուս Քրիստոսի յարութեամբը» (Ա.Պո 3.21): *Մկրտութեամբ կը լուսաւորուինք.* «Անոնք՝ որ անգամ մը լուսաւորուելով մկրտուելէ...ետք՝ իրենց հաւատքը կը լինեն...» (Եբր 6.4-6): *Մկրտութեամբ կը դառնանք բնակարան Քրիստոսի.* «Անգամ մը որ Քրիստոսի միանալով մկրտուեցաք՝ այլեւ Քրիստոս է որ կ'ապրի ձեր մէջ» (Գղ 3.27): *Մկրտութեամբ Սուրբ Հոգին կը ստանանք.* «Երբ մկրտուիմք, խոստացուած պարգեւը՝ Սուրբ Հոգին պիտի ընդունիք» (Գրծ 2.38): *Մկրտութեամբ մեղքերու թողութիւն ձեռք կը ձգենք.* «...Մկրտուեցէք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի ձեր մեղքերը ներուի» (Գրծ 2.38): *Մկրտութիւնը փրկարար դեր կ'ունենայ, եթէ անոր ընկերանայ հաւատքը.* «Ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի» (Մր 16.16):

2) *Մեր վերածնունդին, այլ խօսքով՝ մեր նորոգութեան ու նոր մարդ դառնալուն համար անհրաժեշտ է ջուրը, որովհետեւ մկրտութեան եկած չափահաս անձը կամ մկրտութեան բերուած մանուկը պէտք է ջուրին մէջ մխրճուի (ընկղմուի), որպէսզի Քրիստոսի մահուան հաղորդակից դառնայ: Քրիստոսի մահուան հաղորդակից դառնալով է որ մկրտուած անձը իր վերածնունդը կ'ապրի: Այս մասին Պօղոս առաքեալ կ'ըսէ.* «Ձե՞ք գիտեր, թէ մե՞նք՝ որ Յիսուս Քրիստոսի միանալով մկրտուեցանք՝ մկրտութեամբ անոր մահուան հաղորդակից դարձանք: Այսինքն, մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդ եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մե՞նք նորոգուած կեանքով ապրինք» (Հռ 6.3-4): *Տե՛ս նաեւ՝ Գղ 3.27): Առաքեալը կ'ըսէ նաեւ.* «Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց» (Կղ 2.12): *Ոմանք կ'ըսեն թէ մկրտութիւնը խորհուրդ չէ, այլ՝ խորհրդանիշ: Եթէ մկրտութեամբ Յիսուսի հետ թաղուել է՝ ի՞նչպէս անիկա կրնայ խորհուրդ չըլլալ, եւ ի՞նչպէս անիկա կրնայ անհրաժեշտ չըլլալ մեր փրկութեան համար: Թաղուելը՝ մեր հին ինքնութեան կամ մեր մէջ հին մարդուն թաղուելը չէ՞, մեր նախկին կեանքին թաղուելը չէ՞: Ի՞նչպէս կրնանք փրկուել առանց թաղելու մեր հին ինքնութիւնն ու կեանքը մկրտութեամբ: Մկրտութիւնը միայն Քրիստոսի հետ թաղուել չէ, այլ նաեւ՝ անոր յարութեան մասնակից դառնալ է. «Եւ անոր հետ ալ յարութիւն առիք»: Ի՞նչպէս կրնանք Յիսուսի հետ յարութիւն առնել առանց հետը թաղուելու՝ մկրտութեամբ: Ի՞նչպէս կրնայ նոր մարդը ծնիլ մեր մէջ, եթէ հին մարդը չմեռնի մկրտութեամբ:*

Մանուկին կամ չափահաս մարդուն երեք անգամ մխրճուեմը ջուրին մէջ՝ Քրիստոսի երեքօրեայ թաղման խորհուրդը կը կրէ: Այս առումով, մկրտութիւնը՝ Քրիստոսի հետ մեռնիլ ու թաղուիլ է: Եւ սակայն, ինչպէս Քրիստոս մեռաւ ու թաղուեցաւ, բայց մեռած ու թաղուած չմնաց, այլ՝ յարութիւն առաւ, նոյնպէս ալ, ոեւէ անձ որ ջուրին մէջ մխրճուելով կը մկրտուի՝ ջուրէն դուրս կու գայ իբրեւ նո՛ր անձ, նո՛ր կեանք: Այս իմաստով, մկրտութեամբ՝ մարդուն մէջ կը մեռնի հին մարդը, եւ յարութիւն կ'առնէ նո՛ր մարդը, եւ այդ ձեւով մարդը պարած կ'ըլլայ իր վերածնունդը: Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ Աստուած «մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Հոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց» (Տիտ 3.5): Յստակ է, որ այս նոր ծնունդը, կամ վերածնունդը, միայն Սուրբ Հոգիին միջոցաւ չարուեցաւ, այլ՝ մկրտութեան ջուրին եւ Սուրբ Հոգիին միջոցաւ: Մկրտութեան ջուրը, հետեւաբար, Քրիստոսի արեան պէս եւ Սուրբ Հոգիին չափ կարեւոր է մեր փրկութեան համար. «Ի՛նքն էր, Յիսուս Քրիստոսը, որ մեզ սրբելու եկաւ իր մկրտութեամբ եւ իր արիւնով: Ո՛չ միայն ջուրով, այլ՝ ջուրով եւ արիւնով: Եւ Սուրբ Հոգին ինք կը վկայէ ասոր մշմարտութեան, որովհետեւ Հոգին ինք մշմարտութիւնն իսկ է: Եւ այս երեւ վկայները՝ Սուրբ Հոգին, մկրտութեան ջուրը եւ արիւնը, երեւն ալ նոյն վկայութիւնը կու տան» (Ա.ՅՆ 5.6-8): Թէպէտ հաստատեցինք թէ մկրտութեան ջուրը կարեւոր է մեր փրկութեան համար, եւ սակայն, հաստատածին վերջին բառերը՝ «ո՛չ միայն ջուրով, այլ՝ ջուրով եւ արիւնով», յստակ կերպով ցոյց կու տան, թէ մկրտութիւնը օգուտ չի բերեր չափահաս մարդուն եթէ անիկա Յիսուսի սրբարար արեան չէ յանձնուած, եւ ոչ ալ մանուկին՝ եթէ անիկա Յիսուսի սրբարար արեան չյանձնուի իր ծնողներուն կողմէ: Մեր եկեղեցին մանուկներու մկրտութիւնն է որ կը քաջալերէ, բայց հոս մենք չափահասներու մկրտութեան ալ ակնարկութիւն ըրինք, որովհետեւ Յիսուսի խօսքը ուղղուած է Նիկողեմոսին, եւ Նիկողեմոս չափահաս էր: Եկեղեցւոյ հայրեր, սակայն, շատ խօսած են մանուկներու մկրտութեան մասին: Յիշեմ իրենց խօսքերէն փունջ մը.–

– «Եկեղեցին մանուկները մկրտելու աւանդութիւնը առաքեալներէն առաւ» (Որոգիինէս):

– «Սուրբ Հոգին կարելի կը դարձնէ որ նորածին մանուկը վերանորոգուի ու վերածնի երբ անիկա մկրտուի» (Օգոստինոս):

– «Մանուկները մկրտելը առաքելական ծագում ունի, եւ չկա՛յ մէկը որ ասոր դէմ խօսի» (Շաֆ):

– Փետոս անունով գալառական եպիսկոպոս մը հարցուց. «Պատշա՞ն է մկրտել երեխաները անոնց ութօրեայ ըլլալէն առաջ, նկատի առնելով որ Հրեաներ իրենց մանուկները ութօրեայ ըլլալէ ետք կը թլփատէին»: Ասոր պատասխանեցին Կիպրիանոս եւ 66 եպիսկոպոսներ, որոնք ժողով մը գումարեցին 250 թուականին՝ Կարթեգոնի մէջ: Ժողովը ըսաւ. «Պատշա՞ն է մկրտել երեխաները, նոյնիսկ եթէ անոնք երեւ կամ երկու օրուան ըլլան: Զանոնք իրենց ծննդեան օրն իսկ կարելի է մկրտել»:

– «Սկիզբէն իսկ Քրիստոսի եկեղեցին ընդունած ու կատարած է մանուկներու մկրտութիւնը. ուստի մանուկները մկրտելու համար խնդիր յարուցանելու պէտք չկայ» (*Օգոստինոս*):

– «Մանուկներու մկրտութեան խորհուրդը առաքելական ծագում ունի» (*Բառնաբաս*):

– *Յովհան Ոսկեբերան, Գրիգոր Նազիանզացի, Գեղասիոս, Կղեմէս Հռոմայեցի, Պողիկարպոս Զմիւռնացի եւ ուրիշներ կը հաստատեն, թէ մանուկներու մկրտութիւնը շատ սովորական բան մըն էր իրենց ժամանակ եւ թէ այս աւանդութիւնը առաքեալներէն առնուած է:*

3) *Որոշ հոսանքներ կ'ուսուցանեն, թէ մկրտութիւնը փրկութեան համար պայման չէ: Տէրը սակայն, տարբեր բան կ'ըսէ. «Եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել»: Տէրը մկրտութեան խորհուրդը հաստատեց թէ՛ իր Տէրունական խօսքով, եւ թէ՛ իր Տիրական գործով: Խօսքով հաստատեց՝ երբ ըսաւ. «Գացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէ՛ք: Չանոնք մկրտեցէ՛ք՝ Հօր, Որդիի եւ Սուրբ Հոգիի անունով» (Մտ 28.19): Եւ գործնապէս հաստատեց՝ երբ մկրտուեցաւ Յովհաննէս Մկրտիչին ձեռքով: Իր մկրտութեամբը Յովհաննէսի ձեռքով Յորդանան գետին մէջ, նախ՝ վաւերացուց անոր մկրտելու իշխանութիւնը, երկրորդ՝ սրբածեղաւ մկրտութեան ջուրը, եւ երրորդ՝ հաստատած եղաւ մկրտութեան խորհուրդը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր մեղքերէն լուացուեցաք, սրբուեցաք, արդարացաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով եւ մեր Աստուծոյ Հոգիին միջոցաւ» (Ա.Կր 6.11): «Լուացուեցաք» բառով առաքեալը կ'ակնարկէ մկրտութեան ջուրին: Առաքեալը տուեալ համարին մէջ կը խօսի ջուրի, Քրիստոսի անունին, եւ Աստուծոյ Հոգիին մասին, եւ ցոյց կու տայ մեզի, թէ այս երեքը կարեւոր են մարդս սրբելու եւ արդարացնելու համար: Ուստի մկրտութիւնը կարեւոր է մեր փրկութեան համար: Մկրտութեան խորհուրդը պատկերացուած է Հին Կտակարանին մէջ նաեւ: Հոն կը կարդանք. «Ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ ու պիտի մաքրուիք...: Ձեզի նոր սիրտ պիտի տամ ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ...: Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ ու դուք իմ օրէնքներուս մէջ պիտի բալէք...» (Եզ 36.25-27): Այստեղ կարեւոր երեք հաստատումներ կան. նախ, մկրտութեան ջուրը կը կոչուի «մաքուր ջուր», անոր համար որ մարդս Սուրբ Հոգիով ներքնապէս մաքրելու զօրութիւնը ունի. երկրորդ, կը նշուի թէ այդ մկրտութիւնը մարդուս կը շնորհէ «նոր սիրտ» ու «նոր հոգի». իսկ երրորդ, կը վկայուի թէ մկրտող անձը կը բնակուի Սուրբ Հոգիով, որով կարող կը դառնայ Աստուծոյ խօսքերը գործադրել: Պօղոս առաքեալ եկեղեցիին մասին խօսած ատեն կը հաստատէ, թէ Քրիստոս զայն մաքրեց ջուրի լուացումով եւ իր խօսքով սրբեց (Եփ 5.26): Ան կը վկայէ, թէ «Աստուած, մեր Փրկիչը, իր բաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց եւ մեզ փրկեց, ո՛չ թէ մեր կատարած արդար գործերուն համար, այլ՝ պարզապէս ողորմած ըլլալուն համար: Մեզի նոր ծնունդ տուաւ մկրտութեամբ եւ Սուրբ Հոգիին միջոցաւ մեզ վերանորոգեց» (Տիտ 3.4-5): Վերջին տողը ոեւէ կասկած չի թողուր, թէ մկրտութիւնը անհրաժեշտ է մեր փրկութեան համար: Յիսուս իր առաքե-*

լուծիւնը ջուրով սկսաւ եւ ջուրով աւարտեց: Ան իր առաքելութեան սկսելէ առաջ՝ մկրտուեցաւ Յորդանան գետի ջուրին մէջ, եւ իր առաքելութիւնը աւարտեց՝ երբ խաչին վրայ իր խոցուած կողէն «արիւն ու ջուր հոսեցաւ» (ՅՃ 19.34): Եկեղեցւոյ հայրեր Տիրոջ կողէն հոսած այս ջուրը նկատած են մկրտութեան խորհուրդի պատկերացում: Մեր փրկութեան համար, հետեւաբար, Տիրոջ թէ՛ արիւնը անհրաժեշտ է, եւ թէ՛ մկրտութեան ջուրը, որ Տիրոջ արեան հետ միասին դուրս եկաւ անոր կողէն:

Նոր Կտակարանը լեցուն է օրինակներովը այն անձերուն, որոնք հաւատալէ ետք Քրիստոսի՝ մկրտուեցան.-

ա) Հոգեգալուստի օրը մարդիկ ցնցուած հարց տուին առաքեալներուն թէ ի՞նչ պէտք է ընեն, Պետրոս անոնց ըսաւ. «Ձեր ընթացքը փոխեցէ՛ք (տառացիօրէն՝ ապաշխարեցէ՛ք) եւ իւրաքանչիւրդ մկրտուեցէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի՛ ձեր մեղքերը ներուիին» (Գրծ 2.38): Առաքեալը զինք լսողներուն յտակօրէն ցոյց կու տայ, թէ մեղքերու ներում ձեռք ձգելու համար՝ պէտք է ապաշխարեն, այլ խօսքով՝ իրենց ընթացքը փոխեն, եւ պէտք է մկրտուին Տէր Յիսուս Քրիստոսի անունով:

բ) Երբ Եթովպացի ներքինին դարձի եկաւ Փիլիպպոս սարկաւազին ձեռքով՝ ուզեց անմիջապէս մկրտուիլ: Փիլիպպոս իրեն ըսաւ. «Եթէ ամբողջ սրտովդ կը հաւատաս, կրնաս մկրտուիլ»: Ներքինին պատասխանեց. «Կը հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդիւն է»: Եւ անմիջապէս «Փիլիպպոս եւ ներքինին երկուքը միասին ջուր մտան, եւ Փիլիպպոս մկրտեց զայն» (Գրծ 8.36-38): Եթէ հաւատքը բաւարար է փրկութեան համար, ինչո՞ւ Փիլիպպոս ներքինին տուած հաւատքի վկայութեամբ չբաւարարուեցաւ, այլ ուզեց նաեւ զայն մկրտել: Եւ ուշագրաւ է, որ ներքինին ինքն էր որ Փիլիպպոսի առաջարկեց մկրտուիլ (Գրծ 8.36):

գ) Երբ Փիլիպպէի բանտապետը հարցուց Պօղոսին ու Շիղային՝ «Պարունե՛ր, ի՞նչ պէտք է ընեմ որ փրկուիմ», անոնք պատասխանեցին. «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատա՛ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս»: Ապա Պօղոսն ու Շիղան «Տիրոջ խօսքը բարոզեցին անոր եւ անոր ընտանիքի անդամներուն: Անմիջապէս ետք, ինք եւ բոլոր իրենները մկրտուեցան» (Գրծ 16.30-33): Եթէ փրկութեան համար հաւատքը բաւարար սեպուէր, առաքեալները «Տէր Յիսուս Քրիստոսի հաւատա՛ եւ ամբողջ ընտանիքովդ կը փրկուիս» ըսելէ ետք՝ պիտի չմկրտէին զանոնք:

դ) Եթէ մկրտութիւնը անհրաժեշտութիւն մը չէ փրկութեան համար, ինչո՞ւ ծիրանի զգեստ ծախող Լիդիան, երբ ընդգրկեց Քրիստոսի հաւատքը, անմիջապէս «իմք եւ իր ընտանիքը մկրտուեցան» (Գրծ 16.15):

ե) Մինչ Պետրոս առաքեալ կը խօսէր Կոռնելիոս հարիւրապետին եւ անոր տունը հաւաքուած հեթանոս մարդոց, «Սուրբ Հոգին իջաւ բոլորին վրայ, որոնք Աստուծոյ խօսքը կը լսէին» եւ սկսան անծանօթ լեզուներով խօսիլ: Այն ատեն առաքեալը ըսաւ. «Ո՞վ կրնայ արգիլել որ ջուրով մկրտուին ասոնք, որոնք Սուրբ Հոգին ստացան մեզի պէս»: Անկէ անմիջապէս ետք, առաքեալը «հրամայեց անոնց, որ Յիսուս Քրիստոսի անունով մկրտուին» (Գրծ 10.44-48):

Հետաքրքրական է որ թէպէտ անոնք ընդունեցին Քրիստոսի հաւատքը, առին Սուրբ Հոգին եւ սկսան անծանօթ լեզուներով խօսիլ, առաքեալը սակայն չբաւարարուեցաւ այս բոլորով, այլ հրամայեց որ մկրտուին:

զ) Պօղոս առաքեալ պատմելով իր դարձը, կը յիշէ թէ ի՛նչպէս Անանիա իրեն ըսաւ. «Իսկ հիմա ինչո՞ւ կ'ուշանաս. ե՛լ, մկրտուէ՛ եւ լուա՛ մեղքերդ՝ իրեն աղօթելով» (Գրծ 22.16): Եթէ մկրտութիւնը մեղքերու լուացում է՝ ո՞վ այդ լուացումին պէտք չունի: Պիտի անդրադառնանք մկրտութեան անհրաժեշտութեան, եթէ յիշենք որ Պօղոսի հանդիպիլը Քրիստոսի եւ հաւատքի գալը բաւարար չսեպուեցան իր մեղքերու լուացման համար, այլ անհրաժեշտ նկատուեցաւ որ նաեւ մկրտուի:

4) Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ. –

ա) Զուրը կը մաքրէ մարդու արտաքինը, իսկ Սուրբ Հոգին՝ անոր ներքինը: [Զի բաւեր որ մարդը մաքուր ըլլայ արտաքնապէս, պէտք է նաեւ ներքնապէս մաքուր ըլլայ. իր ներքին մաքրութիւնը՝ պէտք է արտաքնապէս ցոլայ]:

բ) Ինչպէս Քրիստոս ունի տեսանելի մարմին եւ անտեսանելի աստուածութիւն, նոյնպէս ալ, մկրտութեան ժամանակ մենք ունինք տեսանելի նիւթը՝ ջուրը, եւ անտեսանելի տարրը՝ Սուրբ Հոգիին ներգործութիւնը, որոնցմէ մկրտութեամբ անցնելով, մենք կը ծնինք եւ կը դառնանք Քրիստոսի պատկերը:

գ) Ինչպէս մարմնաւոր ծնունդի համար կարիք կայ սերմի եւ արգանդի, որուն մէջ մանուկը կը գոյանայ, նոյնպէս ալ, հոգեւոր ծնունդի համար կարիք կայ Սուրբ Հոգիի եւ մկրտութեան ջուրի, որուն մէջ կը թաղուինք, [անկէ եւ անով ապրելու համար մեր վերածնունդը]:

5) Թէպէտ բազմաթիւ անգամներ Աստուծոյ խօսքէն վկայութիւններ յիշեցինք, ցոյց տալու թէ մկրտութիւնը անհրաժեշտ է փրկութեան համար, եւ սակայն, կարեւոր է նշել, թէ Յիսուս չի խօսիր միայն ջուրէն ծնելու մասին, այլ՝ ջուրէն եւ Հոգիէն ծնելու մասին: Կրնաք մտածել որ Սուրբ Հոգին ինքնաբերաբար կ'իջնէ մկրտութեան ջուրին վրայ՝ զանիկա սրբագործելու համար. ո՛չ, սիրելիներ: Զարեհ Արք. Ազնաւորեանը կը բացատրէ, թէ «Սուրբ Հոգին կախարդական ուժ մը չէ, որ մկրտութեան արարողութիւնը սկսածին պէս՝ մեքենաբար իջնէ մկրտութեան ջուրին վրայ. անիկա կ'իջնէ հաւատքի կանչի մը պատասխան իբրեւ»: Երբ հաւատքի այդ կանչը չկայ՝ Սուրբ Հոգին ի՞նչպէս կրնայ իջնել: Արդարեւ, ո՞վ կրնայ համոզել մեզ որ Սուրբ Հոգին մկրտութեան արարողութեան ընթացքին՝ կ'իջնէ մկրտութեան ջուրին վրայ, կը սրբագործէ զանիկա ու փոխակերպիչ գորութիւն կը շնորհէ անոր, նոյնիսկ եթէ երբեք աղօթքները առանց հաւատքի ու առանց ակնկալութեան կը մատուցուին: Ըսել՝ «Սուրբ Հոգիին էջը կախեալ չէ մարդուն հաւատքէն», սա այրած սրտի միսիթարանք է, սա մարդուն քթին խնդալ է, սա մեր անհաւատութիւնը պարտկել է: Զէ՞ որ մենք՝ քարոզիչներս, հազար ու մէկ անգամ կրկնած ենք, թէ ամէն անգամ երբ Յիսուս հրաշք պիտի գործէր՝ հաւատք կը պահանջէր մարդոցմէ: Ինչո՞ւ նոյնը չենք ըսեր երբ մկրտութեան խորհուրդին մասին

կը խօսինք: Օրինակ, ինչո՞ւ չենք յայտարարեր, թէ Քրիստոս իր Սուրբ Հոգին դրկելու համար մկրտութեան ջուրին վրայ՝ մեզմէ հաւատք կը պահանջէ: Ինչո՞ւ համար Յիսուս Կանայի հարսանիքին ջուրը գինիի փոխեց. փոխեց՝ որովհետեւ երկու բան տեսաւ. նախ տեսաւ իր մօրը հաւատքը, եւ երկրորդ՝ տեսաւ սպասաւորներուն հնազանդութիւնը իր խօսքին: Մկրտութեան արարողութեան ընթացքին նաեւ, Յիսուս մկրտութեան ջուրը կը փոխէ ու կը փոխակերպէ միայն ա՛յն ատեն՝ երբ մկրտող քահանային եւ մկրտեալ մանուկին հարազատներուն ու ազգականներուն մօտ հաւատք ու հնազանդութիւն տեսնէ: Այլապէս, կրնա՞յ մկրտեալ մանուկը մեր հաւատքի Հիմնադիրին զաւակը դառնալ առանց մեր հաւատքին: Չէ՞ որ մենք կը բացատրենք ու կ'ըսենք, թէ մանուկը կը մկրտենք իր ծնողներուն հաւատքին հիման վրայ. իսկ ի՞նչ տեղի կ'ունենայ եթէ մանուկին ծնողները հաւատք չունին. խօսքս կենդանի հաւատքի մասին է: Մկրտութեան պահուն մեր բոլոր մանուկները կը կրեն Քրիստոսի անունը, բայց քանի՞ հոգիներ կը կրեն նաեւ Քրիստոսի սիրտն ու հոգին, քանի՞ հոգիներ կը հագնին Քրիստոսը, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ (Գղ 3:27: Հռ 13:14): Նոյնիսկ եթէ մկրտութեան պահուն մանուկը իսկապէս լեցուի Սուրբ Հոգիով, հագնի Քրիստոսը, ի՞նչ կը պատահի անոր, երբ հարազատները տուն դառնան եւ իրենց նախկին կեանքին ու կենցաղակերպին դառնան, ուր չկայ աղօթք ու բարեպաշտութիւն, ուր չկան Աստուծոյ սէրն ու քաղցրութիւնը, ուր չկայ հետաքրքրութիւն ու կապուածութիւն Աստուծոյ եւ անոր խօսքին հանդէպ, ուր չկայ մկրտեալ մանուկը Քրիստոսի շնորհքով ու շունչով մեծցնելու կամք ու փափաք: Նման միջոցառումի մէջ, իր վերածնունդը ապրած մանուկը ի՞նչպէս կրնայ Քրիստոսը հագած մնալ, ի՞նչպէս կրնայ Սուրբ Հոգիով լեցուած մնալ: Պօղոս առաքեալ չ'ըսեր թէ Քրիստոս իր եկեղեցին մաքրեց ջուրի լուացումով եւ իր խօսքով սրբեց (Եփ 5:26): Յատակ է որ ջուրի լուացումը որուն մասին կը խօսի առաքեալը՝ մկրտութեան խորհուրդն է, իսկ խօսքը՝ Տիրոջ խօսքը, Աստուծոյ խօսքը: Եկեղեցւոյ մաքրութիւնը միայն մկրտութեամբ չ'ըլլար, այլ նաեւ՝ Տիրոջ խօսքով. «Դուք արդէն իսկ մաքրուած էք այն խօսքին համար՝ որ ձեզի խօսեցայ» (ՅՀ 15:3): Օգոստինոս կ'ըսէ, թէ «մկրտութեան ջուրը առանց Աստուծոյ խօսքին՝ սոսկ ջուր է: Երբ Տիրոջ խօսքը ջուրին միանայ՝ այն ատեն ատիկա խորհուրդի կը վերածուի»: Այսօր քանի՞ ծնողներ ունինք որոնք իրենց մկրտեալ մանուկները Տիրոջ խօսքով կը կերակրեն, կը կշտացնեն, կը լեցնեն ու կը սրբեն:

Դեռ չենք խօսիր այն մասին, թէ ինչպէս մարդիկ իրենց զաւակը մկրտելէ ետք, եկեղեցիէն կ'ելլեն ու անմիջապէս ճաշարաններ կամ սրահներ կ'երթան եւ կը սկսին կերուխումի, երգուպարի, զուտ աշխարհիկ երգեր մտիկ ընելով, ու դիւային պարերու ձեռնարկելով, սուրբ հայրերուն իսկ բացատրութեամբ: Ի՞նչ պատահեցաւ Յիսուսի հետ՝ իր մկրտութենէն անմիջապէս ետք. «Սուրբ Հոգիին կողմէ տարուեցաւ անապատ՝ Սատանայէն փորձուելու համար» (Մտ 4:1): Սուրբ Հոգին Յիսուսի վրայ իջաւ մկրտութեան պահուն, եւ անոր հետ ալ մնաց մկրտութենէն ետք: Մենք կրնա՞նք վստահութեամբ ըսել, որ մկրտութեան պահուն մեր մանուկներուն վրայ իջած Սուրբ Հոգին՝ կը մնայ

անոնց վրայ, երբ անոնք եկեղեցւոյ արգանդէն՝ աշխարհի արգանդը կը տարուին: Յիսուս մկրտուեցաւ, եւ անկէ ետք Սուրբ Հոգիին կողմէ անապատ տարուեցաւ՝ յաղթելու համար Չարին: Մեր ծնողները, Ի՞նչպէս կրնան մկրտութենէն ետք իրենց զաւակներուն սորվեցնել՝ Սուրբ Հոգիին միջոցաւ յաղթել Չարին, երբ իրենք Չարին գիրկը կ'երթան: Մեր ծնողները կ'անդրադառնան արդեօք թէ ինչ ահուելի մեղք կը գործեն Սուրբ Հոգիին ու Սուրբ Հոգիով իր ծնունդը ապրած մանուկին դէմ, երբ Սուրբ Հոգիին խորհուրդը կրող եկեղեցւոյ մկրտարանի սուրբ արգանդէն զինք կը հանեն ու կը տանին ճաշարանները կերուխումի ու երգուպարի համար: Այս մասին եկեղեցւոյ հայրեր շատ խիստ խօսքեր ըսած են, որոնց յիշատակումը զանց կ'ընեն: Մկրտուած մանուկին հարազատներն ու պարագաները կ'անդրադառնան թէ իրենց վերաբերմունքով կրնան տրամեցնել Սուրբ Հոգին, որուն վերաբերեալ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մի՛ տրտմեցնէ՛ք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցա՛ք՝ փրկութեան օրումն հասնելու համար» (Եփ 4.30), եւ կրնան նոյնիսկ մարել Սուրբ Հոգիին այն կրակը որ հանգչեցաւ մանուկին մէջ, որուն կապուած առաքելը կ'ըսէ. «Սուրբ Հոգիին կրակը մի՛ մարէ՛ք ձեր մէջ» (Ա.Թս 5.19): Եւ որովհետեւ Սուրբ Հոգիին կրակը կրնայ մարիլ, ըլլայ մեծին մէջ եւ ըլլայ փոքրին մէջ, ճիշդ անոր համար ալ եկեղեցւոյ հայրեր ապաշխարութիւն սահմանած են չափահասներուն համար, որովհետեւ, ճշմարիտ ապաշխարութեամբ՝ մկրտութեամբ մեր ստացած ու մեր մէջ մարած Սուրբ Հոգին վերստին «կը կենդանանայ» ու իր կենդանացումով՝ մեզ կը կենդանացնէ, որով կը նորոգուի մեր վերածնունդը զորս ապրած էինք մկրտութեան ժամանակ: Ի՞նչպէս տեղի կ'ունենայ ասիկա: Տեղի կ'ունենայ, երբ Սուրբ Հոգին բանայ մարդուն հոգիի աչքերը: Արդարեւ, երբ Սուրբ Հոգին բանայ մարդուն հոգիի աչքերը, մարդը պիտի անդրադառնայ իր մեղաւորութեան, պիտի տեսնէ իր մեղքերն ու անոնց տգեղութիւնը, պիտի գիտակցի թէ իր մեղքերով խորապէս ցաւցուցած ու վիրաւորած է Յիսուսը, եւ ատիկա զինք պիտի առաջնորդէ դառն զղջումի ու ճշմարիտ ապաշխարութեան: Այս բոլորը տեղի չեն ունենար, եթէ Սուրբ Հոգին չհպի մարդու սրտին ու չբանայ անոր հոգիին աչքերը: Այս առումով, Սուրբ Հոգին ինքն է որ մարդու մէջ կ'արթնցնէ իր մեղաւորութեան գիտակցութիւնը, որմէ ետք՝ զինք կ'առաջնորդէ ապաշխարութեամբ Քրիստոսի յանձնուելու, որպէսզի Քրիստոս իր արիւնով սրբէ ու մաքրէ զինք: Քրիստոս զինք սրբելէ ետք, Սուրբ Հոգին կը սկսի գործել անոր մէջ՝ որպէսզի զինք սրբագործէ ու Քրիստոսի պատկերը դարձնէ: Այս իմաստով, մարդս սրբելն ու մաքրելը՝ Քրիստոսն է որ կ'ընէ, իսկ զանիկա սրբագործելը եւ Որդիին պատկերը դարձնելը՝ Սուրբ Հոգին: Այս բաները մկրտութեան ժամանակ տեղի կ'ունենան, բայց դժբախտաբար մեղքի փոշիին տակ կը կորսուին, մինչեւ որ մարդը իր չափահասութեան տարիքին անդրադառնայ իր վիճակին եւ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնայ:

6) Բազմաթիւ սուրբգրային վկայութիւններով ցոյց տուինք թէ մկրտութիւնը պայման է մեր փրկութեան համար. ցոյց տուինք նաեւ, թէ ձեւական

մկրտութիւն մը չի փրկեր մանուկը կամ չափահասը: Բայց թոյլ տուէք անգամ մը եւս շեշտեմ, թէ մկրտութիւն մը որպէսզի փրկէ մկրտուողը՝ անհրաժեշտ են հետեւեալները:–

ա) Անոնք որոնք իրենց մանուկը մկրտելու պիտի բերեն, պէտք է նախ փոխեն իրենց կեանքի ընթացքը: Այս մասին Պետրոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր ընթացքը փոխեցէ՛ք եւ իւրաքանչիւրդ մկրտուեցէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսի անունով, որպէսզի՛ անք մեղքերը ներուի՛ն: Եւ երբ մկրտուի՛ք, խոստացուած պարգեւը՝ Սուրբ Հոգին պիտի ընդունի՛ք» (Գրծ 2.38): Առաքեալը այստեղ կը խօսի, մկրտուելէ առաջ՝ մեր կեանքի ընթացքը փոխելու մասին: Այսօր ծնողներ իրենց զաւակները մկրտութեան բերելէ առաջ՝ իրենց կեանքի ընթացքը կը փոխե՞ն: Եթէ իրենց կեանքի ընթացքը՝ աշխարհիկ ընթացք է, կը դառնա՞ն հոգեւոր ընթացքի:

բ) Մենք գիտենք որ թլփատութիւնը փոխարինուեցաւ մկրտութեամբ: Կարդանք թէ ի՞նչ կ'ըսէ Պողոս առաքեալ իսկական թլփատութեան մասին, որպէսզի գիտնանք նաեւ թէ ո՞րն է իսկական մկրտութիւնը. «Արտաքնապէս Հրեայ եղողը չէ՛ իսկական Հրեան, ո՛չ ալ մարմնական թլփատութիւնն է իսկական թլփատութիւնը. այլ՝ ներքնապէս Հրեայ եղողն է Հրեան, եւ իսկական թլփատութիւնը սրտի՛ թլփատութիւնն է, այսինքն՝ Սուրբ Հոգիին համաձայն ապրիլն է եւ ո՛չ թէ գրաւոր Օրէնքին համաձայն ապրիլը» (Հռ 2.28–29): Համաձայն առաքեալի խօսքին, իսկական թլփատութիւնը մարմնակա՞ն թլփատութիւնն է, թէ՛ Սուրբ Հոգիին համաձայն ապրիլը: Յստակ է որ Սուրբ Հոգիին համաձայն ապրիլը: Արդ, ինչպէս իսկական թլփատութիւնը մարմնական թլփատութիւնը չէ, այլ՝ Սուրբ Հոգիին համաձայն ապրիլը, այնպէս ալ, իսկական մկրտութիւնը մարմինի մկրտութիւնը չէ, այլ՝ Սուրբ Հոգիին համաձայն ապրիլը: Ամէն անձ որ կը մկրտէ իր մանուկը, թող ինքզինք քննէ ու տեսնէ, եթէ երբեք Սուրբ Հոգիին համաձայն կ'ապրի թէ ոչ: Առաքեալը կ'ըսէ նաեւ, թէ արտաքնապէս Հրեայ եղողը չէ՛ իսկական Հրեան, այլ՝ ներքնապէս Հրեայ եղողն է իսկական Հրեան: Արդ, ինչպէս արտաքնապէս Հրեայ եղողը չէ՛ իսկական Հրեան, այլ՝ ներքնապէս Հրեայ եղողն է իսկական Հրեան, այնպէս ալ, մկրտութեան ժամանակ, արտաքնապէս (սոսկ անունով) քրիստոնեայ եղողը չէ իսկական քրիստոնեան, այլ ներքնապէս քրիստոնեայ եղողն (ու մնացողն) է իսկական քրիստոնեան:

գ) Պողոս առաքեալ կ'ըսէ. «Ձե՞ք գիտեր, թէ մե՞նք՝ որ Յիսուս Քրիստոսի միանալով մկրտուեցանք՝ մկրտութեամբ անոր մահուան հաղորդակից դարձանք: Այսինքն, մկրտութեամբ անոր հետ միասին թաղուեցանք եւ մահուան հաղորդ եղանք, որպէսզի ինչպէս Քրիստոս Հօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մե՞նք նորոգուած կեանքով ապրինք» (Հռ 6.4: Տէ՛ս նաեւ՝ Գղ 3.27): Այլուր առաքեալը կ'ըսէ. «Մկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք, եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց» (Կղ 2.12): Այս երկու վկայութիւնները կը պարզեն, թէ մկրտուելը՝ Քրիստոսի հետ թաղուել եւ անոր հետ յարութիւն առնել կը նշանակէ: Քրիստոսի հետ թաղուելը՝ մեր մէջ հին մար-

դուն մեռնիլն է, թաղուիլն է, իսկ Քրիստոսի հետ յարութիւն առնելը՝ իբրեւ նոր արարած ապրիլն է: Այս մասին խօսեցանք արդէն: Հոս հարցը հետեւեալն է.– Երբ մանուկը կամ չափահասը կը մկրտուի, իրենց մէջ կը մեռնի՞՞ հին մարդը, հին Ադամը: Որպէսզի մեռնի, պէտք է Քրիստոսի միանալ եւ այդպէս մկրտել կամ մկրտուիլ. «Քրիստոսի միանալով մկրտուեցանք»: Այսօր ծնողներ իրենց զաւակները մկրտութեան բերելէ առաջ՝ կը մտածե՞ն նախ իրե՛նք Քրիստոսի գան, միանան: Մկրտութեամբ իրենց զաւակները Քրիստոսի մահուան հաղորդակից դարձնելէ առաջ, կը քննե՞ն իրենք զիրենք, տեսնելու եթէ երբեք մեռած է իրենց մէջ հին մարդը, մեղքի մարդը, եւ յարութիւն առած՝ նոր մարդը:

դ) Նոր Կտակարանը կը պարզէ, թէ անոնք որոնք կ'ուզեն մկրտել կամ մկրտուիլ՝ նախ պէտք է հաւատան Քրիստոսի, սրտա՛նց հաւատան: Վերեւ տեսանք թէ ինչպէս Եթովպիացի ներքինին Քրիստոսի հաւատալէ ե՛տք մկրտուեցաւ (Գրծ 8.36–38), Փիլիպպէի բանտապետը Քրիստոսի հաւատալէ ե՛տք մկրտուեցաւ (Գրծ 16.30–33), ծիրանի զգեստ ծախող Լիդիան Քրիստոսի հաւատքը ընդգրկելէ ե՛տք էր որ «իմ եւ իր ընտանիքը մկրտուեցան» (Գրծ 16.15), Կոռնելիոս հարիւրապետը եւ անոր տունը հաւաքուած հեթանոս մարդիկը Քրիստոսի հաւատալէ ե՛տք մկրտուեցան (Գրծ 10.44–48): Նոյնիսկ Յիսուս նախ հաւատքին մասին խօսեցաւ, եւ յետո՛յ մկրտութեան մասին. «Ով որ հաւատայ եւ մկրտուի» (Մր 16.16): Մէկը կրնայ հարց տալ.– Ո՞վ չի հաւատար Քրիստոսի. խօսքս մեռած հաւատքի մասին չէ, այլ՝ Կենդանիին հանդէպ՝ կենդանի՛ հաւատքի մասին: Շատեր իրենց զաւակները կը մկրտեն, որովհետեւ եկեղեցի՛ն ատիկա կը պահանջէ, որովհետեւ սերունդէ սերունդ մկրտութիւնը սովորութիւն դարձեր է, եւ ո՛չ թէ որովհետեւ կը հաւատան թէ իրենց մանուկը մկրտուելով՝ Քրիստոսի անդամ ու Սուրբ Հոգիին բնակարան կը դառնայ: Մկրտելը սովորութեան մը կամ պահանջի մը արդիւնք պէտք չէ ըլլայ, այլ, Բացարձակին հանդէպ՝ բացարձակ հաւատքի արդիւնք, Մեծին հանդէպ՝ մե՛ծ սիրոյ արդիւնք, Ճշմարիտին հանդէպ՝ ճշմարի՛տ հաւատքի արդիւնք:

Դ) Յարց համարին մէջ Տէրը հաստատեց, թէ մէկը պէտք է վերստին ծնի՛ որպէսզի կարենայ Աստուծոյ արքայութիւնը տեսնել, իսկ այստեղ, վերածնող մարդուն կը խոստանայ ոչ միայն ականատես ըլլալ արքայութեան, այլեւ մո՛ւտք գործել արքայութիւն: Հաւատացեալը մոուտք գործելէ առաջ երկինքի արքայութիւնը, նախ զանիկա պէտք է տեսնէ երկրի վրայ իր հոգիին աչքերով: Երկինքի մէջ Արքային սրտէն ներս մտնելէ առաջ՝ նախ երկրի վրայ Արքան իր սրտին մէջ պէտք է ընդունի: Այս մասին վերեւ խօսեցայ՝³:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 11)

³ Տե՛ս 3հ 3.3-ի բացատրութիւնը, թիւ 4:

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՉՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. Տ. ԶԱՐԵՅ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓԱՅԱՍԼԵԱՆ

Ծնած է 14 Փետրուար 1915-ին, Մարաշ (Կիլիկիա): Աւագանի անունն է Միմոն: Մանկութիւնը անցուցած է իր ծննդավայրին մէջ մինչեւ 1922 թրւական, ապա ծնողքին հետ գաղթելով եկած է Հալէպ (Սուրիա), ուրկէ՝ Համա, ուր մնացած է մինչեւ 1924 թրուականը:

1924-ին ծնողքին հետ հաստատուած է Հալէպ: Իր նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Մեսրոպեան եւ Ազգ. Հայկազեան Վարժարաններուն մէջ եւ աւարտած՝ 1929-ին: Մէկ տարի յաճախած է Յիսուսեան Միաբանութեան (Jésuites) տեղւոյն դպրոցը:

1930 թրուականը իր կեանքին մէջ ճակատագրական եւ կենսական նշանակութիւն ունեցած է, որովհետեւ զինք հայրապետեկան աստիճանի բարձրութեան եւ փառքին հասցնող առաջին հանգրուանը եղած է, երբ Կիլիկեան Դպրեվանքի բացման լուրը հազիւ առած՝ պատանի իր հոգին անոր առաքելութեան գաղափարին հաղորդակից եւ եկեղեցւոյ ծառայութեան զգացումովը խանդավառ՝ զինք առաջնորդած է դէպի նորաբաց դպրեվանք, որուն առաջին զաւակներէն մէկը դարձած է, նաեւ արժանաւորագոյններէն մին հանդիսացած՝ յետագային:

Դպրեվանքի ուսման հնգամեայ շրջանը աւարտելով, 1935-ին Կոստակրօն Քահանայ ձեռնադրուած է, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Տ. Շահէ Եպս. Գասպարեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԶԱՐԵՅ ԱԲԵՂԱՅ, իրեն օժակից ունենալով Տ. Դերենիկ Աբեղան (յետագային Եպիսկոպոս եւ Վերատեսուչ դպրեվանքի):

Դպրեվանքի առաջին պտուղները եղած են անոնք: Ի՛նչ մեծ ուրախութիւն հոգեւոր մշակներու համար... : Ուրախութիւն մը՝ այնքան իրաւ, արդար եւ յորդուն, որ գերազանցելով պատերը Անթիլիասի վանքին՝ հասած էր մինչեւ Երուսաղէմ ու շարժելով մեծ սիրտը առաքելատիպ Պատրիարքին՝ Թորգոմ Արք. Գուշակեանի, զայն բերած էր Անթիլիաս, ուրախութեան աղբիւրին:

«Հինգ տարի առաջ, – կ'ըսէր Թորգոմ Պատրիարք իր ժամանումին, – խոստում մը տուած էի, թէ կ'ուզեմ ներկայ ըլլալ Դպրեվանքի առաջին ձեռնադրութեան: Այսօր, այդ խոստումը, որ փափաքս ալ էր միշտ, կատարելու եկած եմ իմ պաշտօնիս ներած չափովը: Եթէ չկրցայ գալ հանդէսին օրը, ուրախ եմ սակայն, որ կարգադրելի եղաւ գալ ձեռնադրութեան յաջորդ օրն իսկ, երբ դեռ ձեռնադրութեան վրայ կը փայլէր սուրբ օծումը, գոր մաքուր ձեռք մը դրաւ հոն»:

1935–1936 տարեշրջանին նորընծայ Զարեհ Աբեղայ վարած է կաթողիկոսարանի շրջափակին մէջ գտնուող Մեսրոպեան Վարժարանի տեսչութեան պաշտօնը, միանգամայն դասեր ստանձնելով դպրեվանքին մէջ: Նոյն տարեշրջանին ստացած է Վարդապետական Գաւազան, աւարտաճառ ներկայացնելով Յովհան Ոսկեբերեանի «Մատթէի Մեկնութիւնը», վերլուծելով գործին հիմնական նպատակը, գաղափարները եւ մեկնութեան մեթոտը:

1936–38 թ. երկու տարի առիթը ունեցած է Եւրոպա ուղեւորուելու եւ Պրիւքսէլի Համալսարանին մէջ հետեւելու արեւելագիտութեան եւ պատմութեան դասընթացներուն, ուր շատ սերտ յարաբերութիւն ունեցած է հռչակաւոր պատմաբան եւ բիւզանդագէտ փրոֆ. Ն. Ադոնցի հետ:

Եւրոպայի մէջ երկամեայ իր ուսումը աւարտելէ ետք, վերադարձած է Ս. Աթոռ, Անթիլիաս, 1939–ին եւ նետուած՝ ծառայութեան ասպարէզ, առանց ինչայնչու ճիգ, յոգնութիւն եւ տառապանք: Եւրոպայէն նոր վերադարձած երիտասարդ ու մտաւորական վարդապետի մը համար գուցէ դժուար թուէին հասարակ նկատուող եւ համեստ երեւցող զբաղումները, բայց ծառայութեան հոգի եւ նուիրումի անշահախնդիր ձգտում ունեցող եկեղեցականի մը համար, որպիսին էր Զարեհ Վարդապետ, չկար խտրութիւն: Եւ ահա երիտասարդ վարդապետը՝ տարագիր եւ աղէտահար հայ ժողովուրդին սպասարկութեան լծուած էր: Կաթողիկոսարանէն նշանակուած էր ինամատար Պատրիարքի, Թարթուսի եւ Թրիփոլիի մէջ ապաստան գտած հայ գաղթականներուն, որոնք Սանճագի պարպումին հետեւանքով իրենց բնակարաններէն դուրս նետուած էին: Գաղթական ժողովուրդի կացութեան բոլոր դառնութիւնները ճաշակելով, չընկճուեցաւ, չբարոյագրկուեցաւ անոր հոգին, որովհետեւ սիրոյ եւ ծառայութեան, համեստութեան եւ բարութեան զգացումները իր ողջ հոգիէն տիրական ապրումներն էին ու մնացին:

1940–ին Բերիոյ Թեմի առաջնորդ հոգեւոյս Արտաւազդ Արք. Սիւրմէեանի հրաժարումէն ետք, Թեմի Խառն Ժողովը Զարեհ Վարդապետ Առաջնորդական Տեղապահ ընտրած է: Երեք տարի համեստ այդ անունին տակ ձեռնհասութեամբ եւ յաջողութեամբ կատարելով առաջնորդական իր պարտաւորութիւնները յայտնաբերած է վարչական կեանքի համար շատ էական յատկանիշներ՝ ուղղամտութիւն, անաչառութիւն, անյիշաչարութիւն եւ այլ առաքինութիւններ, որոնք զսպանակուած էին իր անձին խոր հոգիները կազմող սիրոյ եւ բարութեան հիմնական մայր զգացումներով:

1943–ին Թեմի ժողովուրդին սէրն ու վստահութիւնը գրաւած՝ առաջ-

նորը ընտրուած է:

10 Սեպտեմբեր 1942-ին, Ծայրագնութեան աստիճան ստացած է **Խաղ Արք.** **Խապայեանէ, Հալէպի մէջ,** որ հոգեւոր խանդավառութեան օր մը դարձած է հալէպահայութեան համար:

Իսկ 16 Փետրուար 1947-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Գարեգին Ա. Յովսէփեանցի Կաթողիկոսի, օծակից ունենալով **Տ. Փառէն, Տ. Դերենիկ, Տ. Խորէն եւ Տ. Ղեւոնդ Ծ. Վարդապետները:**

Զարեհ Սրբազան իր առաջնորդական 16-ամեայ գործունէութեան ընթացքին հանդիպած է մէկէ աւելի եւ մէկը միւսէն աւելի ծանր, տագնապալի դէպքերու, թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին, թէ՛ քաղաքական եւ թէ՛ ներազգային նեղութեանց եւ վերիվայրումներու:

Արտաքին ճակատի վրայ կրցած է միշտ ըլլալ իմաստուն, շրջահայեաց, արաբ ազնիւ ժողովուրդին եւ բարեխնամ պետութեան կողքին գտնուելով եւ զօրավիզ հանդիսանալով իշխանութեան՝ սուրիական ազատագրական պայքարի շրջանին եւ կամ աւելի ուշ, պետական սեղմումներու միջոցին, հանդէպ քրիստոնեայ փոքրամասնութեանց ներքին իրաւասութիւններուն: Եղած է միշտ կորովի, քաջ եւ աննահանջ, շատ յաճախ հիացում ազդելով քրիստոնեայ այլ եկեղեցիներու հոգեւոր պետերուն եւ նոյնիսկ Սուրիոյ պետական անձնաւորութիւններուն: Այս բոլորով կրցած է վայելել սէրը, համակրանքն ու վստահութիւնը օտար շրջանակներուն եւ այդու յաջողած է բարձր պահել դիրքը, վարկն ու պատիւը հայ համայնքին՝ յաչս պետութեան եւ ժողովուրդին:

Նկարագրային այս գիծերը դարձած են գլխաւոր գրաւականները, որ սուրիական կառավարութիւնը զինք պատուէր Արժանեաց Ա. կարգի շքանշանով:

Իսկ ներազգային եկեղեցական շրջագիծին մէջ, Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցի վախճանումէն ետք, իր պայծառ անունն էր, որ պիտի ուրուագծուէր ժողովուրդին եւ ժողովականութեան մտապատկերին մէջ, որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Պատմական Աթոռին:

Եւ արդարօրէն Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Խորէն Եպս. Բարոյեանի հրակէրով, Կիլիկեան Թեմերու Պատգամաւորական ժողովը 14 Փետրուար 1956-ին կաթողիկոս ընտրած է Բերիոյ Թեմի Առաջնորդ Տ. Զարեհ Եպս. Փայասլեանը:

Դպրեվանքի անդրանիկ պտուղն էր, որ կը բազմէր Կիլիկեան Կաթողիկոսութեան Գահին վրայ: Ի՛նչ սրտառուչ պատկեր էր: Տարագիր Աթոռը իր մէջէն ընձիւղուած ոստով մը կը պսակուէր: Դպրեվանքն ու անոր հիմնադիր երանաշնորհ մշակները՝ Սահակ եւ Բաբգէն Կաթողիկոսները եւ յատկապէս Շահէ Սրբազանը (առաջին վերատեսուէր դպրեվանքին) իրենց անմահութեան երկնային ոլորտներուն մէջ արդարօրէն կը խայտային, տեսնելով իրենց վաստակին այս շքեղ պսակումը՝ Կաթողիկոսական Աթոռի բարձր ու վեհ փառաւորումով:

Հակառակ ընտրեալ կաթողիկոսին բարութեամբ ճառագայթող սրտին, աշխատելու ընդունակ նկարագրին եւ եկեղեցական փորձառութեան՝ Հալէպի հայահոծ գաղութին կերտման մէջ, ժողովուրդի յարգելի մէկ դասակարգին կողմէ չընդունուեցաւ, եւ այս՝ առիթ ստեղծեց, որ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը միջամտէ, եւ Վազգէն Ա. կաթողիկոս Պալճեան անձամբ Լիբանան գայ եւ փոքրամասնութեան կողմը յարելով՝ բարոյական ճշնում բանեցնէ եւ մերժէ ընտրեալը: Բայց Մեծի Տանն Կիլիկիոյ Պատգամաւորական ժողովը պահելով աթոռին իրաւասութիւնն ու անկախութիւնը, մնաց իր որոշման վրայ:

Այս երեւոյթը իր խոր դրոշմը դրաւ հայ ժողովուրդի ազգային-եկեղեցական կեանքին վրայ, որուն որպէս հակազդեցութիւն միաբանութենէն հետագան 13 միաբաններ.

Տ. Խաղ Արք. Աջապահեան, Տ. Փառէն Եպս. Մելքոնեան, Տ. Դերենիկ Եպս. Փօլատեան, Տ. Գնել Ծ. Վրդ. Ճէրէճեան, Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Վարժապետեան, Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեան, Տ. Շահէ Վրդ. Աճէմեան, Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան, Տ. Մեսրոպ Վրդ. Գրիգորեան, Տ. Գէորգ Աբղ. Կարպիսեան, Տ. Ներսէս Աբղ. Փապուճեան, Տ. Զաւէն Աբղ. Արզումանեան եւ Տ. Գիւտ Աբղ. Նազգաշեան:

Նորընտիր Հայրապետին օժուժը տեղի ունեցած է 2 Սեպտեմբեր 1956-ին: Անթիլիասի շրջափակը, շրջակայ նարնջենիներու պարտէզները եւ կաթողիկոսարանի շէնքերուն տանիքները խոնոտած են ծովածաւալ ժողովուրդով, որոնք եկած էին ողջունելու նորած կաթողիկոսը:

Զարեհ կաթողիկոսի գահակալութիւնը երկար չէ տեւած: Ան եօթը տարի միայն Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը առաջնորդած է հայ ժողովուրդի ալեկոծեալ կեանքին մէջ: Անոր սիրով օժուժ սիրտը միայն սէր սփռած եւ սէր սերմանած է: Սիրած է իր ժողովուրդը, բայց չէ կրցած հովուապետական այցելութիւն շնորհել իր սիրեցեալ ժողովուրդին Լիբանանի սահմաններէն դուրս: 1959-ին ան Շթորայի մէջ հանդիպում ունեցած է Միացեալ Արաբական հայրենիքի նախագահ Զօր. Ապտէլ Նասէրի հետ (այդ շրջանին Սուրիա եւ Եգիպտոս միացեալ մէկ հանրապետութիւն կը կազմէին), հայ ժողովուրդի զօրակցութիւնը յայտնելու եւ շնորհաւորելու զինք:

Թախիծը սրտին, համբերութեամբ ըմպած է դառնութեան բաժակը եւ միշտ գերիվեր նկատած՝ Հայ եկեղեցոյ անբաժանելութիւնն ու ազգային միասնականութիւնը: Իրեն համար կեանքի հրամայականը եղած է, Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքը. «Եթէ Աստուած ի մեր կոյս է ով իցէ մեզ հակառակ»: Ապրած է այս հաւատքով, գործած՝ այս հաւատքով եւ իր աչքերը փակած՝ վերոյիշեալ հաւատքով:

Այստեղ պահ մը ականջ տանք 65 տարուան խորերէն հնչող սրտագին այն կոչին, որ կը բխէր անոր սրտէն՝ փարատելու համար մթազնած մտքերը, ալեկոծեալ սրտերն ու մշուշոտած զգացումները հայ ժողովուրդի յարգելի մէկ զանգուածին:

Կոչը սրտաբուխ հրաւէր մըն է հանուր հայութեան, Կաթողիկոսական օծման միազանգուելու, եղբայրանալու եւ ապագայի վառ երազանքով գօտեպնդուելու.

Սիրեցեալ Զաւակունք Հայց. Եկեղեցւոյ.

Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ որոշմամբ, Կաթողիկոսական Օծման թուական ճշդուած եւ յայտարարուած է 2 Սեպտեմբեր 1956-ի Կիրակի օրը: Սոյն հոգեպարար արարողութեան նախօրեակին՝ եկեղեցականի, խղճի եւ հայու պարտք սեպեցինք սոյն պաշտօնական կոչը ուղղելու մեր սիրեցեալ ժողովուրդին եւ անգամ մը եւս յայտնելու սրտի խորերէն թիսած մեր բաղանջը եւ յորդորելու բոլորը անխտիր, որ մոռնան ամէն տեսակի տարակարծութիւններ, մէկ կողմ թողուն անձնական նախասիրութիւնները, որոնք հասարակաց գործին եւ մեր քրիստոնէական, հայկական ու քաղաքացիական պարտականութեանց կատարումին արգելք կը դառնան: Սրտագին հրաւեր ու կոչ կ'ուղղենք անգամ մը եւս, անխտիր ամենքին՝ եկեղեցական թէ աշխարհական, ըմբռնելու թէ Կիլիկեան Աթոռը, վերահաստատուած լիբանանեան այս գեղեցիկ ծովափին վրայ, յառաջդիմելու եւ հայ ժողովուրդին ու այս երկրին լաւապէս ծառայելու բոլոր կարելիութիւնները ունի, պէտք չէ թերանայ իր այդ պարտականութեանց կատարման ճամբուն վրայ: Անգամ մը եւս, խոր համոզումով եւ հաստատ առաջադրութեամբ կը յայտնենք, ինչպէս միշտ ալ յայտարարած ենք, թէ Կիլիկեան Աթոռը, որպէս անբաժանելի մէկ նուիրապետութիւնը Հայ եկեղեցւոյ, անխախտ ու անսասան պիտի պահէ Միութիւնը այդ եկեղեցւոյ՝ փոխադարձ յարգանքի, այլ մանաւանդ քրիստոնէական սիրոյ բարձր ոգիով: Ոչ ոք անիրաւուած զգայ ինքզինք, ոչ ոք կատարուած ընտրութեամբ պարտուած զգացում ունենայ: Աշխատած ենք ըլլալ բոլորին համար, յետ այսորիկ առաւել աշխատանք պիտի տանինք բառնալու թիրիմացութիւնները, կանխակալ կարծիքները:

20 Փետր. 1956-ին կատարուած Կաթողիկոսական ընտրութենէն մինչեւ այժմ, մարդկայնօրէն կարելի ոչ մէկ ջանք խնայեցինք ստեղծուած տագնապ մը փարատելու եւ Հայ եկեղեցւոյ բոլոր գաւակները հաւաքելու Հայ եկեղեցւոյ կամարներուն ներքեւ: Անսահման համբերութեամբ եւ քրիստոնէական գիտակցութեամբ տարինք անհասկացողութեանց հետեւանք եղող արտայայտութիւնները, միշտ հաւատալով մեր ժողովուրդի առողջ գիտակցութեան եւ ազգասիրական բարձր ոգւոյն, համոզուած՝ որ այդ ոգին ի վերջոյ յաղթական պիտի ըլլայ այժմու դժուարութեանց եւ տարակարծութեանց մէջ:

Քրիստոնէական մեր Ս. Կրօնքին հիմքը **Սէրն** է: **Սէր՝** առ Աստուած եւ **Սէր՝** առ մարդիկ: Այդ սիրոյ զգացմամբ, ահա, կրկնակի կոչ կ'ուղղենք Քեզի՝ Հայ ժողովուրդ, յանուն մեր հաւատքին, մեր սիրելի Ազգին, մեր նահատակներուն ու Սուրբերուն, յորդորելով ըլլալ կարգապահ, հաւատարիմ՝ քու գտնուած երկիրներուդ պետութեան եւ անկեղծ սիրով փարիլ մեր

եկեղեցական թէ ազգային արժեքներուն ու աւանդութեանց, գիրար սիրելի սուրբ սիրով եւ անկեղծաւոր սրտով:

Խաղաղութեան Աստուածը ըլլայ Ձեր բոլորին հետ, եւ ինքը առաջնորդէ Ձեզ բոլորդ – Ամէն:

Վերոյիշեալ մտածումներն ու զգացումները սոսկական խօսքի տարազաւորումներ չէին երբեք, այլ հաւատքով շողախուած, ապրուած կեանքի մը հարազատ ճառագայթումը: Ափսո՛ս որ մարդիկ չկրցան թափանցել այդ խօսքերու էութեան եւ ճանչնալ բարի եւ սիրով առլցուն հովուապետը, որ սիրեց իր ժողովուրդը, սիրով ընդառաջեց այն լուծին, զոր ազգը դրաւ իր ուսերուն դժուարին պայմաններու ներքեւ եւ սրտէն վիրաւոր յաղթանդամ կաղնիի մը նման ինկաւ Հայ եկեղեցին եւ հայ ժողովուրդը միասնական տեսնելու վառ երազանքով: Ան փակեց իր աչքերը 18 Փետրուար 1963-ին, խոր, աննկարագրելի, անպատմելի սուգի մատնելով Կիլիկեան Ս. Աթոռն ու Միաբանութիւնը:

Թաղման եւ Վերջին Օծման արարողութիւնները տեղի ունեցած է Շաբաթ օրը, 23 Փետրուար 1963-ին: Թաղմանական թափօրին հանդիսապետած է Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեան, որ եկած էր ընկերակցութեամբ Տ. Սուրէն Քէմհաճեան եւ Տ. Հայրիկ Ասլանեան Արքեպիսկոպոսներու, եկած էր իր վշտակցութիւնը յայտնելու յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Երուսաղէմի ժողովրդեան:

Թափօրը ընթացք առած է Պէյրութի Ս. Նշան Մայր Եկեղեցիէն եւ ուսամբարձ առաջնորդուած՝ մինչեւ Անթիլիասի Մայրավանք՝ շարականներու երգեցողութեամբ: Տեղատարափ անձրեւը չէր կրցած կասեցնել ծովածաւալ բազմութեան յառաջընթացը: Երկինքն ալ լացեր ու սգացեր էր մեծ կորուստը Հայ եկեղեցւոյ:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի, միաբան հայրեր ուսամբարձ դազազը առաջնորդած են եւ բերած՝ հայրապետաց վերապահուած գերեզմանաքարերու մօտ եւ վերջին օրհնութեամբ հողին յանձնած՝ մարմինը Տ.Տ. Զարեհ Ա. Սքանչելի Կաթողիկոսին:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 7)

ԳԾԱԳՐԻՉ ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃԵԱՆ

Հայաստանի Առաջին Հանրապետութեան Մայիս 28-ի ոգեղէն յիշատակութեան ծիրէն ներս պէտք է անդրադառնանք նաեւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան դրամանիշերու եւ դրոշմաթուղթերու հեղինակ, մոռացուած ենթարկուած արուեստագէտ ու գծագրիչ՝ Արշակ Ֆեթվաճեանի կեանքին եւ վաստակին:

Արշակ Ֆեթվաճեան ծնած է Տրապիզոն, 1 Հոկտեմբեր 1863-ին:



Անոր հայրը եղած է առեւտրական: Նախնական ուսումը ստացած է Տրապիզոնի ազգային վարժարանին մէջ: Արշակ, մանկութեան տարիներէն ցուցաբերած է մեծ հետաքրքրութիւն հանդէպ արուեստի: Ան դրկուած է Պոլիս, որպէսզի արուեստներու հանդէպ իր սէրն ու բնատուր շնորհները զարգացնէ Կոստանդնուպոլսոյ Կայսերական Գեղարուեստի վարժարանին մէջ, որուն անդրանիկ շրջանաւարտներէն եղած է 1887-ին:

Թրքական կառավարութիւնը կրթաթոշակ տրամադրած է Արշակին, որ Իտալիա երթայ եւ հոն ուսանի, պայմանաւ, որ վերադառնալէ ետք ծառայէ Թուրքիոյ իշխանութեան: Արշակ մերժած է, որովհետեւ հայ անուանի անձնաւորութիւն մը՝ պոլսահայ Ռսկան Պէյ Մարտիկեանը, լսելէ ետք թրքական առաջարկը, պատրաստակամութիւն յայտնած է հոգալ Արշակին Հռոմ ուսանելու կրթաթոշակը, պայմանով որ Ֆեթվաճեան ուսումը աւարտելէ ետք ծառայէ Հայ ժողովուրդին ու մշակոյթին: Ուստի Ֆեթվաճեան մեկնած է Հռոմ, 1887-ին: Հռոմի մէջ չորս տարի ուսանած է: Սան Լուկա գեղարուեստի ակադեմիային մէջ աշակերտը եղած է Չեզարէ Մաքքարին: 1891-ին, ուսման աւարտին, մասնակցած է Իտալիոյ նկարիչներու ազգային ցուցահանդէսին: Իր ուսուցիչը՝ Չեզարէ Մաքքարին թելադրած է Արշակին՝ վերադառնալ իր հայրենիքը, որովհետեւ արուեստագէտ մը աւելի կրնայ ստեղծագործել եւ իր ազգային անյայտ մնացած արուեստն ու մշակոյթը ծանօթացնել աշխարհին:

Ան Իտալիա ուսանած տարիներուն այցելած է Իտալիոյ զանազան քաղաքները եւ մշակութային կեդրոնները՝ ծանօթանալու համար Իտալական եւ համաշխարհային արուեստներուն: Այցելած է Վենետիկ եւ հիացած է անոր գեղեցկութեան: Սուրբ Ղազարի մէջ ծանօթացած է Ղեկոնդ Ալիշանին, որ իր մէջ դրոշմած է հայ մշակոյթի արժեքները եւ հարստութիւնը: Անոր հրաւերով 1889-1891 ամառային արձակուրդը անցուցած է Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութեան կեդրոնին մէջ եւ ուսումնասիրած է հայկա-



Վենետիկի նկարներ

կան մանրանկարչութիւնն ու ձեռագիրներու մանրանկարները: Վենետիկի մէջ նկարած է քաղաքին անզուգական ճարտարապետութիւնները:

1891-1895, Ֆեթվաճեան աշխատած է Վիեննայի մէջ եւ հոն մնայուն հանդիպումներ ունեցած է աստորիացի արուեստագէտներու եւ նկարիչներու հետ, որոնց շնորհիւ խմորուած է իր մէջ արուեստի ճաշակն ու նրբութիւնը: Հոն տիրապետած է ջրաներկի արուեստին եւ նկատուած է ջրաներկի յայտնի նկարիչ: Վիեննայի մէջ աշխատած է որպէս ազատ արուեստագէտ եւ վրձինած է շարք մը դիմանկարներ: Հոն բարեկամացած է Պարսկաստանի հայագագի դեսպան՝ Նարման Խան Ենիկոլուպեանին եւ անոր պատուէրով նկարած է Նասր էտտին Շահի եւ անոր վեզիրին մեծածաւալ պատկերները: Հոն ստացած է արուեստի նկարներու պատուէրներ Պոլսոյ թուրք բարձրաստիճան անձնաւորութիւններէն եւ օտար հիւպատոսներէն:

Վիեննայի մէջ ստեղծած է «Թուրքական սուրհանդակը Անատոլիայի մէջ» իւղաներկ նկարը եւ ջրաներկով նկարած է բազմաթիւ կանացի դիմանկարներ եւ մերկ մարմիններ:

Վիեննայի մէջ կատարած է նաեւ գրական աշխատանք: Պոլսոյ եւ Վիեննայի հայկական մամուլին մէջ գրած է արուեստաբանական յօդուածներ:

Ֆեթվաճեան 1896-էն վերջ շրջագայած է Եւրոպայի կարգ մը երկիրներ, ուր ծանօթացած է յայտնի նկարիչներու: Ապա անմեկնած է Խրիմ, ուր հանդիպած է մեծ գծագրիչ-ծովանկարիչ՝ Ալազովսկիին: Ֆեթվաճեան դասեր առած է անկէ եւ հետագային նկարած է իր ծովային պատառները, Ալազովսկիի ազդեցութեան տակ:

1896-1903 տարիներուն, Արշակ Ֆեթվաճեան բնակած է Սան Պետերբուրգ: Հոն մօտէն ծանօթացած է ռուսական նկարչութեան արդի հոսանքին եւ դարձած է Ռուսաստանի նկարիչներու ընկերութեան անդամ:

Պետերբուրգի մէջ ծանօթացած է յայտնի նկարիչ՝ Փանոս Թերլեմէզեանին եւ դարձած է անոր մտերիմ բարեկամը: Պետերբուրգի ժողովուրդը հիացումով արտայայտուած է Արշակի ջրաներկ եւ իւղաներկ նկարներուն եւ գնահատանքի խօսքեր արձանագրած է մամուլին մէջ:



Արշակ Ֆեթվաճեան

Հայրենի հողին կանչը զինք բերած է Անդրկովկաս: 1899-ին Հաստատուած է Թիֆլիս: Ցուցահանդէսներով ներկայացած է հանրութեան՝ 1899-ին Պաթում, 1900-ին Թիֆլիս, 1902-ին Պաքու եւ Պլատիզորսկ: Պաքուի ցուցահանդէսին ներկայացուցած է հետեւեալ իւղաներկ գործերը՝ «Թուրքական սուրահանդակը Անատոլիոյ մէջ» եւ «Սուլթան Մահմեդ Ա-ի դամբարանը», «Վենետիկի Ս. Մարկոսի տաճարը», «Մաթէոս պատրիարք Իգմիրլեանի դիմանկարը» եւ «Կրկ Շահգեղի մզկիթի բակը»: Իսկ Թիֆլիսի ցուցահանդէսին ցուցադրած է «Ալեքսանդրապոլցի հայուհին» նշանաւոր նկարը: 1908-ին Թիֆլիսի մէջ երկրորդ ցուցահանդէսին ներկայացուցած է «Մասունցի կինը» կամ «Մանուկ Հայաստան» նկարը:

«Մասունցի կինը» (Մանուկ Հայաստան) նկարին մէջ մանուկը կրծքին սեղմած, ամէն ինչ կորսնցուցած սասունցի դիւցազնուհին (Մասունցի Շաքէն) կը խորհրդանշէ՝ յանուն իր ապագայի ոտքի ելած ժողովուրդի ազատագրական պայքարը:



«Մոլու ալիք» 1903



«Մանուկ Հայաստան» կամ «Մասունցի կինը»


Ֆեթվաճեան Թիֆլիսի մէջ իրագործած է՝ վերականգնողական աշխատանքներ: 1900-1908 իր ձեռքերով զարդարած է Թիֆլիսի վերակառուցուած Քամոեանց Ս. Գէորգ եկեղեցին մեծյաջողութեամբ: 1909-1914, վերաշինած է Թիֆլիսի Կուսանաց Ս. Ստեփանոս եկեղեցին, Արմաւիրի Ս. Գէորգ եկեղեցին եւ Կարսի նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բեմը, խաչկալը եւ հինգ դռները: Ան մասնակցած է նաեւ Ս. Էջմիածնի նորոգութիւններուն:

1900-ին, սկսած է Արշակ Ֆեթվաճեանի հայագիտական, հնագիտական եւ ազգագրական գործունէութիւնը: Այդ թուականէն սկսեալ ձեռնարկած է պատմական Հայաստանի տարածքին իր հետազօտական շրջապտոյտներուն, որոնք տեւած են 20 տարի: Հայրենասէր Արշակ Ֆեթվաճեան շրջելով Հայաստանի գրեթէ բոլոր պատմական վայրերը՝ չափազարած է եւ նկարած է բազմաթիւ յուշարձաններ, հայ ազգագրական տիպեր եւ հանդերձներ, գործակցե-

լով Թորամանեանին հետ: Ան մասնակցած է նիկողայոս Մառի Անիի պեղումներու արշա-
լախումբի կազմին:

Ֆեթվաճեան նկարած է 6-13րդ դարերու արեւմտեան եւ արեւելեան Հայաստանի հնագոյն յուշարձանները (աւելի քան 2000 մատի-
տանկար ու ջրաներկ աշխատանքներ), որոնց կարեւորագոյնը հանդիսացած է՝ ջրանկար «Անի»ները, որոնք նկատուած են ճարտարապե-
տական բնանկարի հիանալի գործեր:

1917-ին, Թիֆլիսի ցուցահանդէսին ցուցադրած է «Անիի շարքը» եւ «Աղօթքը գեթսէ-
մանի պարտէզում» ստեղծագործութիւնը:



Անիի եկեղեցին

րական թեմաներով աշխատանքներ ու կատարած է վերարտադրութիւններ հայկական մանրանկարչութեան նմոյշներէն:


Արշակ Ֆեթվաճեան ականատես եղած է էջմիածնի մէջ 1915-ի Հայոց Յեղասպանութեան հետեւանքով կիսաքաղց գաղթականութեան օրհասական վիճակին, անօթեւան եւ թշուա-
ռութեան եզրին հասած, սովէն ու համաճարակներէն մեռնող հայրենակիցներու մղձա-
լանջային վիճակին: Այդ օրերուն հայ գաղթա-
կանութեան վիճակի դժոխային պատկերներու մասին այսպէս գրած է իր յօդուածներէն մէկուն մէջ՝ «Չգիտեմ, թէ ի՛նչ լեզուով, ո՛ր ձայ-
նով պիտի ասել, կրկնել հազար անգամ ձայ-
նարկուած «ժողովուրդը կոտորուում է» ահագո-
չը, ո՛ր վրձինով նկարել էջմիածնի եւ Ճեմա-
րանի բակերում ու պատերի տակ 6 ամսից ի վեր դանդաղ հոգեվարքով անհետացող հազա-
րաւոր ամբոխը թշուառների: Մեր հայ գեղ-




Ֆեթվաճեան եւ Թորամանեան Անիի մէջ

1918-ին, էջմիածնի մէջ ստեղծած է Հայ կանանց ազգային տարազներու ջրանկար պատկերները, որոնք կը ներկայացընեն հայ կանանց գեղեցկութիւնը, վա-
յելչութիւնն ու ճաշակը: Այս նկարները նկատուած են հայկական ազգային գեղա-
նկարչական սքանչելի նմոյշներ:

Արշակ Ֆեթվաճեան ստեղծած է նաեւ հայ պետական գործիչներու, հայոց պատ-
մութեան, դիցաբանութեան եւ ազգագ-



Ճարտարապետական մատիտանկար



Հայ կնոջ տարազ



Ալեքսանդրապոլցի հայուհին

Ղուկին գրգլեակներից ու... քուրջերից, հագուստներից էլ ոչինչ չմնաց նրանց մերկութիւնը ծածկելու: Ու ջիւների դժոխային կեղեքումին ենթակայ փոքրիկները մանաւանդ՝ անվերջ քերուտելուց կաշիները պատառոտուած, կեղտի, աղտի մէջ էլ քոստտել սկսած, մի մի հրէշաւոր ցուցանքներ են»:

Ֆեթվաճեան այս բոլորին ազդեցութեան տակ նկարած է Յեղասպանութենէն փրկուած գաղթականներու ուշագրաւ դիմանկարներ:

Արշակ Ֆեթվաճեան սկանառես եղած է նաեւ 1918-1919 Արարատեան դաշտավայրի փոթորկայոյց իրադարձութիւններուն՝ թրքական արշաւանքին եւ անոր հետեւանքով ստեղծուած տագնապալից ահեղ սպառնալիքներուն, հայութեան լինել-չլինելու հարցին, Մարդարապատի հերոսամարտին, Հայաստանի Հանրապետութեան ստեղծումին ու աստիճանական վերելքին:

1918 թուականի Մայիս 28-ին, անկախութեան հռչակումէն անմիջապէս յետոյ, նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան առաջին խնդիրներէն եղած է սեփական ազգային թղթադրամ ունենալու եւ երկրին դրամական կանոնաւոր շրջանառութիւն հաստատելու հարցը: Մինչ այդ, կարճ ժամանակաշրջանի մը համար, Հայաստանի տարածքին շրջանառութեան մէջ դրուած են Անդրկովկասեան կոմիսարիատի դրամանիշերը, որոնց վրայ գտնուած են նաեւ հայերէն մակագրութիւններ:



Գաղթականներու եւ որբերու դիմանկար

Որպէս փոխանցման շրջան, Հայաստանի անկախութեան առաջին ամիսներուն օգտագործուած են ներքին գործերու նախարարութեան տպարանին մէջ տպագրուած պետական դրամատան Երեւանի բաժանմունքի ժամանակաւոր փոխգիրերը (չէքերը), ասոր զուգահեռ կառավարութեան կողքին ստեղծուած է աշխատանքային խումբ՝ նոր թղթադրամներու նկարներու նախագիծերը եւ տպագրութիւնը նախապատրաստելու նպատակով: Այդ խումբի կազմին մաս կազմած են նկարիչներ՝ Արշակ Ֆեթվաճեանը եւ Յակոբ Կոջոյեանը, ելեւմբ տագնապ-տնտեսագէտ Գրիգոր Զաղեթեանը եւ ճարտարապետ Գրիգոր Աղա-

բաբեանը: Հայկական թղթադրամներու ընդհանուր գեղարուեստական գաղափարի եւ ձեւանմուշներու պատրաստման հեղինակը հանդիսացած է հայ իրականութեան մէջ արդէն ճանաչուած յայտնի նկարիչ Արշակ Ֆեթվաճեանը:

1919-ի Յուլիսին հայկական թղթադրամներու ընդհանուր պատկերները արդէն վերջնական ձեւ ստացած են Ֆեթվաճեանի ձեռքով: Այդ ընթացքին թղթադրամները Եւրոպա տրպագրելու համար ՀՀ կառավարութիւնը համագործակցութեան առաջարկ ստացած է «Միրզոյեանց» առեւտրական տան ներկայացուցիչ՝ Վահան Միրզոյեանցի կողմէ, որուն հայրը, գործարար Սիմէոն Միրզոյեանցը, այդ պահուն Փարիզ գտնուած է:

30 Յուլիս 1919-ին, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, վարչապետութեամբ Ալեքսանդր Խատիսեանի, որոշած է հայկական դրամանիշեր տպագրելու համար Ֆրանսա ուղարկել երկրաչափ Գրիգոր Աղաբաբեանը եւ նկարիչ Արշակ Ֆեթվաճեանը, յատկացնելով իւրաքանչիւրին 50 Ֆրանկ օրապահիկ, ճանապարհածախս ըստ օրինաւոր պայմաններու եւ ամսական 3000 ռուբլի թոշակ: Որոշուած է նաեւ տնտեսութեան նախարարութեան քով գտնուած 10,000 դանիական գրոնները տրամադրել այս գործին համար, իսկ տպագրութեան ծախսը կատարելու համար բանակցիլ առեւտրական տուն «Միրզոյեանցի» հետ, որ ան հոգայ այդ ծախսերը այն պայմանով, որ հետագային ՀՀ վճարէ առեւտրական տուն «Միրզոյեանցին»: Հայկական դրամով կամ ապրանքներով: Ուստի Արշակ Ֆեթվաճեանը հայկական թղթադրամներու, ինչպէս նաեւ դրոշմաթուղթերու տպագրութիւնը կազմակերպելու նպատակով Հայաստանէն մեկնած է Եւրոպա:

Մեծ դժուարութիւններով թղթադրամները վերջապէս 1920 թուականի սկիզբին կը սկսին տպագրուիլ Անգլիա, Լոնտոնեան հանրայայտ «Վոթերլօ եւ որդիներ» ("Waterlow & Sons Ltd") ընկերութեան տպագրատունը: Թղթադրամներու տպագրութիւնը կը կատարուի Միացեալ Նահանգներու Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արմէն Գարոյի (Փաստրմաճեան Գրեգին) փոխանցած 2000 անգլիական ոսկիով: Իսկ հայկական դրոշմաթուղթերու, որոնք պատրաստուած էին թղթադրամներու նախագիծ-ուրուագիծին հիման վրայ, Ֆեթվաճեանը տպագրել տուած է Փարիզի Չասպօթ (Chassepot) ընկերութեան տպագրատունը: Ֆեթվաճեան այս պատասխանատու առաքելութիւնը կարողացած է բարեխղճօրէն եւ յաջողութեամբ հասցնել իր աւարտին:



Որբուհին փոքր եղբորը գրկած



Հայկական նոր թղթադրամներ

Հայաստանի առաջին Հանրապետութեան պաշտօնական թղթադրամները թուագրուած են 1919 թուականով եւ թողարկուած հրատարակուած են 50, 100 եւ 250 ռուբլի անուանական արժէքներով: Անոնց վրայ դրոշմուած են այդ ժամանակ պաշտօնավարող վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի եւ ելեւմտական նախարար Գրիգոր Զաղեթեանի ստորագրութիւնները: Հիմնական մակագրութիւնները եղած են հայերէն լեզուով, մասամբ նաեւ ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Մասնագէտներու կարծիքով, այդ թղթադրամներու թողարկումը յատկանշական եղած է գծանկարներու նրբագեղութեամբ եւ տպագրութեան բարձր որակով:



Հայկական նոր թղթադրամ

Հայկական թղթադրամներու ձեւաւորման մէջ օգտագործուած են ազգային պատկերներ եւ նախշեր: Բացառիկ նկատուած է 250 ռուբլիանոց թղթադրամի վրայ պատկերուած ճախարակով թել մանող Հայ կնոջ դիմանկարը: 100 ռուբլիանոց թղթադրամին վրայ պատկերուած է Հանրայայտ դարձած սուրը ձեռքին օձը տապալող արծիւի պատկերը՝ դրոշմուած են նաեւ Արարատ լեռան եւ Արարատեան դաշտավայրի պատկերները եւ Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցւոյ զարդաքանդակներէն մէկուն գծանկարը:

Թողարկուած թղթադրամները հասած են Հայաստան եւ շրջանառութեան մէջ դրուած են 1920-ի ամառը: Այդ թղթադրամներու գործածութիւնը քաղաքական յայտնի պատճառներով շատ կարճ տեւած է, բայց Առաջին Հանրապետութեան թղթադրամները պատմութեան մէջ մտած են որպէս հայկական անկախ եւ ինքնիշխան պետութեան կողմէ թողարկուած առաջին դրամանիշեր՝ 14-րդ դարուն Կիլիկիոյ հայկական թագաւորութեան անկումէն ետք:

Հայաստանի առաջին Հանրապետութեան պաշտօնական թղթադրամներու եւ նամակադրոշմներու՝ դրոշմաթուղթերու հրատարակութենէն ետք, Արշակ Ֆեթվաճեան Փարիզի Լուվր թանգարանին եւ Լոնտոնի արուեստի հանրածանօթ սրահներուն մէջ կազմակերպած է Անիի ջրանկարներու շարքին եւ հայկական տարազներու շարքին ցուցահանդէսները, որոնք մեծ հետաքրքրութեամբ ընկալուած են օտար արուեստասէրներու կողմէ:



Հայկական նոր դրոշմաթուղթեր

Հայաստանի անկախութեան կործանումն ու խորհրդային ամբողջատիրութեան պարտադրումը պատճառ դարձած է, որ Արշակ Ֆեթվաճեան իր հերթին տարագիր դառնայ:

1920-ի սկիզբը կարճ ժամանակով Ֆեթվաճեան ապրած է Փարիզ, ապա վերջնականապես հաստատուած է Միացեալ Նահանգներ, ուր անցուցած է իր կեանքին վերջին 25 տարիները: Խորհրդայինները սեւ ցանկի վրայ դրած են մեծատաղանդ հայ նկարիչը եւ երկար տասնամեակներ հայրենի հայրենիքը չէ կրցած ըստ արժանոյն ճանչնալ ու գնահատել իր արժանաւոր զաւակը:

Արշակ Ֆեթվաճեանի Միացեալ Նահանգներ ժամանելուն, անոր աշխատանքները չքեղօրէն տպագրելու համար անհրաժեշտ գումարներ հաւաքելու նպատակով եւ անոր գործունէութեան քառասուն ամեակը տօնելու համար Նիւ Եորքի հայկական շրջանակներու նախաձեռնութեամբ 1923-ին կը ստեղծուի յանձնախումբ մը: Սակայն մի քանի ամիսներ աշխատելէ ետք, այս ձեռնարկի կազմակերպիչները կը յուսալքուին, եւ յանձնախումբը կը դադրեցնէ իր գոյութիւնը՝ հայկական քաղքենի շրջանակներու անտարբերութեան ու պաղ վերաբերմունքին հետեւանքով:

Նիւ Եորքի մէջ Ֆեթվաճեան նիւթական անձուկ վիճակի մէջ կ'ապաստանի թշուառ հիւրանոց մը եւ կ'ապրի խեղճուկ սենեակի մը մէջ, ուր թրիմուած կ'ըլլան նաեւ իր բոլոր նկարները: Ան յուսահատ վիճակի մէջ կը մտածէ նոյնիսկ անձնասպանութեան մասին: Կարճ ժամանակ մը ետք Նիւ Եորքի մէջ կը հանդիպի Հայաստանի Ա. Հանրապետութեան Միացեալ Նահանգներու չորս նախկին հիւպատոսներէն մէկուն՝ զարգացած եւ հեռատես գործարար Մանուէլ Տէր Մանուէլեանին: Նախկին հիւպատոսը տեսնելէ ետք Ֆեթվաճեանի խեղճուկ ապաստանարանը կը հարցնէ անոր՝ «Այստեղից ո՞ւր պիտի գնաք»: Արշակ Ֆեթվաճեան կը պատասխանէ «Չգիտեմ»: Մանուէլ



Ֆեթվաճեան եւ Մանուէլ Տէր Մանուէլեան

Տէր Մանուէլեանը կը հարցնէ՝ «Դրամ ունէ՞ք»: Ֆեթվաճեանը կը պատասխանէ՝ «Ո՛չ»: Անմիջապէս, առանց ժամանակ կորսընցնելու, Մանուէլ Տէր Մանուէլեան կ'որոշէ իր հովանաւորութեան տակ առնել Արշակ Ֆեթվաճեանը եւ ապաստան տալ անոր իր սեփական հարկէն ներս: Ան կ'ըսէ՝ «Դուք պէտք է գաք ինձ հետ եւ ապրէք մեզ մօտ, Պոսթընում: Ես ընտիր կ'իմ ունեմ եւ երկու տարեկան որդի: Բացի այդ, Պոսթընը Ամերիկայի Աթէնքն է: Դուք պատկանում էք Պոսթընին»: Արշակ Ֆեթվաճեան կը հարցնէ՝ «Դուք վստա՞հ էք ձեր որոշման մէջ»: Մանուէլ

Տէր Մանուէլեանը կը պատասխանէ՝ «Այո՛»: Ֆեթվաճեանը կ'ըսէ՝ «Լա՛ւ, ես կը գամ»: Այսպէս ան կը դառնայ Մանուէլեաններու ընտանիքին մէկ անդամը:

Մանուէլ եւ Արմենուհի Տէր Մանուէլեաններուն հիւրընկալ օճախին մէջ ան կ'ունենայ տաքուկ ընտանեկան մթնոլորտ, որմէ երկար տարիներ զբրկուած էր: Ծնորհիւ Մանուէլ Տէր Մանուէլեանի, Արշակ Ֆեթվաճեան կը յայտնուի Պոսթընի մէջ, որպէս՝ ստեղծագործ արուեստագէտ եւ փայլուն գծագրիչ-նկարիչ: Իր ստեղծագործութիւնները կը ցուցադրուին Գոլումպիա համալսարանի թանգարանին եւ Շիքակոյի Բրինսթոն համալսարանին մէջ: Ամերիկացի արուեստագէտներ եւ հանրածանօթ գծագրիչներ կը հմայուին Ֆեթվաճեանի ստեղծագործութիւններով եւ կը գնահատեն անոր նկարչական արուեստը:

Հայաստանի Ա. Հանրապետութեան վերացման հետեւանքով Պոսթոն կ'ապաստանին այդ օրերուն տարագիր հայութեան վտարանդի դարձած մտաւորականներ՝ Վարդգէս Ահարոնեանը (նշանաւոր գրող Աւետիս Ահարոնեանի որդին) եւ անոր տիկինը՝ բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանեանը, (յայտնի երգահան Արմէն Տիգրանեանի քոյրը), յայտնի բառարանագիր եւ որոշ շրջան մը «Հայրենիք» լրագրի խմբագիր եղած Յարութիւն Չազմագճեանը (մեծահամբաւ երգահան Ալան Յովհաննէսի հայրը), անուանի գրող Համաստեղը, նշանաւոր հայդուկ՝ զօրավար Սեպուհը (Արշակ Ներսէսեան) եւ ուրիշներ, որոնք Տէր Մանուէլեաններու տան յաճախակի հիւրեր ըլլալով Արշակ Ֆեթվաճեան ինքզինք առանձին չէ զգացած:

Տէր Մանուէլեաններու երեք զաւակները՝ Վիգէնը, Հայկը եւ Լուսիկը, Ֆեթվաճեանի ներկայութեան մեծցած են եւ դրսեւորուած ազգային խմորումով: Անոնց համար Արշակ Ֆեթվաճեանը եղած է թէ՛ հօրեղբայր եւ թէ՛ իւրայատուկ ուսուցիչ եւ օրինակելի անձնաւորութիւն, եւ ան իր գեղարուեստական վաստակով ու նկարագրով մեծ չափով ուղղութիւն տուած է

անոնց ապագայ գեղագիտական կողմնորոշումներուն: Արչակ Ֆեթվաճեանի դասաւանդութիւններէն յատկապէս կ'օգտուի Վիգէնը, որ հետագային կը դառնայ Ամերիկայի Հայկական գրադարան-թանգարանի հիմնադրման նախաձեռնողն ու եռանդուն կազմակերպիչը եւ ազգային-հայրենասիրական զանազան ձեռնարկներու հեղինակը: Իսկ Լուսիկը որ կը բախտաւորուի կընքահայր ունենալ Արչակ Ֆեթվաճեանը, ապագային կը դառնայ մասնագէտ ճարտարագէտ եւ կը մասնագիտանայ միջնադարեան հայկական ճարտարապետութեան, քանդակագործութեան եւ մանրանկարչութեան մէջ:

Պոսթոն ապրած տարիներուն, Արչակ Ֆեթվաճեանը երբեմն Հարվըրտ համալսարանի եւ այլ հաստատութիւններու, ինչպէս նաեւ առանձին հայկական կազմակերպութիւններու հրաւերով դասախօսութիւններ տուած է հայ արուեստի եւ ճարտարապետութեան մասին: Անոր դասախօսութիւններուն ներկայ գտնուող ամերիկացի արուեստասէրները հիացմունքով բացայայտած են իրենց տպաւորութիւնները հայկական գեղարուեստի նկատմամբ եւ անոնք զարմացած են, որ Եղեռնէն մազապուրծ ազատուած, անանձնագիր եւ թշուառութեան եզրին հասած, Ամերիկա ապաստանած հայերու նախնիները եղած են այդ բոլորի ստեղծողները:

1925-1930 Պոսթընի մէջ, Արչակ Ֆեթվաճեան իւղաներկով վրձինած է շիկահեր եւ կապտաչեայ երիտասարդ կիներու եւ աղջիկներու պատկերները, որոնք այսօր պահուած են Հայաստանի Ազգային պատկերասրահին մէջ անոր երկերու հաւաքածոյին մէջ:



Դիմանկար

1929-1931 ան իւղաներկով կատարած է հայ միջնադարեան մշակոյթի նշանաւոր դէմքերու՝ հայկական գիրերը ստեղծող Մեսրոպ Մաշտոցի, Կաթողիկոս Սահակ Պարթեւի, պատմահայր Մովսէս Խորենացիի, պատմիչներ Յովհաննէս Օձնեցիի, Ստեփանոս Տարօնեցիի, առակագիր եւ իրաւագէտ Մխիթար Գօշի, փիլիսոփայ, թարգմանիչ, հասարակական, եկեղեցական գործիչ Եզնիկ Կողբացիի, բանաստեղծ Գրիգոր Նարեկացիի եւ այլոց երեւակայական դիմանկարները: Յատկապէս ազդեցիկ է Գրիգոր Նարեկացի պատկերը: Ֆեթվաճեան նկարած է նաեւ Ամերիկայի մէջ Հայաստանի առաջին հանրապետութեան դեսպան՝ Արմէն Գարոյի, Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Զաւարեանի, Ստեփան Զօրեանի (Ռոստոմի) դիմանկարները: Ֆեթվաճեան նկարիչներու առաջինը եղած է պատմական անձերու երեւակայական դիմանկարներու ստեղծողը:

1930-ին, ան մասնակցած է Պոսթոնի «Միմֆոնի հոլ»ի ցուցահանդէսին, ուր ներկայացուած է նաեւ այլ ազգերու արուեստն ու մշակոյթը, եւ կարողացած է ցուցահանդէսին ներկայացնել հայկական ստեղծագործութիւններ: Տուններ շրջելով, իր անձնական պատասխանատուութեամբ, պատմական, ազ-


գային, գեղարուեստական նշանակութիւն ներկայացնող առարկաներ հաւաքած է եւ կազմակերպած է անոնց ցուցադրութիւնը:

Ամերիկեան կարգ մը թանգարաններ եւ արուեստի հաստատութիւններ առաջարկած են Ֆեթվաճեանի ստեղծագործութիւնները գնել, սակայն ան մերժած է, հաստատելով, որ իր ստեղծագործութիւնները կը պատկանին միայն ու միայն հայ ժողովուրդին:

Արչակ Ֆեթվաճեան իր կեանքի վերջին 25 տարիներուն ապրած է երազելով միայն հայրենիք վերադառնալու գաղափարը: Ան մէկէ աւելի անգամներ դիմած է Հայաստանի իշխանութեան որ վերադառնայ Հայաստան, սա-



Եգնիկ Կողբացի



Մովսէս Խորենացի



Քրիստափոր Միքայելեան



Միմոն Զաւարեան



Ռոստոմ



Արմէն Գարօ



Համաստեղ

կայն միշտ մերժուած է: Սակայն Հայրենադարձութեան տարին, այլ մտաւորականներու շարքին, ինքն ալ կը հրաւիրուի վերադառնալ Հայրենիք: Ան կը պատրաստուի միանալու ներգաղթող հայերուն եւ ինք իր ձեռքերով կը զետեղէ իր ստեղծագործութիւնները (2000 հատ) սնտուկներու մէջ: Սակայն անակնկալ կը հիւանդանայ եւ 84 տարեկանին կը մահանայ 7 հոկտեմբեր 1947-ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Մետֆրրտ քաղաքին մէջ: Իր կտակին համաձայն՝ իր աճիւնը եւ գեղարուեստական ստեղծագործութիւնները տեղափոխուած են Հայաստան եւ պահուած են Հայաստանի ազգային պատկերասրահին մէջ: Անոր աճիւնները Երեւանի մէջ ամփոփուած են նկարիչ Սեդրակ Աղաճանեանի աճիւններուն մօտ: Դժբախտաբար այսօր անոր գերեզմանը անյայտ է:



Արարատ

Ֆեթվաճեանի ժառանգութիւնը ներկայացնող օրինակներ կը գտնուին Պոսթընի «Հայրենիք» լըրագիրի խմբագրատան մէջ, ինչպէս նաեւ Հայաստանի, Ամերիկայի եւ այլ երկիրներու մասնաւոր հաւաքածոներու մէջ:

Տաղանդաւոր արուեստագէտ Արշակ Ֆեթվաճեան, Խորհրդային տարի-

ներուն մոռացութեան մատնուած է քաղաքական դիրքորոշումով, հակառակ որ ըստ իր կտակին, իր արխիւները եւ արուեստի գործերը 1947-ին Հայաստան փոխադրուած են: Խորհրդային իշխանութեան վերացումէն եւ Հայաստանի վերանկախացումէն ետք, Հայրենի արուեստագէտ եւ Երեւանի արուեստաբանութեան ամպիոնի հիմնադիր տնօրէն դուրս ելանք: Լեւոն Չուքասզրեան, 2011-ին հանգամանօրէն արժեւորած է Արշակ Ֆեթվաճեանի վաստակը իր հրատարակած եռալեզու հատորով: Իր գիրքին մէջ Լեւոն Չուքասզեան գրած է՝

«Արշակ Ֆեթվաճեանը շնորհալի (վիրտուոզ) ջրանկարիչ է: Ջրաներկով ստեղծուած նրա աշխատանքները նուրբ ընկալման հրաշակերտներ են, իսկ իւզաներկով կատարուած պատկերները դիտողականութեան ուժեղ դրսեւորումներ եւ մասնագիտական բարձր պատրաստուածութեան արտայայտութիւններ: Բացառութեամբ Վարդգէս Սուրէնեանցի, Արշակ Ֆեթվաճեանին ժամանակակից եւ ոչ մի հայ նկարիչ չի ունեցել կողմնակի մանրամասները նկատելու եւ արձանագրելու այդչափ քննական եւ տեսողական սրութիւն: Արշակ Ֆեթվաճեանը հայ նկարիչների համաստեղութեան մէջ առաւել միջազգային հնչեղութիւն ունեցող վարպետներից է: 19-րդ դարի վերջի եւրոպական եւ հայկական իրականութեան հետ առնչուող նրա գեղագիտա-

կան դիրքորոշումների ու ոճի շնորհիվ, նա որոշակի շատ կարեւոր ցուցահանդէսների փնտռուած մասնակիցն է դարձել եւ արժանացել բազմաթիւ առանձին յօդուածների ու յիշատակուել բազմաթիւ գրքերում»:

Իսկ գրող, քննադատ, բանասէր, լրագրող եւ հասարակական գործիչ՝ Արշակ Չոպանեանը մէկ առիթով գրած է. «Ինչպէս Կոմիտաս Վարդապետը, որ բուն հայ երաժշտութիւնը գտնելէ եւ ուսումնասիրելէ ետք, ճանչցուց զայն եւրոպացուց, Ֆեթվաճեանն ալ փայլուն ջանքեր ըրաւ հայ ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը արեւմուտքի գեղասէրներուն ծանօթացնելու»:

Եզրափակելով կարելի է կատարել հետեւեալ հաստատումները՝

– 1890-էն սկսեալ, Արշակ Ֆեթվաճեան նկարիչի իր տաղանդն ու արուեստաբանի իր հմտութիւնը ի սպաս դրած է հայ ժողովուրդի մշակութային հարստութեան անմահացումին: Գեղանկարներով ու գծանկարներով յաւերժացուցած է հայկական ճարտարապետութեան հոյակերտ, կանգուն մնացած թէ կիսաւեր կոթողները, հայոց ազգային տարազներն ու յուշարձանները: Յատկապէս Անիի աւերակ կոթողները սքանչելի արուեստով ու ճշգրտութեամբ պատկերող ջրանկարներու իր շարքով (30 հատ): Ան աննախընթաց նուաճում մը արձանագրած է հայկական արդի նկարչութեան մէջ:

– Ան հեղինակն է Հայաստանի Առաջին Հանրապետութեան դրոշմաթուղթերուն եւ դրամանիշերուն:

– Արշակ Ֆեթվաճեան իր ետեւ ձգած է գեղարուեստական հսկայ ժառանգութիւն մը:

– Ան առաջին հայ նկարիչն է, որ գեղանկարչութեան նիւթ դարձուցած է ճարտարապետական կոթողը:

– Ան նկատուած է «անդրանիկ» հայ ջրանկարիչը:

– Ան կոչուած է՝ Հայ մշակոյթի կոթողներուն եւ ազգային անհնգներուն անգուգական նկարիչը:

– Արշակ Ֆեթվաճեանը ջրանկարի ամենամեծ վարպետներէն մէկը նկատուած է հայկական կերպարուեստի մէջ:

– Իբրեւ արուեստաբան, մամուլի էջերուն մէջ եւ առանձին հատորներով լոյս ընծայած է գեղագիտական մեծարժէք յօդուածներ եւ հայկական ճարտարապետութեան նուիրուած ուսումնասիրութիւններ ու նկարագարողումներ:

– Արուեստի բնագաւառի մէջ կատարած է թարգմանական աշխատանք մասնաւորապէս՝ Փրանսերէնէ եւ Իտալերէնէ հայերէնի.

– Գրած է բազմահատոր երկեր՝ հայկական ճարտարապետութեան պատմութեան եւ հայ արուեստի, մշակոյթի, ճարտարապետութեան եւ նոր քաղաքաշինութեան հրատապ հարցերու մասին.

– կատարած է թատերական ներկայացումներու ուսումնասիրութիւններ եւ ձեւաւորած է թատերական ներկայացումներ.

– Ան որպէս մտաւորական, նկարիչ, պատմաբան, բանաստեղծ, գծագրիչ,



Յիշատակի դրոշմաթուղթ



Յիշատակի դրոշմաթուղթ



Յիշատակի դրոշմաթուղթ

արուեստաբան, փորձած է փրկել Հայ մշակույթը, արուեստը, արժեքները, հայու անունը եւ իրաւունքները ու փորձած է ներկայացնել այս բոլորը համայն մարդկութեան:

– Յատկանշական են իր հրատարակած հետեւեալ երկերը՝

1) «Շրջագայութիւն նկարչաց աշխարհին մէջ», Հանդէս Ամսօրեայ, 1892 թ. № 1-6, 9-11, 1893 թ. № 3. Տպուած Վիեննա Միխիթարեան տպարան:

2) «Իմ մտքերը», Պոսթոն, 1941: Այս հատորը վկայութիւն մըն է իր մտահոգութիւններուն, աշխարհահայեացքին, գեղագիտական ճաշակի մասին:

3) «Les Ruines d’Ani». (Անիի Աւերակները) Venice, 1906.

4) Հայ գիրքի գեղարուեստը:

Արշակ Ֆեթվաճեանի մասին լոյս տեսած են հետեւեալ հատորները՝

1) Ա. Տէր Մանուէլեան, Պէյրութ 1966-ին հրատարակած է՝ «Նկարիչ Արշակ Ֆեթվաճեան» հատորը:

2) 2015-ին Երեւանի մէջ լոյս տեսած է «Արշակ Ֆեթվաճեան, 1863-1947, «Մշակութային Եղեռնից Փրկված Ճարտարապետական մասունքներ» հատորը:

3) Լեւոն Զուքասըգեան Երեւանի մէջ հրատարակած է «Արշակ Ֆեթվաճեան Հայ նկարիչը Արեւմուտքի եւ արեւելքի միջեւ»:

4) Լեւոն Զուքասըգեան 2011-ին Երեւանի մէջ հրատարակած է «Արշակ Ֆեթվաճեան»՝ հայերէն, անգլերէն եւ ռուսերէն եռալեզու պատկերազիրքը:

5) 2015-ին Հայաստանի մէջ հրատարակուած է «Մշակութային եղեռնից փրկուած ճարտարապետական մասունքները» արկումը:

Արշակ Ֆեթվաճեանի ծննդեան 150-ամեակին առթիւ Հայաստանի հանրապետութեան կողմէ հրատարակուած են դրոշմաթուղթերու շարք մը, օգտագործելով Արշակ Ֆեթվաճեանի եւ անոր ստեղծագործութիւններուն նկարները:

Կարելի է ըսել, որ տակաւին Արշակ Ֆեթվաճեանի արուեստը իր արժանավայել գնահատումը չէ ունեցած թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Մեծ աշխատանք պէտք է տարուի, որ իր արուեստի հազարաւոր պատասանները ցուցադրուին թէ՛ հայերուն եւ թէ՛ օտարներուն Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր գաղթօճախներուն մէջ:

Աշխատանք տարուելու է նաեւ հրատարակելու համար անոր ձեռագիր՝ հայ եւ համաշխարհային արուեստի պատմութեան հատորները, յուշերու հաւաքածոն եւ 100-է աւելի բանաստեղծութիւնները:

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Աղբիւրներ՝

- 1) Ազգ օրաթերթ-Մշակոյթ, «Արշակ Ֆեթվաճեան՝ Եւրոպական նկարչութեան եւ հայկական արուեստի հաւասարակշռողը», 21 Յունուար 2012:
- 2) ԵՊՀ հայագիտական հետազոտութիւնների ինստիտուտ Հայոց Ցեղասպանութեան, «Արշակ Ֆեթվաճեան»:
- 3) Երկիր, «Արշակ Ֆեթվաճեան՝ Գուճաւոր հայեացք անցեալից», 29 Սեպտեմբեր 2011:
- 4) Լիբերալ Բլոգ, «Արշակ Ֆեթվաճեան, Անիի նկարիչը»:
- 5) Հայաստանի ազգակրական պատկերասրահ, Շտեմարան, 8 Էտյուդներ:
- 6) Հայկական Սովետական հանրագիտարան, «Արշակ Ֆեթվաճեան», Հատոր 12, Երևան, 1986:
- 7) Զուգասրգեան, Լեւոն, «Արշակ Ֆեթվաճեան», Փրինթիֆոն, 2011:
- 8) Prabook, «Arshak Abrahami Fetvadjian»:
- 9) Վիքիպեդիա, Ազատ հանրագիտարան, Հայագգ հանրագիտարան, Արշակ Ֆեթվաճեան:
- 10) AV production, «Արշակ Ֆեթվաճեան՝ Գեղանկարիչ»:
- 11) Panorama, am, «Արշակ Ֆեթվաճեան՝ հայ նկարիչների համաստեղութեան մէջ առաւել միջազգային հնչեղութիւն ունեցող վարպետներից է»:
- 12) Shoghagat Tv company, 27 February 2013:
- 13) Sputnik, «Արշակ Ֆեթվաճեանը եւ առաջին հանրապետութեան թղթադրամները»:
- 14) Wikiart.org:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ^{*}

«Երկու բաներ, միշտ աւելի նոր ու աճող
հիացումով ու ակնածանքով, կը կլանեն միտքս,
որքան մտածումս աւելի յաճախ ու երկարատեւ զբաղի անոնցմով.-
աստղագարդ երկինքը՝ իմ վերեւ եւ բարոյական օրէնքը՝ իմ մէջ»¹

Իմմանուէլ Կանտ

ՆԱԽԱԲԱՆ

Գերման փիլիսոփայ Իմմանուէլ Կանտ (Immanuel Kant, 1724 – 1804), փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն մէկն է: Ան կը նկատուի նախահայրը՝ «գերմանական գաղափարապաշտութիւն» (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան, հեղինակը՝ փիլիսոփայութեան մէջ իր իւրայատուկ տեղը ունեցող գլուխ-գործոցին «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» (գերմ. բնագիր՝ "Kritik der reinen Vernunft", կրճատ՝ KrV, անգլ.՝ "Critique of pure reason") եւ հիմնադիրը՝ «Պարտագիտական բարոյագիտութիւն» (գերմ.՝ Pflichtethik, անգլ.՝ Deontological Ethics) տեսութեան, որ նաեւ այս ուսումնասիրութեան գլխաւոր նիւթն է:

Անվիճելի իրականութիւն մըն է, որ գերման փիլիսոփան, աւելի քան 200 տարիներ առաջ, իր ժամանակին մէջ, բարոյագիտութեան մասին նորութիւն մը ըսած է: Արդարեւ, Կանտ, բացայայտած է բարոյականութեան նոր սկզբ-

^{*} Նիւթը, մեծ մասամբ քաղուած է յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, Հոկտեմբեր, 2021: Կանտի բարոյագիտութեան մասին այս մենագրութիւնը, որպէս յօդուածաշարք, կը պարփակէ շարունակական բազմաթիւ մասեր:

¹ Բնաբանը, մէջբերուած է Իմմանուէլ Կանտի «Քննադատութիւն՝ գործնական բանականութեան» երկէն, էջ A 289 (գերմ. բնագիր՝ Kritik der praktischen Vernunft = կրճատ. KrV, անգլ.՝ Critique of practical reason):

բունք մը, որ 1) վաւերական է բոլոր մարդոց համար, 2) վաւերական է բոլոր ժամանակներուն համար, 3) անկախ է որեւէ իրավիճակէ եւ 4) հեռու է որեւէ սեփական շահէ:

Այսօր, աւելի քան 200 տարիներ ետք, 21-րդ դարու արդիական այս ժամանակներուն, կարելի է հարցադրել, որ բարոյականութեան նման սկզբունքի մը յաւերժական վաւերականութեան պահանջը արդեօք ծայրայեղ անհրաժեշտութի՞ւն մը, թէ համաձակ յանդգնութիւն մըն է: Այս հարցադրման պատասխանը թո՛ղ որ ընթերցողը ինքը գտնէ, անշուշտ Կանտի բարոյագիտութեան ծանօթանալէն ու զայն սերտելէն ետք:

Կանտի փիլիսոփայական բարոյագիտութեան նիւթի ուսումնասիրութեան եւ քննարկման համար ընտրուած է հետեւեալ կառոյցը.

- Նախաբան
- Իմմանուէլ Կանտ
- Ներածութիւն
- Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը,
- Կանտի բարոյագիտութեան կիրառումը,
 - Կանտի «անպայմանական հրամայականը»
 - Կանտի «առաքինութեան ուսմունքը»,
- Կանտի բարոյագիտութեան քննադատութիւնը
- Կանտի ազդեցութիւնը եւ
- Վերջաբան:

Այս աշխատասիրութեան մէջ տեղ գտած կարճ ծանօթագրութիւնները կը ներկայացուին, որպէս էջատակի ծանօթագրութիւններ: Իսկ աւելի երկար ծանօթագրութիւնները (ինչպէս փիլիսոփայական ուղղութիւններ, բարոյագիտական տեսութիւններ կամ հիմնական հասկացութիւններ) ընդգրկուած են աշխատասիրութեան մէջ, տարբեր տառատեսակով: Մէջբերումներու աղբիւրը, կը ներկայացուի Իմմանուէլ Կանտի երկերու "A" կամ "B" հրատարակութեան եւ էջի յիշատակութեամբ:



ԻՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

Ուսումնասիրութեան գլխաւոր նիւթին անցնելէ առաջ, հարկ է ամփոփ ձեւով ներկայացնել գերման աշխարհահռչակ փիլիսոփան՝ **Իմմանուէլ Կանտը**, յիշել իր կենսագրութիւնն ու երկերը, ինչպէս նաեւ՝ իր փիլիսոփայական միտքի իւրայատկութիւնները եւ այնուհետեւ առաւելաբար ծանրանալ՝ իր պարտագիտական բարոյագիտութեան (գերմ.՝ *Pflichtethik*, անգլ.՝ *Deontological Ethics*) տեսութեան նորարարութեան վրայ:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Գերման աշխարհահռչակ փիլիսոփայ Իմմանուէլ Կանտ, (Immanuel Kant, 1724 – 1804) ծնած է կայսերական Գերմանիոյ Արեւելեան Պրուսիոյ մարզի Քէօնիգսբերգ² (Königsberg, որ բառացի կը նշանակէ՝ Արքայասար) քաղաքին մէջ, նոյն քաղաքին մէջ ապրած է 80 տարիներ եւ իր կեանքի ընթացքին երբեք չէ հեռացած իր ծննդավայրէն: Միայն, որպէս տնային-անձնական ուսուցիչ աշխատած շրջանին, գտնուած է ծննդավայրի մօտակայքը:

Բազմազաւակ եւ խիստ պահպանողական բողոքական ընտանիքի 4-րդ զաւակն էր Իմմանուէլ (մկրտուած որպէս Էմմանուէլ): Կանտի ընտանիքին մէջ ծնած 9 զաւակներէն միայն 4-ը կը հասնին չափահասութեան տարիքին:

Ծննդավայրին մէջ, ութնամեայ նախնական ուսումը կը ստանայ Fridericianum վարժարանին մէջ, որ քաղաքի նշանաւոր դպրոցներէն մէկն էր:

Այդ շրջանին կը մահանայ քառասունամեայ մայրը (1737 թ.), երբ Իմմանուէլ Կանտ 13 տարեկան էր միայն: Հետագային, փիլիսոփան, իր մօր մասին մեծ ակնածանքով խօսած է. – «Մօրս երբեք պիտի չմոռնամ, որովհետեւ ան իմ մէջ տնկեց ու սնուցանեց բարութեան առաջին ծիլը, իմ սիրտը բացաւ բնութեան սպաւորութիւններուն առջեւ, իմ մէջ արթնցուց ու ընդլայնեց իմ հասկացութիւնները եւ մօրս ուսմունքը իմ կեանքի վրայ մնայուն ու բարերար ազդեցութիւն ունեցաւ»:

1740-էն սկսեալ, 16-ամեայ Իմմանուէլ Կանտ կը յաճախէ տեղւոյն նշանաւոր Ալբերտուս (Albertus) համալսարանը, ուր կը հետեւի բնական գիտութիւններու (Natural Sciences) եւ իր հիմնական ճիւղը նկատուող փիլիսոփայութեան (Philosophy) դասընթացներուն:

1746 թուականին, երբ հայրը կը մահանայ, Կանտ արդէն աւարտած էր համալսարանը եւ 22 տարեկանին, ստիպուած էր աշխատիլ, ինքզինք ու իր կրտսեր եղբայրն ու քոյրը պահելու համար: Կանտ, դրական արտայայտութիւններ ունի իր թամբագործ հօր ու իր ծնողներու փոխարարբերութեան մասին, ինչպէս նաեւ անոնց, զաւակներուն հանդէպ ունեցած կապին մասին: Բարոյական դաստիարակութեան, որպէս լաւագոյն ու տիպար օրինակներ, Կանտ կը յիշէ իր ծնողները:

Կանտի ժամանակաշրջանին, ընկալեալ սովորութիւն էր, որ մեծահարուստ ընտանիքներ իրենց զաւակներու տնային կրթութիւնն ու դաստիարակութիւնը վստահէին անձնական ուսուցիչներու: Այլ խօսքով մեծահարուստ-

² Կանտի ծննդավայր Քէօնիգսբերգ (Königsberg) քաղաքը եղած է գերմանական պատմական Արեւելեան Պրուսիա (Prussia) մարզի կեդրոն եւ Բալթիկ (Baltic) ծովու ափին՝ մեծ նաւահանգիստ: Բ. Աշխարհամարտէն ետք, ամբողջ մարզը կը գրաւուի Սովետական Միութեան կողմէ եւ քաղաքը կը վերանուանուի Կալինինգրադ (Kaliningrad): Այսօր, ծովեզերեան այս մարզը կը նկատուի Ռուսաստանի Դաշնութեան (Russian Federation) մէկ արտագաւառը (Exclave), որ շրջապատուած է Լեհաստանով (Poland) եւ Լիտվայով (Lithuania): Այժմ, քաղաքը նշանաւոր է իր մայր եկեղեցիով (Königsberger Dom) եւ անոր կողքին՝ Կանտի դամբարանով: Իսկ քաղաքի նախկին Ալբերտուս ապա քաղաքապետարանի համալսարանը, 2005 թուականէն սկսեալ կը կոչուի Կանտի անունով:

ներու գաւակները հանրային դպրոց չէին յաճախեր, այլ ուսուցիչ մը կու գար տան մէջ, ուր եւ կը բնակէր: Կանտ կը դառնայ տնային-անձնական ուսուցիչ եւ այս ճամբով կը ծանօթանայ նաեւ տեղւոյն ազնուական դասակարգին:

Աշխատանքի կողքին, միաժամանակ, Կանտ կը շարունակէ համալսարանական իր ընթացքը եւ 1755 թուականին, 31 տարեկան Կանտ կ'արժանանայ «դոկտոր»ի կոչումին, կը դառնայ համալսարանի դասախօս եւ կ'ունենայ ուսուցչական լայնածաւալ գործունէութիւն: Համալսարանին մէջ, իր դասաւանդած փիլիսոփայական եւ այլ նիւթերը (տրամաբանութիւն, բնագանցութիւն, բարոյագիտութիւն, մարդաբանութիւն, մանկավարժութիւն, եւայլն...) մեծ հետաքրքրութիւն կը յառաջացնեն, ինչ որ կը փաստէ Կանտի ուսուցչական գերազանց կարողութիւնը:

Համալսարանի դասախօս կոչուելէն առաջ, Կանտ շրջան մը կը կարգուի համալսարանի գրադարանապետ: Այդ ընթացքին, Կանտ առիթ կ'ունենայ ուսումնասիրելու փիլիսոփայական տարբեր ժամանակներու բազմաթիւ երկերը: Հարկ է նշել, որ Կանտ լաւապէս (մայրենիին նման) կը տիրապետէր լատիներէնին եւ դժուարութիւն չունէր հին յունարէն գրութիւնները կարդալու:

Կանտի գլխաւոր նպատակը, սակայն, ի'ր համալսարանին մէջ, փիլիսոփայութեան (որ այն ատեն կը կոչուէր՝ «տրամաբանութեան եւ բնագանցութեան») բաժանմունքի վերատեսուչ³ դառնալն էր: 1759 թուականին կատարած իր առաջին փորձը կը ձախողի: Գերմանիոյ այլ համալսարաններէն (Erlangen, Jena, Halle) իրեն եկած բոլոր վերատեսուչի կոչերը՝ Կանտ կը մերժէ: Վերջապէս, 1770 թուականին կը հասնի իր նպատակին, ու կը դառնայ Ալբերտուս համալսարանի փիլիսոփայութեան բաժանմունքի վերատեսուչ (պրոֆեսոր տիտղոսով), պաշտօն մը, որ պիտի կատարէր ամբողջ 21 տարիներ, մինչեւ 1791 թուական: 1786 թուականէն սկսեալ, միջանկեալ, կը վարէ նաեւ համալսարանի տնօրէնի⁴ պաշտօնը, որ փոխնիփոխ կը կատարուէր, բաժանմունքներու վերատեսուչներուն կողմէ:

Կանտի ուսուցչական գործունէութիւնը պիտի շարունակուէր մինչեւ 1796 թուական, երբ արդէն ան 72 տարեկան ու վատառողջ էր:

Կանտ չէ ամուսնացած եւ կեանքին մէջ մտերիմ ընկերուհի չէ ունեցած, թէեւ կիներու եւ երեխաներու հանդէպ շատ ազնիւ վերաբերմունք ունէր: Կանտ նաեւ մտերիմ յարաբերութիւն չէ ունեցած իր քոյրերուն եւ միակ եղբորը հետ: Կանտ թէեւ ունեցած է բազմաթիւ ընկերներ, բայց նաեւ՝ բազմաթիւ հակառակորդներ:

Վերջապէս, 1784 թուականին, 60-ամեայ Կանտ կ'ունենայ իր անձնական, երկյարկանի ու պարտէզով տունը: Տան 8 սենեակներէն մեծագոյնը, գետնա-յարկի դասախօսութիւններու դահլիճն էր, ուր Կանտ առաւօտեան կ'ընդու-

³ Վերատեսուչ (գերմ.՝ Dekan, անգլ.՝ Dean) – համալսարանի մէջ բաժանմունքի մը վարիչը:

⁴ Համալսարանի տնօրէն (գերմ.՝ Rektor, անգլ.՝ Rector) – բարձրագոյն ուսումնական (նաեւ՝ հոգեւոր) հաստատութեան մը վարիչը:

նէր իր ուսանողները: Տան երկրորդ յարկին վրայ, Կանտ ունէր իր գիրքերով լի աշխատասենեակն ու մեծ նստասենեակը, ինչպէս նաեւ՝ ճաշասենեակն ու ննջասենեակը: Տան մէջ կը բնակէին նաեւ Կանտի խոհարարուհին եւ ծառան՝ Մարտին Լամպը (Martin Lampe), որ մօտաւորապէս չորս տասնամեակներ ծառայած է մեծ փրկիսոփային:

Կեանքի երկրորդ կիսուն, Կանտ արդէն ունէր իր միօրինակ առօրեան, որ տասնամեակներ շարունակ անփոփոխ կը մնայ:

- 04.55 Կանտ կ'արթննայ, ծառային՝ «ժամանակն է» բառերով
- 05.00 բաժակ մը թէյով ու դեռ գիշերազգեստով կը քաշուի իր աշխատասենեակ
- 07.00 դասախօսութիւն դահլիճին մէջ (2 ժամ)
- 09.00 գլխաւոր աշխատանք՝ իր երկերուն վրայ (4 ժամ)
- 13.00 օրուան միակ ճաշը՝ հրաւիրեալ ընկերներու հետ (3 ժամ)
- 16.00 Կանտ տունէն դուրս կու գայ՝ միայնակ պտոյտի (աւելի քան 1 ժամ) իրիկունը՝ ընթերցանութիւն
- 22.00 Կանտ կը մտնէ ննջասենեակ՝ քնանալու:

Մինչեւ իր 70 տարիքը, ընդհանրապէս հիւանդութիւն չտեսած Կանտ, 70-էն ետք կը սկսի տկարանալ ու ծերութեան նշաններ ցոյց տալ: 1796 թուականին, ինչպէս նշեցինք, կը դադրի ուսուցչական պաշտօնէն: Յաջորդ տարուան ընթացքին պաշտօնական մեծ հանդիսութեամբ կը նշուի Կանտի համալսարանէն հրաժեշտը: Այնուհետեւ Կանտ կը զբաղի իր կարգ մը երկերու եւ զանազան յօդուածներու հրատարակութեամբ...: Փրկիսոփային մարմինը թէեւ տկար, բայց միտքը դեռ պայծառ էր:

Կանտ, իր կեանքի վերջին տարիներուն ա՛լ ի վիճակի չէր գրելու եւ հրատարակելու, որովհետեւ տարիքի յառաջացումով նաեւ յիշողութեան ու տեսողութեան տկարութեան հարցեր ունէր: 80-ամեայ Կանտ կը մահանայ 12 Փետրուար 1804 թուականին: Իր վերջին բառերն էին՝ "Es ist gut" («դա լաւ է»):

Կանտ մահացած ու թաղուած⁵ է իր ծննդավայրին մէջ (Königsberg, այժմ՝

⁵ Կանտ նախ թաղուած էր իր ծննդավայր Քէօնիգսբերգի մայր եկեղեցւոյ (Königsberger Dom) կողքին գտնուող դամբարան-մատուռի մը մէջ, ուր կը գտնուէին Կանտի կիսանդրին եւ մեծ որմնանկար մը, որ կը ներկայացնէր իտալացի նշանաւոր նկարիչ Ռաֆայելի (Raffaël Santi, 1483 – 1520) «Աթէնքի դպրոցը» ("School of Athen") որմնանկարի մէկ փոքր պատճէնը, որ կը ներկայացնէ աւելի քան 40 փրկիսոփայներու խմբանկարը:

Կանտի մահուան 100-ամեայ տարելիցին առթիւ (1904 թ.), էրբ մայր եկեղեցին հիմնական նորոգութիւններու մէջ էր, կը մտածուէր Կանտի գերեզմանը փոխադրել եկեղեցիէն ներս, ինչ որ տարբեր պատճառներով տեղի չունեցաւ: Կանտի ծննդեան 200-ամեայ տարեդարձին առթիւ (1924 թ.), Կանտի դամբարանին շուրջ կառուցուեցաւ սիւնազարդ նոր կառոյց մը: Բ. Աշխարհամարտի աւարտին, քանդուած էր գրեթէ ամբողջ Քէօնիգսբերգ քաղաքը, նաեւ ծանրօրէն վնասուած էին մայր եկեղեցին ու Կանտի սիւնազարդ դամբարանը: Երկար շրջան մը աւերակ մնալէ ետք, միայն 1992 թուականին սկսան մայր եկե-

Kaliningrad), որ Բ. Աշխարհամարտին ետք, դարձավ Ռուսաստանի Դաշնության մէկ արտագաւառը:

ԿԱՆՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Կանտի թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական փիլիսոփայութիւնը բազմակողմանի է: Ընդունուած է Կանտի փիլիսոփայութիւնը բաժնել երկու հիմնական մասերու՝ նախաքննադատական եւ քննադատական:

Կանտ ընդհանրապէս հետաքրքրուած էր բնագանցութեամբ (մետաֆիզիկա = Metaphysics⁶), որ տեսական փիլիսոփայութեան հիմնական ճիւղերէն մէկն է: Բնագանցութիւնը կը բովանդակէ ամբողջ գոյութեան կամ իրականութեան իմաստն ու նպատակը: Այստեղ կը քննարկուին ու կը նկարագրուին համընդհանուր սկզբունքներու, օրինականութիւններու եւ կառուցուածքի նախապայմանները, պատճառները եւ հիմնաւորումը: Աւելի պարզաբանելու համար տանք օրինակներ, որոնք գոյաբանական (էաբանական = Ontology) հարցադրումներ են եւ որոնցմով կը զբաղի բնագանցութիւնը (մետաֆիզիկան) .--

- Ընդհանրապէս ինչո՞ւ գոյութիւն ունի աշխարհը եւ ինչո՞ւ կարգաւորուած է ա՛յս կերպ եւ ոչ այլ կերպ:

- Ընդհանրապէս կա՞յ ազատութեան, հոգիի, Աստուծոյ եւ այլ անդրանցական (Transcendental) էութեանց ոլորտ եւ եթէ այո, ինչպէ՞ս եւ ի՞նչ կարող ենք իմանալ այդ մասին:

- Ընդհանրապէս ի՞նչ է մարդը կամ մարդկային էութիւնը: Ի՞նչ է տարբերութիւնը մարդկային մարմնին (որպէս նիւթ) եւ աննիւթական-աներեւոյթ հոգիին կամ ի՞նչ է «մարմին-նիւթ-հարցը»: Մարդը արդեօք ունի՞ անմահ հոգի կամ ազատ կամք:

դեցոյ ու Կանտի դամբարանի վերանորոգութեան աշխատանքները եւ ամբողջ շրջանը կոչուեցաւ «Կանտի կղզի»:

Այսօր, աւանդութիւն դարձած է, որ նորապսակ ամուր, երբ եկեղեցիէն դուրս գայ, թարմ ծաղիկներով կը մօտենայ Կանտի դամբարանին:

⁶ Գերմ.՝ *Metaphysik*, անգլ.՝ *Metaphysics* – տեսական փիլիսոփայութեան հիմնական ճիւղերէն մէկն է: Եզրոյթը յառաջացած է յունարէն *meta ta physika* բառակապակցութենէն, որ բառացիօրէն կը նշանակէ «բնութենէն ետք» եւ ունի իր պատմութիւնը: Յոյն դասական փիլիսոփայ Արիստոտելի (յուն.՝ *Aristotélēs*, 384 – 322 մ.թ.ա.) գրութիւնները երկար շրջան մը կորսուած կը նկատուէին: Անդրոնիկոս Հոնդոսցի (*Andronicos of Rhodos*) մ.թ.ա. 70 թուականին կը գտնէ եւ կը դասաւորէ մեծ փիլիսոփային երկերը. նախ կը դասաւորէ բնութեան (յուն.՝ *physis*) մասին փիլիսոփայական երկերը, անկէ «ետք» (= յուն.՝ "meta") կը դասաւորուին բնութենէն դուրս եղած փիլիսոփայական երկերը, ինչպէս գոյի (գոյաբանութեան) սկզբունքային նիւթերը: Հայերէնի մէջ կ'օգտագործուի նոյն «մետաֆիզիկա» (= ֆիզիկայէն ետք) եզրոյթը կամ կը թարգմանուի՝ «բնագանցութիւն» եզրոյթով:

Յիշեալ հարցադրումներուն կարելի չէ պարզապէս պատասխանել անհատական զգայական փորձի կամ փորձապաշտական (Empirical) հետազոտութիւններու միջոցով: Այլ խօսքով այդ հարցադրումներու պատասխանները մեր զգայական փորձի սահմաններէն դուրս կը մնան: Բնագանցական (մետաֆիզիկայի) այս ոլորտը փիլիսոփայութեան մէջ ընդհանրապէս քննադատուած է, Հնադարէն սկսեալ, մինչեւ Կանտ ու անկէ ետք:

Կանտի համաձայն, փիլիսոփայութեան մէջ, ուղղակի վիրաւորական խայտառակութիւն մըն է, որ բնագանցութիւնը (մետաֆիզիկան), մինչ այդ չէ կարողացած լուծել իր ականդական վէճերը: Այս գաղափարէն կը յառաջանայ Կանտի նպատակը, որ բնագանցութեան գիտական մեթոդ մը շնորհելն էր, որով կարելի դառնայ աւելի հաստատուն վկայութիւններու հասնիլ, ինչպէս է պարագան ուսողութեան (մաթեմատիկայի) եւ այլ գիտական ճիւղերու մէջ: Իր նպատակին հասնելու համար, Կանտ պէտք է որոշէր գիտելիքի ճանաչելիութեան մարդկային սահմանները եւ մերժէր անդրանցական (Transcendental) ու ճանաչելիութեան մարդկային սահմաններէն դուրս գտնուող իմացութեան բոլոր պահանջները:

Փիլիսոփայական իմացաբանութեան (Epistemology) կամ գիտելիքի ճանաչելիութեան երկու գլխաւոր ուղղութիւններ եղած են. –

1. Բանապաշտութիւնը (Rationalism),

ուր ճանաչումի որպէս հիմք կ'ընդունուի բանականութիւնը: Պլատոնէն սկսեալ, այս ուղղութեան ներկայացուցիչները կը պնդեն, որ միայն բանականութեան սկզբունքներով կարելի է ճանչնալ (իմանալ) իրականութիւնը եւ աշխարհի տրամաբանական կարգը կարելիութիւն կու տայ մարդուն, որ ան աշխարհը հասկնայ՝ մտային տրամաբանական հետեւութեան (Deduction) կանոններով: Բանապաշտ փիլիսոփաներու կարգին կարելի է նշել՝ Փրանսասցի Դեկարտ (René Descartes, 1596 – 1650), հոլանդիացի Սպինոզա (Baruch Spinoza, 1632 – 1677) եւ գերման Լայբնից (Gottfried Wilhelm Leibniz, 1646 – 1716):

2. Փորձապաշտութիւնը (Empiricism),

ուր ճանաչումի որպէս հիմք կ'ընդունուի փորձառական իմացութիւնը, որ կը յառաջանայ զգայական (զգայարանքներու) ընկալումներով: Իսկ այս ուղղութեան ներկայացուցիչները կը պնդեն, որ իրական են միայն ա'յն իրերն ու երեւոյթները, զորս մեր զգայարանքներով կրնանք ճանչնալ (տեսնել, լսել, հոտոտալ, շօշափել, եւայլն...) եւ այս պարագային, բանականութեան գործը միայն կարգաւորելն է: Փորձապաշտ փիլիսոփաներու կարգին կարելի է նշել՝ անգլիացի Հոբս (Thomas Hobbes, 1588 – 1679) եւ Լոկ (John Locke, 1632 – 1704), իրլանտացի Բերկլի (George Berkeley, 1685 – 1753) եւ Հոչիսոն (Francis Hutcheson, 1694 – 1746), սկոտլանդիացի Հյում (David Hume, 1711 – 1776) եւ Սմիթ (Adam Smith, 1723 – 1790):

Վերոյիշեալ բանապաշտ (3) եւ փորձապաշտ (6) փիլիսոփաներուն մասին, տե՛ս հետագայ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ բաժնին մէջ:

Կանտի նպատակը վերոյիշեալ երկու ուղղութիւններու հաշտութիւնն էր: Ան, ոչ միայն այդ երկու ուղղութիւններուն վրայ ուսումնասիրութիւններ կատարեց, այլեւ մանրագնին ուսումնասիրութեան ենթարկեց ընդհանուր մարդկային մտածողութիւնը, ինչպէս նաեւ մտածելու կարողութիւնն ու սահմանները:

Երկու ուղղութիւններու հաշտութեան առնչութեամբ, Կանտ, իր գլխաւոր երկին համար ընտրեց յունարէն *krinein* եզրոյթը, որ կը նշանակէ «քննել եւ ստուգել» եւ որմէ յառաջացած են գերմաներէն *Kritik*, ֆրանսերէն եւ անգլերէն *Critique* (անգլերէն նաեւ *Criticism*) եզրոյթները: Հայերէնի մէջ եւս ունինք շատ իմաստալի «քննադատութիւն» բառը, որ կազմուած է «քննել» եւ «դատել» եզրոյթներէն:

Այս առնչութեամբ, իր գլխաւոր երկը կը հանդիսանայ «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» (գերմ. բնագիր՝ "*Kritik der reinen Vernunft*", անգլ.՝ "*Critique of pure reason*") անունով արժէքաւոր, ծաւալուն ու իր տեսակին մէջ եզակի հատորը, որու վրայ ամբողջ 11 տարիներ աշխատելէ ետք, Ա. հրատարակութիւնը լոյս կը տեսնէ 1781 թուականին: Այնուհետեւ, Կանտ, յաջորդող 6 տարիներու ընթացքին, վերստուգած ու ընդարձակած է զայն եւ երկը Բ. հրատարակութեան է արժանացած՝ 1787 թուականին: Այս երկին մէջ, Կանտ կը քննադատէ (քննել ու դատել իմաստով) ընդհանրապէս բանականութեան ընդունակութիւնը (կարողութիւնը) գիտելիքներու ձգտումի առնչութեամբ, հետեւաբար նաեւ բնագանցութեան (մետաֆիզիկայի) մը կարելիութեան (հնարաւորութեան) կամ անկարելիութեան (անհնարինութեան) առնչութեամբ:⁷

Այս իմաստով, Կանտ դարձաւ միջնորդը փիլիսոփայական իմացաբանութեան (Epistemology) երկու գլխաւոր ուղղութիւններուն՝ բանապաշտութեան (Rationalism) ու փորձապաշտութեան (Empiricism) միջեւ եւ զանոնք ամբողջացնողը՝ անդրանցական գաղափարապաշտութեան (Transcendental Idealism) ոլորտին մէջ:

Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿԱՆՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ բաժնին մէջ յիշուած՝ 3 բանապաշտ եւ 6 փորձապաշտ փիլիսոփաներուն մասին, այստեղ հակիրճ ծանօթագրութիւններ:

Բանապաշտ (Rationalist) փիլիսոփաներ.-

1. **Ռենէկարտ** (René Descartes, լատ.՝ *Renatus Cartesius*, 1596 – 1650)
Ֆրանսացի ուսողագէտ (մաթեմատիկոս), բնագէտ եւ փիլիսոփայ: Լուսաւորութեան շրջանի, Բանապաշտութիւն (Rationalism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Հեղինակ՝ բազմաթիւ երկերու:

⁷ Կանտի այս գաղափարը քաղուած է իր «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» երկի նախաբանէն, KrV, էջ A – XII:

2. Սպինոզա (Baruch Spinoza, 1632 – 1677)

Հոլանդացի փիլիսոփայ: Լուսաւորութեան շրջանի Բանապաշտութիւն (Rationalism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "Ethics" (1677 թ.): եւ

3. Լայբնից (Gottfried Wilhelm Leibniz, 1646 – 1716)

Գերման ուսողագէտ (մաթեմատիկոս) եւ փիլիսոփայ: Լուսաւորութեան շրջանի Բանապաշտութիւն (Rationalism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ:

Փորձապաշտ (Empirist) փիլիսոփաներ.-**4. Հոբս** (Thomas Hobbes, 1588 – 1679)

Անգլիացի քաղաքագէտ-փիլիսոփայ. հիմնադիր Բացարձակապաշտութիւն (Absolutism) տեսութեան եւ ներկայացուցիչ՝ Նիւթապաշտութիւն (Materialism) փիլիսոփայական շարժումի: Գլխաւոր երկը կը նկատուի՝ «Լեւիատան» - "Leviathan" 1651 թ.:

5. Լոկ (John Locke, 1632 – 1704)

Անգլիացի փիլիսոփայ: Լուսաւորութեան շրջանի Փորձապաշտութիւն (Empiricism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ:

6. Բերկլի (George Berkeley, 1685 – 1753)

Իրլանդացի փիլիսոփայ եւ անգլիկան աստուածաբան: Լուսաւորութեան շրջանի Փորձապաշտութիւն (Empiricism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ:

7. Հոչիսոն (Francis Hutcheson, 1694–1746)

Իրլանդացի-սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ. նախահայր՝ Օգտապաշտութիւն (Utilitarianism) փիլիսոփայական ուղղութեան: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "System of Moral Philosophy" (1755 թ., «Բարոյական փիլիսոփայութեան դրութիւնը»):

8. Հյում (David Hume, 1711 – 1776) եւ

Սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ, տնտեսագէտ եւ պատմաբան: Ընկեր՝ Ադամ Սմիթի: Լուսաւորութեան շրջանի Փորձապաշտութիւն (Empiricism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "An Enquiry Concerning the Principles of Morals" (1751 թ., «Հարցաքննութիւն՝ բարոյականութեան սկզբունքներուն»):

9. Սմիթ (Adam Smith, 1723 – 1790)

Սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ եւ տնտեսագէտ: Լուսաւորութեան շրջանի Փորձապաշտութիւն (Empiricism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ "The Theory of Moral Sentiments" (1759 թ., «Բարոյական զգացումներու տեսութիւնը»):

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱԵԱՆ
Գերմանիա

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ**ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ. ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ**

Երկուշաբթի, 3 Յունուարի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի իր գրասենեակին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Հոգեւոր Տիրոջ՝ սրբազան, գերապայծառ ու վարդապետ հայրերու ներկայութեամբ:



Շուրջ ժամ մը տեւած հանդիպումը առիթ հանդիսացաւ նոր տարւոյան ու Աստուածայայտնութեան տօներուն առիթով բարեմաղթութիւններ փոխանակելու, ինչպէս նաեւ անդրադարձ կատարելու հայ ժողովուրդը յուզող խնդիրներուն:

ՏՕՆԱԿԱՆ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ

Ձորեքշաբթի, 5 Յունուարի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան Ճրագալոյցի Ս. եւ Անմահ Պատարագը:

Ս. Պատարագի աւարտին, Քրիստոսի ծնունդը աւետոյ շարականներու երգեցողութեան ընթացքին, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան Ս. Խորանէն վար բերաւ Քրիստոսի լոյսը խորհրդանշող մոմը եւ յանձնեց Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութեան ձեռամբ հաւատացեալները ստացան Ս. Խորանէն բերուած լոյսը եւ իրենց տունները տանելով՝ լուսաւորուեցան Քրիստոսի ճշմարիտ լոյսով:



Ս. ԾՆՆՂԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Հինգշաբթի, 6 Յունուարի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, հանդիսաւոր Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը: Հաւատացեալները խուններամ հաւաքուած էին Անթիլիասի Մայրավանք՝ մասնակից դառնալու Քրիստոսի ծննդեան աւետումին, հաղորդուելու տօնին խորհուրդով եւ լսելու Նորին Սրբութեան Հայրապետական պատգամը: Պատարագին ներկայ էին նաեւ՝ Մ.Տ.Կ.Կ. Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանը, պետական պաշտօնական անձնակազմը՝ թիւններ, երեսփոխաններ, նախարարներ եւ ազգային մարմիններու ու կառոյցներու ներկայացուցիչներ:



Որպէս աւընթերակայ, Ս. Խորանին վրայ Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին՝ Գերշ. Տ. Կոմիտաս եւ Գերշ. Տ. Շահան Արքեպիսկոպոսները, իսկ Պատարագին երգեցողութիւնը կատարեց՝ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:

Մեր Տիրոջ ու Փրկչին մկրտութիւնը խորհրդանշող ջրօրհնէքի արարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը փոխանցեց Ծննդեան պատգամը, շեշտելով վերանորոգութեան հրամայականը: Ան ըսաւ, թէ «Մեղքով ու ապականութեամբ լեցուն աշխարհը վերանորոգելու առաքելութեամբ Աստուծոյ Որդին մարդեղացաւ Բեթղեհէմի մէջ ու դարձաւ աղբիւր վերանորոգ կեանքի ու աշխարհի: Քրիստոսի ծնունդով հին մարդը վերանորոգուեցաւ ու դարձաւ նոր մարդ, հին աշխարհը՝ նոր աշխարհ. այլ իստով՝

Աստուծմէ հեռացած մարդը մօտեցաւ Աստուծոյ, երկիրը՝ երկինքին, ժամանակաւորը՝ յաւիտենականին: Քրիստոսի ծնունդով քանդուեցան հին աշխարհի մարդակերպոն արժեքները, չափանիշերն ու նպատակները, եւ հաստատուեցաւ երկնային արժեքներու ու յաւիտենական նշմարտութիւններու նոր համակարգը՝ Աստուծոյ թագաւորութիւնը: Քրիստոսով սկսաւ նոր աշխարհ ու նոր մարդկութիւն»:

Շարունակելով իր պատգամը, Նորին Սրբութիւնը օրուան խորհուրդը խտացուց երեք կէտերու մէջ.–

ա) «Աստուծոյ Որդւոյն ծնունդը կը հրաւիրէ մեզմէ իւրաքանչիւրը վերանորոգելու մեր անձը հոգեւոր արժեքներով, աստուածահանոյ գործերով ու աստուածակերպոն կեանքով եւ քաղցր կեանքի այն քամքէն, որ Քրիստոս մեր առջեւ բացաւ իր կեանքի օրինակով: Մեղքով ու ապականութեամբ լեցուն ներկայ աշխարհին մէջ, Որքա՛ն կարիք ունինք վերանորոգուելու Քրիստոսի վերանորոգիչ ներկայութեամբ:

բ) Քրիստոսի ծնունդը կը հրաւիրէ աշխարհաստարած հայ Սփիւռքը ինքզինք վերանորոգելու իր կենցաղակերպով, մտածելակերպով ու գործելակերպով. ինքզինք վերանորոգելու իր կազմակերպչական ու յարաբերական կեանքով. ինքզինք վերանորոգելու հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներուն ու իտեալներուն նկատմամբ ունեցած իր հաւատարմութեամբ: Ներկայ տարին հռչակեցինք ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ՝ Սփիւռքի վերակազմակերպման ազդանշանը տալով: Վերակազմակերպում կը նշանակէ էապէս վերանորոգում: Պայմաններու պարտադրանքով, հայ ժողովուրդը մեծամասնութեամբ Սփիւռք դարձած է: Ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ, ան կոչուած է ինքզինք վերանորոգելու, մէկ կողմէն՝ հաւատարիմ մնալով իր ինքնութիւնն ու ամբողջականութիւնը երաշխաւորող արժեքներուն ու իտեալներուն, եւ միւս կողմէ՝ քայլ պահելով ներկայ աշխարհի զարգացումներուն հետ:

գ) Քրիստոսի ծնունդը կը հրաւիրէ մեր ժողովուրդի զաւակները՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին, իրենք զիրենք վերանորոգելու ու վերակենսաւորելու. այլ խօսքով՝ հզօրացնելու: Մեր եկեղեցին իր կարգին կարիք ունի վերանորոգման՝ իր ծէսով ու առաքելութեամբ, իր ներքին կառոյցներով ու ծառայութեամբ: Արդարեւ, Հայաստանի մէջ հայոց բանակի վերակազմակերպումը, պետական կառոյցներու վերանորոգումը, հայ կեանքէն ներս գործող կազմակերպութիւններուն ինքնարժեւորումը դարձած են անյետաձգելի: Ներքին վերանորոգումով մեր կեանքը պիտի դառնայ աւելի կազմակերպ, ներդաշնակ ու հզօր, Հայաստանի Հանրապետութիւնը՝ աւելի կենսունակ ու բարգաւաճ: Մենք կոչուած ենք դառնալու 21-րդ դարու պատկանող ազգ, եկեղեցի ու պետութիւն»:

Անդրադառնալով Լիբանանի ներկայ կացութեան, ան ըսաւ, թէ «Լիբանանը կը գտնուի իր պատմութեան նախապարտական իրազմերուկին: Արդեօք պետական պատասխանատուները կ'անդրադառնա՞ն այն ողբերգութեան,

որուն մատնուած է ժողովուրդը: Արդեօք պատասխանատուները գիտե՞ն, թէ աղֆատութիւնը, հիւանդութիւնն ու արտագաղթը ժողովուրդի կեանքէն ներս հետզհետէ խորացող ներկայութիւն դարձած են: Կարելի չէ լուռ մնալ այս ողբերգութեան դիմաց: Պետական աքոռներուն վրայ նստած մարդիկ պատասխանատու են ներկայ ողբերգութեան եւ համարատու՝ ժողովուրդին: Արդարեւ, աշխարհի ամէնէն յառաջադէմ ու զարգացած երկիրներէն մէկը դարձած երբեմնի Լիբանանը, այսօր դարձած է ֆաղաֆական ու ընկերա-տնտեսական տիղմի մէջ խրած երկիր: Ինչպէ՞ս կը սպասեմք որ օտարներ օգնեն մեզի, երբ մենք չենք կրնար իրարու օգնել: Անհրաժեշտ է որ համայնֆային ու ֆաղաֆական պատասխանատուներ միասնաբար ելք մը գտնեն Լիբանանը դուրս բերելու ամբողջական ֆայֆայումի վտանգին առաջնորդող ներկայ կացութենէն»:

Խօսելով Լիբանանի հայութեան մասին, Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկայ դժուարութիւնները խոր հաւատքով ու ամուր կամքով դիմագրաւող Լիբանանի հայութիւնը: «Մենք, որպէս հոգեւոր պետ, ձեր կողմին ենք՝ զօրակից ձեզի: Կ'ապրինք ձեր դժուարութիւնները, կը զգանք ձեր մտահոգութիւնները եւ մեր կարելիք կը կատարենք որոշ չափով ամոքելու ձեր ցաւը, դարմանելու ձեր վէրքը, կիսելու ձեր դժուարութիւնները: Վըստահ եղեք, որ Լիբանանի հայութիւնը պիտի յաղթահարէ ներկայ տագնապը ու վերականգնի՝ առաւել նուիրումով վերստանձնելով իր համազգային դերը, իսկ Լիբանանի մէջ՝ իր ֆաղաֆական դերը, որպէս եօթը գլխաւոր համայնքներէն մէկը», *ըսաւ Հայրապետը:*

Ս. Եւ Անմահ Պատարագի ավարտին, Հայրապետական Թափօրը, միաբան հայրերու եւ հաւատացեալ ժողովուրդի մասնակցութեամբ, ուղղուեցաւ Վեհարան, ուր ներկաները միասնաբար երգեցին «Կիչիկիա» քայլերգը եւ Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու Ս. Ծննդեան բարեմաղթութիւնները փոխանցեց մեր ազգի բոլոր զաւակներուն:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՐԻՔԱՒՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ

Ուրբաթ, 7 Յունուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, իր իսկ նախաձեռնութեամբ, այցելեց Պուրճ Համուտի Արագած շրջանին մէջ ապրող աւելի քան 100 կարիքաւոր ընտանիքներու տունները: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանը, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանը եւ Լիբանանի երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախկին նախարար ու Լիբանանի Թեմի Ազգ. Վարչութեան փոխ-ատենապետ Վարդինէ Օհանեան-Գէորգեանը:

Արդարեւ, յիշեալ շրջանը Պուրճ Համուտի ամէնէն համեստ շրջանն է, յատկապէս այս օրերուն, երբ հայ ընտանիքները կը դիմագրաւեն լուրջ դժուարութիւններ: Վեհափառ Հայրապետը օրհնեց շրջանի ժողովուրդի զաւակները, զնահատեց անոնց հաւատքն ու վճռակամութիւնը եւ վստահե-



ցուց, որ մեր եկեղեցին, յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, ամէն իմաստով զօրավիգ կը կանգնի իրենց՝ իր կարելիութեան սահմաններէն ներս, օգտակար դառնալով մեր ժողովուրդի կարիքներուն:

Իր այցելութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը նուէրներ փոխանցեց օժանդակութեան յատուկ յանձնախումբին՝ բաժնելու համար մեր ժողովուրդին:



«ԴՈՒՔ ԱՌԱՆՁԻՆ ՉԷՔ...»

Ծառայութեան մեծութիւնը... կեանքի նշանաբանը իւրաքանչիւր հոգե-
ւորականի, որուն ճակատը Անթիլիիասի Սուրբ Միւռնոնով օծուած է: Բազ-
միցս Արամ Ա. Վեհափառ Հայրապետէն լսած եմ ծառայելու վեհութեան մա-
սին: Ծառայութեան մեծութիւնը տեսայ եւ ապրեցայ մորթիս վրայ, երբ
Պուրճ Համուտի Արագած թաղամասին մէջ Հովուապետ եւ հօտ՝ հայր ու որ-
դի իրար հանդիպեցան:

Երբ մտահոգուած դէմքերը՝ սկսան ժպտալ:

Երբ «Հայրապետը մեզի եկաւ»՝ կը փսփոսային:

Երբ «Զեր ներկայութեամբ տունս օրհնուեցաւ, Վեհափառ», ծերունին
արտայայտուեցաւ:

Երբ աչքերը արցունքոտեցան եւ եթէ չամչնար՝ ալեհեր մայրիկը պիտի
փաթթուէր Հայրապետին...:

Երբ մանուկներ եւ պատանիներ անհամբեր, սակայն զարմանքով կը
նայէին, եթէ իսկապէս Հայրապետը իրենց քով եկած էր:

«Երբ»երը տակաւին բազմաթիւ ու բազմազան են...:

Երբ առանձնացայ սկսայ մտածել, թէ ժողովուրդը որքա՛ն կարիքը ունի
իսկական եկեղեցականներու: Եկեղեցականներու, որոնք կրնան հասկնալ
իրենց վստահուած ժողովուրդին մտահոգութիւններն ու դժուարութիւննե-
րը: Խորհեցայ, թէ անոնք որքան մեզմով կրնան մխիթարուիլ: Խորհեցայ, թէ
անոնք որքան կրնան մեր ներկայութեամբ մոռնալ իրենց առօրեայ տագնա-
պը: Եւ հասկցայ, որ հոգեւորական ըլլալ կը նշանակէ ո՛չ միայն ծառայող ըլ-
լալ, այլեւ՝ ծառայող մնալ: Մենք ժողովուրդին ստրուկը չե՛նք, սակայն ա-
նոնց մնայուն ծառանե՛րն ենք:

Շատե՛ր արտայայտութիւններ ունեցան, սակայն անոնցմէ մին միայն
կ'ուզեմ յիշել. «Վեհափառ Տէ՛ր, մենք շատ մեծ դժուարութիւններու մէջ ենք,
սակայն այսօրուան Զեր այցելութիւնը մեզի այդ բոլորը մոռցնել տուաւ»:
Այս խօսքերը թելադրուած կամ նախապատրաստուած խօսքեր չէին, այլ՝
ծերունիի մը իսկական զգացումներն ու ապրումները՝ իրենց ինքնաբոլի
տարազով ներկայացուած: Ինչպէ՞ս անիկա, եւ անոնք ուրախ եւ ապահով
պիտի չզգային, երբ Վեհափառը անոնց կը խոստանար, որ իրենք առանձին
չե՛ն: Երբ կը խոստանար՝ իրենց կողքին Հայրապետ ունին: Երբ կը խոստա-
նար՝ իրենց կողքին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ունին, իր
բոլոր միաբան հայրերով անխտի՛ր:

Վստահ եմ, որ այդ օրը հայ ծերունիներուն, երիտասարդներուն, պատա-
նիներուն ու մանուկներուն համար տարբեր ու իւրայատուկ օր եղաւ: Վըս-
տահ եմ, որ անոնք վերջապէս հանգիստ քուն մը ունեցան, որովհետեւ իսկա-
պէս մխիթարուած էին:

Սիրելի՛ կարիքաւոր հայ ընտանիք, դուն առանձին չե՛ս, դուն միմակ չե՛ս: Դուն դժուարութիւններու մէջ քու կողքիդ Աստուած ունիս, դուն մտահոգութիւններու մէջ քու կողքիդ հոգեւորականնե՛ր ունիս, դուն տազնապներու մէջ քու կողքիդ Հայ Եկեղեցի՛ն ունիս, դուն նեղութեանդ մէջ քու կողքիդ մեր եւ քու եւ բոլորին Սեւ Աթո՛ւր ունիս. վստա՛հ եղիր դուն մե՛զ ունիս:

- Դարձեա՛լ պիտի գանք:
- Դարձեա՛լ պիտի այցելենք:
- Դարձեա՛լ պիտի հանդիպինք:
- Դարձեա՛լ պիտի ժպտաք:
- Դարձեա՛լ հանգիստ պիտի քնանաք:
- Դարձեա՛լ մեզ պիտի հիւրընկալէք:

Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ մենք ձեր կողքին ենք, դուք առանձին չէ՛ք, մենք ձեզի կը ծառայենք ու պիտի ծառայենք: Ա՛յս է Անթիլիասը՝ իր Վեհափառ Հայրապետով:

Նորին Սրբութեան ուղղուած այլ ծերունիի մը մաղթանքով կ’աւարտեմ «Վեհափա՛ռ, Աստուած Ձեզի երկա՛ր-երկա՛ր կեանք պարգեւէ, ինչպէս այսօր ուրախացուցիք մեզ, նոյնպէս եւս Աստուած ձեր բոլոր օրերը ուրախ ու ժպտով ընէ, մեր գլխէն անպակաս մնաք».

Ա.Ի.ԵՏԻՔ Ա.ԲՂ. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՁԻ ԼԱԽԱՏՕՆԱԿ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ**

Կիրակի, 13 Փետրուարի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ նշուեցաւ Տեառնընդառաջի նախատօնակը, որուն ընթացքին տեղի ունեցաւ անդաստանի արարողութիւն, մանուկներու տաճար ընծայում եւ ականդական խարոյկի հրավառութիւն: Այս առիթով Վեհափառ Հայրապետը հաւատացեալ ժողովուրդին ուղղեց իր Հայրապետական պատգամը:

Նորին Սրբութիւնը փառք ու գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ այս տարի եւս հոգեպարար արարողութիւնը հաւաքաբար յիշատակելու առիթը ունեցանք: Ան նշեց, որ ականդութիւնները քրիստոնէութեան հաւատքը արտայայտող ամէնէն ազդու երեւոյթներէն են: Վեհափառ Հայրապետը յայտ-



նեց, որ այնպէս, ինչպէս ծնողները իրենց քառասնօրեայ մանուկները եկեղեցի կը բերեն՝ ստանալու համար Աստուծոյ օրհնութիւնը, նոյնպէս ալ բոլորս, Տեառնընդառաջի տօնին եկեղեցի կու գանք՝ մեր անձերը Աստուծոյ ընծայելու համար:

Ապա, Նորին Սրբութիւնը լուսարձակի տակ առաւ հիմնական երեք միջավայրեր՝ եկեղեցի, ընտանիք եւ դպրոց, որոնք կոչուած են հոգեւոր եւ բարոյական արժէքներու աղբիւր հանդիսանալու եւ մեր զաւակները դաստիարակելու:

Խօսելով եկեղեցւոյ մասին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան վերջալոյսին, իր աշակերտներուն տուաւ առաքելութեան պարտականութիւնը: Առ այդ, Հայրապետը ըսաւ, որ թէեւ փոքր մանուկներ լիովին չեն ըմբռներ եկեղեցւոյ արարողութիւնը, սակայն հոն կը տեսնեն ու կը սորվին մեր հոգեւոր ու բարոյական արժէքները: «Ես կ'ուրախանամ, երբ եկեղեցական արարողութեանց ընթացքին մանուկներու ձայները լսեմ: Այդ դրական երեւոյթ է», ըսաւ ան՝ յորդորելով, որ ծնողները իրենց զաւակները կիրականօրեայ դպրոց առաջնորդեն:

Ինչ կը վերաբերի ընտանիքին, Նորին Սրբութիւնը նշեց, որ ընտանիքը փոքր եկեղեցի է, ինչպէս բնորոշած են մեր եկեղեցւոյ հայրերը: Ան շեշտեց, որ ընտանիքը սրբավայր է, ուր պիտի կրթուին մեր մանուկները՝ հիմնական դաստիարակ ունենալով ծնողքը: Իր խօսքը յատկապէս մայրերուն ուղղելով Նորին Սրբութիւնը վերջիշեցուց. «Սիրելի՛ մայրեր, ձեր առաջին կոչումն է ձեր զաւակները հոգեւոր ու բարոյական արժէքներով սնուցանել»:

Վերջապէս, անդրադառնալով հայ դպրոցին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ պետական ծրագրերին կողքին, դպրոցը կարեւորութիւն պէտք է տայ

կրօնական ու բարոյական դաստիարակութեան, որպէսզի կրօնքի ու Ս. Գրոց դասապահներու եւ Հայ եկեղեցւոյ պատմութեան ճամբով աշակերտները սորվին աստուածաշնչական արժէքները, սկզբունքներն ու ճշմարտութիւնները: Հայրապետը թելադրեց ծնողներուն, որ իրենց զաւակները առաջնորդեն հայ դպրոց: «Հայ դպրոցը մեզի համար, իր դաստիարակչական դերով, ընտանիքին եւ եկեղեցւոյ համապարփակ առաքելութեան մաս կը կազմէ: Եւ քիչդ ատար համար, նայեցէ՛ք մեր կեանքին, հայ դպրոցը եկեղեցւոյ կողքին եղած է, որովհետեւ մեր եկեղեցին իր առաքելութեան անբաժան մասը նկատած է հայ դպրոցը», հաստատեց ան:

Նորին Սրբութիւնը իր պատգամը եզրափակեց աղօթք վերառաքելով առ բարձրեալն Աստուած, որ իր երկնային բարիքներով ու շնորհքներով ծաղկեցնէ մեր ժողովուրդին կեանքը ու իր ներկայութեամբ առաջնորդէ մեր զաւակները դէպի այնպիսի կեանք, ուր կը ճառագայթեն երկնային արժէքներն ու ճշմարտութիւնները:



Հայրապետական պատգամէն ետք, ծնողներ իրենց զաւակները գրկած մօտեցան Ս. Խորան, ուր միաբան հայրեր մանուկները ընծայեցին Աստուծոյ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ծնողքին օրինակով: Ապա, ականդութեան համաձայն, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայրավանքի շրջափակ, ուր Վեհափառ Հայրապետը Ս. Սեղանէն բերուած ճրագով վառեց Տեառնընդառաջի ականդական խարոյկը: Դպրեվանեցիներ հոգեւոր ու ազգային երգեր երգեցին, իսկ հաւատացեալներ Քրիստոսի լոյսը խորհրդանշող մօմերը իրենց հետ տուն տարին, իբրեւ օրհնութիւն:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՐ ԱՅՅԵԼԵՑ
ՆՈՐ ՍԻՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ**

Բարձր հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կիրակի, 14 Փետրուարին, Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Եւ Անմահ Պատարագ՝ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով: Ս. Պատարագը մատուցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան:

Այս առիթով, առաւօտեան ժամը 10:15-ին, Հ.Յ.Դ. «Ազիրեան» ակումբին դիմաց տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն ի պատիւ Վեհափառ Հայրապետին: Ներկայ էին՝ պետական երեսփոխան Յակոբ Թերզեան, նախկին նախարար Վարդինէ Օհանեան-Գէորգեան, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամներ, Ազգային Վարչութեան անդամներ, ազգային երեսփոխաններ, Պուրճ Համուտի եւ Այնճարի քաղաքապետներ, եկեղեցւոյ թաղականութեան անդամներ, չրջանի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, բարերարներ եւ հոծ բազմութիւն: Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ ծաղկեփունջով եւ տեղի ունեցաւ ոչխարի զենում: Ապա, Հ.Ս. Ը.Մ.-ի շնորհակալութեամբ նուագեց Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները, որմէ ետք, գլխավորութեամբ շնորհակալութեամբ եւ Հ.Ս.Ը.Մ.-ի սկաուտներ



րուն, թափօրը ուղղուեցաւ դէպի Ս. Սարգիս եկեղեցի, ուր դարձեալ տեղի ունեցաւ ոչխարի գենում, աղ ու հացի օրհնութիւն, ապա, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը նուազեց «Կիլիկիա» մաղթերգը, որմէ ետք Նորին Սրբութիւնը մուտք գործեց եկեղեցի:

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարուեցաւ մատաղի օրհնութիւն: Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց Վեհափառ Հօր ներկայութիւնը Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ: Ան նկատել տուաւ, որ Աստուած եւ մեր սուրբերը մեր ժողովուրդին հետ են միշտ, նոյնիսկ մեր ապրած տազնապներուն եւ փորձութիւններուն մէջ՝ աւելցնելով, որ Վեհափառ Հայրապետը եւս շարունակաբար մեր ժողովուրդին հետ է, որպէսզի հոգեպէս ու բարոյապէս մենք մնանք զօրեղ, ազգայնօրէն ըլլանք արթուն եւ տոկուն: Այս եզակի առիթով Սրբազանը վստահեցուց, որ հակառակ մեր դիմագրաւած արտասովոր պայմաններուն, մեր ժողովուրդը կը շարունակէ իր եկեղեցիներէն եւ համայնքային կառոյցներէն ներս հաւատարմօրէն իր կեանքը ապրիլ իր քրիստոնէական հաւատքով ու յարատեւել ազգային արժէքներու գիտակցութեամբ: Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ մեր ժողովուրդը կը շարունակէ հաւատալ, որ մեր սուրբերը երկիրքէն կը նային մեզի եւ իրենց գերազոյնը կ'ընծայեն, որպէսզի ծանր տազնապներէ անցնող լիբանանեան մեր կեանքը արժանանայ Աստուծոյ ամենազօր ողորմածութեան՝ աւելցնելով, որ շնորհիւ այդ հաւատքին, Պուրճ Համուտը կը մնայ հայադրոջմ եւ Նոր Սիսն ալ կը մնայ խիզախ ու անջնջելի: «Վեհափառ Տէր, այսօր Դուք եկած էք մեզի հետ աղօթելու, մեզի ուժ տալու, նոր յոյս թելադրելու եւ մեր նայուածքը դէպի ապագայ ուղղելով, մեր ընելիքներուն համար մեզի նոր հորիզոններ ցոյց տալու», հաստատեց Սրբազանը եւ հրաւիրեց Արամ Ա. Կաթողիկոսը հաւատացեալ ժողովուրդին փոխանցելու իր Հայրապետական պատգամը:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը գոհութիւն եւ փառք տուաւ Աստուծոյ, որ անգամ մը եւս այս հոգեպարար առիթը ընծայեց իրեն ըլլալու մեր ժողովուրդի զաւակներուն հետ: «Ժողովուրդին հետ ըլլալ կը նշանակէ Աստուծոյ ներկայութիւնը ապրիլ, որովհետեւ Աստուծոյ հաւատացող ժողովուրդը Աստուծոյ ժողովուրդն է: Ժողովուրդին հետ ըլլալ կը նշանակէ հայրենիքին հետ ըլլալ, որովհետեւ հայրենիքը սոսկ հող, ջուր, քար չէ, այլ ժողովուրդ է: Ժողովուրդին հետ ըլլալ կը նշանակէ եկեղեցւոյ հետ ըլլալ, որովհետեւ եկեղեցին իր զանազան կերպերէն անդին ժողովուրդն է՝ իր էութեամբ եւ իր առաքելութեամբ: Ահա թէ ինչու ժողովուրդն է բոլոր կառոյցներուն, բոլոր կազմակերպութիւններուն որեւէ բնոյթի աղբիւրը, առանցքը, ուժը եւ ինքնութիւնը: Հետեւաբար, ամէն անգամ երբ ժողովուրդին հետ ըլլամ, ժողովուրդին ներկայութիւնը ինձի համար կը դառնայ յիշեցում, թէ մեմ ոչինչ եմ առանց ժողովուրդին: Ժողովուրդի ներկայութիւնը յիշեցում մը կը դառնայ այն առաքելութեան, որուն լծուած եմ» շեշտեց Վեհափառ Հայրապետը՝ նկատել տալով, որ այս պատճառով ինք ան-

հուն ուրախութեամբ կ'ողջունէ բոլոր ներկայ հաւատացեալները, թեմի Առաջնորդ Սրբազանը, Ազգային Իշխանութիւնը, թեմէն ներս գործող բոլոր կառոյցները, որոնք լծուած են զանազան կերպերով ժողովուրդին ծառայութեան: Արամ Ա. Կաթողիկոս ողջունեց նաեւ Պուրճ Համուտի ու Այն-ճարի քաղաքապետները, բոլոր յարակից մարմիններն ու կառոյցները եւ Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղականութիւնը ու յարակից բոլոր կառոյցները, որոնք միշտ լծուած են մեր ժողովուրդի ծառայութեան: Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սա պահուն, Ս. Սարգիս եկեղեցւոյ մամբով լիբանանահայութեան կ'ուզեմ երեւ յիշեցումներ եւ թելադրութիւններ կատարել. -

ա) Հարկ է, որ մենք միասնաբար եկեղեցի դառնանք: Կ'ուզեմ շեշտել՝ եկեղեցի՝ դառնանք: Եկեղեցին վայր մը չէ լոկ, ուր կ'երթանք: Եկեղեցին ծէս չէ սոսկ, որուն կը մասնակցինք: Եկեղեցին դուր էք, մենք ենք՝ միասնաբար: Եկեղեցի պիտի դառնանք Քրիստոսի ներկայութիւնը ապրելով: Եկեղեցի պիտի դառնանք Քրիստոսի աշխարհ բերած նշմարտութիւնները, արժէքներն ու սկզբունքները ապրելով, մեր կեանքին մէջ կեանքի վերածելով: Եկեղեցի պիտի դառնանք Քրիստոսի ցոյց տուած մամբէն փայլելով: Եկեղեցի դառնալ կը նշանակէ մասնակից դառնալ մեր եկեղեցւոյ կեանքին: Հետեւաբար, Լիբանանի թեմէն ներս գտնուող մեր եկեղեցիները, մեր ժողովուրդի զաւակներուն ներկայութեամբ պիտի դառնան եկեղեցի: Մեր ժողովուրդը կոչուած է իր մասնակցութիւնը բերելու եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան:

բ) Յանախ մենք կը կրկնենք, թէ Լիբանանի հայութեան վերականգնումին հարկ է մասնակից դառնալ: Լիբանանի հայութիւնը վերականգնումի, վերածաղկումի ընթացքի մէջ է: Լիբանանի հայութիւնը կարիքաւորներու ամբողջութիւն մը չէ: Հակառակ այն իրողութեան, որ ամբողջ Լիբանանը, նաեւ մենք, կարիքներ ունինք, մտահոգութիւններ ունինք, տնտեսական տանգնապի մէջ ենք, սակայն աղփատներ չենք, իտեղներ չենք, կարիքաւորներ չենք, մուրացկաններ չենք, արժանապատուութեամբ մենք մեր բոլոր տեսակի դժուարութիւնները կը դիմագրաւենք, հակառակ մեր տեսակ-տեսակ դժուարութիւններուն ու կարիքներուն: Ահա թէ ինչու մենք պէտք է մասնակից դառնանք Լիբանանի մեր հաւաքական վերականգնումին՝ որպէս հայ համայնք վերածաղկումի, վերակազմակերպումի մեր նիգիւն՝ շրջապատելով մեր կառոյցները: Մենք հպարտ ենք եւ ուրախ, որ մեր կեանքէն ներս կը գործեն կրօնական, քաղաքական, բարեսիրական, մշակութային եւ այլ կառոյցներ: Սակայն կառոյցները կը դառնան կազմակերպ ու ծաղկուն մեր մասնակցութեամբ: Ես կ'ուզեմ, որ մեր եկեղեցիները, մեր ակումբները, մեր սրահները, մեր դպրոցները լեցուին մեր ժողովուրդի զաւակներով, լեցուին յատկապէս մեր երիտասարդներով, այլապէս ի՞նչ կ'արժեն գեղեցիկ եկեղեցիներ, գեղեցիկ ակումբներ, գեղեցիկ սրահներ, երբ դատարկ են



մարդէ: Մարդն է մեր համայնքը, մեր հայրենիքը, մեր կազմակերպութիւնները արժեւորողը: Այս գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ մեր զաւակները կոչուած են մեր կառոյցներու կեանքին մասնակից դառնալու: Հայ ըլլալ կը նշանակէ մեր հաւաքական կեանքին մասնակից դառնալ, որովհետեւ հայութիւնը հաւաքական կեանք է, հայութիւնը անհատներու աններդաշնակ ամբողջութիւն մը չէ եւ այդ կեանքին մեր մասնակցութեամբ մեր հայութիւնը կ'ապրինք ու կ'ապրեցնենք:

գ) Իմ յիշեցումս եւ թելադրութիւնս բոլոր սիսեցիներուն է, ներկայ թէ բացակայ, Լիբանանի մէջ թէ աշխարհի տարածքին: Ես վստահ եմ, որ իրաքանչիւր սիսեցի գիտէ իր պատմութիւնը: Գիտէ, թէ Սիսը Կիլիկեան թագաւորութեան մայրաքաղաքը եղած է, Սիսի մէջ հաստատուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ այնքան նոյնացած Սիսի ժողովուրդին հետ, որ նոյնիսկ պատմութեան ընթացքին կոչուած է Սոսյ Կաթողիկոսութիւն: Ես վստահ եմ, որ մեր ժողովուրդի զաւակները գիտեն, որ 2015 թուականին, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը թուրք պետութեան դէմ դատ բացաւ՝ պահանջելով Սիսի բարձրունքին վրայ հաստատուած Կիլիկիոյ Կաթողիկոսարանը եւ մենք հակառակ մեր իրաւական դժուարութիւններուն այս դատը կը շարունակենք եւ պիտի շարունակենք: Ես վստահ եմ, որ աշխարհատարած սիսեցիները գիտեն, որ ցեղասպանութենէն ետք այս շրջանը դարձաւ Նոր Սիս եւ այս եկեղեցին Ս. Սարգիս կոչուեցաւ շարունակելով պատմական Սոսյ աւանդութիւնները, որովհետեւ ժողովուրդ մը իր ինքնութիւնը կը պահէ իր աւան-

դուրսիւններով: Ես վստահ եմ, որ սիսեցիները ո՛ւր որ գացին, իրենց հետ տարին Սիսը, իբրև ոգեղէն ներկայութիւն, իր անցեալով, իր աւանդութիւններով, իր սովորութիւններով: Հետեւաբար, իմ թելադրութիւնս է աշխարհի տարածքին ապրող բոլոր սիսեցիներուն՝ մի՛ մոռնա՛մք ձեր անցեալը, մի՛ մոռնա՛մք ձեր արմատները, մի՛ մոռնա՛մք Ս. Սարգիս եկեղեցին, մի՛ մոռնա՛մք այս Նոր Սիս թաղը եւ ձեր կապուածութիւնը պէտք է գործնապէս արտայայտէ՛ք այս եկեղեցւոյ, այս թաղին, այստեղ ապրող, գործող եւ ծանայող կառոյցներուն եւ շրջանի մեր ժողովուրդի զաւակներուն նկատմամբ»:

Եզրափակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Ս. Սարգիս եկեղեցւոյ տօնը մեր բոլորին հաւաքական տօնն է եւ մաղթեց, որ Ս. Սարգիսի կեանքէն, առաքելութենէն բխող արժէքներն ու արժանիքները մեր կեանքին մէջ թարգմանենք. ան նաեւ աղօթեց առ Աստուած, որ իր երկնային բարիքներով, առողջութեամբ, յաջողութեամբ ու երջանկութեամբ լեցնէ մեր ժողովուրդի զաւակներուն եւ մեր բոլոր ընտանիքներուն կեանքը:

Ս. Պատարագը աւարտեցաւ «Կիլիկիա» քայլերգով:



**ՍՐԲՈՑ ԿԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ ՏՕՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ**

Հինգշաբթի, 24 Փետրուարի առաւօտուն, հովանաւորութեամբ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. եւ Անմահ Պատարագով նշուեցաւ հայոց պատմութեան ամէնէն ոգեւորիչ եւ հայկական ինքնութիւնը հաստատող ներկայացնող դէպքերէն Սրբոց Վարդանանց Զօրավարաց տօնը:

Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Մակար Եպս. Աչգարեան, իսկ երգեցողութիւնը կատարեց՝ Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբը: Իր քարոզին մէջ Սրբազանը վեր առնելով Պօղոս առաքեալին երբայացիներուն ուղղած նամակին 12-րդ գլխէն հատուած մը, խօսեցաւ Սրբոց Վարդանանց քաջութեան մասին: Ան դիտել տուաւ, որ «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մղուած ճակատամարտի տօնը նորոգեց հայուն կեանքը եւ տարբեր ուժականութեամբ ամրապնդեց անոր պայքարելու եւ գոյատեւելու կամքը: Սրբազանը ընդգծեց, որ առաքեալը այս հատուածով կը քաջալերէ հաւատացեալները

չուսահատիլ դժուարութիւններուն դիմաց, որովհետեւ չարին դէմ մեր մղած պատերազմները մեր սեփական պատերազմները չեն, այլ՝ Աստուծոյ, եւ, հետեւաբար, առանց խախտելու մեր վստահութիւնը Ամենակալին հանդէպ, հարկ է համբերութեամբ պայքարիլ մեզի ներկայացող փորձութիւններուն դէմ: Այնպէս, ինչպէս Քրիստոս, իբրեւ մարդ, աննկարագրելի չարչարանքներու ենթարկուեցաւ, բայց յաղթական դուրս եկաւ, նոյնպէս ալ Ղեւոնդեանք եւ Վարդանանք եւ բոլոր նահատակները, իրենց տառապանքը հատարով կրելով յաղթական դուրս եկան:



Ապա, Սրբազանը հրաւիրեց հաւատացեալները վերանորոգուելու Սրբոց Ղեւոնդեանց եւ Վարդանանց տօներու խորհուրդով եւ լուսարձակի տակ առաւ երեք հիմնական պահանջներ՝ պայքարը մղելու պատրաստութիւն, մասնակցութիւն եւ յարատեւութիւն: Վերջապէս, ան յորդորեց հեռանալ Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը վտանգող սովորութիւններէ՝ միշտ հետեւելով Քրիստոսի օրինակին: «Ահա թէ ինչո՛ւ Վարդանանց սուրբ զօրավարները Քրիստոսը, Աւետարանն ու եկեղեցին դարձուցին իրենց հաւատքի առանցքը: Իրենց հայեացքը ուղղեցին յաւիտենական ճշմարտութեան, անկորնչելի գանձին եւ երկնային արքայութեան, որոնց շնորհիւ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» նշանաբանով կրցան պայքարիլ ու նահատակուիլ վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց», եզրափակեց Սրբազան հայրը:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը անհանգստութեան պատճառով չկարողացաւ մասնակցիլ Ս. եւ Անմահ Պատարագին:

ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ

«ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄՏԱԲՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ուրբաթ, 14 Յունուար, երեկոյեան ժամը 6:00-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հրաւերով, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ լիբանանահայ մտաւորականներու հանդիպում-խորհրդակցութիւն, 2022 տարին «Սփիւռքի Տարի» հռչակելուն առիթով:

Արամ Ա. Կաթողիկոս օրհնութեամբ եւ սիրով ողջունեց ներկաները եւ գնահատեց հրաւերին ընդառաջումը՝ հակառակ երկրին մէջ շարունակուող տեսակաւոր տագնապներուն: «Այս օրերուն բոլորիս համար լիբանանեան կեանքը դարձած է ահաւոր՝ իր բոլոր երեսներով, սակայն մենք բոլորս մեր կեանքը միասնաբար պէտք է շարունակենք՝ ընտանեկան, հաւաքական եւ կազմակերպչական իմաստով», յայտնեց ան եւ նշեց, որ «Բոլորին արդէն ծա-



նօթ է, որ այս տարի «Սփիւոֆի Տարի» հոչակուած է: Նախորդ երկու տասնամեակներու աւանդութիւնը շարունակեցինք, բայց այս անգամ՝ «Սփիւոֆի Տարի» հոչակումի նիւթը տարբեր բնոյթ, ծաւալ ու տազնապ կ'առթէ: Սփիւոֆի մասին խօսիլը այսօր սովորական երեւոյթ մը չէ, այլ հրամայական, որովհետեւ Սփիւոֆը տազնապի մէջ է: Առաջին հարցադրումը, որ կ'ուզեմ կատարել. Ինչո՞ւ «Սփիւոֆի Տարի»: Նման հոչակում մը կատարելու լուրջ պատճառներ ունէի, որովհետեւ Սփիւոֆը սկսած է ծաւալիլ ու տարածուիլ: Հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը Սփիւոֆի մէջ է: Սփիւոֆը սկսած է մաշիլ ու գունաթափիլ: Սփիւոֆը սկսած է անտարբեր ըլլալ ինքն իր նկատմամբ, յուսախար ըլլալ Հայաստանի նկատմամբ, յատկապէս՝ վերջին քանի մը տարիներուն, Արցախի պատերազմէն ետք: Երիտասարդութիւնը սկսած է հեռանալ մեր կեանքէն, մեր հաւաքական կեանքէն, մեր կառոյցներէն: Օտարին ներկայութիւնը հայ կեանքին մէջ սկսած է դառնալ զգալի: Մեր շուրջը տեղի ունեցող փոփոխութիւններուն հետ չենք կրցած քայլ պահել»:

Շարունակելով իր խօսքը, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ «կարելի է մտահոգութիւններու այս շարքը շարունակել: Այս բոլորը կը ստիպեն մեզ լրջօրէն մտածել Սփիւոֆին՝ մեր հաւաքական տան մասին: Անցնող տարուան ընթացքին այս ուղղութեամբ յօդուածներ գրուեցան, սեմինարներ կազմակերպուեցան, մատնանշումներ կատարուեցան, թէ Սփիւոֆը ո՞ւր կ'երթայ: Հետեւաբար «Սփիւոֆի Տարի» հոչակումը ձեռով մը իմ կողմէս ընդառաջում էր կատարուած այս մօտեցումներուն ու հարցադրումներուն: Այս պատճառով ալ հոչակումէն անմիջապէս ետք անդրադարձ արձանագրուեցաւ եւ ողջոյնի արժանացաւ առնուած այս կարեւոր քայլը»:

Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ «Սփիւոֆի Տարի» հոչակումը դարձած է հրամայական, որովհետեւ ճիշդ ժամանակին առնուած ճիշդ քայլ է: «Պէտք չէ սակայն բաւարարուիլ հոչակագիրը հրապարակելով, այլ Սփիւոֆի հարցը պէտք է կիզակետը դառնայ մեր մտածումներուն, մտահոգութիւններուն, տազնապներուն, խօսքներուն եւ մեր կազմակերպչական կեանքին: Այս բոլորը ցոյց կու տան, որ Սփիւոֆը հրամայական կարիք ունի վերակազմակերպուելու: Հոչակագիրին մէջ այս բառը տարբեր առիթներով գործածուած եւ յստակացուած է: Վերակազմակերպում, այսինքն՝ վերանորոգում, վերակենսաւորում, վերաշխուծացում, այլ խօսքով՝ անհրաժեշտութեան պարագային փոփոխութիւն»:

Արամ Ա. Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ ինք համաձայն չէ այն կարծիքին, որ հինը պէտք է քանդուի՝ նորը շինելու համար: «Հինը կարեւոր է եւ պէտք է գայն պահել, բայց նաեւ՝ հինը վերանորոգել: Հետեւաբար մեր գաղութներուն մէջ անհրաժեշտ է, որ այս հասկացողութեամբ մենք վերանորոգման ու վերակազմակերպման գործընթաց մը սկսինք», ըսաւ ան:

Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ «Սփիւոֆի Տարի» հոչակելու քայլը նախ եւ առաջ զարթնումի կոչ մըն է: «Տիրական է թմրութեան ընդհանուր



մթնոլորտ մը, որ պէտք է անհանգստացնէ մեզ. եթէ չենք անհանգստանար, կը նշանակէ տիրող իրավիճակէն գոհ ենք եւ պէտք է գայն պահենք: Այս մօտեցումը նիշդ չէ, որովհետեւ աշխարհը, պայմանները, փոփոխութիւնները, ակնկալութիւնները, մարտահրաւերները մեզմէ առաջ կ'երթան, եւ մենք ետ կը մնանք: Սփիւռքը կարելի չէ իր ներկայ վիճակին մէջ պահել, Սփիւռքը հրամայական, անյետաձգելի կարիքը ունինք վերակազմակերպուելու եւ վերակենսաւորուելու», *չեչտեց Վեհափառը:*

Այս բոլորը ի՞նչ ձեւերով կատարելու կարելիութեան մասին խօսելով, Արամ Ա. Կաթողիկոսը վերադարձաւ իր հռչակագիրին՝ ընդգծելով, որ իբրեւ գործիքակազմ ինք առաջարկած է սկսիլ եկեղեցիէն՝ թեմական կեանքէն, որ կառույցներու ամբողջականութիւն մըն է: «Մեր գաղութներուն մէջ կը գործեն նաեւ մեր կառույցները՝ կրթական, կուսակցական, մշակութային, բարեսիրական եւ այլն: Հետեւաբար իւրաքանչիւրը իր կարգին պէտք է սկսի վերակազմաւորման գործընթացին, ապա տունեալ գաղութին մէջ գործող կազմակերպութիւններուն միջեւ գործունէութեան ներդաշնակութիւն մը պէտք է ստեղծուի: Բնականաբար կառույցները ունին իրենց ինքնուրոյնութիւնն ու կազմակերպչական դրուածքն ու նպատակը, բայց վերջին հաշուով, պահելով հանդերձ իրենց ինքնուրոյնութիւնը, պէտք է տեղ մը անոնց գործունէութիւնը ներդաշնակուի, որովհետեւ բոլորը նոյն գաղութին գաւակներն են», ընդգծեց Վեհափառ Հայրապետը, աւելցնելով՝ թէ հռչակագիրը կը բովանդակէ նաեւ շարք մը մտահոգութիւններ, որոնք ամէնօրեայ դրութեամբ շօշափելի են հաւաքական կեանքին մէջ: «Այդ հիմնական մտահոգութիւններէն է այն, որ ներկայ Սփիւռքը փաստօրէն խառնարան է: Հակասական իրականութիւններու, երեւոյթներու եւ վիճակներու հանդիսարան մըն է: Մենք վարժուած էինք աւանդական Սփիւռքին, որ գոյացաւ Հա-

յոց Ցեղասպանութենէն ետք: Ապա անոր միացան համայնավար երկիրներէն եկած ընտանիքները՝ յատկապէս եւրոպական, որոնք Հիւսիսային Ամերիկայի մեր համայններուն եկան միանալու: Վերջին երեսուն տարուան ընթացքին Սփիւռքը աւելի տարածուեցաւ ու ծաւալեցաւ Հայաստանէն արտագաղթած հայորդիներով: Սփիւռքի ներկայ պատկերին եթէ նայինք, կը տեսնենք, թէ այս երեք տեսակի սփիւռքները փաստօրէն նոյն գաղութին մէջ չեն կրցած հաւաքական կեանքին մասնակից դառնալ: Ներդաշնակութեան պակաս մը կայ յատկապէս հայաստանեան սփիւռքին եւ միւս երկու սփիւռքներուն միջեւ: Կը զգանք, որ մեր գաղութներուն մաս կազմող հայաստանեան սփիւռքին հետ որոշ գոյակցութիւն մը կայ, սակայն հաստատ ներդաշնակութեան պակաս գոյութիւն ունի», *ըսաւ ան*:

Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ, որ այս սփիւռքները պատմական տարբեր հոլովոյթներ, փորձառութիւններ, աւանդութիւններ, մօտեցումներ ու առաջնահերթութիւններ ունեցած են, եւ այդ տարբերութիւնները լայն չափերով կը շարունակուին, ինչպէս Քալիֆորնիոյ, Ֆրանսայի, Յունաստանի եւ Կիպրոսի մէջ: «Այլ մտահոգութիւն մըն է նաեւ այն, թէ ի՞նչ կը նշանակէ այսօր Սփիւռքի մէջ հայ ըլլալ: Ո՞վ է հայը: Տասնամեակ մը առաջ, Պիֆֆայայի մէջ այս թեմայով կազմակերպեցինք համագումար մը, որուն ընթացքին այս հարցը քննեցինք: Սակայն այսօր դժուար է յստակ չափանիշներ հաստատել հայուն ո՞վ ըլլալուն մասին: Միայն հայերէն խօսողն է հայը: Նայինք Միացեալ Նահանգներուն եւ Ֆրանսային: Հայաստանի մէջ հայ ըլլալը դիւրին է, անտեղի է այս հարցադրումը, սակայն Ցեղասպանութենէն ետք մեզի համար տագնապ էր, իսկ հիմա յաւելեալ տագնապ է հայ ըլլալու, ինքնութիւն պահելու հարցը: Ի՞նչ է հայապահպանումը: Մենք ամէնօրեայ պայքարի վերածեցինք, որ հայ մնանք: Այսօր մենք հայապահպանումը ինչպէ՞ս պիտի շարունակենք: Մեր կառոյցները հսկայ աշխատանք կատարեցին այս ուղղութեամբ: Մեր շուրջ պատեր հիւսեցինք՝ ուրիշներէ տարբեր ըլլալու եւ մեր ինքնութիւնը պահելու համար, բայց ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ պատեր գոյութիւն չունին: Օտարը մեր մէջն է, նոյնիսկ մեր ընտանիքին մէջ: Անցեալով ներկան չդատենք: Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ: Ի՞նչ են հայ ըլլալու չափանիշները Սփիւռքի մէջ: Եկէք մտածենք այս բոլորին մասին: Ինչպէ՞ս կարելի է հայապահպանումը շարունակել: Հինցած ու մաշած ձեւերով չենք կրնար հայապահպանում կատարել: Ամէն ինչ Լիբանանի եւ Սուրիոյ գաղութներով չբաղդատենք: Նայինք Միացեալ Նահանգներու մեր դպրոցներուն: Ի՞նչ մօտեցումով, ի՞նչ ազդու միջոցներով կարելի է հայապահպանում կատարել», *հարց տուաւ Վեհափառ Հայրապետը եւ հաստատեց, որ արեւմտահայերէնի նահանջի մէջ ըլլալը փաստացի իրողութիւն է:* «Այդ իմաստով յանձնաժողով մը կազմեցինք, սակայն պայմաններու բերումով այդ աշխատանքները դանդաղեցան: Բայց եւ այնպէս արեւմտահայերէնը ամէն օր եւ ամէն վայրկեան կը նահանջէ: Մեր լեզուն արագատյր նահանջի մէջ է», *չեչտեց ան*:

Նորին Սրբութիւնը նաեւ ընդգծեց համասփիւռքեան տարողութեամբ գործակցութեան մնայուն կազմեր յառաջացնելու եւ համասփիւռքեան մտածողութիւն ձեւաւորելու կարեւորութիւնը: «Այսօրուան Սփիւռքը երեկուան Սփիւռքը չէ: Սփիւռքը իր կարգին ինչպէ՞ս կրնայ նպաստել համահայկական մտածողութեան մշակումին: Հայաստանը երբ Սփիւռքին յառէ իր ուղղութիւնը, որո՞ւ հետ պիտի խօսի: 30 տարուան ընթացքին Հայաստանի մօտեցումը Սփիւռքին հանդէպ ունեցած է իր վերիվայրումները, եւ բոլորդ քաջածանօթ էֆ, թէ Սփիւռքէն անոր ակնկալութիւնները ի՛նչ էին: Յաճախ կըրկնած եմ, որ Սփիւռքը նպաստաբաշխ, բարեսիրական կազմակերպութիւն մը չէ: Սփիւռքը իր մօտեցումը, մտածելակերպը, կեցուածքն ու մասնակցութիւնը պէտք է ունենայ համահայկական հարցերուն նկատմամբ: Այս մասին բազմիցս յայտնած ենք, սակայն փաստօրէն չէ կատարուած», շեշտեց ան՝ աւելցնելով, որ Հայաստանի իշխանութիւնը հարց կու տայ, թէ որո՞ւ հետ պիտի խօսի: Անթիլիաս, կաթողիկէ եկեղեցի, աւետարանական եկեղեցի, երեք կուսակցութիւններ եւ այլն: «Սակայն այս բոլոր կառոյցները իրարու ղու գալով հաւաքական, համասփիւռքեան մտածողութիւն մը եւ մօտեցում մը չեն կրցած ձեւաւորել կամ զարգացնել: Վերջապէս ինչպէ՞ս կարելի է Սփիւռքի ներուժը օգտագործել: Գիտե՛ք, մենք հսկայ ներուժ ու մարդուժ ունինք Սփիւռքի մէջ: Նախապէս պարագայական փորձեր կատարուած են, սակայն այսօր մենք չենք գիտեր, թէ ի՛նչ մարդուժ ունինք: Եւ որովհետեւ չենք գիտեր, ապա չենք կրցած միշտ կերպով օգտագործել մեր մարդուժը», ընդգծեց ան:

Ապա, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ այն իրականութեան, որ Սփիւռքի վերակազմակերպման ընթացքին մէջ ինչպէ՞ս պէտք է տեսնել Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնը: «Հայաստանի վերանկախացումէն ետք, 30 տարուան ընթացքին Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան մասին խօսեցանք: Հզօր Հայաստան կ'ենթադրէ հզօր Սփիւռք եւ փոխադարձաբար, սակայն այս բոլորը մնացին կարգախօսներու սահմաններուն մէջ: Նախ եւ առաջ Հայաստանը պէտք է համոզուի, որ Սփիւռքը բաժնեկից է Հայաստանի հզօրացման, նոյնիսկ Հայաստանի կառավարման որոշ իմաստով, այլապէս այս բոլորը զգացական սահմաններու մէջ կը մնան: Նաեւ Սփիւռքը պէտք է ունենայ այն խոր համոզումը, թէ ինքն ինքնակեդրոն, ինքնանպատակ գոյութիւն մը չէ, այլ՝ մաս կը կազմէ ամբողջական հայութեան եւ նաեւ պարտաւորութիւն ունի, պատասխանատուութիւն եւ իրաւունք ունի Հայաստանի նկատմամբ: «Սփիւռքի Տարի»-ի հռչակումին առիթով մենք պէտք է անդրադառնանք նաեւ այն իրականութեան, որ հզօր Սփիւռք կ'ենթադրէ հզօր Հայաստան եւ փոխադարձաբար: Սփիւռքը ինքնագոյ երեւոյթ մը չէ, Սփիւռքը Յեղասպանութեան հետեւանք է, իսկ հայաստանեան Սփիւռքը այլ երեւոյթ է, որովհետեւ կազմուած է այն հայերէն, որոնք ինքնակալ լքած են Հայաստանը եւ կազմած Սփիւռք: Հետեւաբար մեզի համար Սփիւռքը չի կրնար ինքնանպատակ դառնալ: Անոր կատարած բոլոր աշխարհ-

տանձները, ծրագրումները հորիզոնի վրայ պետք է ունենան Հայաստանը:

Հայաստանանպատակ պետք է ըլլայ Սփիւռքը եւ ոչ հայաստանակեդրոն: Հայաստանը մեզ պիտի չկառավարէ, Հայաստանի ներքին հարցերը պիտի չնշդեն Սփիւռքի մեր գաղութներուն կեանքի պայմաններն ու ուղղութիւնը: Հայաստանակեդրոն եւ սփիւռքակեդրոն ուղղութիւնները մերժելի են, սակայն բոլորս հաւաքաբար հայակեդրոն պետք է ըլլանք ու համախմբուինք Հայաստանի ու հայութեան շուրջ:

Այս նպատակով մնայուն կոչ ուղղած ենք համագգային խորհուրդ մը կազմելու, որպէսզի հարցերը քննարկուին: Անշուշտ չենք խօսիր Հայաստանի ներքին հարցերը քննարկելու մասին, ո՞վ վարչապետ պիտի ըլլայ, ո՞վ նախարար պիտի ըլլայ: Այդ չէ հարցը: Սակայն Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնը, Արցախի հարցը, վերջին պատերազմին վերաբերող հարցերը համահայկական հարցեր են եւ համահայկական մտածողութիւն, կեցածք եւ մասնակցութիւն կ'ենթադրեն: Արցախի պատերազմի բռնկումի ընթացքին Հայաստանի վարչապետին նամակ մը յղեցի, որ այս հարցը համահայկական բնոյթ ունի՝ խորհրդակցութեան հրաւիրեցէ՛ք եւ համահայկական տարողութեամբ ներկայացուցիչներ հրաւիրեցէ՛ք, որպէսզի քննենք հարցերը եւ որոշում տանք: Սակայն, այդ մէկը չեղաւ: Իսկ այժմ ես միշտ պիտի կրկնեմ, որ համահայկական հարցերու գծով Սփիւռքը հետեւողի, դիտողի, կրաւորական վիճակի մէջ պետք չէ ըլլայ, այլ՝ մասնակցողի, տեսակետ ունեցողի դերի մէջ», *Հաստատեց Վեհափառ Հայրապետը:*

Անդրադառնալով Հայրենազարծութեան հարցին, Արամ Ա. Կաթողիկոս շեշտեց, որ անիկա վախճանական, հեռուոր նպատակ է եւ պէտք է պահուի օրակարգի վրայ: «Սակայն Հայաստանը նախորդ երեսուն տարիներուն ընթացքին չկրցաւ հայրենադարձութեան լուրջ եւ հետեւողական ծրագիր մը մշակել, իսկ ներկայիս կարելի ալ չէ: Կ'ուզեմ հաստատել, որ «Սփիւռքի Տարի» հռչակումը պետք չէ ձգել այն տպաւորութիւնը, որ մենք Սփիւռքը կը փորձենք անջատել, կղզիացնել, մեկուսացնել, հեռացնել Հայաստանէն: Ո՛չ: Սփիւռքը մենք պիտի վերակազմակերպենք եւ հզօրացնենք Հայաստանին համար, մեր ժողովուրդի ընդհանրական եւ գերագոյն ձգտումներուն եւ շահերուն համար: Հետեւաբար այս հոլովոյթին մէջ Սփիւռքը իր վերակազմակերպչական գործընթացին մէջ Հայաստանէն պետք չէ խզուի: Այս պատճառով ալ այս հռչակագիրէն յատուկ նամակով յղած եմ Հայաստանի Հանրապետութեան նախագահին, վարչապետին, խորհրդարանի նախագահին, արտաքին գործոց նախարարին, Գարեգին Բ. Վեհափառին, Հոգեւոր Տիրոջ, Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքներուն եւ վերապատուելիին: Սա կը նշանակէ, թէ այս հռչակագիրին բովանդակութիւնը հաւաքական աշխատանք կ'ենթադրէ: Իմ ակնկալութիւնս է, որ անոնք իրենց տեսակետները յայտնեն այս մասին եւ ձեռով մը մասնակից ըլլան այս հաւաքական աշխատանքին, որովհետեւ Սփիւռքի կազմակերպումը, հզօրացումն ու կենսաւորումը պիտի նպաստէ Հայաստանին, Արցախին եւ մեր ազգի գերագոյն շահերուն»,

եզրափակեց Վեհափառ Հայրապետը՝ աւելցնելով, որ այս հաւաքը խորհրդակցութեան առաջին քայլն է եւ ցանկալի է նաեւ, որ երիտասարդներն ու կիները եւս ներգրաւուին այս քննարկումներուն մէջ:

Նորին Սրբութեան պատգամէն ետք, ներկաները խօսք առնելով, արտայայտեցին իրենց մտահոգութիւնները, կատարեցին ընդհանուր քննարկումներ եւ ներկայացուցին առաջարկներ:

Բոլոր մտաւորականներն ալ դրական արտայայտուեցան Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ 2022 տարին «Սփիւռքի Տարի» հռչակման առիթով, ինչպէս նաեւ՝ ողջունեցին եւ շինիչ հիմք նկատեցին այդ հանդիպումը:

Լուսարձակի տակ առնուեցաւ այն, որ, որեւէ աշխատանքի ձեռնարկելու պարագային կամ ծրագրի մշակման ընթացքին, պէտք է նկատի ունենալ հայութեան երկու հիմնական ճիւղաւորումները՝ հայկական իրականութեան մէջ ներառուածներն ու անկէ հեռու գտնուողները, որոնց վերաբերող գործունէութիւնը տարբեր բնոյթ, նպատակաւորուածութիւն եւ ձեւաչափ կ'ենթադրէ:

Հնչեցին տարբեր առաջարկներ այն մասին, որ Սփիւռքի բազմաթիւ ու բազմաճիւղ հարցերը առարկայականօրէն քննարկելու, սերտելու եւ լուծումներու մասին գործնականօրէն մտածելու ու համապատասխան ծրագրի ներկայացնելու նպատակով, բնագաւառ առ բնագաւառ պէտք է կազմուին համահայկական, համազգային մարմիններ, որոնք բաղկացած պիտի ըլլան մասնագէտներէ եւ գործեն ճշդուած ոլորտներու մէջ՝ տարբեր ձեւերով:

Առանցքային նկատուեցաւ Սփիւռքի մէջ հայկական ինքնութեան տեսութիւնը ճշդելն ու վերլուծելը, վիճակագրական փաստացի տուեալներով պարզելը, թէ Սփիւռքի մէջ հայ անհատներու կողմէ ինքնութեան ընկալումը ի՞նչ ձեւ ունի, գործնականօրէն սահմանել, թէ ո՞վ է սփիւռքահայը:

Խօսուեցաւ կատարուած հետազոտութեան մը մասին, որ ցոյց տուած է, թէ լիբանանահայ իրականութեան մէջ կան ինքնութեան տարբեր դրսեւորումներ՝ չքննուած ինքնութիւն, ինքնաբերաբար ձեռք բերուած, գիտակցական ինքնութիւն եւ նուաճուած ինքնութիւն, որ ամէնէն արդիւնաւէտն ու կարեւորն է: Ասոնց զուգահեռ անդրադարձ կատարուեցաւ նաեւ քնացած ինքնութեան, որուն տէրերը բաւական պատկառելի թիւ մը կը կազմեն, եւ որոնց ներգրաւման ուղղութեամբ պէտք է լուրջ աշխատանք տանիլ, որպէսզի կարելի ըլլայ զանազան ձեւերով, ոչ աւանդական, անոնց մէջ հայու ինքնութիւնը վերակենդանացնել:

Շեշտը դրուեցաւ Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը շարունակելու կարեւորութեան վրայ: Ներկայ մտաւորականները դիտել տուին, որ իրավիճակը փոխուած է արդէն՝ թէ՛ Սփիւռքի գաղութներուն պարագային, եւ թէ՛ Հայաստան-Սփիւռք կապերուն առումով: Այսօր ո՛չ միայն հայ քաղաքական խաւը, այլ ժողովուրդն ալ գիտէ, թէ կացութիւնը բաւական այլ պատկեր կը ներկայացնէ, եւ Սփիւռքի ներգրաւուածութիւնը դանդաղած է Հայաստանի մէջ՝ առարկայական պատճառներով: Բայց եւ այնպէս անհրաժեշտ նկատուե-

ցաւ, որ ասիկա Հայաստան-Սփիւռք կապի խզման կամ տկարացման պէտք չէ առաջնորդէ, այլ Սփիւռքը պէտք է գտնէ ճիշդ ուղիները՝ հայրենիքի հետ գործակցութիւնը շարունակելու:

Հանդիպումի ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ հայկական կառոյցներու եւ կազմակերպութիւններու ծաւալած օգտաշատ աշխատանքին, որուն շնորհիւ երկար ատեն հայութիւնը պահած է իր ինքնութիւնը, արժէքները, բայց եւ այնպէս հասած է պահը վերատեսուութեան ենթարկելու ցարդ ծաւալած գործելաոճը, նոր օրերու, արհեստագիտական նորութիւններու եւ ընկերային ցանցերու աշխարհին համահունչ աշխատանքի ձեւաչափի եւ մասնագիտական մօտեցում որդեգրուի: Հայկական միութիւններու եւ կառոյցներու կամաւոր աշխատանքը ողջունելի նկատելով հանդերձ, առաջարկուեցաւ մեր կառոյցներուն գնահատականը կատարել, տեսնել, թէ անոնք որքա՛ն արհեստավարժ մօտեցումով կը գործեն, սերտել հոն աշխատող մեր մասնագիտացած մարդուժը՝ կրթական, մշակութային, տնտեսական, բարեսիրական եւ այլ ոլորտներուն մէջ, եւ ձեռնարկել արհեստավարժօրէն գործունէութիւն տանելու ճամբով ընթանալ:

Ասոր զուգահեռ հանդիպումին մասնակիցները խօսեցան նաեւ այն մեծ զանգուածին մասին, որ մեր հայկական վարժարաններէն, կուսակցական, մշակութային, կազմակերպական, մարզական եւ այլ կառոյցներէն շատ հեռու է, որուն մէջ մեծ է թիւը երիտասարդներուն, որոնք զանազան պատճառներով, արհեստագիտութեան, ընկերային ցանցերու ազդեցութեան տակ հեռու են եւ հեռու կ'ուզեն մնալ մեր իրականութենէն: Ասիկա բնական ընթացք կու տայ օտարացման երթի մը: Այս առումով առաջարկուեցաւ, որ մեր եկեղեցիները հանդիսանան այն կուռանները, որոնք անունով հայ մնացած հայերը հայկական կեանքին վերադարձնելու մեծ աշխատանք պիտի տանին: Հիմնական նկատուեցաւ նաեւ կարելի եղածին չափ արագ, սերտուած եւ գործնական աշխատանք տանիլ՝ հայութենէ հեռացածները մօտեցնելու առաջադրանքով:

Լուսարձակի տակ առնուեցաւ Սփիւռքի համալսարաններէն աւարտած մասնագէտներ հայկական իրականութեան մէջ ներգրաւելու, անոնցմով հետաքրքրուելու, զանոնք մեզի մօտեցնելու կարեւորութիւնը, որպէսզի փոխադարձաբար համագործակցութիւնը արդիւնաւէտ ըլլայ: Առաջարկուեցաւ մեզմէ հեռու գործող մասնագէտները մեր իրականութեան որոշումներուն մասնակից դարձնել, անոնց վստահութիւնը շահիլ եւ օգտուիլ անոնց կարողականութենէն: Անհրաժեշտ սեպուեցաւ համալսարաններուն մէջ կարելի եղածին չափ շատ հայկական ամպիոններ հաստատելը, ինքնութիւնը այդ ձեւով եւս պահպանելը եւ օտարներուն ծանօթացնելը: Առաջարկուեցաւ հիմնել Սփիւռքագիտութեան ակադեմիա, որ պիտի ըլլայ ապահովագրային եւ ապակուսակցական, ունենայ ղեկավարող մարմին եւ ենթայանձնախումբեր:

Եզրափակիչ խօսքով Արամ Ա. Կաթողիկոս իր գնահատանքն ու գոհու-

նակութիւնը յայտնեց, որ մասնակիցները իր հրաւերին ընդառաջեցին, եւ կարելի եղաւ այս խորհրդակցական հաւաքը կայացնել՝ հաւաքական տազնապի մը շուրջ: «Սփիւռքը ամէն իմաստով տազնապի մէջ է, որքան տարիներու թիւը բարձրանայ, այնքան Սփիւռքի տազնապը կրնայ խորանալ: Այսօրուան Սփիւռքը երեկուանը չէ, աշխարհը շատ արագ կ'ընթանայ, այնքան նորութիւններ կան, այնքան գիտեր կան, որ անոնց դիմաց մենք փոքր ազգ ենք: Ի՞նչ պէտք է ընենք, ի՞նչ կրնանք ընել, մենք պէտք է սկսինք ախտաճանաչումէն, ինչպէս խօսուեցաւ, քաջութիւնը եւ իմաստութիւնը պէտք է ունենանք ախտաճանաչումը ցիւղ կերպով կատարելու՝ իբրեւ անձ, իբրեւ գաղութ, իբրեւ հաւաքականութիւն, իբրեւ Հայաստան, պետութիւն, իշխանութիւն եւ այլն: Ախտաճանաչումը կարելոք է, թերութիւնները պէտք է յստակ կերպով տեսնենք եւ ընդունինք», յայտնեց ան՝ կարեւոր նկատելով, որ այս տարի ըլլայ ախտաճանաչումի տարի: Վեհափառը Հայրապետը դիտել տուաւ, որ պէտք է ընդունինք, թէ Սփիւռքի վերակազմակերպումը դիւրին ու հեզասահ ընթացք մը չի կրնար ըլլալ, որովհետեւ Սփիւռքը ինքնին բարդ իրականութիւն մըն է, իւրաքանչիւր գաղութ իր ներքին դրոշմով արդէն բաւական բարդ երեւոյթ կը պարզէ, ուստի ասիկա երկարաշունչ ընթացք մը կ'ենթադրէ, անհրաժեշտ է հաւաքական աշխատանքը, որուն մասնակցելու համար պէտք է քաջալերել նաեւ մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող բոլոր կառույցներն ու կազմակերպութիւնները: Ան շեշտեց, որ այս աշխատանքը պէտք է ըլլայ համապարփակ մօտեցումով, իրատեսական ոգիով, այլապէս կը դառնայ մակերեսային, ժամանակաւոր եւ ժամանակավրէպ:

Նորին Սրբութիւնը լուսարձակի տակ առաւ այն, որ այսօր համաշխարհայնացումի ժամանակաշրջան է, մարտահրաւերները բազում են եւ այլազան, ուստի մեր կեանքին մէջ տիրական դարձած կարծրատիպերը պէտք է փոխուին, առանց հինը մոռնալու, պէտք է գայն վերանորոգենք, ներկային մէջ անցեալը, հինը չապրինք, այլ տարբեր մօտեցում, տարբեր մտածելակերպ, գործելակերպ ունենանք: «Այս ոգին մեր կեանքին մէջ տեղ պէտք է գրաւէ այլեւս, այլապէս երիտասարդները կամաց-կամաց պիտի հեռանան: Հայութիւնը հաւաքական կեանք է՝ հաւաքականութեան մասնակից դարձնելու համար, մեր կառույցները պէտք է ամէն ինչով դառնան աւելի գրաւիչ, ոչ ժամանակավրէպ», դիտել տուաւ ան եւ անհրաժեշտ նկատեց այսօրուան աշխարհին, երիտասարդներուն համապատասխան գործելաոճ որդեգրել, այլապէս պիտի գոյանայ վիճ մը կառույցներուն եւ երիտասարդութեան միջեւ, որուն պէտք է անդրադառնալ, որով պէտք է վերարժեւորել, վերանորոգել եւ վերաթարմացնել մեր բոլոր կառույցները, որպէսզի անոնք համահունչ դառնան մերօրեայ պայմաններուն եւ իրականութեան:

Արամ Ա. Կաթողիկոս դիտել տուաւ, որ գործնական աշխատանքով այս հոլովոյթին մթնոլորտը պիտի ստեղծուի եւ ուղին պիտի հարթուի:

**«ՍՓԻՒՌՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Սփիւռքի մասին խօսիլը այսօր տարօրինակ երեւոյթ մը չէ, այլ՝ բնական, որովհետեւ Սփիւռքը տագնապի մէջ է: Ինչո՞ւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակեց: Նման հռչակում կատարելու համար, վստահաբար եւ բնականաբար, Վեհափառ Հայրապետը լուրջ պատճառներ ունէր: Նորին Սրբութեան բնորոշումով, Սփիւռքը սկսած է ծաւալիլ ու տարածուիլ: Հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը Սփիւռքի մէջ է: Սփիւռքը սկսած է մաշիլ ու գունաթափիլ: Սփիւռքը սկսած է անտարբեր ըլլալ ինքն իր նկատմամբ, յուսախաբ՝ Հայաստանի նկատմամբ, յատկապէս Արցախի պատերազմէն ետք: Երիտասարդութիւնը սկսած է հեռանալ մեր հաւաքական կեանքէն ու կառոյցներէն: Օտարին ներկայութիւնը հայ կեանքին մէջ սկսած է դառնալ զգալի: Այս բոլոր մտահոգութիւններուն եւ Սփիւռքին դիմագրաւած դժուարութիւններուն մասին Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Ազդակ-Արարատ-Զարթօնք օրաթերթերուն եւ Կաթողիկոսարանի Cilicia TV-ին հետ ունեցած հարցազրոյցով մը:

1) **Վեհափառ Տէր, նախ ինչպէ՞ս կ'արժեւորէք 2021 տարին:**

Աշխարհի ժամանակակից պատմութեան մէջ անցնող տարին բնորոշուեցաւ զանազան տագնապներով: Հպանցիկ ակնարկով յիշեմք գլխաւոր մարզերը միայն.– **Քաղաքական** իմաստով, հետզհետէ խորացող դիւանագիտական լարուածութիւնը գերպետութիւններուն միջեւ, Ուքրաինայի հարցը, Հիւսիսային Քորէայի անլոյծ խնդիրը, Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Միացեալ Նահանգներու միջեւ հիւլէական հարցին շուրջ տեղի ունեցող բանակցութիւնները կրնան աշխարհը առաջնորդել պաղ-պատերազմի եւ նոյնիսկ աննախատեսելի վտանգներու: **Կենսալոյտի** տագնապը կը շարունակէ մնալ աւելի բան հրատապ՝ հակառակ պետութիւններու կողմէ կատարուած յանձնարարութիւններուն: **Համաճարակի** նոր ալիքները կը շարունակեն աւեր գործել աշխարհի բոլոր կողմերը, հակառակ նախագգուշական ազդու միջոցներու կիրառման: **Հայաստանը** տակաւին կ'ապրի յետպատերազմեան անորոշ եւ վտանգներով յղի վիճակի մէջ: Արդարեւ, այսպէս կոչուած միջանցքներու ու սահմանագծումներու խնդիրը եւ յատկա-

պէս Արցախի ապագան լուրջ մարտահրաւերներու դիմաց դրած է Հայաստանը: Հայաստան-Թուրքիա յարաբերութեանց հարցը նոր հարցականներ կրնայ ստեղծել Հայաստանի ու ողջ հայութեան համար: Անորոշութեան այս խորքին վրայ ներ-Հայաստանեան լարուածութիւնը աւելի կը բարդացնէ Հայաստանին դիմագրաւած ծանր դժուարութիւնները: Բնականաբար, յիշեալ հարցերը համահայկական բնոյթ ունին եւ խորապէս կը մտահոգեն նաեւ Սփիւռքը: **Լիբանանի** ներքին տագնապը կը շարունակուի առաւել թափով: Յատկապէս ընկերատնտեսական տագնապը դարձած է անհանդուրժելի եւ գայն լուծելու եւ նոյնիսկ մեղմացնելու նիգերը, փաստօրէն, բացակայ են: Արդարեւ, աշխարհին մէջ խաղաղութեան հաստատումը մարդկութեան երազը եղած է միշտ: Մնայուն, իրաւ ու ամբողջական խաղաղութիւն կը հաստատուի արդարութեան, փոխադարձ հասկացողութեան, համագործակցութեան ու խաղաղ գոյակցութեան սկզբունքներու վրայ: Այս գծով էական է կրօններու դերը: Կ'աղօթեմք, որ Աստուծոյ օրհնութեամբ Նոր Տարին դառնայ աշխարհը խաղաղութեան առաջնորդող տարի:

2) Կաթողիկոսութեան առաքելութիւնը համասփիւռքեան է, սակայն Կաթողիկոսարանը Լիբանանի մէջ հաստատուած ըլլալով, վստահաբար երկրէն ներս ստեղծուած տագնապը նաեւ իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ Կաթողիկոսութեան գործունէութեան վրայ:

Բնականաբար Կաթողիկոսարանին գործունէութիւնը եւս դիմագրաւեց բազմաթիւ դժուարութիւններ, յատկապէս տնտեսական մարզէն ներս՝ համահարակի ստեղծած դժուար պայմաններուն, Լիբանանի դրամատուներու գործունէութեան խանգարումին եւ լիբանանեան թղթոսկիի ահաւոր անկումին հետեւանալով: Սակայն թէ՛ Կաթողիկոսարանի ներքին աշխատանքները իրենց բնականոն ընթացքը շարունակեցին եւ թէ՛ Կաթողիկոսութեան առաքելութիւնը վերանորոգ շեշտով շարունակուեցաւ՝ զանազան բնագաւառներէ ներս: Մեր Սուրբ Աթոռին առաքելութեան մէջ կարելոր դերակատարութիւն ունեցող միաբանութեան անդամները, Կաթողիկոսարանէն ներս թէ՛ թեմերուն մէջ, իրենց ծառայութիւնը նուիրումով շարունակեցին: Ժողովական կեանքը ընդհանրապէս առցանց անընդմիջաբար շարունակուեցաւ, ինչպէս նաեւ՝ Կաթողիկոսարան-թեմ յարաբերութիւնները: Ներկայ տարուան համար նախատեսած ենք հետեւեալ կարելոր ծրագիրները. – Արցախի նուիրուած գիտաժողով (9-10 Փետրուար), Միւռնոօրհնէք (1 Յուլիս), Միաբանական Ընդհանուր Ժողով (4-5 Յուլիս), Ազգային Ընդհ. Ժողով (7-9 Դեկտեմբեր): Ասոնց առընթեր, ներկայ տարուան Կաթողիկոսութեան առաքելութեան կիզակէտը պիտի դառնայ 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակումը: Այս օրերուն զանազան առիթներով շեշտեցինք, թէ Սփիւռքի վերակազմակերպումը դարձած է անյետաձգելի անհրաժեշտութիւն: Սփիւռքը չի կրնար այլեւս հիմնցած կառոյցներով, օրակարգերով ու մտածողութեամբ իր կեան-

քը շարունակել ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ: Թէ՛ անտարբերութիւնը եւ թէ՛ գոհունակութիւնը Սփիւոֆի ներկայ վիճակին նկատմամբ նոյնքան վնասաբեր են: Վերանորոգումը կը սկսի, երբ ընդունինք մեր թերութիւնը եւ ըլլանք դժգոհ նախ մեր անձերուն, մեր պարտականութիւններուն եւ ապա մեր շրջապատին նկատմամբ: Սփիւոֆի վերակազմակերպումը հաւաքական համոզում, նիզ ու տեսլական կ'ենթադրէ: Այս գործընթացին պէտք է մասնակից դառնան եկեղեցիէն սկսեալ մեր բոլոր կառոյցները, մտաւորականները ու մասնաւորաբար երիտասարդները: Իւրաքանչիւրը ըսելիք եւ ընելիք պէտք է ունենայ՝ իրատես ոգիով ու գործնական մօտեցումով: Հոչակագրին առընթեր, նաեւ ընդհանուր ուղեգիծ մը դրկած ենք թեմերուն, որպէսզի կարելի ըլլայ գործնապէս արժեւորել «Սփիւոֆի Տարի»ն՝ իր առաջադրանքներով ու մարտահրաւերներով: Մի քանի օրեր առաջ, Կաթողիկոսարան հրաւիրեցինք շուրջ վաթսուն լիբանանահայ մտաւորականներ եւ ընդհանուր խորհրդակցութիւն մը ունեցանք «Սփիւոֆի Տարի»ին առնչուած նիւթերու ու մտահոգութիւններու շուրջ: Անհրաժեշտ է որ նման հանդիպումներ տեղի ունենան բոլոր գաղութներէն ներս եւ անոնց յաջորդէ աւելի խորքային ու մասնագիտական մօտեցումով հաւաքներ մեր կեանքի զանազան բնագաւառներուն առնչուած: Մթնոլորտի պատրաստութիւնը ու խորհրդակցութիւնը, տեսակետներու ու մօտեցումներու փոխանակումը էական են վերանորոգման ու վերակազմակերպման գործնական քայլերու դիմելէ առաջ:

3) *Վեհափառ Տէր, ինչպէս գիտէք, Լիբանանը շատ կենսական միջավայր հանդիսացած է եւ ներկայացուցած կեդրոնական հանգամանք՝ համասփիւռքեան առումով: Լիբանանահայ համայնքը բոլոր առումներով, հակառակ իր դիմագրաւած ծանրագոյն փորձութիւններուն, մի՛շտ աջակցողի, հասնողի, կենսատու գաղութի գործառոյթներ իրականացուցած է: Այսօր, սակայն, լիբանանահայը ի՛նք կարիքը ունի իր սփիւռքահայ հայրենակիցներու օգնութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեծագումար օժանդակութիւններ կը տրամադրէ՝ սնունդի, ընկերային աջակցութիւններու, նիւթական յատկացումներու եւ հիւանդանոցային բուժման: Կը խնդրենք, որ այս մասին անդրադառնաք ընդհանուր գիծերը ընդգծելով:*

Շուրջ երկու տարիէ ի վեր Լիբանանը ընկղմած է խոր տագնապի անդունդին մէջ: Տագնապ մը, գոր ժողովուրդը ամէն վայրկեան կ'ապրի: Տագնապ մը, որուն հետեւանքները կրնան ըլլալ աննախատեսելի՝ ներքին ու արտաքին իմաստով: Այս մասին լայնօրէն անդրադարձած ենք Վատիկանի մէջ հոգեւոր պետերու ժողովին, Ֆրանսիս Պապին ներկայութեան, վերջերս Լիբանան ժամանած Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Քարտուղարին, ինչպէս նաեւ զանազան հրապարակային առիթներով: Այստեղ կ'ուզենք հակիրճ կերպով անդրադառնալ կարգ մը հիմնական կետերու:

րու.- ա) Լիբանանի ներկայ տագնապին ստեղծման պատասխանատուները առաւելարար պետական վարչամեթոդների վերնախաւի պատասխանատուներն են, որոնք վերջին երեսուն տարիներուն իրենց անփոյթ, անձնակերպուն եւ ոչ-համարատու գործունէութեամբ երկիրը փտածութեան ու անիշխանութեան տիրմին մէջ խրեցին: բ) Ներկայ տագնապը կը ստիպէ, որ երկրին պետական-ժողովրդական կառոյցէն, ինչպէս նաեւ զանազան մարզերէն ու կառոյցներէն ներս հիմնական բարեկարգութիւններ կատարուին, բնականաբար պահելով համայնքային դրութիւնը: Սա թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ միջազգային համայնքին սպասումն է եւ երկիրը տագնապէն դուրս բերելու կարեւոր միջոցներէն մէկը: գ) Լիբանանի հայ համայնքը երկրին պետական համակարգին մաս կը կազմէ՝ իր պարտաւորութիւններով ու իրաւունքներով: Երկրէն ներս տեղի ունեցող զարգացումներու լոյսին տակ անհրաժեշտ է որ համայնքի զաւակները համախմբուին մեր կառոյցներուն շուրջ, մասնակից դառնան մեր հաւաքական կեանքին եւ մեր ժողովրդական ու համայնքային պատասխանատուները աշխուրջ ըլլան, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանել մեր իրաւունքները, որպէս Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկը: դ) Ինչպէս բոլոր համայնքները, նաեւ մեր համայնքի զաւակները կը դիմագրաւեն ընկերատնտեսական ծանր դժուարութիւններ: Աննախընթաց սղանք, լիբանանեան թղթոսկիին ահաւոր անկումը, անգործութիւնը, դեղորայքի պակասը եւ այլ բազմաթիւ դժուարութիւններ կը շարունակեն իրենց անմիջական անդրադարձը ունենալ ժողովուրդի առօրեայ կեանքին վրայ: Մեր կարելիութեան սահմաններէն ներս օգնեցինք մեր կառոյցներուն եւ ընտանիքներուն եւ տակաւին պիտի շարունակենք: Սա մեր եկեղեցւոյ ծառայական կոչումին մաս կը կազմէ: Այս ծիրէն ներս մեզի օգնեցին մեր թեմերը՝ յատկապէս Հիւսիսային Ամերիկայի թեմերը եւ նաեւ անհատ ազգայիններ: Յայտնենք նաեւ, որ մեր կառոյցները եւս իրենց առաւելագոյնը կատարեցին օգտակար ըլլալու մեր զաւակներուն: Բարձր կը գնահատենք բոլորին կատարած գործը: Այս առիթով կ'ուզենք յատուկ կերպով յիշել Զուիցերիայէն ազգային բարերար Տէր եւ Տիկին Ալեքս Գեզիտանը: Այս գոյգին կողմէ կատարուող օժանդակութիւնը, մասնաւորաբար մարդասիրական ու առողջապահական բնագաւառներէն ներս, արժանի է մեր բոլորի բարձր գնահատանքին ու խոր յարգանքին:

4) *Վեհափառ Տէր, Դուք 2022 տարին հռչակեցիք «Սփիւռքի Տարի»։ Ինչպէ՞ս կը բացատրէք այս հրամայականը, «Սփիւռքի Տարի» յայտարարելու այս անհրաժեշտութիւնը։*

Հայաստան-Սփիւռք վերջին խորհրդածրոյցովին (Երեւան, 18-20 Սեպտեմբեր 2017), Մեր խօսքին մէջ յատուկ կարեւորութեամբ շեշտեցինք, թէ «Հայաստանը կը պարպուի եւ Սփիւռքը կը մաշի»: Սա փաստացի իրողութիւն մըն էր եւ է այսօր՝ աւելիով: Իրաւունք չունինք այս տխուր ու վտանգալից

իրողութեան դիմաց լուռ մնալ: Արտագաղթը Հայաստանէն դժբախտաբար մնայուն ընթացք է, առաւել կամ նուազ չափով. նոյնպէս՝ Սփիւռքին հայօրէն գունաթափումը ու մաշումը: Երբ փորձենք խորաթափանց ակնարկ մը նետել գաղութներու ներքին կեանքի հոլովոյթին, յստակօրէն կը տեսնենք նահանջի ու մաշումի նշանները: Հետեւաբար, Սփիւռքի վերակազմակերպումը անյետաձգելի հրամայական է: Վերակազմակերպում ըսելով էապէս կը հասկնանք ներկայ կացութեան արժեւորում, Սփիւռքը դիմագրաւող մտահոգութիւններու, դժուարութիւններու ու մարտահրաւերներու ֆննարկում, առաջնահերթութիւններու նշում, կառոյցներու կեանքին ու գործունէութեան վերատեսուիւն եւ ապա վերականգնումի, վերանորոգումի ու վերակազմակերպումի գործընթացի նշում: Բնականաբար, սա դիւրին ծրագիր մը չէ եւ ոչ ալ կարն ժամանակամիջոցի ընթացքին իրագործուելի աշխատանք. այլ՝ համապարփակ ու իրապաշտ մօտեցումով ծրագրուելիք ու հանգրուանային կերպով գործադրելի երկարատեւ գործընթաց:

5) Սուրբ Ծննդեան Պատարագի Զեր պատգամին մէջ յայտարարեցիք, որ Սփիւռքի իրավիճակը քառասյին է: Երեւանի մէջ, 2017-ի համահայկական համագումարին բնութագրելով Սփիւռքի կացութիւնը, ահազանգ հնչեցուցիք «Սփիւռքը կը մաշի»: «Յո՞ երթաս Սփիւռք» հարցադրումը կարծէք այժմէական հնչեղութիւն ստացած է: «Սփիւռքի Տարի» յայտարարելով ի՞նչ աշխատանքային հիմնական ուղղութիւններ կը թելադրէք:

Ինչպէս քիչ առաջ շեշտեցինք, Սփիւռքի վերակազմակերպումը այլեւս դարձած է անխուսափելի: Անցնող տարուան ընթացքին, այս գծով յօդուածներ գրուեցան, արտայայտութիւններ կատարուեցան, նշումներ եղան: Հետեւաբար, «Սփիւռքի Տարի» հռչակումը պարագայական երեւոյթ մը չէ. ան մէկ կողմէն ներկայ իրողութեան նկատմամբ գործնական փայլ մըն է եւ միւս կողմէ՝ մտաւորականներու ու ղեկավարներու կողմէ այս ուղղութեամբ արտայայտուած մտահոգութիւններուն եւ սպասումներուն ընդառաջումը: Սփիւռքի վերակազմակերպման գծով մեր մօտեցումը զգացական, միակողմանի ու ինքնանպատակ պէտք չէ ըլլայ: Կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել այս երեք բառերը. – Հարկ է ըլլալ **ոչ-զգացական**, որովհետեւ ինչպէս նշեցինք, Սփիւռքը փաստօրէն նահանջի մէջ է: Անհրաժեշտ է իրապաշտ եւ համապատասխան մօտեցում նշել ներկայ կացութեան նկատմամբ: Հարկ է ըլլալ **ոչ-միակողմանի**, որովհետեւ Սփիւռքը համահայկական կեանքէն կտրուած ու լուսանցֆայնացած իրականութիւն մը չէ, այլ անփակուելի մասը՝ մէկ ու ամբողջական հայութեան: Հետեւաբար, մեր արժեւորումները, վերլուծումները ու առնելիք փայլերը պէտք է համահայկական շրջագծէն ներս կատարուին: Վերջապէս, հարկ է ըլլալ **ոչ-ինքնանպատակ**, որովհետեւ Սփիւռքի վերակազմակերպումը պէտք է կատարուի ի խնդիր Հայաստանի ու Արցախի հօգրացման: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիւ-

թիւնը լոգումն է, պէտք է դառնայ, այլ մեր ազգի գաղափարախօսութեան խորքը, հէնքը եւ նպատակը: Հօր, կազմակերպ ու կենսունակ Սփիւռք կ'ենթադրէ նոյնպէս հօր, կազմակերպ ու կենսունակ Հայաստան եւ Արցախ: «Սփիւռքի Տարի» հոչակագրին մէջ ընդհանուր գծերով պարզած ենք այն հիմնական կէտերը, մարզերը ու երեւոյթները, որոնք կը կարօտին լուրջ քննարկման: Օրինակ, արեւմտահայերէնի նահանջը, համայնֆային կառոյցներու գործունէութեան օրակարգերու ու կանոնագրութեան վերանայումը, երիտասարդներուն ու երիտասարդուհիներուն գործօն մասնակցութիւնը հայ կեանքին մէջ, մեր ներուժին հիշող ու ամբողջական օգտագործումը, ներգաղութային եւ համա-սփիւռքեան գործակցութեան ամրապնդումը եւ գործունէութեան ներդաշնակումը եւ այլ նմանօրինակ հիմնական հարցեր: Այս աշխատանքը անհրաժեշտ է որ ըլլայ հաւաքական կերպով ու մասնագիտական մօտեցումով եւ նկատի ունենալով ներկայ աշխարհի յարափոփոխ պայմանները, նոր իրականութիւնները, ինչպէս նաեւ գաղութներու ներքին դրուածքն ու շրջապատը: Կը խօսինք բազմատարած ու բազմերես աշխատանքի մասին, որուն մասնակից պէտք է ըլլան բոլոր կառոյցները, պատասխանատուները եւ յատկապէս մեր երիտասարդ-երիտասարդուհիները, որոնք կոչուած են նոր շունչ տալու շնչասպառ ըլլալու վտանգին ենթակայ մեր կառոյցներուն եւ նոր արիւն ներարկելու լեցան վտանգին ենթակայ մեր գաղութներուն: Այս հաստատումները թերեւս ոմանց ականջին տարօրինակ թուին, սակայն կատարուած նշումները դժբախտաբար իրականութեան կը համապատասխանեն: Հետեւաբար, եկեղեցիէն սկսեալ մինչեւ մեր բոլոր կառոյցները, քաջութիւնը, իմաստութիւնը եւ յանձնառութիւնը պէտք է ունենան վերանորոգուելու ու վերանորոգելու, վերակազմակերպուելու ու վերակազմակերպելու մեր հայեցակէտերը, մեր համոզումները, մեր կառոյցները, մեր համայնքները եւ վերջապէս մեր ազգը, այնպիսի արժեզայնութիւնով, որոնք համահունչ են մեր գերագոյն իդէալներուն ու արժէքներուն: Այլապէս, համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ պիտի մնանք առանձին միջազգային համայնքի լուսանցքին վրայ: Ըլլա՛նք իրատես, ոչ յոռետես: Ըլլա՛նք լայնահայեաց, ոչ ինքնակեդրոն: Ըլլա՛նք ներկային մէջ անցեալը եւ ներկան իրար շաղախող, ոչ ներկային մէջ անցեալը ապրող: Ըլլա՛նք եղածը բարելաւող, ոչ եղածը պահող: Ա՛յս է վերականգման ու վերակազմակերպման հիշող նամբան:

6) Վեհափառ Տէր, բարդ է Սփիւռք սահմանումը. ունինք դասական Սփիւռքը եւ նոր բայց անկազմակերպ, ցիր ու ցան Սփիւռքը: Այս ներսփիւռքեան հատուածներուն միջեւ աշխատանքը ինչպէ՞ս պիտի համակարգուի:

Սփիւռքը խառնաշփոթ վիճակ մը կը պարզէ՝ իր խայտարղէտ, գոյնզգոյն, աններդաշնակ ու ցիրուցան պատկերով: Չմոռնանք, որ ներկայ Սփիւռքը յառաջացած է երեք սփիւռքներէ.– ցեղասպանութենէն նոյնպէս հայորդի-

ներէ գոյաւորուած սփիւոքը, որ հիմքը կը կազմէ ներկայ Սփիւոքին. Սովետական Միութենէն հեռացած հայորդիներէ կազմուած սփիւոքը եւ Հայաստանէն արտագաղթած հայորդիներէ գոյացած սփիւոքը: Երեւ սփիւոքները պատմական տարբեր հոլովոյթի ենթակայ ըլլալով, տարբեր աւանդութիւններ, մօտեցումներ եւ փորձառութիւն ունին: Հասարակաց գիծերու առընթեր, տարբերութիւնները ակնյայտ են անոնց միջեւ՝ նոյնիսկ նոյն գաղութին մէջ: Հայաստանի վերանկախացումէն աւելի քան 30 տարիներ անցած են, եւ փաստօրէն՝ երեւ սփիւոքներու ներդաշնակումը կարելի չէ եղած: Սփիւոքի վերակազմակերպումի աշխատանքներու ընթացքին յատուկ կարեւորութիւն հարկ է տրուի այս երեւոյթին: Մեր հոչակագրին մէջ առաջարկած ենք, որ աշխատանքի մեքանիզմներ նշդուին ընդհանրացումներէ ու պարագայական քայլերէ խուսափելու համար, ինչպէս նաեւ՝ յստակ ժամանակացոյց: Իւրաքանչիւր կառոյց ի՛նք պէտք է կատարէ իր ներքին վերակազմակերպումը եւ ապա տուեալ գաղութէն ներս գործող կառոյցներու միջեւ կատարուած աշխատանքներու համադրում ու ներդաշնակում հարկ է տեղի ունենայ՝ նշդելով հասարակաց սկզբունքներ ու նպատակներ եւ պահելով իւրաքանչիւրին իւրայատկութիւնը: Դարձեալ կը կրկնենք, սա բարդ, դժուար եւ զգայուն աշխատանք է: Ամէն բանէ առաջ պատասխանատուներ համոզուած պէտք է ըլլան, թէ իրենց ղեկավարութեան յանձնուած կառոյցը հրամայական կարիքը ունի վերարժեւորման, վերանորոգման ու վերակազմակերպման: Այս համոզումը պէտք է դառնայ մոյզ ոյժը վերակազմակերպումի աշխատանքներուն: Մթնոլորտի պատրաստութիւնը եւս կը նկատենք յոյժ կարեւոր: Սպասելի է, որ յառաջիկայ ամիսներուն այս գծով յօդուածներ գրուին, դասախօսութիւններ կազմակերպուին, քննարկումներ ու սեմինարներ տեղի ունենան, որպէսզի մեր թեմերը, կառոյցները ու համայնքները խորապէս համոզուին, որ Սփիւոքի վերակազմակերպումը ու վերակենսաւորումը այլեւս դարձած է անյետաձգելի:

7) Իսկ պետութեան դերը ի՞նչ է: Նախապէս կը գումարուէին Համահայկական Համագումարներ Երեւանի մէջ, կը գործէր Սփիւոքի նախարարութիւնը, կային մասնագիտական Համախմբումներ, մշակուած էր Համահայկական հոչակագիր, աշխատանքներու ձեռնարկուած էին Համագաղթին խորհուրդի կազմութեան համար, ուր ներկայացուած պիտի ըլլար Սփիւոքը՝ իր եկեղեցիներով, կուսակցութիւններով եւ միութիւններով: Պետութեան դերի անհրաժեշտութիւնը ինչպէ՞ս կը մեկնաբանէք:

Անհրաժեշտ է միշտ յիշեցնել, թէ Սփիւոքը ինքնանպատակ չէ. ինչ որ Սփիւոքին կողմէ կը կատարուի, Հայաստանը, մեր ժողովուրդի պահանջատիրութիւնը եւ մեր ազգի գերագոյն իտեալները պէտք է դառնան կիզակետը Սփիւոքի կեանքին, մտածողութեան ու գործին: Բնականաբար, Սփիւոքի վերակազմակերպումը պէտք է կատարուի Սփիւոքին կողմէ: Սակայն

Հայաստանը չի կրնար անտարբեր ըլլալ եւ սոսկ դիտողի դերին մէջ մնալ: Անհրաժեշտութեան պարագային հարկ է նաեւ Հայաստանի պետութեան եւ փորձագէտներուն նեցուկը ունենալ: Եւ նիշդ ատոր համար «Սփիւռֆի Տարի»-ի հռչակագրէն յատուկ նամակներով օրինակներ դրկեցինք Հայաստանի Նախագահ Արմէն Սարգսեանին, Վարչապետ Նիկոլ Փաշինեանին, Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանին, Հայաստանի Ազգ. Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեանին, Արտաքին Գործոց նախարար Արարատ Միրզոյեանին, ինչպէս նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանին, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանին, հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տ. Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տիրոջ եւ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վերապատուելի Մկրտիչ Գարակէօզեանին՝ հրաւիրելու, որ իրենց տեսակետները յայտնեն եւ մասնակցութիւն բերեն Սփիւռֆի վերակազմակերպման աշխատանքներուն: Սփիւռֆի վերակազմակերպումը համասփիւռֆեան նիւթով պէտք է ըլլայ. սակայն, ինչպէս ընդգծեցինք, համասփիւռֆեան ծրագրումը, նիւթը, մտածողութիւնը ու մօտեցումը հարկ է որ դիտուին ու իրագործուին համահայկական շրջագծէն ներս: Մեր գանազան պատգամներուն ու գրութիւններուն մէջ կարեւորութեամբ անդրադարձած ենք համահայկական մտածողութեան մշակման ու գործակցութեան զարգացման: Յարդ այս ուղղութեամբ անհրաժեշտ քայլերու չենք կրցած դիմել եւ ոչ ալ խորքային մօտեցումով յիշեալ նիւթը քննարկած: Փոքր ազգ ենք. իրաւունք չունինք Հայաստանը ձգելու իր վիճակին, Արցախը՝ իր վիճակին եւ Սփիւռֆը՝ իր վիճակին: Առանձին գործելը մեզ իրարմէ պիտի հեռացնէ: Մենք գմեզ իրարու մօտեցնող օղակներու ամրացման կարիքը ունինք: Միութիւն չի նշանակեր միաձեռութիւն, այլ՝ մէկ ամբողջութեան ամրացում եւ տարբերութիւններու ներդաշնակում: Ահա թէ ինչու համասփիւռֆեան մտածողութեան մշակումը ու գործակցութեան մեքանիզմներու զարգացումը, ի խնդիր համահայկական մտածողութեան մշակման ու գործակցութեան ամրապնդման, կը նկատենք առաջնահերթ:

8) *Վեհափառ Տէր, «Հզօր Հայաստան-Հզօր Սփիւռֆ» տեսլականի մասին Ձեր գնահատականը տեղ գտած է Ձեր հռչակագրին մէջ: Այս տեսլականը կը կարծէ՞ք որ վերախմաստաւորուած է: Կան արձագանգներ, որ կ'ըսեն, թէ առանց անկախ պետականութեան մենք ունեցանք Հզօր Սփիւռֆ. բայց շըրջուած տեսութիւնը՝ Հզօր Սփիւռֆը կ'ենթադրէ Հզօր Հայաստան աւելի ընկալելի կը հնչէ մանաւանդ յետ-պատերազմեան ներկայ իրավիճակի պայմանները նկատի ունենալով:*

Այս մասին արդէն անդրադարձանք: Կրկնութեան գնով կ'ուզենք շեշ-

տել, որ հզոր Սփիւոֆ կ'ենթադրէ հզոր Հայաստան, եւ՝ փոխադարձաբար: Հայաստան-Արցախ-Սփիւոֆ, իրարմէ անջատ իրականութիւններ չեն, ոչ ալ՝ մրցակից: Անհրաժեշտ է այս երեք իրականութիւնները տեսնել նոյն օղակի մէջ, մէկ ամբողջութեան մէջ, յարգելով հանդերձ անոնց իւրայատկութիւնները, յստակեցնելով անոնց դերերը ու անոնց միջեւ կատարելով աշխատանքի բաժանում: Երեսուն տարիներու ընթացքին, փաստօրէն չկրցանք այս կէտին հասնիլ, հակառակ այն իրողութեան, որ որոշ ճիգ կատարուեցաւ այս ուղղութեամբ: Օրինակ, Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ համազգային խորհուրդի մը կազմաւորման առաջին քայլը առնուեցաւ, բայց կարելի չեղաւ շարունակել: Հարկ է որ այս ուղղութեամբ աշխատանքները շարունակուին: Հայաստան-Սփիւոֆ համաժողովները դրական մթնոլորտ մը ստեղծեցին: Այս գծով անուրանալի է Սփիւոֆի նախկին նախարարուհի Հրանուշ Յակոբեանին կարեւոր դերը: Յիշեալ հանդիպումները եւս չշարունակուեցան: Նկատի ունենալով Հայաստանի դիմագրաւած ներկայ մարտահրաւերները, մեր ժողովուրդի համախմբումը համազգային օրակարգի մը շուրջ աւելի քան երբեք կը նկատենք առաջնահերթ: Այս մասին զանազան առիթներով արտայայտուած ենք: Ներկայիս Հայաստան-Սփիւոֆ յարաբերութիւնը, փաստօրէն, լնացած վիճակ մը կը պարզէ: Ան կարիք ունի վերաշխուժացման, մասնաւորաբար 44-օրեայ պատերազմի ստեղծած անորոշութեան ու յուսախարութեան մթնոլորտին մէջ այս հանգրուանին:

9) Ձեր պատգամին մէջ կարծիր թելով կ'անցնի մեր կեանքի տարբեր ոլորտներուն մէջ նոր ոճ, նոր մարդուժ, նոր եղանակ ձեւաւորելու հրամայականը. բայց նաեւ՝ համագործակցութիւնը, ներդաշնակուլութիւնը, համասփիւռքեան եւ համահայկական օրակարգերու շուրջ համախմբուելը: Չէ՞ք կարծեր, Վեհափառ Տէր, որ այս բոլորը նաեւ նոր կառոյցներ կ'ենթադրեն. իսկ նորը ինչպէ՞ս պիտի ներդաշնակուի հինին հետ կամ ինչպէ՞ս պիտի փոխարինէ զայն:

Սփիւոֆի համայններուն կեանքը ղեկավարողը, անոնց ամբողջականութիւնը պահպանողը, ինքնութիւնը երաշխաւորողը մեր կառոյցներն են: Երբ կառոյցները գորեղ են ու կազմակերպ՝ համայնքը կը դառնայ գորեղ ու կազմակերպ: Ահա թէ ինչու Մեր կարծիքով Սփիւոֆի վերակազմակերպումի գործընթացին մէջ առանցքային դեր վերապահուած է կառոյցներուն: Անոնց բարեկարգումը ու վերակազմակերպումը առանցքը, ուղեցոյցը ու մղիչ ոյժը պիտի դառնան գաղութի կեանքին վերաշխուժացման: Ըլլանք իրապաշտ: Այլեւս մեր երիտասարդները չեն կրնար ներկայ կեանքի պայմաններուն ու իրականութիւններուն ոչ-հաղորդ, ներկայ կեանքի մտահոգութիւններէն ու առաջնահերթութիւններէն հեռու, ներկային մէջ անցեալը ապրող կառոյցներու մաս կազմել: Պահ մը դիտեցէ՛ք ձեր շրջապատը: Մեր կառոյցները սկսած են պարպուիլ եւ լուսանցֆայնանալ: Հեռու մնանք ամէն

բան վարդագոյն տեսնելու վնասաբեր մօտեցումներէ: Ի՞նչ կ'արժէ շէնքերու, կանոնագրութիւններու, օրակարգերու, այլ խօսքով հինին կառչած մնալ, երբ մեր երիտասարդութիւնը կը հեռանայ մեզմէ: Անցեալէն ժառանգուած աւանդութիւններու ու արժէքներու մեր հաւատարմութիւնը կը դառնայ տեսական, երբ մեր շուրջը դատարկութիւն տիրէ: Եկեղեցին ժողովուրդն է, ոչ սոսկ ծէսն ու հոգեւորականը. պետութիւնը ժողովուրդն է, ոչ սոսկ իշխանութիւնն ու սահմանադրութիւնը. կառոյցը ժողովուրդն է, ոչ սոսկ ղեկավարութիւնը ու կանոնագրութիւնը: Մենք ժողովուրդը պիտի պահենք, համախմբուինք, կազմակերպենք, կենսաւորենք ու հօրացնենք, եւ եկեղեցին, պետութիւնը ու կառոյցը պէտք է ծրագրեն, գործեն ու ծառայեն ի սպաս ժողովուրդին: Սփիւռքի մէջ մեր կառոյցները հրաշալի դեր կատարեցին հայապահպան իմաստով: Սակայն հայապահպանումը ուրիշէն հեռու ըլլալը չէ այսօր, որովհետեւ ուրիշը մօտեցած է մեզի, նոյնիսկ մեր ընտանիքին մաս կը կազմէ: Հայապահպանումը ուրիշէն տարբեր ըլլալն է եւ այդ տարբերութիւնը մեր մէջ կազմաւորողը ու արմատացնողը եկեղեցին է, դպրոցն է, ակումբն է: Այսօր չենք կրնար մեր կառոյցներէն ներս բանտարկել մեր երիտասարդութիւնը, միայն հինը պահելով անոնց հայութիւն ներարկել: Երիտասարդութեան մէկ կարեւոր մասը հեռու է մեր կառոյցներէն եւ նոյնիսկ՝ մեր հաւաքական կեանքէն: Հետեւաբար, մեր մօտեցումները պէտք է ըլլան տարբեր: Տարբեր ըլլալ չի նշանակեր հինը մոռնալ, անցեալին հակադրուիլ. այլ մեր մտածումները, առաջնահերթութիւնները, գործելակերպերը վերանորոգել՝ զանոնք դարձնելով համահունչ ներկայ պայմաններուն, կարիքներուն եւ սպասումներուն: «Սփիւռքի Տարի»ն արթնութեան կոչ մըն է եւ հրաւեր՝ վերանորոգման ու վերակազմակերպման:

Շնորհակալութիւն, Վեհափառ Տէր, որ աւանդութեան համաձայն, այս տարի եւս համայն հայ ժողովուրդին փոխանցեցիք հայ կեանքին մտահոգութիւններուն, դժուարութիւններուն ու մարտահրաւէրներուն առնչուած ձեր պատկերացումները, ցուցմունքները, սպասումներն ու պատգամը: «Սփիւռքի Տարի» ձեր Հայրապետական հռչակագիրը անկիւնադարձային փաստաթուղթ մըն է եւ կարեւոր նախաբան՝ 2022 տարին սկսելու Սփիւռքի վերակազմակերպչական աշխատանքներու մեկնարկով: Դարձեալ շնորհակալութիւն, Վեհափառ Տէր:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԻԱՆ
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՀԱՆՈՎ ԳՆԱՀԱՏԵՑ
ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով գնահատեց Սարգիս Սրկ. Յովհաննէսեանի Հայ Եկեղեցիէն ներս երկար տարիներու ծառայութիւնն ու վաստակը:

Արդարեւ, Հինգշաբթի, 6 Յունուարին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Ս. Եւ Անմահ Պատարագէն ետք, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան ընթերցեց Նորին Սրբութեան Սրբատառ Կոնդակը, ուր Վեհափառ Հայրապետը բարձր կը գնահատէր Սարգիս Սարկաւազի նուիրումն ու աշխատանքը, յատկապէս՝ ճայնագրեալ շարականներու հատորներուն պատրաստութեան մէջ իր ունեցած կարեւոր դերակատարութիւնը: Կոնդակի ընթերցումէն անմիջապէս ետք, Սրբազան Հայրը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով զարդարեց Սարգիս Սրկ. Յովհաննէսեանի կուրծքը:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԱՏԻԿԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 2 Փետրուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Պքերքէի մարտիրոս եկեղեցւոյ պատրիարքարանին մէջ, առանձին հանդիպում մը ունեցաւ Վատիկանի արտաքին գործոց նախարար՝ Կալըկըր Արքեպիսկոպոսին հետ:



Նորին Սրբութիւնն ու նախարարը ընդհանուր արժեւորում մը կատարեցին 1 Յուլիս 2021-ին Վատիկանի մէջ տեղի ունեցած Լիբանանի քրիստոնէայ հոգեւոր պետերու ժողովին ու անոր անդրադարձին Լիբանանէն ներս: Վատիկանի արտաքին գործոց նախարարը անդրադարձաւ Լիբանանի Հանրապետութեան Նախագահին եւ պետական պատասխանատուներուն հետ ունեցած իր հանդիպումներուն: Վեհափառ Հայրապետը առաջարկեց, որ Վատիկանը, Լիբանանի մէջ մօտիկ ապագային տեղի ունենալիք երեսփոխանա-

կան ընտրութիւններէն առաջ, քրիստոնեայ-իսլամ հոգեւոր պետերու հանդիպում մը կազմակերպէ Վատիկանի մէջ՝ որպէս ամբողջացուցիչ քայլ 1 Յուլիսին տեղի ունեցած Լիբանանի քրիստոնեայ հոգեւոր պետերու ժողովին: Նախարար Կալըկըր սկզբունքով համաձայն գտնուեցաւ Նորին Սրբութեան առաջարկին եւ վստահեցուց, որ Լիբանանի իսլամ հոգեւոր պետերուն հետ ունենալիք իր հանդիպումներուն ընթացքին պիտի արժարձէ այս նիւթը:

Հանդիպման աւարտին Ռայի Պատրիարքը ճաշկերոյթ մը կազմակերպեց ի պատիւ Կալըկըր Արքեպիսկոպոսին: Ճաշկերոյթին ներկայ էին՝ Վեհափառ Հայրապետը, Եունան Պատրիարքը եւ մարոնիթ եպիսկոպոսներ:



ՍԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒԿ ԵՒ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Չորեքշաբթի, 26 Յունուարին, սկիզբ առաւ Կաթողիկ Եկեղեցւոյ եւ Ուղղափառ քոյր եկեղեցիներու միջեւ Աստուածաբանական երկխօսութեան առցանց ժողովը, որ երեք օրերու վրայ տարածուած հանդիպում մըն էր: Սոյն հանդիպումին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուցին՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանն ու Գերպ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեանը (համաքարտուղար):


Ժողովին նպատակն էր քննել յաջորդ նիստին վերջնական ձեւ ստանալիք ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՕԹԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ խորագրով միացեալ աշխատանքը:



ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ

9-16 ֆետրուարին, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Կեդրոնական Վարչութիւնը, Ե.Հ.Խ.-ի որոշումներ կայացնող բարձրագոյն մարմինը, իր ընդհանուր ժողովը գումարեց առցանց: Աւելի քան 200 անդամներէ եւ խորհրդատուներէ բաղկացած ժողովը, հիմնական օրակարգ ունէր Ե.Հ.Խ.-ի 11-րդ համաժողովը, որ նախատեսուած է գումարուիլ Սեպտեմբերին, Գերմանիոյ մէջ՝ «Քրիստոսի սէրը կը մղէ աշխարհը հաշտութեան եւ միասնութեան» թեմայով:

Գործադիր ընդհանուր քարտուղարը իր յստակ յանձնառութիւնը փոխանցեց համաժողովի գործընթացին՝ ղիտել տալով, որ թագաժառնի հետեւանքով արդէն մէկ անգամ յետաձգուած է համագումարը եւ ներկայիս Գերմանիոյ եկեղեցիներուն եւ կառավարութեան հետ առաւելագոյնս կը կատարեն յաջողցնելու համար ծրագիրը: Ան աւելցուց, որ, ըստ համաճարակի կացութեան, Ե.Հ.Խ.-ը կը պատրաստուի ընդունիլ 1000-5000 եւ կամ աւելի մասնակիցներ:



Կեդրոնական Վարչութիւնը յաջողութեամբ փակեց ժողովը, որուն ընթացքին արծարծեց Համագումարին որդեգրած բանաձեւերու, Ե.Հ.Խ.-ի ծրագիրներու եւ պիւտձէի վերահսկողութեան օրակարգերը: Նշենք, որ սոյն ժողովին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցան՝ միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան եւ Զուլիգերիոյ մէջ մեր Ս. Աթոռին միջ-եկեղեցական յարաբերութիւններուն ներկայացուցիչ փրոֆ. Թենի Փիրրի-Սիմոնեան: Աւելցնենք, որ Հայ եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) նախկին ատենապետ՝ Գարլա Խիճոյեան կը շարունակէ Ե.Հ.Խ.-ին մէջ Միջին Արեւելքի բաժնի պատասխանատուի իր պաշտօնը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ուրբաթ, 11 Փետրուարի առաւօտուն, տեղի ունեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) Գործադիր Վարչութեան առցանց ժողովը, որուն ներկայ էին Խորհուրդի չորս նախագահներն ու Վարչութեան բոլոր անդամները: Սոյն ժողովին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցան՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ դոկտ. Ժան Սլամանեան:

Ժողովի գլխաւոր օրակարգերն էին Մայիս 2022-ին Եգիպտոսի մէջ կայանալիք, դպտի եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, Մ.Ա.Ե.Խ.-ին 11-րդ համաժողովի ծրագրի քննարկումն ու ընդհանուր քարտուղարութեան եւ Խորհուրդի միաւորներուն զեկոյցներու ներկայացումը:



Ժողովը մանրամասնութեամբ քննարկեց Խորհուրդին 11-րդ համաժողովին հնգօրեայ ծրագիրները, որմէ ետք լսեց ընդհանուր քարտուղար՝ դոկտ. Միշէլ Ապսի եւ միաւորներու զեկոյցները:

Ժողովականները մեծապէս գնահատեցին տարուած աշխատանքները, հակառակ Լիբանանի եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի մէջ տիրող քաղաքական, ընկերային եւ տնտեսական ոչ-նպաստաւոր պայմաններուն:

Բոլոր օրակարգերուն համապատասխան լուծումներ տալէ ետք, Վարչութիւնը աղօթքով փակեց նիստը:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ
ԱՅՑԵԼԵՑԻՆ ԿԻՊՐՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏ
ԽՐԻՍՈՍԹՈՍՈՍ Բ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ**

Չորեքշաբթի, 23 Փետրուարի առաւօտեան ժամը 10:00-ին, Նիկոսիոյ Արքեպիսկոպոսարանին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ներկայացուցիչները՝ Գերշ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեան (Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց Թեմին) եւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան (Միջ-եկեղեցական Յարաբերութեանց Յանձնախումբի ատենապետ) պաշտօնական այցելութիւն մը տուին Կիպրոսի յոյն ուղղափառ եկեղեցւոյ հոգեւոր պետ Նորին Ամենապատուութիւն Տ.Տ. Խրիսոսթոմոս Արքեպիսկոպոսին եւ փոխանցեցին Վեհափառ Հայրապետին եղբայրական ջերմ ողջոյններն ու շուտափոյթ ապաքինման բարեմաղթութիւնները:

Ապա, Նարեկ սրբազան զեկուցեց յատկապէս Լիբանանի ու Սուրիոյ մէջ մեր ժողովուրդի զաւակներուն դիմադրաւած ընկերատնտեսական մարտահրաւէրներուն եւ Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ Հայ եկեղեցւոյ ու մեր բոլոր կառոյցներուն կատարած զօրակցական աշխատանքներուն մասին: Իսկ Խորէն սրբազան խօսեցաւ կիպրահայութեան ու Կիպրոսի վերաբերող հարցերուն մասին:



Արքեպիսկոպոսը նաեւ հետաքրքրուեցաւ Հայաստանի ապահովական կացութեամբ եւ Միջին Արեւելքի մէջ քրիստոնեաներու ներկայութեան ու վկայութեան կենսական հարցով:

Հանդիպման աւարտին, Նորին Ամենապատուութիւնը իր եղբայրական ջերմ ողջոյնները յղեց Վեհափառ Հայրապետին եւ յոյս յայտնեց ի մօտոյ Անթիլիասի Մայրավանքին մէջ հանդիպիլ Նորին Սրբութեան:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԻՍՏ Տ. ՎԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը սրտի դառն կակիծով կը գուժեն Կիլիկեան Միաբանութեան երէց անդամներէն Տ. ՎԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ (1945–2022) վախճանումը, որ պատահեցաւ Շաբաթ, 26 Փետրուարի վաղ առաւօտուն:



Վերջին օծման ու թաղման կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 1 Մարտին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ՝ ձեռամբ Գերշ. Տ. Օշական Արք. Զօյրոյեանի:

Հոգեւոյս Տ. Վահան Ծ. Վրդ. Պէրպէրեան, աւագանի անունով Յովսէփ, ծնած է Տէրիք (Սուրիա, Ճագիրէ) 1945 թուականին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգային Ազատութիւն Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1960–ին: Սարկաւազ ձեռնադրուած է 1964–ին, ապա, 4 Յունիս 1967–ին, ձեռնադրուած եւ օծուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱՅ: 14 Փետրուար 1971–ին, Վարդապետական գաւազանի իշխանութիւն ստացած է՝ ձեռամբ Դպրեվանքի տեսուչ Տ. Գարեգին Եպս. Սարգիսեանի: 13 Մայիս 1983–ին, Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է՝ ձեռամբ Ս. Աթոռոյս գահակալ Գարեգին Բ. Կաթողիկոսի: Մայրավանքէն ներս ստանձնած է զանազան վանական պաշտօններ, ինչպէս՝ ուսուցիչ Դպրեվանքի եւ գաւազանակիր: 1973 Սեպտեմբերին, հովուական առաքելութեամբ մեկնած է Քարաքաս (Վենզուէլլա), ուր 25 տարի լծուած է հոգեւոր ծառայութեան: 1998–2000 հովուական ծառայութիւնը շարունակած է Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս: 2000–2006 ծառայած է Վանգուվրրի (Գանատա) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ որպէս հոգեւոր հովիւ: 2006–ին, իբրեւ առաջնորդի օգնական, առաքուած է Բերիոյ Հայոց թեմ, իսկ 2017–ին՝ վերադարձած Անթիլիասի Մայրավանք:

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄ Բ ԵՂԻՑԻ»

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ՖՐԱՆՍԻՍ ՊԱՊԵՆ ՆԱՍԱԿ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Երեքշաբթի, 4 Յունուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի մօտ Պապական Նուիրակ՝ Ժոզեֆ արքեպիսկոպոս Սփիթերիի այցելութիւնը:

Այցելութեան նպատակն էր Վեհափառ Հայրապետին փոխանցել Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին նամակը, ուր Սրբազան Զահանայապետը Նոր տարուան ու Ս. Ծննդեան տօներուն առիթով իր բարեմաղթութիւնները կը յայտնէր Նորին Սրբութեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ նաեւ ընդհանուր արժեւորում մը կատարելու Վատիկանի մէջ 1 Յուլիս 2021-ին տեղի ունեցած Լիբանանի քրիստոնէայ հոգեւոր պետերու հանդիպումին, ինչպէս նաեւ Լիբանանը դիմագրաւող ներկայ քաղաքական ու տնտեսական տագնապին: Պապական Նուիրակը տեղեակ պահեց Վեհափառ Հայրապետը այս ծիրէն ներս Վատիկանին կատարած աշխատանքներուն մասին, իսկ Հայրապետը, իր կարգին, փոխանցեց շուրջ երկու շաբաթ առաջ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) Ընդհանուր Զարտուղարին հետ տեղի ունեցած հանդիպման մանրամասնութիւնները:

Նոյն օրը Նորին Սրբութեան այցելեց Միացեալ Նահանգներու մօտ Լիբանանի նախկին դեսպան՝ Սիմոն Զարամը: Հանդիպման ընթացքին քննարկուեցան ընդհանրապէս Միջին Արեւելքէն ու յատկապէս Լիբանանէն ներս

տեղի ունեցող քաղաքական զարգացումները:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, մեկնելով Սփիւռքի պարզած ներկայ իրավիճակէն եւ հայ կեանքին մէջ անոր ունեցած առանցքային դերակատարութենէն, 2022 տարին հռչակեց «ՍՓԻՒՔԻ ՏԱՐԻ»:

Առ այդ, Կիրակի, 9 Յունուարին, յընթացս Ս. Եւ Անմահ Պատարագին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ընթերցուեցաւ Հայրապետական հռչակագիրը՝ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի կողմէ: (Հայրապետական հռչակագիրը ընթերցել էջ 10):

Նշենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու բոլոր եկեղեցիներէն ներս եւս ընթերցուեցաւ Հայրապետական հռչակագիրը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

Երեքշաբթի, 11 Յունուարին, Զուէրթի եւ Շրջակայից Թեմի Կաթողիկոսական փոխանորդ՝ Գերայ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեան, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյ-

եանի, այցելեց Վեհափառ Հայրապետին՝ ստանալու համար անոր օրհնութիւնը:

Յիշենք, որ Հայր Պետրոսը 17 Դեկտեմբեր 2021-ին, ձեռամբ Օշական Սրբազանին, ստացած էր Ծայրագոյն Վարդապետութեան աստիճանները, որովհետեւ թագաժաիրին պատճառով չէր կարողացած մաս կազմել 11 Ապրիլ 2021-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ կայացած Ծայրագոյն Վարդապետութեան աստիճաններու տընչութեան արարողութեան:

**ՈԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 14 Յունուարին, Նորին Սրբութիւնը ընդունեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի շրջանային վարչութիւնը, գլխավորութեամբ տորթ. Աւետիս Տագետեանի:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Լիբանանի ներկայ կացութեան առնչուած հարցեր, որոնց գծով Նորին Սրբութիւնը շեշտեց Լիբանանի հայ համայնքէն ներս գործող կառոյցներուն համագործակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներքին միութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը: Այս առիթով նաեւ անդրադարձ կատարուեցաւ Վեհափառ Հայրապետին հռչակած Սփիւռքի Տարուան աշխատանքներուն եւ ծրագիրներուն:

Իսկ Շաբաթ, 15 Յունուարին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի շրջանային վարչութիւնը, առաջնորդութեամբ Սեակ Յակոբեանի:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու Լիբանանի ընդհանուր կացութեան, Հայաստան-Սփիւռք յարաբերութեան եւ Վեհափառ Հայրապետին կողմէ հռչակուած «Սփիւռքի Տարի»-ի աշխատանքներուն ու ծրագիրներուն:

Այս առիթով, Նորին Սրբութիւնը դարձեալ յիշեցուց, որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, յատկապէս սփիւռքահայ կեանքին մէջ, կարեւոր դերակատարութիւն ունեցած է եւ ունի ու շեշտեց անոր ներքին միութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը:

**ԱՂՕԹՔԻ ՇԱԲԱԹ՝
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Նախաձեռնութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին (Ե.Հ.Խ.), ամէն տարի Յունուար ամսուան երրորդ շաբաթը կը յատկացուի աղօթքի՝ քրիստոնէութեան միութեան համար: Այս ծիրին մէջ երբեմն եկեղեցիներ առանձնաբար եւ երբեմն միասնաբար կրօնական հաւաքներ կը կազմակերպեն եւ աղօթքներու, շարականներու, անտարանական ընթերցումներու եւ քարոզխօսութիւններու միջոցաւ կը շեշտեն եկեղեցիներու միութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը:

Արդարեւ, Կիրակի, 16 Յունուարի երեկոյեան ժամը 6:00-ին, Լիբանանի մէջ եկեղեցիներու միութեան աղօթքի շաբթուան բացումը կատարուեցաւ Պէյրութի հայ կաթողիկէ Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցիին մէջ: Բացման արարողութեան ներկայ էին հոգեւոր պետեր, համայնքներու առաջնորդներ, հոգեւորականներ, ինչպէս նաեւ հաւատացեալներ: Յիշեալ արարողութեան յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակ-

ցեցալ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Շահե Արք. Փանոսեան:

Յայտնենք, որ 2019 թուականին Լիբանանէն ներս աղօթքի շաբթուան փակման արարողութիւնը տեղի ունեցած էր Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ներկայութեամբ հոգեւոր պետերու եւ եկեղեցական առաջնորդներու: Այդ առիթով իր Հայրապետական պատգամը ուղղած էր Արամ Ա. Վեհափառ Հայրապետը:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Չորեքշաբթի, 19 Յունուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տրուած այցելութիւններու շարքին յատկանշական է յիշել.-

ա) Լիբանանի Դեղագործներու Միութեան նախագահ տոքթ. Ճօ Սելլում: Այցելութեան նպատակն էր Նորին Սրբութեան տեսակետը ունենալ քաղաքացիներուն դեղորայք գնելու համար յատուկ այցեքարտերու ծրագրին իրագործման գծով:

բ) Վեհափառ Հայրապետին այցելեց Խաղաղութիւն կուսակցութեան նախագահ՝ Ռոժէ Ըտտէ, ընկերակցութեամբ դոկտ. Մկրտիչ Պուլտուքեանի: Հանդիպման նպատակն էր, իբրեւ յառաջիկայ նախագահական ընտրութեան թեկնածու, ունենալ Նորին Սրբութեան պատկերացումը գալիք խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններուն շուրջ:

գ) Նորին Սրբութիւնը առցանց հանդիպում ունեցաւ Հիւսիսային Ամերիկայի երեք առաջնորդներուն՝ Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Անուշաւան Արք. Դանիէլեանին, Գաւսատայի Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Բարգէն Արք. Չարեանին եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Ս.

Թորգոմ Եպս. Տօնոյեանին հետ, յիշեալ թեմերուն առնչուած շարք մը ծրագիրներու ու աշխատանքներու կապակցութեամբ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՆԹԻԼԻԱՍ

Հինգշաբթի, 20 Յունուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի կրթութեան նախարար՝ Ապպաս Հալապին:

Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան առաւելաբար կրթութեան նախարարութեան աշխատանքներուն առնչուած ծրագիրները: Հանդիպումը նաեւ առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու ընդհանրապէս քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան պարզած ներկայ կացութեան՝ նկատի ունենալով, որ Վեհափառ Հայրապետը միջ-կրօնական ծիրէն ներս մտնելու ճանչցած է նախարար Հալապին:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ԹԵՍԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ուրբաթ, 21 Յունուարի երեկոյեան ժամը 8:00-ին, Վեհափառ Հայրապետը շուրջ երկու ժամ առցանց հանդիպում ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմակալ առաջնորդներուն հետ:

Նորին Սրբութիւնը թեմակալ առաջնորդները տեղեակ պահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր թեմերուն առնչուած ընդհանրական ծրագիրներուն ու կատարուելիք աշխատանքներուն մասին: Ան յատկապէս շեշտեց «Սփիւռքի Տարի»-ին առիթով գործնական նախաձեռնութիւններու դիմելու հրամայականը, ինչպէս

Նաեւ 1 Յուլիսին Միւռնօրհինեքին եւ 7-9 Դեկտեմբերին Ազգային Ընդհանուր Ժողովին գծով կատարուելիք նախապատրաստական աշխատանքներուն անհրաժեշտութիւնը: Վեհափառ Հայրապետը նաեւ կատարեց շարք մը յիշեցումներ՝ Կաթողիկոսարան-թեմ յարաբերութեանց ու գործակցութեանց գծով:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԻԱՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Երկուշաբթի, 24 Յունուարի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ, տեղի ունեցաւ վանաբնակ միաբան հայրերու հաւաք:

Հաւաքի սկիզբը Նորին Սրբութիւնը յայտնեց «Սփիւռքի Տարի»ին մասին կատարուելիք աշխատանքներուն ու զանոնք արժեւորելու անհրաժեշտութեան մասին: Այս ուղղութեամբ ան ընդգծեց հոգեմտաւոր առաքելութեան կենսունակութիւնը՝ յայտնելով, որ մեր առաքելութիւնը առաւել եւս պէտք է կեդրոնացնել Սփիւռքի վերակազմակերպման գործընթացին վրայ:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը անդրադարձ կատարեց 1 Յուլիս 2022-ին տեղի ունենալիք Միւռնօրհութեան եւ Միաբանական Ընդհանուր Ժողովին: Ան ըսաւ, որ «Մեր Ս. Աթոռին ծառայական առաքելութեան մէջ իրենց իւրայատուկ տեղն ու դերը ունեցող յիշեալ եկեղեցական արարողութիւնն ու միաբանական համախըմբումը խթան պիտի հանդիսանան վերարժեւորելու մեր ծառայութիւնը եւ նոր թափ տալու Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն»: Այս առիթով, Նորին Սրբութիւնը յայտնեց, որ նոր յանձնախումբեր պիտի յառաջանան, միաբան հայրերէ բաղկացած,

որպէսզի առաւելագոյն չափով կազմակերպուին յիշեալ ծրագիրները իրականացնելու աշխատանքները:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը կատարեց վանական կեանքի պաշտօններու նոր նշանակումներ: Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան նշանակուեցաւ Մայր Տաճարի լուսարարապետ, իսկ Գերշ. Տ. Մակար Եպս. Ազգարեան՝ Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ:

Հուսկ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան գեղեցիկ սովորութեան համաձայն, միաբան հայրերը միահունչ կերպով երգեցին «Աշակերտք Զրիստոսի» շարականը՝ բարի երթ մաղթելով հովուական ծառայութեան մեկնելու պատրաստ երեք միաբան հայրերուն:

Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱԸ

Երկուշաբթի, 24 Յունուարին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ տորթ. Համբիկ Սարաֆեանի, այցելեց Անթիլիասի Մայրավանք եւ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ: Պատուիրակութեան մաս կազմեցին նաեւ՝ Կեդրոնական Վարչութեան անդամ Ալեքսան Զեօշկերեանը, Լիբանանի շրջանի Վարիչ Մարմինի ներկայացուցիչ Վանիկ Տազետեանն ու Հ.Կ.Բ.Մ.-ի ատենապետ Արամ Մալեանը:

Վեհափառ Հայրապետին հետ կուսակցութեան պատուիրակութիւնը զըրուցեց հայ ժողովուրդը հետաքրքրող զանազան նիւթերու մասին, մասնաւորաբար կեդրոնանալով Հայաստանի իրավիճակին եւ վերջին կարեւոր զարգացումներուն, Արցախեան հարցով

ստեղծուած իրավիճակին, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ամրապնդելու եւ զարգացնելու անհրաժեշտութեան եւ միջոցներուն, հայ ժողովուրդի միասնականութիւնն ու համերաշխութիւնը ապահովելու հրամայականին վրայ: Ժողովականները անդրադարձան նաեւ Հայաստան-Թուրքիա նորագոյն շփումներուն եւ անոնց հեռանկարներուն մասին:

Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը Նորին Սրբութեան ներկայացուց հայաստանեան եւ համահայկական հարցերուն շուրջ կուսակցութեան կեցուածքները, որոնք կը բխին հայ ժողովուրդի շահերն ու արդար իրաւունքները պաշտպանելու մնայուն դիրքորոշումէն: Անդրադարձ եղաւ նաեւ լիբանանահայութեան իրավիճակին եւ դիմագրաւած մարտահրաւերները յաղթահարելու ուղղութեամբ առնուած համագաղութային ջանքերուն:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ԱՍԵԱԿԻ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ
ՈՒՆԵՑԱԲ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԵՏ**

Շաբաթ, 22 Յունուարին, Համագայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան Հայոց Ցեղասպանութեան 107-ամեակի Ոգեկոչման Մարմինը այցելեց Վեհափառ Հայրապետին:

Հանդիպման ընթացքին մարմինը Նորին Սրբութեան ներկայացուց 2022-ի ապրիլեան ձեռնարկներու ծրագիր-նախագիծը՝ ինդրելով անոր հովանաւորութիւնը: Հաւատարիմ մնալով Համագայինի տասնամեակներու տեսլականին եւ առաքելութեան, Համագայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը այս տարի կը ձգտի Հայոց Ցեղասպանութեան անդրադառնալ քննական-վերլուծական բնոյթ կրող

ձեռնարկով մը: Ձեռնարկ-սեմինարին նիւթն է՝ «Յետցեղասպանութեան ըստեղծարարութիւնը՝ յիշողութեան, արուեստի եւ պահանջատիրութեան միջեւ», եւ ան կը նպատակադրէ ի մի բերել հայագիտական ոլորտի մասնագետներ եւ երիտասարդներ: Զննական մօտեցումով տեղեկատուութեան առջնութիւն, ձեռնարկին նպատակներէն է շեշտադրել, մարդկային վնասներու կողքին, Ցեղասպանութեան գործած մշակութային եւ հոգեկան վնասները, վերլուծել զանոնք եւ վերաբժեւորել աղէտին ահռելի ցնցումը՝ իբրեւ արուեստի արարիչ ուժ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց այս քայլը եւ գնահատեց քարացած ու հնաբոյր ձեռնարկներէն դուրս գալու Համագայինի այս նախաձեռնութիւնը՝ անելցնելով, որ պէտք է Սփիւռքը դրական «ցնցում»ի մը ենթարկել ու դուրս բերել զայն իր «թմբիր»էն, նոյնիսկ եթէ այս աշխատանքը երկար ժամանակի կը կարօտի եւ անխոնջ հաստատակամութիւն կը պահանջէ:

Յիշենք, որ Նորին Սրբութիւնը 2022 տարին հռչակած է «Սփիւռքի տարի», եւ սոյն ձեռնարկը նաեւ կը տեղադրուի գաղութներու կողմէ «Սփիւռքի տարուան» լիարժէք ներկայացումի ծիրին մէջ:

**Մ.Ա.Կ.-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՒՂԱՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՕՏ**

Չորեքշաբթի, 26 Յունուարին, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) Ընդհանուր Զարտուղար Անթոնիօ Կուլիերեսի ներկայացուցիչ՝ դոկտ. Եոաննա Վրոնտցբային:

Մ.Ա.Կ.-ի ներկայացուցիչը Վեհափառ Հայրապետին նամակ մը յանձ-

Նեց Մ.Ա.Կ.-ի Ընդհանուր Զարտուղարին կողմէ: Նամակին մէջ Ընդհանուր Զարտուղարը իր գնահատանքը կը յայտնէր Նորին Սրբութեան, ընդհանրապէս Լիբանանի տագնապը դիմագրաւելու գծով իր կատարած ճիգերուն, միջ-համայնքային երկխօսութեան բերած իր կարեւոր ներդրումին, ինչպէս նաեւ 20 Դեկտեմբեր 2021-ին, Լիբանանի վեց գլխաւոր համայնքներու հոգեւոր պետերուն հետ իր ունեցած հանդիպման, Վեհափառ Հայրապետին բերած կարեւոր նպաստին համար:

Վեհափառ Հայրապետը իր շնորհակալութիւնը յայտնեց Ընդհանուր Զարտուղարին՝ նամակի ճամբով իր պարզած մտածումներուն ու մօտեցումներուն համար: Ապա, հանդիպումը առիթ մը հանդիսացաւ ընդհանուր ակնարկ մը նետելու աշխարհը յուզող ներկայ հարցերուն եւ յատկապէս Լիբանանի այժմու կացութեան: Այս ծիրէն ներս Նորին Սրբութիւնը շեշտեց, թէ խորհրդարանական ընտրութիւն կատարելու, միջազգային դրամատան եւ միջազգային ֆինանսական կազմակերպութիւններուն հետ գործակցաբար Լիբանանի տնտեսական տագնապը բարելաւելու ու ժողովուրդին ընկերային կարիքներուն շուտափոյթ դարման գտնելու անհրաժեշտութիւնը:

Մ.Ա.Կ.-ի ներկայացուցիչը բաժնելով Վեհափառ Հայրապետին տեսակետները, իր կարգին յիշեցուց, թէ Մ.Ա.Կ.-ը կարեւորութեամբ կը շեշտէ ընտրութիւն կատարելու հրամայականը եւ իր կարգին կը քաջալերէ միջազգային դրամատանային ու տնտեսական կազմակերպութիւնները՝ աջակցելու Լիբանանի տնտեսութեան շուտափոյթ վերականգման աշխատանքներուն:

Հանդիպումէն յետոյ Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչը ճաշի հիւրը եղաւ Նորին Սրբութեան:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՒՍԼՆՅԵՑ Լ.Օ.Խ.-Ի ԵՒ Հ.Ս.Ը.Մ.-Ի ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Հինգշաբթի, 27 Յունուարին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի Օգնութեան Խաչի (Լ.Օ.Խ.) Նորընտիր վարչութիւնը՝ առաջնորդութեամբ Հայ Օգնութեան Միութեան (Հ.Օ.Մ) կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Օրդ. Նելլի Վեքիլեանին: Վարչութեան ատենապետուհի Տիկ. Սիլվա Սապունճեանը շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեան՝ Լ.Օ.Խ.-ի աշխատանքներուն իր գորակցութեան, ինչպէս նաեւ զանազան առիթներով Վեհափառ Հայրապետին կողմէ կարիքաւոր ընտանիքներուն կատարուած օժանդակութեան համար, որմէ ետք ներկայացուց Լ.Օ.Խ.-ի յառաջիկայ ծրագիրները:

Վեհափառ Հայրապետը ջերմօրէն գնահատեց Նորընտիր վարչութիւնը՝ մաղթելով, որ ան վերանորոգ նուիրումով շարունակէ իր ծառայութիւնը մեր ժողովուրդի զաւակներուն:

Ապա, Նորին Սրբութիւնը ընդունեց այցելութիւնը Հ.Ս.Ը.Մ.-ի Լիբանանի շրջանային Նորընտիր վարչութեան: Վարչութեան ատենապետ Հայկ Թապագեան, Վեհափառ Հայրապետին պարզեց Հ.Ս.Ը.Մ.-ի դիմագրաւած դժուարութիւնները՝ երկրէն ներս տընտեսական տագնապին ու համաճարակին ստեղծած պայմաններուն բերումով: Ան միաժամանակ շեշտեց, թէ, հակառակ ներկայ կացութեան, Հ.Ս.Ը.Մ.-ը վճռած է շարունակել իր գործունեութիւնը մարզական զանազան բնագաւառներէն ներս:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Հ.Ս.Ը.Մ.-ի կատարած աշխատանքը՝ զայն նկատելով մարզականին առընթեր նաեւ ազգային առաքելութիւն՝ հայեցի դաստիարակութեան բերած իր կարեւոր նպաստին համար:

Լիբանանի այժմու դժուար կացութեան լոյսին տակ, Նորին Սրբութիւնը զոյգ վարչութիւններուն յիշեցուց Լիբանանին մէջ իրենց իրագործելիք ծրագիրներուն ու աշխատանքներուն մէջ այլ գաղութներէ ներս գործող քոյր միութիւններու ներդրումին անհրաժեշտութիւնը:

ՎԱՏԻԿԱՆԻ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՅ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 29 Յունուարին, Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Վատիկանի մօտ Լիբանանի դեսպան՝ դոկտ. Ֆարիտ Էլ Խազեն: Դեսպանը Նորին Սրբութեան պարզեց Վատիկանի կատարած աշխատանքները Լիբանանի գծով, յատկապէս 1 Յուլիս 2021-ին Վատիկանի մէջ կայացած Լիբանանի քրիստոնեայ հոգեւոր պետերու հանդիպումէն ետք:

Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան Լիբանանի ներկայ կացութեան առնչուած շարք մը հարցեր:

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳՆԱՀԱՏԵՅ ԴՈԿՏ. ՀՈՒՏԱ ՍԵԼԼՈՒՄԸ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒԻՋ ԻՐ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԱԻՐՏԱՃԱՌԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 30 Յունուարին, Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց դոկտ. Հուտա Սելլում՝ ընկերակցութեամբ դոկտ. Չահրըտտին Սալեհին: Լիբանանի շիիթ համայնքին պատկանող դոկտ. Սելլում, վերջերս դոկտորայի աստիճան ստացած է եւ այդ առիթով պատրաստած է «Հայթրքական ինքնութեան հարցը Օսմանեան կայսրութեան մէջ» նիւթով աւարտաճառ մը:

Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց դոկտ. Սելլումին եւ ընդառաջելով անոր եւ Հայոց Ցեղասպանութեան մասնագետ դոկտ. Սալեհի փափաքին, համաձայն գրտնուեցաւ, որ յարմար առիթով աւարտաճառը տպուի Կաթողիկոսարանին կողմէ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՂՐՈՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Վեհափառ Հայրապետը յաջորդաբար նախագահեց Կաթողիկոսարանի Հայագիտական եւ «Խաչեր Գալուստեան» Մանկավարժական Կեղրոններու նորանշանակ յանձնախումբերու ժողովներուն:

Ողջունելով Հայագիտական Կեղրոնի յանձնախումբի առաջին նիստը՝ Նորին Սրբութիւնը շեշտեց անոր աշխատանքներուն յատուկ կարեւորութիւնը, իբրեւ հայագիտական բազմաթիւ նիւթեր ընդգրկող միակ կեղրոն: Ընդգծելով Սփիւռքի մէջ անոր դերակատարութեան կարեւորութիւնը, ան ըսաւ, որ նոր ծրագիրներով անհրաժեշտ է առաւել ծաւալ ու որակ տալ Կեղրոնի աշխատանքներուն:

Հանդիպման աւարտին որոշուեցաւ քննել Լիբանանէն դուրս առցանց դրութեամբ ուսանողներ ընդգրկելու, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանի Մանկավարժական Կեղրոնին հետ գործակցաբար Հայագիտական Կեղրոնի վկայականին պետական ճանաչում ապահովելու կարելիութիւնը:

Յայտնենք, որ ներկայիս 22 ուսանողներ կը հետեւին Հայագիտական Կեղրոնի դասընթացներուն: Նորանշանակ յանձնախումբի անդամներն են՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, Տիգրան Ճինպաշեան եւ Շահան Գանտահարեան: Իսկ Կեղրոնի տնօ-

րենն է՝ Ահարոն Շիրտմեան:

Ապա, ողջունելով «Խաչեր Գալուստեան» Մանկավարժական Կեդրոնի նորանշանակ յանձնախումբը, Նորին Սրբութիւնը յիշեցուց անցնող առաւել քան 30 տարիներու ընթացքին Կեդրոնին բերած կարեւոր նպաստը՝ հայ ուսուցիչներու մանկավարժական պատրաստութեանց գծով: Լայնօրէն քննարկելէ ետք Կեդրոնին ներկայ աշխատանքները, յանձնախումբը որոշեց յառաջիկային զարկ տալ Հայագիտական Կեդրոնին հետ գործակցութիւնը առաւել կազմակերպելու, ինչպէս նաեւ հայերէնագիտական նիւթեր դասաւանդող ուսուցիչներու վերաորակաւորման սեմինարներ կազմակերպելու ծրագիրները:

Յայտնենք, որ Կեդրոնը պետական ճանաչում ունի BT3, TS եւ LT վկայականներով եւ ցարդ Կեդրոնի աշակերտները յաջողութեամբ ստացած են յիշեալ վկայականները:

Կեդրոնէն ներս ներկայիս ուսանողութեան թիւն է 20: Վերակազմեալ յանձնախումբի անդամներն են՝ Տիկին Շաղիկ Գանտահարեան, Տիար Տիգրան Ճինպաշեան, Տիկին Թամար Հաշեօլեան, իսկ Կեդրոնի տնօրէնուհին է՝ Տիկին Սիլվա Ներսեսեան:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ԱՍԵՐԻԿԱՅԻ
ԴԵՍՊԱՆՈՒԻԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՀԵՏ**

Հինգշաբթի, 3 Փետրուարին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը աւելի քան ժամ մը հանդիպում ունեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու (Ա.Մ.Ն.) դեսպանուհի՝ Տորոթի Շիայի հետ: Հանդիպման ներկայ էր դեսպանատան քաղաքական հարցերու պատասխանատու՝ Էթան Լինչը:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ

ընդհանուր ակնարկ մը նետելու Լիբանանի ներքին քաղաքական կեանքին վրայ: Այս շրջագիծէն ներս, Վեհափառ Հայրապետին ու դեսպանուհիին միջեւ տեղի ունեցաւ տեսակետներու փոխանակում: Անոնք շեշտեցին յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն կայացման, ինչպէս նաեւ ընկերատնտեսական կեանքը բարելաւումի առաջնորդող գործընթացներու կարեւորութիւնը:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ
ՄԻԱԲԱՆՆԵՐ ԹԵՄԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՔՈՒԵՑԱՆ
ՄԻԱՅԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական տնօրինութեամբ եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան ու Արեւմտեան թեմերու առաջնորդ սըրբազաններու խնդրանքին ընդառաջելով, Գերայ. Տ. Արտակ Ծ. Վրդ. Արապեան, Գերայ. Տ. Պօղոս Ծ. Վրդ. Թինքճեան ու Հոգշ. Տ. Չարեհ Վրդ. Սարգիսեան առաքուեցան յիշեալ թեմերը՝ հովուական, քարոզչական ու դաստիարակչական պաշտօններ ստանձնելու:

Վերոյիշեալ միաբանները Դպրեվանքի իրենց ուսումը աւարտելէն ետք, Վեհափառ Հայրապետին կարգադրութեամբ իրենց աստուածաբանական բարձրագոյն ուսումը ստացած են Միացեալ Նահանգներու եւ Աւստրալիոյ համալսարաններէն ներս:

**ՆՈՐԸՆԾԱՅ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱԲԱՐՏԱՃԱՌԵՐՈՒ
ՃԵՂՈՒՄ**

Երեքշաբթի, 8 Փետրուարին, Անթիլիասի իր գրասենեակին մէջ, Ն.Ս.

Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց նորընծայ հինգ միաբան հայրերը՝ Հոգշ. Տ. Եզեկիել Աբդ. Սելլումեան, Հոգշ. Տ. Եսայի Աբդ. Էօրտեքեան, Հոգշ. Տ. Եգրաս Աբդ. Թէւեքեճեան, Հոգշ. Տ. Եղիա Աբդ. Մալխասեան եւ Հոգշ. Տ. Երեմիա Աբդ. Տէկիրմենճեան: Յիշեալ միաբան հայրերը շուրջ եօթը ամիս առաջ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ստանալով, Վեհափառ Հայրապետին տնօրինումով կը ծառայեն Կաթողիկոսարանէն ու Դպրեվանքէն ներս՝ զանազան պաշտօններ ստանձնելով:

Նորին Սրբութիւնը իր օրհնութիւնը փոխանցեց ու զնահատանքը յայտնեց նորընծայ միաբան հայրերուն՝ յիշեցնելով, թէ հոգեւորականի կոչումը ծառայութիւնն է: Հայրապետը շեշտեց, որ թէեւ ծառայութեան վայրերն ու ձեւերը կրնան փոխուիլ, սակայն անոր էութիւնն ու նպատակը կը մնան նոյնը. հետեւաբար, այս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ պետք է հոգեւորականը իր կոչումը գործնապէս արժեւորէ՝ իր կեանքին առանցքը ունենալով եկեղեցին, իսկ իր կեանքին դիմաց՝ ժողովուրդը:

Ապա, Նորին Սրբութիւնը ճշդեց իւրաքանչիւրին աւարտաճառի նիւթը՝ նկատի ունենալով միաբան հայրերու նախասիրութիւնը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱԳԱՅԵՑ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԵՐՈՒՆԻ ՄԱՍԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 15 Փետրուարին, ամբողջ օրուան ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը յաջորդաբար նախագահեց միաբանական յանձնախումբերու աշխատանքային նիստերուն:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը հանդիպում ունեցաւ Ծիսական Յանձնախումբին հետ: Յանձնախումբ-

բին նպատակն է եկեղեցին ժողովուրդին աւելի մօտեցնելու եւ ժողովուրդին մասնակցութիւնը ապահովելու ազդու միջոցներու փնտռուքը, յատկապէս ծիսական, քարոզչական ու դաստիարակչական մարզերէն ներս:

Երկրորդ հանդիպումը Միւռնի Պատրաստութեան Յանձնախումբի հանդիպումն էր, որուն նպատակն է 1 Յուլիս 2022-ին տեղի ունենալիք Միւռնիօրհնութեան Միւռնի պատրաստութիւնը: Ապա, Նորին Սրբութիւնը նախագահեց Միւռնիօրհնէքին առնչուած Կազմակերպչական Աշխատանքներու Յանձնախումբի նիստին: Վերջապէս, Վեհափառ Հայրապետը նախագահեց յառաջիկայ Միաբանական Ընդհանուր Ժողովի Նախապատրաստական Յանձնախումբի հանդիպումին:

Յայտնենք, որ կազմուած է նաեւ Միաբանական Կանոնադրութեան Վերատեսութեան Յանձնախումբ:

Վերոնշեալ ժողովներուն ատենապետութիւնը վարեցին սրբազան հայրերը, իսկ ատենադպրութիւնը՝ վարդապետները:

ՎԵՐ. ԺԻՒՊԵՐ ԼԵՒՈՆԵԱՆ ԵՒ ՎԵՐ. ՄԿՐՏԻՉ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՎԵՐԱՓՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 17 Փետրուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց՝ Ֆրանսայէն Վեր. Ժիւպեր Լեւոնեանը, ընկերակցութեամբ դարձեալ Ֆրանսայէն վերապատուելիներու եւ մարդասիրական աշխատանքի լծուած երկու ֆրանսացիներու: Հանդիպումին ներկայ էր նաեւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակեօզեան: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Լիբանանի եւ Ֆրանսայի միջեւ գոյութիւն ունեցող իւրայատուկ

յարաբերութեան, Արցախի եւ ընդհանրապէս հայութեան գծով Ֆրանսայի ցուցաբերած զօրակցութեան, ինչպէս նաեւ Լիբանանի դիմագրաւած ընկերատնտեսական կարիքներուն օժանդակելու անհրաժեշտութեան:

**ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԳԾԱԳՐԻՉ ՓՕԼ
ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ԵԶԱԿԻ ՆԿԱՐՆԵՐԷՆ
ՄԵԿԸ ՆՈՒԷՐ «ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ**

Հինգշաբթի, 17 Փետրուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Խաչեր Մարկոսեանին, ընկերակցութեամբ իր քրոջ եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Ատենադպիր՝ Սեդա Խտըշեանին:

Այս առիթով, Խաչեր Մարկոսեան երկար տարիներու իր սեփականութիւնը եղող եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին արուեստագէտ Փօլ Կիրակոսեանէն զընած մայրութիւնը ներկայացնող պատկերը նուիրեց Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետը, իր կարգին, յիշեալ պատկերը փոխանցեց Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի տեսչութեան, որ զետեղեց զայն նկարներու յատուկ ցուցասրահին մէջ:

**ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԵԾԻ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԵՒ
ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ**

Ամէն տարի, Ս. Սահակ Պարթեւ Հայրապետին յիշատակութեան Կիրակին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի «Չարեհեան յուշարձան-դամբարան»-ին մէջ, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս թեմերու բոլոր եկեղեցիներէն ներս, հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն

կը կատարուի՝ երջանկայիշատակ հայրապետներու եւ լուսաւորի միաբաններու տարած անսակարկ ծառայութեան առ ի երախտագիտութիւն:

Առ այդ, Կիրակի, 19 Փետրուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի աւարտին, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Սրբոց Նահատակաց յուշարձան-մատուռին կից գտնուող Միաբանական Դամբարան, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան կարգ:

Այս օրը մեզի առիթ կ'ընծայէ վերյիշելու մեր նախնիներուն անձնուէր ծառայութիւնը եւ վերանորոգելու անոնց օրինակին հետեւելու մեր ուխտը:

Երանաշնորհ հայրապետներուն եւ հոգելոյս միաբան հայրերուն հոգեհանգիստէն անմիջապէս ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հետեւեալ յայտարարութիւնը կատարեց Cilicia TV-էն.-

«Այսօր յիշեցինք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երջանկայիշատակ հայրապետները եւ հոգելոյս միաբանները: Անոնք ամէն օր ներկայութիւն են մեր աղօթքներուն, մեր մտածումներուն եւ մեր Ս. Աթոռի առաքելութեան մէջ: Արդարեւ, իրենց ամբողջանուէր ու անմնացորդ ծառայութեամբ, անոնք նոր շունչ ու թափ տուին դարաւոր այս Հայրապետական Աթոռին եկեղեցաշէն ու ազգակերտ առաքելութեան: Խոր յարգանք անոնց: Վստահ եմ, որ անոնք երկինքէն կը հրճուին՝ ի տես այս Ս. Աթոռին առաքելութեան առաւել ծաւալման, պայծառացման ու հզօրացման: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր ու ազգային ծառայութեան երթը կը շարունակուի վերանորոգ նուիրումով»:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ
«ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐՈՒԱՆ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Երկուշաբթի, 21 Փետրուարի երեկոյեան, կազմակերպութեամբ Յ.Յ. Գ.Ա.Ա. Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտի, տեղի ունեցաւ «Մայրենիի Օրուան» առցանց համագումարը, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ մասնակցեցաւ՝ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Արդարեւ, 2005 թուականին, Հայաստանի Հանրապետութիւնը պետական տօներու ցանկին մէջ արձանագրած է Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.) ԵՈՒՆԵՍԵՕ-ի հռչակած «Մայրենիի Օր»ը իբրեւ պաշտօնական տօն, իսկ 2013-էն ի վեր նմանօրինակ համագումարներ եւ տօնախմբութիւններ կը կատարուին Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

Առցանց համագումարին իրենց մասնակցութիւնը բերին հայրենի եւ Սփիւռքի լեզուաբաններ, կրթական մշակներ եւ հայոց լեզուի հարցերով զբաղող մասնագետներ: Համագումարին սկիզբը Շահան սրբազան ելոյթ ունենալով, յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջունեց համագումարի կայացումը եւ անդրադարձաւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Սփիւռքի մէջ, յատկապէս Արեւմտահայերէնի պաշտպանութեան, տարածման եւ զարգացման գծով իր կատարած աշխատանքներով՝ հայ դպրոցներու ճամբով ու գրահրատարակչական մեծ վաստակով, միշտ ալ նպաստած է եւ կը շարունակէ նպաստել հայոց լեզուի աշխուժացման:

Անցնող տարիներուն, Կաթողիկոսութիւնը, համահայկական նմանօրինակ

նակ ծրագիրներու իրականացման գծով ո՛չ միայն իր գործնական մասնակցութիւնը բերած է, այլեւ՝ նախաձեռնած Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Յանձնաժողով մը, որ ներկայ պայմաններուն տակ կը քննարկէ Արեւմտահայերէնը ուսումնասիրել եւ զարգացնել սփիւռքահայ կեանքէն ներս: Յիշեցնենք, որ Կաթողիկոսութեան հովանաւորութեան ներքեւ կը գործեն նաեւ «Խաչեր Գալուստեան» մանկավարժական կազմաւորման կեդրոնը եւ Հայագիտական կեդրոնը, որոնք նոյն գծով մեծապէս կը սատարեն մայրենիի պահպանման եւ տարածման:

Սրբազան հայրը յիշեցուց, որ այս տարի Նորին Սուրբ Օծութեան տնօրինումով հռչակուած «Սփիւռքի Տարի»ի եւ վերակազմակերպչական աշխատանքներու շրջագծին մէջ, նկատի առնուած է բնականաբար Արեւմտահայերէնի եւ հայոց լեզուի ներկայ իրավիճակը որ համապատասխան տնօրինումներ կատարելու հրամայականին առջեւ կը դնէ մեր բոլորը:

Սրբազան հայրը իր խօսքի ավարտին հրաւիրեց մասնակիցները, որ միասնական ճիգերով ու լրջութեամբ կարենան դուրս բերել մեր ժողովուրդի գաւազները մայրենիի նկատմամբ անտարբերութենէ, միւս կողմէ առաջարկեց, որ լեզուաբաններ եւ քերականագետներ պարտականութիւն վերցնեն դիւրացնել ու հրապուրիչ դարձնել հայոց լեզուի ուսուցումը:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ
ԶԱՐԴԵՐՈՒՆ ԶՈՅՈՒԱԾ
ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ**

27 Փետրուար 1988-ին Ազրայէճանի իշխանութեան կողմէ ծրագրուած Սումկայիթի ջարդերուն 34-րդ տարելիցն է այս տարի: Հայ ազգի ազատատենչ ոգին սանձելու եւ Արցախեան շարժումը կասեցնելու տրա-

մադրութեամբ, Ազրպէյճանի իշխանութիւնը զանգուածային տեղահանութիւն եւ անմարդկային ջարդ գործեց հայ խաղաղ բնակչութեան դէմ: Ծրագրուած սպանող տելեց երեք օր:

Արդարեւ, Կիրակի, 27 Փետրուարին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. եւ Անմահ Պատարագի ակարտին, բարձր հովանաւորութեամբ Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան

արարողութիւն՝ Սումկայիթի ջարդերուն զոհուած ու նահատակուած հայորդիներու հոգիներուն համար: Հոգեհանգստեան կարգին ներկայ էին՝ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեան, ընկերակցութեամբ դեսպանատան զինուորական կցորդ՝ գնդապետ Ալեքսան Մուշեղեանի եւ դեսպանատան քարտուղար Ստեփան Գէորգեանի:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ՇԱԲԱԹ, 1 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: Գ. ՕՐ ՊԱՀՈՑ ԾՆՆԴԵԱՆ: ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵՄՈՒՏ 2022 ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց` Հոգչ. Տ. Եզեկիէլ Աբղ. Սելլուժեան:

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: Զ. ՅԻՄՆԱԿԻ: Դ. ՕՐ ՊԱՀՈՑ ԾՆՆԴԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց` Գերպ. Տ. Արտակ Ծ. Վրդ. Արապեան:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց` Հոգչ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 6 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ իր Հայրապետական պատգամը փոխանցեց` Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

ՈՒՐԲԱԹ, 7 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: Բ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց` Հոգչ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2022: Դ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց` Հոգչ. Տ. Վիգէն Վրդ. Տալբլըճեան:

ԿԻՐԱԿԻ, 16 ՅՈՒՆՈՒԲԱՐ 2022: Ա. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՒՆՈՒԲԱՐ 2022: Բ. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆՈՒԲԱՐ 2022: Գ. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Արտաւազդ Վրդ. Շարոյեան:

ԿԻՐԱԿԻ, 6 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱՋԱՒՈՐԱՅ ՊԱՀՈՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Օշին Վրդ. Զուլեթրթանեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022: ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ, ՀԱԶԱՐ ԵՐԱՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերչ. Տ. Մակար Եպս. Աշգարեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022: Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօղեան: